

ԱՐՏԱԿ ՄՈՎԱՍԻՍԵԱՆ



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿ

ԱՓԻՒՆԻ ՄԵԿՕՐԵԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

2012 - 2020

ՀՏԴ 941(479.25) (07)

ԳՄԴ 63.3 (23) 97

Մ 917

Հրատարակության երաշխավորած են Երեւանի Պետական Համալսարանի
Պատմության Բաժանմունքին

և

Հայաստանի Հանրապետության Գիտություններու

Ազգային Ակադեմիայի Պատմության

Հիմնարկին Գիտական Խորհուրդները

Կը հրատարակուի Հայաստանի Հանրապետության
Գիտության և Կրթության Նախարարության պատուէրով

Արեւմտահայերէնի և դասական
ուղղագրության փոխադրումը՝
Գեորգ Եազըճեանի

ՄՈՎՍԻՍԵԱՆ ԱՐՏԱԿ

Մ 917 Հայոց պատմութիւն: Ուսումնական ձեռնարկ Սփիւռքի մէկօրեայ
հայկական դպրոցներուն համար / Արտակ Մովսիսեան. – Եր.: Ե. Պ. Հ.ի
հրատ., 2012, 120 էջ:

ՀՏԴ 941(479.25) (07)

ԳՄԴ 63.3 (23) 97

ISBN 978-5-8084-1600-0

© Մովսիսեան Ա. Ե., 2012

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայոց պատմության մէջ 1915 թուականը ճակատագրական եղաւ ո՛չ միայն որպէս Մեծ Եղեռնի տարեթիւ: Այդ թուականէն կը սկսի մեր պատմութեան աննախադէպ մէկ շրջափուլը, երբ հայութեան մեծամասնութիւնը կը սփռուի աշխարհով մէկ, իսկ հայրենի հողին վրայ կը շարունակէ ապրիլ ժողովուրդին փոքրամասնութիւնը: Այսօր ալ հայութեան մօտ 70%–ը կ'ապրի Սփիւռքի մէջ եւ միայն 30%–ն է հայրենի հողին վրայ:

Աշխարհասփիւռ հայութեան առաջնահերթ խնդիրներէն է հայապահպանումը՝ հայեցի կրթութեան ճամբով: Դժբախտաբար, Սփիւռքի ո՛չ բոլոր համայնքներն ունին հայկական դպրոցներ: Յաճախ մեր համայնքներն ստիպուած են բաւարարուիլ միայն մէկօրեայ դպրոցներով, որոնք կը դառնան հայութեան այն օժախները, ուր կը հաւաքուին եւ իրենց արմատներուն ու ինքնութեան կը հաղորդակցին Հայրենիքէն հեռու ապրող հայ մանուկներն ու պատանիները:

Սակայն խնդրին բարդութիւնը չի սահմանափակուիր միայն ատորոմով: Բազմաթիւ համայնքներու մէջ առկայ մէկօրեայ դպրոցները յաճախ ուսուցիչներու եւ դասագիրքերու խնդիրներ կ'ունենան:

Այս խնդիրն ու յուզող շատ ուրիշ հարցեր բարձրացուեցան Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան կազմակերպած Համահայկական Կրթական Դ. Խորհրդաժողովին (2010), ուր ես պատիւն ունի ներկայացնելու Երեւանի Պետական Համալսարանը: Խորհրդաժողովի մասնակիցներուն բարձրացուցած գլխաւոր խնդիրներէն մէկը Հայոց Պատմութեան դասագիրքերու հարցն էր:

Վերջին տարիներուն բազմիցս քննարկուած է Հայոց Պատմութեան համահայկական դասագիրքեր ունենալու խնդիրը: «Համահայկական դասագիրք» ըսելով ամենեւին չենք ենթադրեր մէկ ձեռնարկ, որ պէտք է համապարտադիր դառնայ հայկական բոլոր դպրոցներուն համար: Խօսքը միասնական սկզբունքներու ու գաղափարաբանութեան մշակման մասին է, որպէսզի աշխարհի բոլոր անկիւններուն մէջ մեծցող հայ երախաներն իրենց ազգի պատմութեան ծանօթանան ճշմարտութեան միեւնոյն չափանիշներով:

Նկատի ունենալով Հայաստանի եւ Սփիւռքի դպրոցներուն համար դասագիրքեր պատրաստելու մարզին մէջ ունեցած փորձս, սփիւռքահայ քանի մը ուսուցիչներ ու Հ. Հ.ի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան Սփիւռքի Բաժինը յորդորեցին ինձի՝ Սփիւռքի մէկօրեայ հայկական դպրոցներուն համար Հայոց Պատմութեան ձեռնարկ-ստեղծել:

Իմ պատրաստած ձեռնարկս հրատարակուեցաւ 2011 թուականին՝ Հ. Հ.ի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան միջոցներով: Դասագիրքի 3500 օրինակ-

ներ առաքուեցան Ափիւղքի դպրոցներ, որոնցմէ գնահատանքի ու խրախուսանքի բազմաթիւ նամակներ ստացուեցան: Անոնց մէջ առջեւ կը քաշուէր երկու հիմնական հարց՝

ա) ստեղծել դասագիրքի արեւմտահայերէն ու դասական ուղղագրութեամբ տարբերակը,

բ) թարգմանել դասագիրքը օտար լեզուներով (ոչ–հայախօս հայութեան համար):

Մեկնելով խնդրին կարելորութենէն՝ Գ. Գի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան 2012 թուականի ծրագիրներուն մէջ ընդգրկուեցաւ դասագիրքին արեւմտահայերէն ու դասական ուղղագրութեամբ տարբերակի պատրաստումն ու հրատարակումը, զոր իրականութիւն կը դառնայ սոյն ձեռնարկով:

Ըստ Հայոց Պատմութեան պարբերացման՝ ձեռնարկը բաժնուած է հինգ բաժինի. ա) հնագոյն շրջան (մինչեւ Ք. ա. 331 թուականը), որ կը համապատասխանէ համաշխարհային պատմութեան Հին Արեւելքի դարաշրջանին,

բ) հին շրջան (Ք. ա. 331 թուականէն մինչեւ Ք. ե. 301 թուականը), որուն սկիզբը կը համապատասխանէ համաշխարհային պատմութեան հելլենիզմի դարաշրջանին, իսկ աւարտը Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումն է,

գ) միջնադարեան շրջան (301–էն մինչեւ 17–րդ դարու կէտերը), որ կը տեւէ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումէն մինչեւ 17–րդ դարու կէտերը, երբ կ'աշխուժանայ հայկական ազատագրական պայքարը,

դ) նոր շրջան (17–րդ դարու կէտերէն մինչեւ 1918), որ կը սկսի ազատագրական պայքարի վերելքով եւ կ'աւարտի 1918–ին հայկական անկախ պետականութեան վերականգնումով,

ե) նորագոյն շրջան (1918–էն մինչեւ մեր օրերը), որ մեր պատմութեան հանրապետական դարաշրջանն է:

Ներկայացուող ձեռնարկը նախատեսուած է միջնակարգ դպրոցի բարձր դասարաններու եւ երկրորդական դպրոցի աշակերտութեան (14–18 տարեկաններու) համար, թէպէտ անիկա կրնայ ծառայել Հայոց Պատմութեան հաճելի ընթերցարան՝ ամէն տարիքի ընթերցողի համար:

Ձեռնարկը հարուստ է պատկերազարդումներով, ինչը կ'օգնէ աշակերտներուն աւելի հետաքրքրութեամբ ծանօթանալու մեր երկրի ու ժողովուրդի պատմութեան: Ձեռնարկին մէջ զետեղուած են բազմաթիւ քարտէսներ, որոնք կ'օգնեն ծանօթանալու Հայաստանի պատմական աշխարհագրութեան: Ընդհանրապէս նշենք, որ նոր շրջանին վերաբերող քարտէսները մեզի սիրով տրամադրած է «Ձանգակ» հրատարակչութիւնը (բոլոր քարտէսները կը տպագրուին առանց փոփոխութեան):

Յոյսով ենք, որ այս եւ նման ձեռնարկները զանոնք ընթերցողները ո'չ միայն հաղորդակից կը դարձնեն մեր ժողովուրդի պատմութեան հերոսական դրուագներուն ու քաղաքակրթական նուաճումներուն, այլեւ կ'օգնեն հասկնալու անցեալի անկումներուն պատճառները եւ կը նպաստեն ապագայի հնարաւորինս անսխալ ծրագրաւորման ու կերտման:

1. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻԲԸ

Հայկական Լեոնաշխարհը: Հայոց հայրենիքը Հայկական Լեոնաշխարհն է: Ան աշխարհագրական այն տարածքն է, ուր ծագած է եւ հազարամեակներ շարունակ ապրած, ստեղծագործած եւ իր պատմութիւնն ու մշակոյթը կերտած է հայ ժողովուրդը: Ան կը զբաղցնէ Սեւ, Կասպից եւ Միջերկրական ծովերուն միջնատարածքին մեծագոյն մասը: Մեկնելով պատմական իրականութենէն՝ երոպացի գիտնականները այդ տարածքը 19-րդ դարուն անուանակոչեցին «Հայկական Լեոնաշխարհ»:

Հայկական Լեոնաշխարհը կը գտնուի Փոքր Ասիոյ եւ Իրանական Բարձրաւանդակի միջեւ, հարաւէն կը սահմանակցի Միջագետքին, հիւսիսէն՝ Սեւ Ծովուն ու Կուր գետի աւազանին: Հայկական Լեոնաշխարհին տարածքը կը կազմէ շուրջ 400 հազար քառ. քմ.:

Լեոնաշխարհի միջին բարձրութիւնը ծովի մակերեսոյթէն՝ 1500-1800 մետր է: Շրջակայ երկրամասերուն համեմատ իր ունեցած բարձրութեան համար՝ ան «լեոնային կղզի» կը նկատուի:

Լեոնաշխարհին բարձրագոյն կէտը Մասիս (Մեծ Արարատ) լեռնազագաթն է (5165 մ.), որմէ սկիզբ առնելով դէպի արեւմուտք կը ձգուի Հայկական Պար լեռնաշղթան՝ հիւսիսային եւ հարաւային մասերու բաժնելով Հայկական Լեոնաշխարհը:

Հարաւէն՝ Լեոնաշխարհը բնական ամրոցի կը վերածեն Հայկական Տաւրոսի, Մասիուսի (Մասիոն), Կորդուաց, հարաւ-արեւելքէն՝ Արմենական (Ղարատաղի), արեւմուտքէն՝ Անտիտաւրոսի, հիւսիս-արեւմուտքէն՝ Պոնտական լեռնաշղթաները: Հիւսիս-արեւելեան կողմը Լեոնաշխարհին փէշերը կ'եզերուին Կուր գետով:

Հսկայ լեռնազանգուածներու միջեւ կը տարածուին բարեբեր դաշտավայրեր: Մեծագոյնը Արարատեան դաշտն է, յայտնի են նաեւ Մշոյ, Շիրակի, Ալաշկերտի, Խարբերդի եւ ուրիշ դաշտավայրեր:

Հայկական Լեոնաշխարհը շատ հարուստ է ջրային պաշարներով: Հայաստանի լիճերէն մեծագոյնը Ուրմիոյ լիճն է (հին ատեն՝ Կասպուտան Ծով), որու շատ բարձր աղիութեան պատճառով լիճին մէջ որեւէ ձկնատեսակ չ'աճիր: Մեծութեամբ երկրորդը Վանայ լիճն է (հին ատեն՝ Նայիրի երկրի ծով, Աղի Ծովակ, Բզնունեաց Ծով, Հայկայ լիճ եւ այլն), զոր այսօր ունի 4 կղզի (ամենայայտնին Աղթամարն է): Ան ալ ունի աղի ջուր, որուն մէջ կը բազմանայ միայն տառնիս ձուկը: Խոշորագոյն լիճերէն միակը, որ ունի քաղցրահամ ջուր, բազմատեսակ ձուկեր եւ այսօր կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան տարածքին մէջ, Սեւանայ լիճն է (Գեղամայ կամ Գեղարքունեաց Ծով): Լիճն ունէր մէկ կղզի, զոր խորհրդային իշխանութեան տարիներուն լիճի մակարդակի իջեցման պատճառով թերակղզիի վերածուեցաւ:

Լեոնաշխարհը հարուստ է միջին մեծութեան եւ փոքր լիճերով՝ Հիւսիսային Ծովակը (այժմ՝ Չլտըր), Արճիշակը (Արճակ, այժմ՝ Էրչէք), Ծովքը (այժմ՝ Հազար), Փարվանան եւ այլն:

Լեոնաշխարհէն սկիզբ կ'առնեն Առաջաւոր Ասիոյ բազմաթիւ խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Արաքսը (Երասխ), Կուրը, ճորոխը, Հալիսը, ճահանը, որոնք կը թափին Պարսից-Օոց, Կասպից, Սեւ եւ Միջերկրական ծովեր: Հայաստանի մէջ Եփրատը կը ձեւաւորուի երկու ճիւղերով՝ Արեւմտեան եւ Արեւելեան (Արածանի): Նոյնպիսի կազմաւորում ունի նաեւ Տիգրիսը (Արեւելեան Տիգրիսը նաեւ Ջերմ կը կոչուի):



Վանայ լիճը՝ մայրամուտին



Բերկրիի ջրվեժը

Հայկական Լեռնաշխարհը հիմեն ի վեր յայտնի եղած է բուսական և կենդանական հարուստ աշխարհներով և բազմաթիւ օգտակար համածոներով:

Պատմական Հայաստանի հիմնական վարչա-քաղաքական բաժանումները: Չալքերն իրենց հայրենիքը կը կոչեն Հայք կամ Հայաստան, օտարները զայն կոչած են Արատտա-Արարատ-Ուրարտու, Արման(ուժ)-Արմինա-Արմենիա-Քրմանիստան, Կուտի(ուժ), Նայիրի, Սոմխեթի և այլն:

Հայկական պետական բոլոր կազմավորումները, բացառութեամբ Կիլիկիոյ հայկական պետութեան, գտնուած են Հայկական Լեռնաշխարհի աշխարհագրական սահմաններուն մէջ: Հայկական պետութեանց և Լեռնաշխարհին սահմանները, սակայն, երբեւէ չեն համապատասխանած իրարու: Օրինակ, Սեծ Հայքը, ընդգրկելով Լեռնաշխարհի մեծագոյն մասը, արեւելեան կողմը կը ներառէ Փայտակարան նահանգը, զոր Լեռնաշխարհէն դուրս կը գտնուի: Փոքր Հայքն Արեւմտեան Եփրատէն արեւմուտք ինկած տարածքներ ընդգրկած է: Հայկական պետականութեան երեքդարեայ ժամանակաշրջան մըն ալ ունեցեր ենք Լեռնաշխարհէն դուրս՝ Կիլիկիոյ մէջ: Այս ամէնը հաշուի առնելով՝ Սեւ, Կասպից և Միջերկրական ծովերուն միջնատարածքը մենք կը կոչենք ընդհանուր անուամբ՝ **պատմական Հայաստան:**

Պատմական Հայաստանը ժամանակի ընթացքին վարչա-քաղաքական բազմաթիւ բաժանումներ ունեցած է: Անոնցմէ ամենէն մշանաւորն են չորսը՝ Սեծ Հայքը, Փոքր Հայքը, Կոմմագենէն և Կիլիկիան:

Ըստ յոյն աշխարհագրագետ Պտղոմէոսի (1-2-րդ դարեր), Սեծ Հայքի տարածքը 20 նահանգներու բաժնուած էր: Ըստ հայկական «Աշխարհացոյց»-ին՝ ան բաժնուած էր 15 նահանգներու կամ աշխարհներու (Բարձր Հայք, Ծովիք, Աղձնիք, Տուրուբերան, Մուք, Կորձայք, Պարսկահայք, Կասպուրական, Միւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք, Տայք և Այրարատ): Իրենց կարգին, աշխարհները կը բաժնուէին գաւառներու, որոնց ընդհանուր թիւը շուրջ 200 էր:

Սեծ Հայքի և Փոքր Հայքի քնական սահմանը Արեւմտեան Եփրատն էր: Հարաւային կողմը Փոքր Հայքն ընդգրկած է Մալաթիոյ շրջանը (հարաւ սահման ունենալով Հայկական Տաւրոսի լեռնազազաթները), իսկ հիւսիսային կողմէն, ըստ յոյն մատենագիր Ստրաբոնի (Ք. ա. 1-2-րդ դարեր), հասած է մինչեւ Սեւ Ծով՝ ներառելով Տրապիզոնն ու Փանակիան:

Կոմմագենէն (Կամախ, Կումախա, Կումմուխ) գտնուած է Հայկական Լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան ծայրամասին, Հայկական Տաւրոսի լեռներու հարաւային փեշերուն՝ արեւելեան կողմը սահման ունենալով Եփրատ գետը: Անիկա Ք. ա. 2-րդ հազարամեակին և 4-րդ հազարամեակին (Ուրարտու, Արարատ) ժամանակ եղած է ինքնուրոյն փոքրիկ բազաւորութիւն մը՝ ըլլալով վերջինիս դաշնակիցը: Երուանդունեաց ժամանակաշրջանին (մինչեւ Ք. ա. 201 թուականը) մտած է Հայաստանի կազմին մէջ, ապա Ք. ա. 163

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի



թուականն մինչեւ Բ. Ե. 72 թուականը եղած է անկախ հայկական թագաւորութիւն՝ Երուանդունիներու մէկ ճիւղին գլխաւորութեամբ:

Կիլիկիան կը գտնուի Միջերկրական Ծովու հիւսիս-արեւելեան ափին՝ հիւսիսէն սահման ունենալով Կիլիկեան Տաւրոսի, իսկ արեւելքէն՝ Ամանոսի լեռները: Կիլիկիան հիւսիս-արեւելքէն սահմանակցած է Կոմմագենէին: Զնայած իսկ հայոց շատ վաղ ներկայութեան, Կիլիկիան հայկական իշխանութեան, ապա թագաւորութեան տարածք դարձաւ միջնադարուն՝ 11–14-րդ դարերուն: Անկէ ետք ալ ան եղած է հայաշխարհի կարեւորագոյն մէկ մասը, ուր, նոյնիսկ Ցեղասպանութենէն ետք, վերապրող հայութիւնը (միւս քրիստոնեայ համայնքներուն հետ միասին) հանրապետութիւն հռչակեց 4 Օգոստոս 1920-ին...

Ներկայիս Հայաստանի Հանրապետութեան տարածքը կը կազմէ շուրջ 30 հազար քառ. քմ., իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեանը՝ ազատագրուած շրջաններով՝ շուրջ 12,5 հազար քառ. քմ.: Հ. Հ.Ն կը գտնուի Մեծ Հայքի Այրարատ, Սիւնիք, Գուգարք եւ Ուտիք, իսկ Լ. Հ. Հ.Ն՝ Արցախ, Սիւնիք եւ Ուտիք աշխարհներու տարածքին վրայ:

Հարցումներ եւ առարկայութեանքներ

1. Ո՞ր աշխարհագրական տարածքը կը կոչուի Հայկական Լեռնաշխարհ: Ո՞ր բարձրաւանդակներուն միջեւ կը գտնուի ան:
2. Նշեցէ՛ք Հայկական Լեռնաշխարհի խոշորագոյն երեք լիճերը, ներկայացուցէ՛ք զանոնք (պատմական անունները, ջուրին տեսակը, կենդանական աշխարհը, կղզիները):
3. Ներկայացուցէ՛ք պատմական Հայաստանի հիմնական վարչական բաժանումները:
4. Քարտուսի վրայ գտէ՛ք Մեծ Հայքի 15 նահանգները:

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Ուրկը՝ կը ծագի մեր ժողովուրդը, ե՞ որ ծնւաւորուած է իբրև ինքնուրոյն *էքնիք* միաւոր եւ ո՞ր ժամանակներէն կը յիշատակուի հնագոյն գրաւոր յուշարձաններուն մէջ: Այս հարցումներուն պատասխանները հասկնալու համար, նախ անդրադառնանք ինչ ու միջին դարերուն գրի առնուած ւաւանդագրոյցներուն, ապա՝ հայոց ազգածագման մասին այսօրուայ գիտութեան տուեալներուն:

Հայոց ծագման մասին ւաւանդագրոյցները: Հայոց ծագման մասին շարք մը ւաւանդագրոյցներ գրի առնուած են ինչ ու միջին դարերուն: **Հայկական ւաւանդագրոյցն** ստեղծուած է վաղնջական ժամանակներուն եւ մեզի հասած է Պատմահայր Սովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն»-ի շնորհիւ:

Նախաքրիստոնէական ժամանակներուն, մեր նախնիները կը հաւատային, որ դիւցազուն Հայկ Նահապետէն կը սերին. «*Աստուածներն առաջիններն անդ էին ու երեսնի եւ աշխարհի մեծամեծ բարիքներու պատճառ, աշխարհի ու բազմամարդութեան սկիզբ: Անոնցմէ յառաջ եկաւ հսկաներու սերունդը... Անոնցմէ մէկն էր... Հայկը»...*

Հնագոյն միջազեւտքեան (շումերա-աքքատական) սեպագիր արձանագրութիւններէն կը տեղեկանանք, որ Հայկական Լեւոնաշխարհի հնագոյն պետութեան՝ Արատտայի (Ք. ա. 28-27-րդ դարեր) հովանաւոր աստուածը Հայկն էր՝ իմաստութեան եւ տիեզերական ջութերու Հայ(ա) աստուծոյ որդին: Հայ(ա) աստուծոյ պաշտամունքը կը կապուէր Հայկական Լեւոնաշխարհի եփրատ եւ Տիգրիս գետերու ակունքներուն հետ, եւ պատահական չէ, որ ան կը պատկերուէր որպէս այդ գետերը սկզբնաւորող:

301 թուականին երբ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեցաւ Հայաստանի մէջ, նախաքրիստոնէական ամեն բան արգիւոնցաւ կամ համապատասխանեցուեցաւ քրիստոնէական աշխարհընկալման: Ըստ Աստուածաշունչ Մատեանի առաջին՝ ՕՏՆՈՂՈՑ գիրքիմբրուր ազգերը յառաջացած են Նոյ Նահապետի երեք որդիներէն՝ Յաբէթն, Քամեն եւ Սեմեն: Այս պայմաններուն մէջ, հայոց ազգածագման նախաքրիստոնէական ւաւանդագրոյցը համապատասխանեցուեցաւ Աստուածաշունչ Մատեանին: Չնւաւորուեցաւ նոր ւաւանդագրոյց մը, ըստ որուն՝ Հայկ Նահապետը Նոյի Յաբէթ որդիին ժառանգներէն է, Թորգոմ Նահապետի որդին: (Թորգոմն Աստուածաշունչ Մատեանին մէջ կը նկատուի հայկական հնագոյն պետական կազմաւորումներէն մէկուն՝ Թորգոմայ Տան անուանադիր նախնին. Թորգոմայ Տունը գտնուած է Եփրատի վերին աւազանին մէջ եւ կը յիշատակուի դեռ Ք. ա. 20-18-րդ դարերուն): Այդտեղէն ալ կը ծագին միջնադարեան գրաւոր արքիւրներուն մէջ հայոց տրուող «Յաբէթածին», «Թորգոմածին», «Թորգոմեան ազգ» անուանումները:

Հայոց ծագումնաբանութեան նոր՝ քրիստոնէացուած ւաւանդագրոյցին մէջ ալ հայերը կը ներկայանան որպէս բնիկ ժողովուրդ Հայկական Լեւոնաշխարհին մէջ, գոր անոնց հայրենիքն է եւ մնացեալ մարդկութեան նախահայրենիքը:

Հայոց ազգածագման ւաւանդագրոյցին կարեւոր մասը կը կազմէ «Հայկ եւ Բել» վիպասը, որուն մէջ արտացոլուած է Հնագոյն Միջազեւտքի եւ Հայկական Լեւոնաշխարհի դարեր տեւած հակամարտութիւնը: Ըստ ւաւանդութեան, Հայկ Նահապետի՝ քոնակալ Բելի դէն տարած յաղթանակի օրէն հայերն սկսած են հաշուել Բուն Հայոց տոմարը: Ըստ Ղեւոնդ Ալիշանի հաշուարկին՝ այդ եղած է Ք. ա. 2492 թուականի Օգոստոսի 11-ին (ուրիշ հաշուարկներ ալ կան):

Ըստ հայկական ւաւանդութեան՝ Հայկի անունով մեր ժողովուրդը կոչուեցաւ «հայ» եւ երկիրը՝ «Հայք. Հայաստան», իսկ անոր ժառանգներէն Արամ Նահապետի անունէն յառաջացան Հայաստանի «Արմենիա» եւ հայոց «արձէն» անուանումները: Հայկի եւ հայկագուններու անուններով կոչուեցան Լեւոնաշխարհի բազմաթիւ տեղանուններ (Արամայիսի անուամբ՝ Արմաւիրը, Երաստի անուամբ՝ Երասխ (Արաքս) գետը, Շարայի՝ Շիրակ գա-



«Չայկի եւ Բելի ճակատամարտը» (իտալացի նկարիչ Ն. Չասսո, 1885)

առը, Ամասիայի՝ Մասիս լեռն ու Մասեացոտն գաւառը, Գեղամի՝ Գեղամայ կամ Գեղարքունեաց Շուվն (Սեւանայ լիճը) ու Գեղարքունիք գաւառը, Սիսակի Սիսական (Սիւնիք) աշխարհը (նահանգը), Արա Գեղեցիկի անունով Այրարատ աշխարհը եւ այլն)։

Չայոց ծագման մասին գրի առնուած են նաեւ **յունական, հին եբրայական (հրեական), վրացական եւ արաբական** աւանդազրոյցներ, որոնց մէջ հայերը մշտապէս կը ներկայանան ընդգծուած դրական յատկանիշներով. անոնց հետ ազգակից ըլլալը ցանկալի է ու պատուաբեր։

Նոյնը կը տեսնենք շարք մը եւրոպական ժողովուրդներու աւանդութեանց մէջ, որոնք սեփական ծագումը Չայաստանի հետ կը կապեն։

9-րդ դարուն գրի առնուած «Անգլո-Սաքսոնական ժամանակագրութիւն»ը կը վկայէ, որ Բրիտանական Կղզիներու «առաջին բնակիչները եղած են պրէթոնները, որոնք եկած են Չայաստանէն»։ Ըստ «Պաւարական ժամանակագրութիւն»ի, «Աննոյի երգ»ի, «Ռուանտի երգ»ի եւ միջնադարեան ուրիշ աղբիւրներու՝ պաւարացիներն ալ կը ծագին Չայաստանէն, ուր Նոյն իջած է Արարատ լեռներուն վրայ։ Իրենց ծագումը Չայաստանի հետ կը կապեն նաեւ պասքերը։ Չայաստանի հետ կապուած հետաքրքրական յիշատակութիւններ կան պահպանուած ռուսական ասքերուն (պիլիմաններուն) մէջ։ Անոնց մէջ փառաբանուող՝ ռուսերու ամենասիրելի հերոսներէն դիւցազն Իլիա Մուրոմեցն իր ոյժը կը ստանայ իր մեծ եղբայր Սվեաթոկորէն, զոր «Արարատեան լեռներէն» էր...

Չայոց ծագման հարցը արդի պատմագիտութեան մէջ։ 5-րդ դարէն սկսեալ մինչեւ 19-րդ դարուն կեսերը հայոց ծագման հարցին մէջ անառարկելիօրէն կ'ընդունուէր հայկական քրիստոնէական աւանդազրոյցը՝ ձեւակերպուած Մովսէս Խորենացիի «Չայոց Պատմութիւն»ի էջերուն մէջ։

19-րդ դարու երկրորդ կեսին գիտութեան մէջ յառաջ քաշուեցան շարք մը նոր տեսութիւններ, այդ թուին՝ նոյնիսկ կասկածի տակ դրուեցաւ հայ ժողովուրդի տեղաբնիկութեան հարցը։ Սակայն քանի մը տասնամեակ ետք ակնյայտ դարձաւ նման տեսութեանց լիովին հիմնազուրկ ըլլալը։

1980-ական թուականներու սկիզբներէն հաստատուեցաւ, որ հնդեւրոպական նախահայրենիքը Բ. ա. 5-4-րդ հազարամեակներուն գտնուած է Առաջաւոր Ասիոյ հիւսիսը.



Շումերական կնքադրոշմ (Ք. ա. 3-րդ հազարամեակ), ուր Չայ(ա) աստուածը պատկերված է որպես եփրատ եւ Տրգրիս գետերը սկզբնաւորող

աւելի որոշակիօրէն՝ Չայկական Լեռնաշխարհի, Փոքր Ասիոյ արեւելեան շրջաններուն, Չիւսիսային Սիջագետքի եւ Իրանական Սարահարթի հիւսիս-արեւմտեան տարածքին մէջ։ Այսինքն՝ հնդեւրոպական նախահայրենիքը գտնուած է ճիշդ այն տարածքին մէջ, ուր կազմաւորուած եւ իր պատմական ուղին անցած է հայ ժողովուրդը։

Չնագոյն պատմական տեղեկութիւնները Չայաստանի եւ հայոց մասին։ Չայկական Լեռնաշխարհի մասին առ այսօր յայտնի առաջին պատմական տեղեկութիւնները պահպանուած են շումերական արձանագրութեանց մէջ եւ Ք. ա. 28-27-րդ դարերուն կը վերաբերին։ Անոնց մէջ կը յիշատակուի Արատտա վաղ պետական կազմաւորումը։ Արատտա անունն, իրաւամբ, կը համադրուի Արարատի հետ՝ նկատուելով վերջինիս նախածնը։

Ք. ա. 26-րդ դարէն սկսած՝ միջագետքեան բնագիւղները կը յիշատակեն Չայ(ա) աստուածը, նոյնանուն երկիրն ու ժողովուրդը։

Յայտնի է, որ օտար ժողովուրդները մեր երկիրն ու ժողովուրդը աւելի շատ կը ճանցնան «Արմենիա» եւ «արմէն» անուններով։ Ք. ա. 24-23-րդ դարերէն սկսեալ Չայկական Լեռնաշխարհի մէջ կը յիշատակուին «Արման(ի)», «Արմի», «Արամ» եւ ուրիշ երկրանուններ, որոնք «Արմենիա»ի նախածնուերն են։

Էպլայի (Չիւսիսային Սուրիա) Ք. ա. 24-23-րդ դարերու արձանագրութեանց մէջ կը յիշատակուին Արմի երկրին մէջ բնակած «Չայայի որդիները» (հայորդիները)։

Այսպիսով, տակաւին Ք. ա. 28-23-րդ դարերուն Չայկական Լեռնաշխարհին մէջ կը յիշատակուին Չայաստանին եւ հայոց տրուած հիմնական անուանումները՝ Արատտա, Չայա եւ Արման(ի), որոնք կը շարունակեն կենսունակ մնալ մինչեւ այսօր որպէս Արարատ, Չայք-Չայաստան եւ Արմենիա։

Ներկայիս կարելի է յստակօրէն ըսել, որ հայերը կազմած են հնդեւրոպական մայր ժողովուրդին մէկ մասը եւ առնուազն Ք. ա. 4-րդ հազարամեակի վերջին (ըստ որոշ նորագոյն ուսումնասիրութեանց՝ Ք. ա. 6-րդ հազարամեակի երկրորդ կէտին) առանձնացել են հնդեւրոպական ընդհանրութենէն։ Այդ ժամանակաշրջանէն սկսած է հայ ժողովուրդի էթնիք՝ ցեղային եւ վաղ պետական կազմաւորումներուն ժամանակաշրջանը, իսկ առնուազն Ք. ա. առաջին հազարամեակի առաջին կէտին բարձրացած է համահայկական միասնական պետութիւնը։

Չարդուններ եւ առարադրանքներ

1. Ներկայացուցէք Մովսէս Խորենացիի գրաւած՝ հայոց ծագման մասին հայկական արանդագրոյցը։
2. Ո՞ր ժողովուրդները գրոյցներ ստեղծած են հայոց ծագման մասին։
3. Ի՞նչ կը վկայէ «Անգլո-Սաքսոնական ժամանակագրութիւն»ը Չայաստանի մասին։
4. Ո՞րն է առաջին պետական կազմաւորումը Չայաստանի մէջ։

Հին Արեւելքի ժողովուրդներու դիցաբանութեան եւ առասպելաբանութեան մէջ չափազանց ուշագրաւ տեղեկութիւններ պահպանուած են մեր երկրին ու ժողովուրդին մասին:

Աստուածաշունչ Մատեանին մէջ կը պատմուի, որ Աստուած մարդկութիւնն արարեց Եղեմ–դրախտին մէջ, ուրկէ դուրս կու գային չորս գետեր՝ Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը եւ Փիսոնը: Այսինքն՝ Հայաստանն է Եղեմ–դրախտաշխարհը, ուր արարուած են առաջին մարդիկ եւ ուր կը պահպանուէին անմահութեան ու իմաստութեան սրբազան խորհրդանշանները՝ Կենաց (Անմահութեան) եւ Բարիի ու Չարի Իմացութեան Ծառերը:

Աստուածաշունչ Մատեանին մէջ կը պատմուի նաեւ, որ համաշխարհային ջրհեղեղէն ետք Նոյ Նահապետին տապանը փրկուեցաւ «Արարատի լեռներուն վրայ», այսինքն՝ Հայկական Լեռնաշխարհին մէջ: Փաստօրէն, ըստ Աստուածաշունչ Մատեանին Հայաստանը սրբազան տարածք մըն է, ուր արարուած է մարդկութիւնը, ուր պահուած են անմահութեան ու իմաստութեան խորհրդանշանները, եւ որն ալ համաշխարհային ջրհեղեղէն ետք դարձած է մարդկութեան վերածնունդի երկիրը:

Միեւնոյն պատկերացումները կը գտնենք նաեւ Հին Աշխարհի գրաւոր ուրիշ սկզբնաղբիւրներու մէջ: Մասնաւորապէս, հնագոյն միջագետքեան դիցաբանութեան մէջ կը պաշտօնէր իմաստութեան Հայ(ա) աստուածը, որ Մայր Դիցուհիին հետ միասին արարեց մարդկութիւնը Հայկական Լեռնաշխարհին մէջ:

Շումերական աղբիւրներուն մէջ Արատտա երկիրը մշտապէս կը մեծարուի «*աստուածային սուրբ օրէնքներու երկիր*» եւ «*անմահներու երկիր*» պատուանուններով: Առաջինը կը կապուի հնագոյն այն հաւատամքին հետ, որ իմաստութեան Հայ(ա) աստուծոյ քով՝ Հայկական Լեռնաշխարհին մէջ կը պահուէին տիեզերքը կառավարող սրբազան օրէնքները:

«*Անմահներու երկիր*» պատուանունը կը կապուի համաշխարհային ջրհեղեղի մասին շումերական, բաբելոնեան եւ ուրիշ աւանդազրոյցներու հետ, ըստ որոնց՝ ջրհեղեղէն փրկուածներն անմահութիւն ստացան ու բնակեցան Հայկական Լեռնաշխարհին մէջ (ինչը կը համապատասխանէ Աստուածաշունչ Մատեանի պատկերացումներուն): Միջագետքեան դիցազնաւէտին

մէջ անմահութիւն փնտռող հերոս Կիլկամէշը կը բռնէ «*դէպի Արատտա տանող ճամբան*», կ'երթայ Եփրատի հոսանքն ի վեր եւ ճամբուն վրայ կը յաղթահարէ Մաշու (Մասու) լեռները, որոնք Հայկական Լեռնաշխարհին հարաւ եզերող Մասիուս կամ Մասիոն լեռներն են:

Նոյն պատկերացումը կը գտնենք Աղեքսանդր Մակեդոնացիին նուիրուած դիցազնաւէտին մէջ, զոր առաջին անգամ գրի առնուած է Բ.–ա. 240-թուականին: Ըստ այդմ անմահութեան ձգտող Մեծն Աղեքսանդրը կը կրկնէ



Աստուածաշունչ Մատեանի պատկերազարդում, ուր Հայաստանը ներկայացուած է որպէս մարդկութեան ծննդավայր (Լոնտոն, 1749)



Ֆիլիփի Պուաշի քարտեզը, ուր Եղեմ-դրախտը կը նշուի Չայաստանի սահմաններուն մէջ (Փարիզ, 1783)

հերոս Մեծն Աղեքսանդրը, ընդ որուն, երկուքին ալ նպատակակէտն Անմահութեան երկիրը՝ Չայոց Աշխարհն էր: Դոն կը պահուէր անասպելական «Անմահութեան Ծաղիկ»ը, զոր կը համապատասխանէ Աստուածաշունչ Մատեանի Կենաց Ծառին:

Աստուածաշունչ Մատեանի եղեմ-դրախտի երկրորդ՝ Բարիի եւ Զարի Իմացութեան Ծառը իմաստութեան խորհրդանիշն է: Արդէն նշուեցաւ, որ Չայկ Նահապետի հայր Չայ(ա)ն Առաջաւոր Ասիոյ մէջ յայտնի էր իբրեւ իմաստութեան աստուած: Իսկ ըստ շումերական հնագոյն քննարկի մը՝ «Իմաստութիւնն ու արուեստը Արատտա երկրէն վար բերուած են»:

Չինարեւելեան դիցաբանական պատկերացումներուն մէջ Չայաստանը կը ներկայանայ նաեւ որպէս աստուածներու քնակատեղի, որպէս սրբազնագոյն տարածք մը: Չայաստանն այդպէս կը ներկայանայ Բերոսոսի (Ք. ա. 4-3-րդ դարեր)՝ միջագետքեան սեպագիր արձանագրութեանց հիման վրայ գրուած «Բաբելոնիկա» եռահատոր աշխատութեան էջերուն մէջ: Միջագետքեան «Կիլկամէշ» դիցազնավեպին մէջ Չայաստանը կը կոչուի «աստուածներու կաճառ». իոն էր, որ աստուածները վերապրելու իրաւունք շնորհեցին մարդկութեան: Իսկ ըստ Չիւսիս-արեւմտեան Սուրիոյ Ուկարիթ քաղաքէն (Ք. ա. 14-13-րդ դարեր) գտնուած սեպագիր արձանագրութեանց՝ գերագոյն աստուծոյ քնակավայրը կը գտնուէր Արեւմտեան Եփրատի (Մալա գետի) ակունքներուն մօտ, ուր կը գտնուի նախաքրիստոնէական Չայաստանի գլխաւոր պաշտամունքային շրջանը՝ Բարձր Չայքը:

Նման պատկերացումներ պահպանուած են նաեւ հայ մատենագրութեան էջերուն մէջ: Ահա՛ թէ Մեծ Չայքի Բարձր Չայք նահանգը ինչպէս կը ներկայացուի «Աշխարհացոյց»ին մէջ. «Ինչպէս ցոյց կու տայ իր իսկ անունը, այս երկրամասն իրապէս քարձր է ո՛չ միայն Մեծ Չայքի մնացած մասերէն, այնու՛ որջ աշխարհէն, այդ պատճառով ալ զայն աշխարհի գազաթ կոչելի են: Ան գետեր կ'արձակէ աշխարհի չորս կողմերը. (Բարձր Չայքէն) սկիզբ կ'առնեն չորս խոշոր գետեր»: «Աշխարհի գազաթ» կոչուիլը յիշողութիւնն է հնագոյն շրջանին այդ տարածքի՝ աստուածներու քնակատեղի նկատուելու, իսկ իոնկէ դէպի աշխարհի չորս կողմերը հոսող չորս գետերը ակնյայտօրէն կը յիշեցնեն Աստուածաշունչ Մատեանի Եղեմ-դրախտն սկիզբ առնող չորս գետերը...

Աստուածաշունչ Մատեանին մէջ Եղեմը կը յիշատակուի «արեւելեան կողմը», ինչն արժանի է յատուկ ուշադրութեան: Նոյն գիրքի մէկ ուրիշ մասին մէջ կը պատմուի, որ Նոյի տապանը փրկուեցաւ Արարատի լեռներուն վրայ (Չայաստանի մէջ), որմէ ետք, տակաւին մէկ լեզուով խօսող մարդիկ «արեւելքէն» գացին Սենաարի երկիր (Շումեր) եւ որոշեցին կառուցել երկնահաս «Բաբելոնեան աշտարակը»: Երկու պարագային ալ Չայաստանը կը ներկայացուի իբրեւ «արեւելքի» երկիր, մինչդեռ ան Չին Կտակարանը գրի առած հրեաներու երկրէն հիւսիս կը գտնուէր:



Չին Արեւելքի ամենանշանաւոր հերոս Կիլկամէշի ճանապարհը: Իրականին մէջ, երբեւէ Չայաստան չմտած Աղեքսանդրը կը թոնէ ճամբան «դէպի Չայոց Աշխարհ, ուր ակունքներն են Տիգրիսի ու Եփրատի», իսկ ճամբուն վրայ կը յաղթահարէ Սասիս լեռնաշղթան: Այսինքն՝ այնքան խոր էին Չայաստանի իբրեւ Անմահութեան երկրի մասին պատկերացումները Չին Աշխարհի մէջ, որ անմահութեան որոնման աշխարհահռչակ սիւժէին մէջ Չին Արեւելքի ամենայայտնի հերոս Կիլկամէշը կը փոխարինէ Չին Աշխարհի ամենանշանաւոր

Նման պատկերացումն առկայ է հնագույն ուրիշ բազմաթիւ աղբիւրներու մէջ: Միջագետքեան «Կիլկամէշ» դիւցազնավէպին մէջ դրախտին ու անմահութեան երկրին սահմանը Մաշու լեռներն են, ուր տեղի կ'ունենային արեածագն ու մայրամուտը: Կը նշանակէ՝ Միջագետքէն ու Պաղեստինէն հիւսիս տարածուող Հայկական Լեռնաշխարհը նկատուած է «արեւելք» ոչ թէ բառին աշխարհագրական իմաստով, այլ՝ «արեւի ելքի երկիր» իմաստով: Յետագային, նախնական իմաստը մոռցուած է, եւ բառն ընկալուած է սոսկ աշխարհագրական նշանակութեամբ:

Հայկական Լեռնաշխարհի՝ արեւի հանգրուանն ըլլալու պատկերացումը պահպանուած է նաեւ խեթական աղբիւրներուն մէջ, ըստ որոնց՝ արեգակը կը ծագէր «Արեւելեան Ծովէն»՝ Վանայ լիճէն: Սա լիովին համահունչ է հայկական ասանդազրոյցներուն, ըստ որոնց՝ արեւի ոսկեայ նմջարանը կը գտնուէր Վանայ լիճին յատակը, ուրկէ ամէն առտու կ'ելլէր եւ ուր ամէն գիշեր կը վերադառնար ցերեկուայ լուսատուն:

Հայաստանի մասին չափազանց հետաքրքրական տեղեկութիւն պահպանած է նաեւ «Սասնայ Ծռեր» (կամ «Սասունցի Դաւիթ») դիւցազնավէպը, որուն մէջ Ծովինարը Պաղտատէն Հայաստան փախչելու խորհուրդ կու տայ իր որդիներուն՝ հետեւեալ խօսքերով.

*Փախէ՛ք, զնացէ՛ք Հայոց թագաւորի թաղար:
Գիշեր պայծառ աստղն րոնէ՛ք նշան,
Յերեկն էլ հարցուցէ՛ք
Արեւելից թագաւորի երկիր:*

Հայաստանը մեր դիւցազնավէպին մէջ կը կոչուի «Արեւելքի թագաւորի երկիր», բնորոշում մը, զոր կրնար ծագիլ ու պահպանուած ըլլալ միայն եւ միայն հնագույն ժամանակներէն:

Աստուածաշունչ Մատեանի կարեւորագոյն դրուագներուն եւ հնագույն բազմաթիւ աղբիւրներու մէջ Հայաստանն իբրեւ «արեւելք» հանդէս գալու հանգամանքը առիթ տուած է ենթադրելու, որ Նոր Կտակարանին մէջ յիշատակուող «Արեւելքի մոգերը», որոնք առաջինն եկան ողջունելու Յիսուս Քրիստոսի ծնունդը, կրնային Հայաստանի քուրմներն ըլլալ...

Վերոնշեալ բոլոր փաստերը ամէն հայ մարդու պէտք է խորհելու տեղիք տան: Հայաստանը արարչագործութեան, ջրհեղեղէն ետք մարդկութեան վերածնունդի, անմահութեան ու իմաստութեան, արեւի երկիր կը նկատեն ոչ միայն մեր նախնիները, այլեւ՝ մեր հետ նոյնիսկ հեռաւոր ազգակցութիւն չունեցող ժողովուրդները...

Ուրեմն՝ վաղնջական ժամանակներուն կար վերագային, վերկրօնական սրբազան գաղափարախօսութիւն մը, որուն մէջ առանցքային դերակատարում ունէր մեր լեռնաշխարհը: Ինչո՞ւ նոյն ինքն Հայկական Լեռնաշխարհը: Ո՞րն էր մեր երկրին խորհուրդը, ի՞նչն էր մեր հայրենիքին սրբազնութեան գաղտնիքը...

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ըստ Աստուածաշունչ Մատեանին՝ եղեմ-դրախտը ո՞ր գտնուած է: Համաշխարհային ջրհեղեղէն ետք Նոյ Նահապետին տապանը ո՞ր կանգ առած է:
2. Շումերական աղբիւրներուն մէջ ի՞նչ պատուանուններով մշտապէս կը մեծարուի Արատտա երկիրը: Ատիկա ինչո՞վ կը բացատրուի:
3. Ի՞նչ ընդհանրութիւն կայ Կիլկամէշի եւ Աղեքսանդր Սակեղոնացիի վիպական կերպարներուն միջեւ:
4. Ներկայացուցէ՛ք Հայաստանն արեւի երկիր նկատող հին աղբիւրներուն տեղեկութիւնները:



*Կիլկամէշի արձանը՝
պատրաստուած
Ք. ա. Ց-րդ դարուն*

Առաջին պետական կազմաւորումը. Արդէն նշեցինք, որ Հայկական Լեւոնաշխարհի մինչեւ այսօր յայտնի առաջին վաղ պետական կազմաւորումն Արատտան է, որու մասին շումեռական բնագիրներու տեղեկութիւնները կը վերաբերին Բ. ա. 28-27-րդ դարերուն:

Արատտան եղած է աստուածապետական (կրօնապետական կամ թեոկրատական) կարգերով երկիր: Ասիկա պետական կառավարման այն ձեւն է, երբ թէ աշխարհիկ եւ թէ հոգեւոր ողջ իշխանութիւնը կը գտնուի հոգեւոր դասին ձեռքը, որ Աստուծոյ անունով կը կատարուի երկիրը: Արատտայի արքան միաժամանակ նաեւ երկրին քրմապետն է: Քրմապետ-արքային կից կը գործէր երկրին բարձրագոյն խորհրդակցական մարմինը՝ Աւագներու ժողովը: Կը յիշատակուի երկրին գլխաւոր տնտեսական պաշտօնեան, որ «կատարիչ» կը կոչուէր: Արատտայի մէջ կը յիշատակուին նաեւ տնտեսական ոլորտի պաշտօնեաներ՝ հարկահաններ, վերակացուներ եւ այլն:

Արատտացիները երկրագործական ապրանքներ ներմուծած են. փոխարէնը մետաղներ ու քանկարօժէք քարեր արտահանած են: Բացի աստուծմէ, հարաւ դրկած են նաեւ շինարարական հումք՝ «լեւնային քարեր»:

Գրաւոր արքիւրներուն մէջ ձիերու ընտելացման առաջին յիշատակութիւնը կը վերաբերի Արատտա երկրին: Իսկ տնտեսութեան եւ ռազմարուեստին մէջ ձիերու կիրառումը աննախադէպ յառաջընթացի տարաւ:

Շումերական քննագիրները կը տեղեկացնեն Արատտայի բանակին եւ պարսպապատ մայրաքաղաքին մասին: Արատտայի մասին կարեւորագոյն տեղեկութիւններէն մէկը երկրին մէջ սեփական զիրի գործածութեան փաստն է, ինչը կ'ապացուցուի նաեւ Հայկական Լեւոնաշխարհէն յայտնաբերուած Բ. ա. 4-3-րդ հազարամեակներու. նշանագիր յուշարձաններով, որոնք դեռ վերծանուած չեն:

«Արմենիա» անուան հնագոյն յիշատակութիւնները: Արժի, Արժան(ում), Արած: Բ. ա. 26-23-րդ դարերուն ներկայիս Սուրիոյ տարածքին կը բարձրանայ էպլա պետութիւնը, որ առեւտրական լայն ցանցով կապուած եղած է շրջակայ երկիրներուն հետ: Էպլայն գտնուած քննագիրներուն մէջ կը յիշատակուի Արժի (Արժանի) երկիրը, ուր քնակող «Հայայի որդիները» (հայորդիները) գործուն փոխյարաբերութիւններ ունէին էպլայի հետ:



Աարդոն Արատտայի



Նարած-Սուտի կորողը՝ գտնուած Տիարաքիի շրջանէն (Արժնիքի նահանգ)

Լույլուբին անցաւ Կուտիական երկրին (Կորդուաց աշխարհի հնագոյն անուանումն է), որն ալ վերջ դրաւ Նարամ-Սուենի բռնակալական իշխանութեան:

Կուտիական (Կորդուաց) հարիւրամեայ աշխարհակալութիւնը: Նարամ-Սուենը կատարեց նախադէպը չունեցող սրբապղծութիւն՝ ինքզինքը «աստուած» հռչակեց՝ կործանելով աստուածներու տաճարները եւ պարտադրելով պաշտել իր անձը: Շումերական քրմութիւնն օգնութիւն խնդրեց տասնեօթը երկիրներու դաշինքէն, որու ղեկավարումը Լույլուբին անցեր էր Կուտիական երկրին: Շուտով սրընթաց գրոհով Միջագետքի կեդրոն արշաւեցին Չայկական Լեռնաշխարհի լեռնականները, որոնց դէմ պատերազմի ընթացքին ինքնակոչ «աստուած»ն սպաննուեցաւ:

«Աշխարհի չորս կողմերու արքայ» տիտղոսը յաղթողի իրաւունքով անցաւ կուտի տիրակալներուն, որոնց իշխանութիւնը Ամանոսի լեռներն մինչեւ Էլամ, Չայկական Լեռնաշխարհի հիւսիսէն մինչեւ Պարսից Օոց կը տարածուէր:

Կուտիական աշխարհակալութեան աւարտէն ետք ալ Ք. ա. 21-րդ դարուն Չայաստանը կը պահպանէ իր հզօրութիւնն ու կարելոր դիրքը Յին Արեւելքի մէջ:

Չայկական Լեռնաշխարհը Ք. ա. 20-17-րդ դարերուն: Ք. ա. 20-18-րդ դարերուն Առաջաւոր Ասիոյ հիւսիսը կը գործէր մետաղի առետուրի մայրուղին, զոր կը ձգուէր Բաւնէշէն (քաղաք Փոքր Ասիոյ արեւելքը) մինչեւ Աշուր: Սայրուղիին հետ կապի մէջ եղած են Չայկական Լեռնաշխարհի անէլի քան երեք տասնեակ բնակավայրեր, որոնցմէ կ'արտահանուէին զանազան մետաղներ՝ ոսկի, արծաթ, պղինձ, անագ եւ այլն: Քանէշի բնագիրներուն մէջ կը յիշատակուին հայաստանեան մէկ տասնեակ իշխանութիւններ (Շուփանա (Շուփք), Թեզարամա (Թոզարմա, Թորզոմայ Տուն), Խախ(ում), Տուգրիշ եւ այլն):

Մետաղի լայն կիրառութիւնը շատ կարելոր էր ինչպէս տնտեսութեան, այնպէս ալ ռազմական գործին մէջ: Ռազմարուեստին մէջ կարելոր նշանակութիւն ունեցաւ ձիերու, յատկապէս, ձիերուն լծուած մարտակառքերու կիրառութիւնը: Չաւանաբար նշուած հանգամանքներով պէտք է բացատրել ռազմական այն պայթիւնը, որ տեղի ունեցաւ Չայկական Լեռնաշխարհէն Ք. ա. 18-17-րդ դարերուն. քասեցիները (կասիտները) արշաւեցին Բարբելոն, հիքսոսները՝ Եգիպտոս, արիացիները՝ Չնդկաստան: Երեք արշաւանքներն ալ ընթացան բացառիկ յաղթանակներով:

Միտաննիի թագաւորութիւնը: Ք. ա. 16-րդ դարուն Չայաստանի հարաւը եւ Միջագետքի հիւսիսը ստեղծուեցաւ հնդեւրոպական Միտաննիի թագաւորութիւնը՝ Վաշշուգանէ մայրաքաղաքով (Մասիոն լեռներուն վրայ): Միտաննիի եգիպտական աղբիւրներուն մէջ կը յիշատակուի «Նահարինա» անուամբ, որ, հաւանաբար, կը նոյնանայ «Նայիրի»-ի հետ:

Միտաննիի արքաները կը կրէին «Մեծ թագաւոր» տիտղոսը: Անոնց ազդեցութիւնը տարածուած է արեւելքէն մինչեւ Պոիթան եւ Մեծ Չապ գետերուն հովիտները, արեւմուտքէն՝ մինչեւ Միջերկրականի ծովեզերքը եւ Կիլիկեան Տարոսի լեռները: Միտաննիի իշխանութիւնը հիւսիսէն տարածուած է անուագն մինչեւ Արեւմտեան Եփրատի եւ Արածանիի միախառնման շրջանը:

Միտաննիի տեւական ռազմական քախման մէջ էր Եգիպտոսի հետ, քանի որ վերջինս հիքսոսներու դէմ վրիժառու պատերազմ սկսելով՝ հարուածներն ուղղեց նոյն ինքն Միտաննիի դէմ: Եգիպտա-միտաննիական պատերազմներու երկարատեւ շղթան (Ք. ա. 16-րդ դարու երկրորդ կէտն մինչեւ Ք. ա. 14-րդ դարու սկիզբը) աւարտեցաւ հաշտութեան կնքմամբ, որով Միջերկրականի արեւելեան աւազանի հարաւն անցաւ Եգիպտոսին, հիւսիսը՝ Միտաննիին: Դաշինքն ամրապնդուեցաւ խնամիական կապերով. քանի մը սերունդ՝ Միտաննիի արքայադուստրերը կը դառնային Եգիպտոսի փարաւոններու տիկնայք, որոնցմէ ամենանշանաւորը Նեֆերթիթին է:

Չնդեւրոպական այս թագաւորութեան տիրակալները հայոց ազգային պատմագրական աւանդոյթին մէջ կը նկատուին բնիկ հայ արքաներ, եւ անոնց անունները կը գտնենք Մովսէս Խորենացիի՝ Չայկագուն նահապետներու եւ արքաներու ցանկին մէջ (օրինակ՝ Պարատարնա (սեպագիրին մէջ) – Պարետ (ըստ Խորենացիի), Վասաշատա – Վաշտակ եւ այլն): Միտաննիի անկում ապրեցաւ Ք. ա. 13-րդ դարուն՝ հզօրացող Ասորեստանի հարուածներէն:

Չայասա թագաւորութիւնը: Խեթական սեպագիր բնագիրներուն մէջ Ք. ա. 15–13–րդ դարերուն Չայական Լեռնաշխարհի արեւմուտքը կը յիշատակուի Չայասա երկիրը: Երկրանուան հիմքին հայ ժողովուրդի ինքնանուանումն է (խեթերէնի մէջ տեղանունները կը կազմուին –(ա)սա մասնիկով): Չայասայի կարելոր կեդրոններն էր Կուժախան՝ յետագայ Մեծ Չայքի Բարձր Չայք աշխարհի Անի–Կամախը, ուր կը գտնուէր հայոց թագաւորներուն մեծ դամբարանը:

Չայասան ունէր իր արքունիքը, բանակը եւ քաղաքային կեդրոնները: Ան ունէր նաեւ իր դիցարանը: Դատելով խեթական սկզբնաղբիւրներուն մէջ խեթա–հայասական նամակագրութեան յիշատակութենէն՝ Չայասան ունէր արքունի դիւան՝ իր դպիրներով, որոնք պետական գրագրութիւնը վարած են:

Չայասան ռազմադաշտ դուրս կը բերէր 700 մարտակառքէ եւ 10 հազարոց հետեւակազօրէ թաղկացած բանակ մը, ինչն այդ ժամանակաշրջանին համար նշանակալից ոյժ էր:

Չայասան վերջին անգամ կը յիշատակուի Ք. ա. 13–րդ դարավերջին:

Նայիրեան «երկիր»ները: «Նայիրի» երկրանունն առաջին անգամ յիշատակուած է Ասորեստանի Ք. ա. 13–րդ դարու արձանագրութեանց մէջ: Այդ անուան տակ միաւորուած էին Վանայ լիճին աւազանը եւ դէպի հարաւ ու արեւմուտք ինկած ընդարձակ շրջանները: Ք. ա. 13–րդ դարուն կը յիշատակուին Նայիրեան «երկիր»ներու 40 առաջնորդները, որոնք ասորեստանեան բնագիրներուն մէջ «թագաւորներ» կը կոչուին:

Ասորեստանի արքաներու արձանագրութեանց մէջ Նայիրին կը յիշատակուի իբրեւ «ընդարձակ, հսկատակութիւն չճանչցող եւ անձանօթ երկիր», որ «մեծամեծ քաղաքներ» եւ շատ հարստութիւն ունէր:

Ք. ա. 9–րդ դարու ասորեստանեան արձանագրութեանց մէջ Նայիրին հանդէս կու գայ որպէս մէկ, միասնական երկիր–պետութիւն: Կը յիշատակուին «Նայիրի երկրին մէջ 250 քաղաք՝ իրենց զօրաւոր պարիսպներով»: Նոյն դարուն ասուրերէնով գրուած իրենց արձանագրութեանց մէջ Վանի թագաւորութեան արքաները սեփական երկիրը «Նայիրի» անուամբ կը կոչեն:



Չայաստանի Ք. ա. 2–րդ հազարամեակի զինատեսակներ

Չարցումներ եւ առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ պետական կառուցուածք ունէր Արատտա երկիրը:
2. Առաջին անգամ ե՞րբ կը յիշատակուին «Արմենիա» անուան նախածեւերը:
3. Ի՞նչ գիտէք Կուտիական (Կորդուաց) աշխարհակալութեան մասին:
4. Ներկայացուցէ՛ք Միտաննիի եւ Չայասայի թագաւորութիւնները (տարածքը եւ հիմնական ժամանակագրութիւնը):

Ք. ա. 9-րդ դարուն Առաջադուր Ասիոյ մէջ սկսաւ կարեւոր դերակատարում ունենալ Վանի թագաւորութիւնը, զոր ասուրերէն բնագիրներուն մէջ մշտապէս կը կոչուի Ուրարտու, տեղական արձանագրութեանց մէջ՝ Նայիրի եւ Բիայնիլի, Աստուածաշունչ Սատեանին մէջ՝ Արարատ: «Ուրարտու»-ն «Ա(յ)րարատ»-ի ասուրա-բաբելոնեան անուանածն է. ասուրերէն եւ բաբելոնեան արձանագրութեանց մէջ Չայաստանն այդպէս կը կոչուի մինչեւ Ք. ա. 4-րդ դարու առաջին կեսը ներառեալ:

Ասորեստանեան աղբիւրներուն մէջ անուանապէս յիշատակուող Ուրարտուի առաջին արքան Արամուն է («Արամու Ուրարտացի»), որ 859-843 թուականներու ընթացքին քանիցս դիմակայած է ասորեստանեան արշաւանքներուն:

Ասորեստանեան աղբիւրներուն մէջ յիշատակուող յաջորդ «ուրարտացի» արքան Սարգուրի Ա.ն էր, որու նոր հիմնած մայրաքաղաքը Տուշպան (Տոսպ, Վան) էր: Ք. ա. 830-ական թուականներուն իշխած, որպէս «Նայիրի երկրի արքայ» ներկայացող Սարգուրի Ա.ը մայրաքաղաքի հիմնադրման արձանագրութեանց մէջ կը կրէ Ասորեստանի արքաներուն տիտղոսաշարը՝ «մեծ արքայ, հզօր արքայ, տիեզերքի արքայ, արքաներու արքայ...»: Սա, հաւանաբար, անոր անցեր էր յաղթողի իրաւունքով՝ Ասորեստանի նկատմամբ տարած յաղթանակի շնորհիւ:

Վանի թագաւորութեան հզօրացման եւ տարածաշրջանային տիրութիւն դառնալուն մէջ կարեւոր դեր կը խաղան Սարգուրի Ա.ի որդի Իշպուինի արքայի (Ք. ա. մօտ 825-810) օրով սկսած եւ Մենուայի գահակալութեան ընթացքին (Ք. ա. մօտ 810-786) շարունակուած բարեփոխումները: Անոնցմէ յիշատակութեան արժանի են յատկապէս գրային բարեփոխումը՝ տեղական սեպագրի ստեղծումը, կրօնական բարեփոխումը՝ ողջ տիրութեան համար միասնական դիցարանի ստեղծումով (զոր արձանագրուեցաւ «Միերի Դուռ» կոչուող ժայռին վրայ), ռազմական բարեփոխումները եւ ուրիշ միջոցառումներ: Յատուկ ուշադրութիւն կը դարձուի ռազմական շինարարութեան, ամրոցներու մեծ ցանց մը կը ստեղծուի երկրին ռազմավարական ուղղութիւններուն վրայ:

Մենուայի միանձնեայ կառավարման շրջանին Չայկական Լեռնաշխարհին մեծագոյն մասը կը միաւորուի մէկ կեդրոնացուած պետութեան մէջ, իսկ հիւսիսային շրջաններու իշխանութիւնները թեպէտ չեն մտներ Վանի տիրութեան մէջ, քայց ընդունելով անոր գերիշխանութիւնը՝ հարկատու կը դառնան: Միաժամանակ, իր իշխանութեան երկրորդ շրջանին, Մենուան ո՛չ միայն իր գերիշխանութիւնը կը հաստատէ Ուրմիոյ լիճի աւազանէն շատ հարաւ եւ եփրատէն արեւմուտք, այլեւ՝ վերահսկո-



«Միերի Դուռը»



Սաղաարտ և կապարճ Վանի թագաւորութենէն (Ք. ա. 8-7-րդ դարեր)

Արգիշտի Ա.ի ազդեցութեան ոլորտներու շատ անցի մեծ պատկեր կ'ուրուագծուի հնագիտական պեղումներու շնորհիւ: Մասնաւորապէս, Արգիշտի Ա.ի անուամբ սեպագիր արձանագրութեամբ սաղաարտ մը գտնուած է Չիւսիսային Կովկասի մէջ: Եւստի սաղաարտներ յայտնաբերուած են նաեւ Արխագիոյ, Օսեթիոյ, Թոնդքի (Ճաւախքի դրացութեամբ) մէջ, որոնք կը լրացնեն Արգիշտի Ա.ի՝ գրաւոր աղբիւրներէն յայտնի ամենահիւսիսային նուաճումէն (Ճաւախք-Չարախա) մինչեւ Չիւսիսային Կովկաս տարածութիւնը: Չարալը մինչեւ Բաբելոն կատարած մեծ արշաւանքի հնագիտական հիմնաւորումներէն կարելի է նկատել Լուրիստանի մէջ (Քերմանշահ) գտնուած քիւսնական սաղաարտը:

Ամփոփելով Արգիշտի Ա.ի աշխարհակալութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնները՝ կը տեսնենք, որ անոր գերիշխանութիւնը տարածուած է բուն թագաւորութեան սահմաններէն շատ հեռու՝ մինչեւ Փոքր Ասիա եւ Բաբելոնը ներառեալ, իսկ քաղաքական ազդեցութեան եւ հետաքրքրութեանց ոլորտները ձգուած են մինչեւ Չիւսիսային Կովկաս եւ Չագրոսի կեդրոն: Այս պատկերն ունի հայոց մեծ տիրակալին ստեղծած տէրութիւնը:

Արգիշտի Ա.ի յաջորդին՝ Սարգուրի Բ.ի օրօք (Ք. ա. 764-735) կը նկատուի կարեւոր անցում մը տէրութեան կառավարման մէջ. ան կը սկսի վերացնել կախեալ (զուցտ «դաշնակից» նկատուող) թագաւորութիւնները՝ զանոնք վերածելով պետութեան վարչական միաւորներու՝ համադաշնային կառավարման համակարգէն անցում կատարելով գերկեդրոնացուած պետութեան:

Սարգուրի Բ.ի կառավարման ժամանակաշրջանին Վանի տէրութիւնն ունեցած է տարածքային ամենամեծ աճը: Անիկա հիւսիսէն կը հասնէր Սեւ Ծով (Կուլխա երկրին նուաճումով), հիւսիս-արեւելքէն՝ Կուր գետ (Ուրտեխի-Արցախ երկրին միաւորմամբ), արեւելքէն՝ Կասպից Ծով (Պուլուաղի երկրին գրաւումով), արեւմուտքէն՝ Փոքր Ասիա (Մելիթա, Մուշանի եւ Չապչա երկիրներուն հնագանդեցումով), հարաւէն կ'ընդգրկէր Բաբելոնը, հարաւ-արեւմուտքէն՝ Տամասկոսի թագաւորութիւնը (Ուուշիանի երկիրը): Չորս ծովերու միջեւ կը ստեղծուի հզօր տէրութիւն մը:

Այսպիսով՝ Մենուայի օրօք, Վանի տէրութիւնը Առաջաւոր Ասիոյ հզօրագոյն ոյժերէն մէկը դարձաւ, իսկ Արգիշտի Ա.ի եւ Սարգուրի Բ.ի օրօք եղաւ միանձնեայ առաջատարը: Ասիկա կէս հարիւրամեակէ անցի տեսց:

Սակայն Ք. ա. 743 եւ 735 թուականներուն Թիզլաթպալասար Գ.ի արշաւանքները կանխեցին Ասորեստանը լիակատար շրջափակման ենթարկելու եւ ոչնչացնելու ծրագիրները: Ատկէ ետք Ասորեստանը վերականգնեց դիրքերը՝ Վանի տէրութեան հետ դառնալով Առաջաւոր Ասիոյ երկու հզօրագոյն տէրութիւններէն մէկը:

Վանի տէրութիւնը շարունակեց մնալ Առաջաւոր Ասիոյ երկու հզօրագոյն տէրութիւններէն մէկը մինչեւ Ք. ա. 7-րդ դարու կեսերը: Այդ ընթացքին յատկապէս նշանաւոր էին

Ռուսա Բ.ի գահակալության տարիները (Ք. ա. 680–650–ական թուականներ). յայտնի են անոր յաղթարշաւները դէպի արեւմտեան երկիրներ՝ Թաբլանի–Թարալ, Կահնարու, Մուշկինի, Խալխուո–Խաղտիք եւ Խաթ:



Էրերունիի (Երեւան) հիմնադրման մասին Արգիշտի Ա.ի արձանագրութիւնը, Ք. ա. 782

Հայկական Լեոնաշխարհին հիւսիսը հաստատուած կիմերները Ք. ա. 8–րդ դարուն թշնամական արշաւանքներ ձեռնարկել էին Վանի տէրութեան դէմ: Մեզի յայտնի չէ, թէ ինչպէս, սակայն փաստ է, որ Ռուսա Բ.ը յաջողեցաւ բարեկամական եւ դաշնակցային յարաբերութիւններ հաստատել կիմերներուն հետ եւ նպաստեց անոնց՝ Փոքր Ասիոյ արեւելք տեղափոխուելուն (Կապադովկիոյ տարածքը հայկական միջնադարեան աղբիւրներուն մէջ անոնց անուամբ կը կոչուի Գամիրք): Ռուսա Բ.ը կըրցաւ Փոքր Ասիոյ տարածքէն կիմերներն ուղղել Ասորեստանի դէմ: Փաստօրէն, դիւանագէտ–արքան կըրցաւ ո՛չ միայն կանխել կիմերներու հաւանական յարձակումներն իր երկրին դէմ, այլեւ վաղեմի թշնամին դարձուց իրեն դաշնակից, ապա ուղղեց իր մէկ ուրիշ հին թշնամիին՝ Ասորեստանի դէմ:

Ռուսա Բ.էն ետք ստուգապէս յիշատակուած միակ արքան անոր որդի Սարգուրի Գ.ն է, զոր ասորեստանեան արձանագրութեանց մէջ կը յիշատակուի Ք. ա. 643 թուականին: Սարգուրի Գ.էն ետք իշխած է Սարգուրի Գ.ը (Սարգուրի Սարգուրորդի), որու կառավարման մասին մեզի, ըստ էութեան, ոչինչ յայտնի է:

Համեմատաբար լուսաբանուած է Ռուսա Գ.ի (երիմենայի որդիի) իշխանութեան շրջանը, որմէ մեզի հասած արձանագրութիւնները յայտնաբերուած են Վանայ լիճի արեւելեան շրջաններէն եւ Արարատեան դաշտի հնավայրերէն: Սա կրնայ վկայել Ռուսա Գ.ի օրօք պետութեան սահմաններու նեղացման մասին:

Վանի արքայատոհմի իշխանութիւնն աստիճանաբար կը թուլնար: Պետութեան անկմանը նպաստեցին նաեւ հիւսիսէն ասպատակող սկիւթական ցեղերը: Թէ ե՞րբ անկում ապրած է Վանի թագաւորութիւնը, ստուգապէս յայտնի չէ: Հիմքեր կան կարծելու, որ Վանի արքայատոհմէն իշխանութեան անցումը յաջորդ արքայատոհմին կատարուած է առանց պատերազմի՝ պալատական յեղաշրջման միջոցով, Ք. ա. 609 թուականէն առաջ:

Հայկական Լեոնաշխարհի արեւմտեան մասին մէջ Ք. ա. 7–րդ դարուն ձեւաւորուել էր հայկական նոր, մեծ իշխանութիւն մը՝ Սկայորդիի գլխաւորութեամբ: Անոր որդի Պարոյր Հայկազունին ալ վիճակուած էր Ք. ա. 612 թուականին հռչակել նոր թագաւորութիւն:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ո՞վ հիմնած է Տուշպա մայրաքաղաքը, ի՞նչ գիտք անոր մասին:
2. Պատմեցէ՛ք Իշպուհնի եւ Մենուա արքաներու բարեփոխումներուն մասին:
3. Լերկայացուցէ՛ք Վանի տէրութեան սահմանները Արգիշտի Ա.ի եւ Սարգուրի Բ.ի օրօք:
4. Ի՞նչ գիտք Ռուսա Բ. արքային մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՀԱՅԿԱԶՈՒՆ-ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՆԵՐՈՒ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՄԻՆՉԵՒ
Ք. Ա. 331 ԹՈՒԿԱՆԸ

6.

Ք. ա. 681 քուականին Ասորեստանի Սենեցերիմ (Սինախերիբ) արքայի որդիներ Աարասարը (Սանասարը) և Ադրամելեքը կը սպանեն իրենց հայրը և Հայաստան կը փախին: Ըստ Մովսես Խորենացիին՝ անոնց ապաստան կու տայ Հայկազուններու աւագ ճիւղի ներկայացուցիչ Սկայորդին՝ զանոնք Ասորեստանի սահմանակցութեամբ բնակեցնելով:

Ըստ Պատմաօր հաղորդման՝ Սկայորդիի որդի Պարոյրը միաւորեց Վանայ լիճէն մինչեւ Եփրատն ինկած ողջ տարածքը և դաշինք կնքեց Մարաստանի (Մետիա) և Բաբելոնի հետ՝ Ասորեստանի դէմ: Ք. ա. 612 քուականին դաշնակից զօրքերը զրուեցին Ասորեստանի ժայռաքաղաք Նինուէն: Այս արշաւանքին մասնակցելու համար, Մարաստանի արքան քազադրեց Պարոյրը և զայն Հայաստանի քազաւոր ծանցաւ: Երբ դաշնակից զօրքերը Ք. ա. 609 քուականին Տուշաթա-Վանի շրջանով կ'արշաւէին դէպի Ասորեստանի վերջին յենակէտ Կարքեմիշ, այդ ժամանակ Վանը դաշնակիցներուն, այսինքն՝ Պարոյրի իշխանութեան տակն էր արդէն: Սա կը նշանակէ, որ Վանի արքայատոհմէն իշխանութեան անցումը Պարոյրին տեղի ունեցեր էր այդ քուականին կամ մինչ այդ:

Պարոյրի յաջորդներն Ք. ա. 580-570-ական քուականներուն նշանաւոր դարձաւ Երուանդ Ա. Սակաւակեացը, որու անունով ալ Հայկազուններու մէկ ճիւղը հանդիսացող արքայատոհմը գիտութեան մէջ ստացեր է **երուանդական, երուանդեան** կամ **երուանդունի** անուանումը:

Երուանդ Սակաւակեացն ունէր 40.000 ինտելակ և 8.000 ինտելալ զօրք, ինչն այդ ժամանակներուն բաւական մեծ ոյժ էր: Թագաւորութեան սահմանները հիւսիս-արեւելքն կը հասնէին Կուր գետ, հիւսիս-արեւմուտքէն՝ Սև Ծով, արեւելքէն՝ Մարաստան, իսկ հարաւն՝ Հիւսիսային Սիջազետք:

Երուանդ Սակաւակեացը Մարաստանի արքայ Կիաքսար-Վարթակէտի (Ք. ա. 625-585) դէմ պատերազմին անյաջողութիւն կրելով՝ ստիպուած ծանցեր էր մարական գերիշխանութիւնը: Կարճ ժամանակ ետք, արդէն Ածդահակ-Աստիագէտի (Ք. ա. 585-550) օրով, ան կ'ապստամբի Մարաստանի դէմ: Ապստամբութիւնը կը ծախողի, և հայոց արքայական ընտանիքը մարական արքունիքին ծուղակը կ'իյնայ: Այն հարցին, թէ ի՞նչն էր իր ապստամբութեան դրդապատճառը, հայոց արքան հպարտօրէն կը պատասխանէ. «Ես

Հայոց պատկերաքանդակը Փեխեսարդիսի մէջ



ազատութեան կը ձգտէի, ... որ ինքս ազատ ըլլամ եւ որդիներուս ազատութիւն ձգեմ»:

Մարաստանի գերիշխանութիւնը վերացուեցաւ Ք. ա. 6-րդ դարու կեսին, երբ երուանդ Ա.ի որդի Տիգրան երուանդեանը պարսից արքայ Մեծն Կիւրոսի հետ միացեալ ոյժերով ապստամբեցաւ Մարաստանի դէմ: Մեծն Կիւրոսի գլխաւոր դաշնակիցն էր Տիգրանը, որու իշխանութիւնը, բուն Հայաստանէն բացի, կը տարածուէր նաեւ Կապադովկիոյ, Վրաստանի եւ Աղուանքի վրայ: Ըստ հայկական աւանդութեան՝ նոյն ինքն Տիգրանն է սպաններ Աժդահակ արքան:

Ք. ա. 550-ին Մեծն Կիւրոսն ստեղծեց Աքեմենեան աշխարհակալութիւնը, որ մինչ այդ գոյութիւն ունեցած աշխարհակալ տէրութիւններէն ամենամեծն էր: Վերջինիս սահմանները Միջերկրական Ծովէն եւ եգիպտոսէն մինչեւ Հնդկաստան կը ձգուէին: Ժամանակակից սեպագիր աղբիւրներուն մէջ Հայաստանը աւանդոյթի ոյժով կը կոչուի «Կուտիական երկիր», որուն տիրակալը (իմա՝ Տիգրան երուանդեանը) Մեծն Կիւրոսի աջ ձեռքն էր: Ան նոյն ինքը այն տիրակալն էր, որ Ք. ա. 538 թուականին դաշնակից զօրքերու գլուխ անցած՝ զրաւեց Բաբելոնը, որմէ ետք հայոց արքայ ըլլալէ բացի, դարձաւ նաեւ Աքեմենեան տէրութեան արեւմտեան կեսի փոխարքան:

Ներկայացնելով Հայկազուններն ըստ իրենց մեծագործութեանց՝ Սովսէս Խորենացին Տիգրան երուանդեանը կը նկատէ մեր պատմութեան երրորդ խոշորագոյն դէմքը՝ Հայկէն եւ Արամէն ետք: Պատմահայրն այսպէս կ'ընդհանրացնէ Տիգրան Ա. երուանդեանի գահակալութիւնը. «Սա մեր թագաւորներն ամենախոզորը եւ ամենախոտեմն էր եւ անոնց բոլորն քաջը: Ան Կիւրոսին աջակից եղաւ մարաց իշխանութիւնը տապալելու... եւ մեր բնակութեան սահմաններն ընդարձակելով հասցուց մինչեւ հին բնակութեան սահմաններուն ծայրերը. իր բոլոր ժամանակակիցներուն նախանձեւի եղաւ, իսկ յետոյ եկողներուս՝ ցանկալի թէ ինքը եւ թէ՛ իր ժամանակը»:

Ըստ յոյն պատմիչ Քսենոփոնի՝ Տիգրանը փիլիսոփայի մը աշակերտեր էր, եւ ինքն ալ յայտնի էր իր իմաստութեամբ ու տաղանդով:

Որպէս Կիւրոսի գլխաւոր դաշնակից՝ Հայաստանն արտօնեալ դիրք ունէր տէրութեան մէջ: Մեծն Կիւրոս Բ.ը կը զոհուի Ք. ա. 529 թուականին, անոր կը յաջորդէ իր որդի Կամբիսէսը (Կամբիզը): Անոր օրօք ալ կը պահպանուին Հայաստանի եւ Աքեմենեան Պարսկաստանի դաշնակցային յարաբերութիւնները: Տիգրան երուանդեանը կը մահանայ Կիւրոսէն հինգ տարի ետք: Ըստ Սովսէս Խորենացիին՝ անոր կը յաջորդէ Վահագն անունով որդին, որ, հաւանաբար, անուանակոչուեր էր հայոց ռազմի գերագոյն աստուծոյ անունով, կամ աստուածացուելով՝ նկատուած էր այդ աստուծոյ երկրային մարմնաւորումը (յայտնութիւնը):

Ք. ա. 522-ին Պարսկաստանի մէջ կը սկսին գահակալական կռիւներ, որոնք, ի վերջոյ կ'աւարտին Դարեհ Ա.ի յաղթանակով: Երբ Դարեհը հաստատուեցաւ գահին, քանի մը երկիրներ ապստամբեցան Աքեմենեան տէրութեան դէմ: Հայաստանը Դարեհի իշխանութեան օրինականութիւնը չճանչցաւ:

Դարեհն ստիպուած եղաւ իր իշխանութեան առաջին տարիներուն պատերազմիլ թագմաթի հակառակորդներու դէմ, ինչի մասին կը պատմէ անոր թողած Պեհիսթունեան եռալեզու արձանագրութիւնը:

Արձանագրութեան պարսկերէն բաժինին մէջ Հայաստանը կը կոչուի **Արմինա**, էլ անբնիկն մէջ՝ **Հարմինույա**, քարեւերէնին մէջ՝ **Ուրարտու**: Հայաստանը կը շարունակէ «Ուրարտու» կոչուիլ նաեւ աւելի ուշ՝ Ք. ա. 4-րդ դարուն՝ Աքեմենեան արքայ Արտաքսերքսէս Բ.ի քարեւերէն արձանագրութեանց մէջ, ինչը անգամ մըն ալ ցոյց կու տայ, որ «Ուրարտու»-ն Հայաստանի անուանումներէն մէկն էր:



Երուանդ Բ.ի ոսկեդրամներէն

Ք. ա. 522–521 թուականներուն Դարեհը բազմաթիւ արշաւանքներ կը ձեռնարկէ՝ վերանուաճելու իր իշխանութիւնը չընդունող երկիրները: Պեհիսթունեան արձանագրութեան սկիզբը Հայաստանը չի յիշատակուիր ապստամբ երկիրներու շարքին, ինչը ցոյց կու տայ, որ վերջինս լիովին անկախ էր:

Եթէ Դարեհը կը յաջողէր միւս երկիրները նուաճել մէկ արշաւանքով, ապա պետք եղաւ հինգ արշաւանք կատարել դէպի Հայաստան: Եւ միայն հինգերորդ արշաւանքէն նստ հայերը կ'ընդունին Դարեհի գերիշխանութիւնը:

Նոյն արձանագրութիւնը կը հաղորդէ, որ Դարեհի դէմ Բաբելոնի մէջ բարձրացած ապստամբութիւնը կը ղեկավարէր «*Խայազգի Արայիսան Խալդիտայի որդին*»: Սա մէկ կողմէ ցոյց կու տայ, որ Ք. ա. 520-ական թուականներուն հայոց մէջ կը շարունակուէր խալդի աստուծոյ պաշտամունքը, միւս կողմէ կը վկայէ Բաբելոն–Հայաստան կապի մասին: Կարելի է ենթադրել, որ Բաբելոնի ապստամբութիւնը կրնար ուղղորդուած ըլլալ Հայաստանէն, ինչը մեր երկրի՝ տարածաշրջանային ազդեցութեան ուղղակի վկայութիւն կրնայ ըլլալ:

Ք. ա. 521–ին Հայաստանը կը ճանչնայ Աքեմենեաններուն գերիշխանութիւնը, սակայն պարսիկներն ալ, իրենց կարգին, ստիպուած կ'ըլլան զիջումներու դիմել: *Հայաստանի մէջ կը շարունակեն իշխել Երուանդականները, որոնք սեփական դրամ կը հատին եւ լիակատար ներքին ինքնավարութիւն կը վայելէին*:

Ք. ա. 520–ին Աքեմենեան տէրութիւնը քսան վարչական մեծ միաւորներու՝ սատրապութիւններու բաժնուեցաւ: Հայաստանը կը կազմէր 13–րդ սատրապութիւնը, եւ այդ կարգավիճակով Աքեմենեան տէրութեան կազմին մէջ մնաց մինչեւ Ք. ա. 331 թուականը:

Ք. ա. 401–ին Հայաստանի տարածքով անցած յոյն զօրավար եւ պատմիչ Քսենոփոնը կը տեղեկացնէ, որ այդ ժամանակ Հայաստանի սատրապն էր Օրոնտասը (Երուանդ Բ. ը), որ ամուսնացած էր Աքեմենեան արքայ Արտաքսերեսէ Բ.ի դուտեր հետ եւ բարձր դիրք կը զբաւէր տէրութեան մէջ:

Երուանդ Բ. ը ոսկիէ եւ արծաթէ եւ պղինձէ դրամներ հատած է սեփական պատկերով: Ամոր մասին վերջին տեղեկութիւնները կը վերաբերին Ք. ա. 360–ական թուականներուն, ըստ որոնց՝ ան գլխաւորէր էր Աքեմենեաններու դէմ բարձրացած քանի մը սատրապներու ապստամբութիւնը, բայց անյաջողութիւն կրելով՝ Յունաստան ապաստանած է (մահացած է Ք. ա. 344–ին):

Ըստ Քսենոփոնի՝ Հայաստանի արեւմտեան մասն ունէր իր կառավարիչը՝ Տիրիբազ անունով, որ Երուանդ Բ.ին կ'ենթարկուէր: Ամեն գիւղ իր գիւղապետն ունէր: Քսենոփոնը կը նկարագրէ Հայաստանը որպէս շատ հարուստ, բարեկեցիկ եւ հիւրընկալ ժողովուրդ ունեցող նրկիր: Կը նշուի, որ չկար տուն մը, ուր զիրենց չհիւրասիրէին բազմապիսի խմիչքներով ու մսեղէն կերակուրներով. յոյն պատմիչն առաջին անգամ հոս տեսած է զարեջուրը՝ «*զարի՛՛ք պատրաստուած գինի մը, որու երեսին զարիի հասիկներ կը լողային*»...

Յայտնի է, որ Աքեմենեան վերջին տիրակալ Դարեհ Գ. Կողոմանոսը Աքեմենեան գահին բազմելէ առաջ եղած է Հայաստանի սատրապը եւ հայոց գահին վրայ կրած «Արտաշատ» անուանումը: Ք. ա. 336–ին ան կը դառնայ ողջ Աքեմենեան պետութեան տիրակալը, իսկ Հայաստանի սատրապ կը դառնայ Հայկազուն–Երուանդականներու տոհմի ներկայացուցիչ Երուանդ (Օրոնտես) Գ. ը, որուն ալ վիճակուած էր վերականգնել Հայաստանի անկախութիւնը:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ի՞նչ կը հաղորդէ Սոպես Խորենացին Պարոյրի եւ Տիգրան Երուանդեանի մասին:
2. Լերկայացուցէ՞ք Պեհիսթունեան արձանագրութեան տուեալները Հայաստանի ու հայոց մասին:
3. Ինչպէ՞ս էր Հայաստանն ըստ Քսենոփոնի նկարագրութեան:
4. Ի՞նչ պաշտօն զբաղցուցած է Դարեհ Գ. Կողոմանոսը Աքեմենեան պետութեան տիրակալ դառնալէն առաջ:

**7. ՀԱՅՈՑ ԹԱԳԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
331–201 ԹՈՒՎԿԱՆՆԵՐՈՒՆ**

Աղեքսանդր Մակեդոնացիին արշաւանքները եւ Հայաստանը:

Ինչպէս վերը նշեցինք, Աքեմենեան վերջին տիրակալ Դարեհ Գ. Կողոմանոսը, որ մինչ այդ Հայաստանի սատրապն եղած էր, գահ բարձրացաւ Ք. ա. 336 թուականին: Նոյն տարին իւր Ֆիլիպ Բ.ի սպանութենէն ետք Մակեդոնիոյ մէջ գահ կը բարձրանայ որդին՝ քսանամեայ Աղեքսանդրը, որուն վիճակուած էր դառնալ համաշխարհային պատմութեան ամենանշանաւոր դէմքերէն մէկը (Մեծն Աղեքսանդր կամ Աղեքսանդր Մակեդոնացի, Ք. ա. 336–323):

Ք. ա. 334–ին Աղեքսանդրը պատերազմ սկսաւ Աքեմենեան տէրութեան դէմ եւ Գրանիկոս գետի ափին ունեցաւ առաջին յաղթանակը: Յաջորդ տարուայ գարնան Կիլիկիոյ Իսսոսի դաշտի մէջ տեղի կ'ունենայ երկրորդ մեծ ճակատամարտը, ուր պարսից զօրքն աւելի ծանր պարտութիւն կը կրէ. Դարեհը փախուստի կը դիմէ, գերի կ'իյնան անոր մայրը, կինը, երկու դուստրերն ու մանկահասակ որդին: Իսսոսի յաղթանակէն ետք Աղեքսանդրը կը շարունակէ արշաւանքը դէպի Եգիպտոս, զոր կը նուաճէ առանց լուրջ դիմադրութեան:

Հակառակորդներուն միջեւ վճռական ճակատամարտը կը սղուի 331 թուականի Հոկտեմբերի 1–ին, Գաւգամելայի մօտ:

Յայտնի է, որ հայերն արեւմենեան զօրքի կազմին մէջ մասնակցած են Մակեդոնացիի դէմ մղուած երկու՝ Իսսոսի եւ Գաւգամելայի ճակատամարտերուն: Գաւգամելայի ճակատամարտին՝ հայկական զօրքերը կը ղեկավարեն Օրոնտես–Երուանդ Գ.ն ու Միթրաուստեսը: Սովսես Խորենացին կը տեղեկացնէ, որ Աղեքսանդր Մակեդոնացիին դէմ մարտնչած եւ զոհուած է Վահէ Հայկազունին: Կարելի է ենթադրել, որ Վահէ Հայկազունին առաջնորդած է Իսսոսի ճակատամարտին մասնակցած 47 հազարոց հայկական բանակն ու զոհուած է այդ մարտին մէջ:

Գաւգամելայի ճակատամարտին (ինչպէս Իսսոսի մէջ) հայերն արեւմենեան բանակի աջ թևի գլխաւոր ոյժն էին եւ զայն կ'առաջնորդէին: Դարեհը կրկին փախուստի կը դիմէ: Մակեդոնացին կը սկսի հետապնդել Դարեհը, սակայն կը ծախտոյի արեւմենեան բանակի աջ թևի հերոսական գործողութեանց շնորհիւ, որու վճռորոշ ոյժը, ինչպէս նշեցինք, հայոց զօրքն էր: Տեղեկանալով Դարեհի փախուստի մասին՝ հայոց զօրքը «արագ երթով նահանջով» դուրս կու գայ ճակատամարտէն եւ Հայաստան կը վերադառնայ:

Հերոսաբար մարտնչած եւ արժանապատուօրէն հայրենիք վերադարձած հայկական զօրքերը Գաւգամելայի ճակատամարտէն ետք Ք. ա. 331 թուականին կը վերականգնեն Հայաստանի անկախութիւնը՝ Մեծ Հայքի մէջ Օրոնտես–Երուանդ Գ.ի, իսկ Փոքր Հայքի մէջ Միթրաուստեսի ղեկավարութեամբ:

Մակեդոնական եւ հայկական զօրքերուն յաջորդ բախումը տեղի կ'ունենայ 2–3 տարի ետք, երբ Աղեքսանդրի զօրաբանակներէն մէկը, Մենոն զօրավարին գլխաւորութեամբ, Բարձր Հայքի ոսկիի հանքերուն շրջանը ղրկուեցաւ: Ինչպէս կը վկայէ յոյն մատենագիր Ստրաբոնը, հայերն այս բանակը կ'ոչնչացնեն, իսկ զօրավարը «խեղդամահ կ'ընեն»: Ասկէ ետք Աղեքսանդրը Հայաստան նոր զօրք ղրկելու փորձ չըրաւ: Նշուած փաստերը կը վկայեն, որ Աղեքսանդր Մակեդոնացին ստիպուած էր հաշուի նստիլ հայկական զինոյժին հետ եւ խուսափած է անոր հետ նոր առճակատումէ:

Գաւգամելայի ճակատամարտէն որոշ ժամանակ ետք, նահանջի ճամբուն վրայ, Դարեհ Գ.ը կը սպաննուի իր մերձաւորներուն կողմէ: Աքեմենեան տէրութիւնն անկում կ'ապրի, իսկ Մակեդոնացին կը շարունակէ արշաւանքը դէպի Միջին Ասիա եւ Հնդկաստան՝ ստեղծելով աննախադէպ իսկայաձառալ աշխարհակալութիւն մը, որու մայրաքաղաք կը հռչակէ

ԱՂԵՔՍԱՆՈՐ ՄԱԿԵՂՈՆԱՅԻՆ ԱՐԵԱՒԱՆՔՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Բարեւոյնը: Աղեքսանդրը կը մահանայ Ք. ա. 323 թուականին՝ 33 տարեկան հասակին: Անոր արշաւանքներով՝ Առաջաւոր Ասիոյ մէջ կը սկզբնաւորուի հելլենիզմի՝ յունականութեան դարաշրջանը: Հայաստանն այդ դարաշրջան մտաւ լիակատար անկախութեամբ:

Աղեքսանդրի վէպն ու Հայաստանը: Աղեքսանդրի մասին առասպելներ տտեղծուել են դեռ անոր կենդանութեան օրով: Իսկ Ք. ա. 240–ին առաջին անգամ յունարէնով գրի առնուեցաւ Աղեքսանդրի վէպը:

Ըստ վէպին՝ Աղեքսանդրը կը ծգտի հասնիլ անմահութեան, որու համար կը բռնէ ճամբան «դէպի Հայոց Աշխարհ, ուր ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»: Իսկ վէպի սուրիական տարբերակին մէջ անոր ճամբուն վրայ կը յիշուի Մասիս լեռնաշղթան: Այս նոյն ճամբան անցեր էր Հին Արեւելքի ամենանշանաւոր հերոս Կիլկամշը (Ք. ա. 27–րդ դար), որ նոյնպէս անմահութեան կը ծգտէր եւ առասպելներու ու դիւցազնավէպի հերոս դարձեր էր: Փաստօրէն, հին արեւելեան եւ հելլենիստական վիպական ականդութեանց մէջ «դէպի Արատտա ճամբան» կը փոխարինուի «դէպի Հայոց Աշխարհ ճամբայ»ով, Մաշու (Մասու) լեռները՝ Մասիս լեռնաշղթայով, երկու պարագային ալ հերոսը դէպի Եփրատի ու Տիգրիսի ակունքները կ'երթայ:

Երբեւէ Հայաստան չմտած Աղեքսանդրը վիպական ականդութեան մէջ կը բռնէ Հայաստանի ճամբան, քանի որ Հին Արեւելքի հոգեւոր ընկալումներուն մէջ մեր երկրին հետ էին կապուած դրախտայինն եւ անմահութեան վերաբերող պատկերացումները: Յատկանշական է, որ հայկական ականդազրոյցներուն եւ հեքիաթներուն մէջ նոյնպէս պահպանուած են Աղեքսանդր Մակեդոնացիի Հայաստան գալու եւ «անմահական ջուր» ձեռք բերելու սիւժէները:

Հայկական թագաւորութիւնները եւ Սելեւկեան տէրութիւնը: Հայաստանն աննուաճ մնաց նաեւ Մակեդոնացիի մահէն ետք, երբ մակեդոնական աշխարհակալութիւնը բաժնուեցաւ քանի մը մասերու, որոնցմէ ամենախոշորը Հայաստանին սահմանակցող Սելեւկեան տէրութիւնն էր:

Ըստ Դիոդորոս Սիկիլիացիի (Ք. ա. 1–ին դար) հաղորդման՝ մակեդոնացիներու գահընկէց ըրած Կապադովկիոյ արքայ Արիարաթը վերականգնուած է հայրական գահին: Մեծ Հայքի արքայ Արդուատեսի շնորհիւ. «Արիարաթը, պարտուելով ճակատամարտին մէջ, ինկաւ, որմէ ետք թէ՛ Կապադովկիան եւ թէ՛ անոր սահմանակից երկիրներն ինկան մակեդոնացիներու»:



Աղեքսանդր Մակեդոնացիի դրամներն

րու տիրապետության տակ: Իսկ Արիարաթսը՝ նախորդ թագաւորի որդին, յուսահատելով այդ ժամանակ ստեղծուած դրութենէն, քիչերու հետ կ'ապաստանի Չայաստանի մէջ: Ոչ-շատ ժամանակ ետք... Արիարաթսը, հայոց թագաւոր Արդոատսէն զօրք ստանալով, սպաննեց մակեդոնացիներու զօրապետ Ամինտասը, մակեդոնացիներն անյապաղ դուրս վտարեց երկրէն եւ վերանուծեց իր հայրենի իշխանութիւնը»: Սա տեղի ունեցած է Ք. ա. 322 կամ 301–300 թուականներուն: Փաստն ինքնին շատ խօսուն է եւ կը վկայէ, որ նորանկախ Չայաստանն արդէն վճռորոշ ոյժ էր տարածաշրջանին մէջ:

Ք. ա. 9. դարուն Չայաստանին տիրանալու Սելեւկեաններու փորձերն ապարդիւն անցան, քանի որ Մեծ

եւ Փոքր Չայքերը միասնաբար կը գործէին:

Փոքր Չայքի տարածքին գտնուած եւ Ք. ա. 9. դարով թուագրուող երկլէզու (յունարէն եւ արամեերէն) արձանագրութիւն մը կը վկայէ, որ Փոքր Չայքի մէջ իշխած են Արիակէսը, զոր Գաւգամելայի ճակատամարտին կը ղեկավարէր հայոց կողքին մարտնչող կապադովկիացիներուն զօրքը, ապա՝ անոր որդի Օրոմանան (թերեւս՝ Արամանեակ): Վերջինիս յաջորդած է անոր որդին, որ կրած է իր մեծ հօր անունը՝ Արիակէս: Չաւանաբար, աւագ Արիակէսը Փոքր Չայքի մէջ իշխած է Միթրաուստսէն ետք:

Ք. ա. մօտ 260–240–ական թուականներուն իշխած հայոց արքայ Սամոս (Շամ) երուանդականը կառուցեց Կոմմագենի կեդրոն Սամոսատ (Շամշատ) քաղաքը եւ հատեց դրամներ, որոնք մեզի հասած առաջին հայկական արքայական դրամներն են (մինչ այդ դրամներ հատեր էին երուանդ Բ.ը եւ Տիրիբազը, որոնք Աքեմենեան շրջանի հայ սատրապներ էին): Ք. ա. 240–ական թուականներուն Շամին յաջորդեց անոր որդի Արշամը (Արսամէս): Ան կառուցեց Արշամաշատ քաղաքը Ծոփքի մէջ եւ Արսամէս անունով երկու քաղաք Կոմմագենի մէջ: Արշամի մասին կը տեղեկանանք, որ ան այնքան հզօր էր, որ կրցեր էր ապաստան տալ Սելեւկեան տիրակալին դէմ ապստամբած անոր եղբօրը:

Ք. ա. 9. դարու վերջին Չայաստանը թուլցեր էր: Ատիկա նպաստաւոր պայմաններ ստեղծեց Սելեւկեաններու վաղեմի ծրագիրի իրագործման համար, ինչին նպաստեց հայոց ներքին երկպառակութիւնը: Ք. ա. 201–ին Սելեւկեան արքայ Անտիոքոս Գ.ի զօրքերը հայազգի զօրավարներ Արտաշէսի եւ Ջարեհի գլխաւորութեամբ արշաւեցին Չայաստան: Երուանդ Դ. Վերջինը (Ք. ա. մօտ 220–201) զոհուեցաւ երուանդաշատ մայրաքաղաքի պաշտպանութեան ատեն: Այնուհետեւ գրաւուեցաւ Մեծ Չայքի հոգելոր կեդրոն Բագարանը, ուր սպաննուեցաւ երվազ քրմապետը՝ երուանդ արքային եղբայրը: Այսպիսով, Ք. ա. 201–ին Մեծ Չայքի մէջ վերջ դրուեցաւ Չայկազուններու երուանդական ճիւղի իշխանութեան:

Արտաշէսը Մեծ Չայքի մեծ մասին, իսկ Ջարեհը Ծոփքի մէջ նշանակուեցան սելեւկեան կառավարիչներ (ստրատեգոսներ): Այդ վիճակը շարունակուեցաւ մինչեւ Ք. ա. 190 թուականը, երբ Փոքր Ասիոյ Մագնեսիա քաղաքին մօտ Սելեւկեաններու եւ Ռոմի միջեւ մղուած վճռական ճակատամարտն աւարտեցաւ Անտիոքոս Գ.ի ծանր պարտութեամբ: Օգտուելով ստեղծուած իրադրութենէն՝ հայերը վերականգնեցին անկախութիւնը:

Չարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ տեղի ունեցած է Գաւգամելայի ճակատամարտը եւ որո՞նք էին հայկական զօրքերու իրամանատարներն այդ մարտին մէջ:
2. Գաւգամելայի ճակատամարտէն ետք, Մեծ Չայքն ու Փոքր Չայքը որո՞ւ գլխաւորութեամբ վերականգնեցին անկախութիւնը:
3. Ի՞նչ վախճան ունեցաւ մակեդոնական զօրքին միակ արշաւանքը Չայաստան (Մենոն զօրավարին գլխաւորութեամբ):
4. Ներկայացուցէք Մեծ Չայքի եւ Փոքր Չայքի՝ Ք. ա. 9. դարուն իշխած արքաները:

Մագնեսիայի ճակատամարտն ետք (Ք. ա. 190 թուական) ստեղծուած դրութենէն օգտուելով՝ Արտաշէսը Մեծ Հայքի, իսկ Ջարեհը Ծոփքի մէջ վերականգնեցին անկախութիւնը: Հոռմն անմիջապէս ճանչցաւ անոնց անկախութիւնը: Ք. ա. 180-ական թուականներուն Փոքր Հայքի անկախ թագաւորն էր Միհրդատ Երուանդունին, իսկ 163-ին Կոմմագենէն անկախ կը դարձնէ Պտղոմէոսը՝ Արշամ Երուանդունիին թուր: Այսպիսով՝ Ք. ա. 190-160 թուականներու ընթացքին անկախացան չորս հայկական թագաւորութիւններ՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքը եւ Կոմմագենէն:

Մեծ Հայքը Արտաշէս Ա.ի օրօք: Արտաշէս Ա.ի (Ք. ա. 190-160) արամէտառ արծանագրութեանց մէջ հնարաւոր է ընթերցել արքայի «Երուանդական» տոհմանունը: Հետեւաբար, հաւանական է, որ Մեծ Հայքի արքայ Արտաշէսն ալ Հայկազուն-Երուանդականներէն սերած ըլլայ:

Արտաշէս Ա.ի առաջնահերթ խնդիրներէն էր Մեծ Հայքէն անջատուած տարածքներուն վերամիաւորումը: Ան Մարաստանէն, Վրաստանէն, Պոնտոսէն, իսկ աւելի ուշ՝ Սելեւկեան տէրութենէն ետ գրաւեց Կասպքը, Բասորոպոյտան, Փավնիտիդէսը, Գուգարքը, Կղարքքը, Դերձանը, Կարինը, Եկեղիքը, Տնորիքը եւ ուրիշ տարածքներ: Արտաշէս Ա.ը հայկական տարածքներուն մեծ մասը միաւորեց Մեծ Հայքի թագաւորութեան մէջ:

Ջարեհի մահէն ետք Ծոփքի թագաւորութիւնը Մեծ Հայքին վերամիաւորելու Արտաշէս Ա.ի փորձն անյաջողութեան մատնուեցաւ Կապադովկիոյ միջամտութեան պատճառով:

Երկրի ներքին կեանքին մէջ Արտաշէս Ա.ը մեծ բարեփոխումներ կատարեց: Ան բանակը բաժնեց չորս սահմանակալ զօրավարութիւններու՝ ըստ աշխարհի չորս կողմերուն: Մեծ Հայքի տարածքը բաժնուեցաւ 120 ստրատեգիաներու (զաւառներու), կարգաւորուեցաւ երկրին կառավարման համակարգը:

Պետութեան կարելորագոյն պաշտօններուն Արտաշէս Ա.ը նշանակեց իր մերձաւորագոյն մարդիկը: Ան իր աւագ որդի Արտաւազը (ապագայ Արտաւազ Ա.ը) նշանակեց սպարապետ եւ արեւելեան զօրավարութեան ղեկավար: Արեւմտեան զօրավարութիւնը տուաւ միւս որդի Տիրանին, հիւսիսայինը՝ Ջարեհ անունով որդիին, հարաւայինը՝ իր դայեակ Սմբատ Բագրատունիին: Հազարապետութեան պաշտօնին նշանակուեցաւ արքայորդի Վրոյրը, զոր Պատմահայրը կը յիշատակէ որպէս «այր իմաստուն եւ բանաստեղծ»: Արքան միւս որդին՝ Մաժանը քրմապետ դարձուց:

Արտաշէս Ա.ի օրօք մեծ զարգացում ապրեցաւ երկրին տնտեսութիւնը. Մովսէս Խորենացիին բնորոշմամբ՝ անոր օրով «Հայոց Աշխարհին մէջ անմշակ հող չէր մնացած»: Հողային բարեփոխման հետ կը կապուին սահմանաքար նկատուող կոթողները, որոնց վրայ կան արամէտառ արծանագրութիւններ:

Երկրի կեանքին մէջ կարելոր իրադարձութիւն էր նոր մայրաքաղաքին՝ Արտաշատի հիմնադրումը, զոր տեղի ունեցած է Ք. ա. 180-170-ական թուականներուն: Ըստ Պլուտարքոսի հաղորդման՝ մայրաքաղաքի տեղն ընտրած եւ թագաւորին առաջարկով քաղաքին յատակագիծը կազմած է Կարթագենի վտարանդի զօրավար Հաննիպալը, զոր որոշ ատեն ապաստան գտած է Հայաստանի մէջ: Ասկէ ելլելով է, որ հռոմէական պատմագրութեան մէջ Արտաշատը «Հայկական Կարթագեն» անուանած են: Արտաշատի մէջ կառուցուեցան ճոխ ապարանքներ, տաճարներ, թատրոն եւ ուրիշ շինութիւններ. ան դարձաւ իր ժամանակի աշխարհի մեծ քաղաքներէն (մեկապոլիս) մէկը:

Արտաշէս Ա.ն ամրապնդեց թագաւորական նախնիներու պաշտամունքը Հայաստանի

մէջ, զոր վկայուած է դեռ Ք. ա. 8-րդ դարուն (Արդինի-Սուսասիրի տաճարին մէջ, գերագոյն հալդի աստուծոյ արձանի կողքին կը պաշտուէին արքաներուն արձանները, որոնք աստուածացուած էին մահէն ետք): Արտաշատի մէջ կառուցուեցաւ Մայր Դիցուհի Անահիտի տաճարը, ուր կանգնեցուեցան Արտաշէսի նախնիներուն արձանները:

Արտաշէսը բարեփոխած է տոմարը, ճշգրտած՝ օրացոյցը, նաւարկութիւն հաստատած լիճերու եւ գետերու վրայ եւ բազում ուրիշ բարեփոխումներ կատարած:

Արտաքին քաղաքականութեան մէջ ալ Արտաշէս Ա.ը լուրջ ձեռքբերումներու հասաւ: Թագաւորութեան հռչակման սկզբնական շրջանին դաշնակցելով Դոմի հետ՝ Արտաշէս Ա.ը Սելեւկեան տէրութիւնը թուլցնելու քաղաքականութիւն կը վարէր: Սակայն ան պահպանեց իր լիակատար անկախ ու չէզոք դիրքը տարածաշրջանին մէջ՝ որոշակի հեռաւորութեան վրայ պահելով Դոմն ու հռոմէանէտ ոյժերը: Ինչպէս նշուեցաւ, ան նոյնիսկ հիւրընկալած էր Դոմի թիւ մէկ թշնամին՝ Կարթագենի զօրավար Դաննիպալը եւ ապաստան տուած անոր:

Ք. ա. 183-179 թուականներուն Փոքր Ասիոյ մէջ պատերազմ մղուեցաւ մէկ կողմէ Պոնտոսի եւ Փոքր Դայքի, միւս կողմէ Կապադովկիոյ, Բիթանիոյ եւ Պերգամոնի միջեւ: Պատերազմի դադրեցման եւ պայմանագրի կնքման ընթացքին զործուն ազդեցութիւն ունեցան տարածաշրջանի ազդեցիկ երկու ոյժերը՝ արեւմուտքէն Դոմն ու արեւելքէն Մեծ Դայքը: Արտաշէս Ա.ը կրցաւ ընդարձակել Փոքր Դայքի տարածքը Պոնտոսի հաշուին՝ հեռանկարին հայկական բոլոր հողերը մէկ թագաւորութեան մէջ միաւորելու ծրագիրով, զոր, սակայն, չիրականացաւ:

Սելեւկեան պետութեան թուլացմանն էր ուղղուած նաեւ Արտաշէս Ա.ի մեզի յայտնի վերջին զործը: Երբ Մարաստանի սատրապ Տիմարքոսն ապստամբեցաւ Սելեւկեաններուն դէմ եւ իրեն թագաւոր հռչակեց (Ք. ա. 162-160), Արտաշէս Ա.ն անմիջապէս անոր օգնական զօրքեր տրամադրեց:

Իր մեծագործութեանց համար Արտաշէս Ա.ը փառաբանուած է ժողովրդային երգերուն մէջ: Անոր են նուիրուած «Երուանդ եւ Արտաշէս», «Արտաշէս եւ Սաթենիկ», «Արտաշէս եւ Արտաւազդ» ասքերը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք. Ա. 2-ՐԴ ԴԱՐՈՒՆ





Երուանդունի արքան
Վահագն-Արտազնես աստուծոյ հետ
(Արտամէա)

Արտաշես Ա.էն ետք Մեծ Դայքի մէջ իշխեցին անոր որդիներ Արտաւազդ Ա.ն ու Տիրան-Տիգրան Ա.ը: Անոնց իշխելու յաջորդականութեան մասին գիտութեան մէջ վեճերը դեռ չեն դադարած: Ք. ա. 120-110 թուականներուն միջեւ Պարթեաստանի եւ Մեծ Դայքի պատերազմը կ'աւարտի հայոց անյաջողութեամբ, որն ալ օգտագործելով՝ պարթեւները պատանդ կը տանին արքայազն Տիգրանը, զոր յետագային Մեծն Տիգրան պիտի դառնար:

Հայկական միւս թագաւորութիւնները Ք. ա.

2-րդ դարուն: Հայկական փոքր թագաւորութեանց մասին սակաւաթիւ տեղեկութիւններ ունինք: Սասնաւորապէս յայտնի է, որ Ծովքի արքայ Զարեհին յաջորդած է Արկաթիոսը, որ հիմնած է Արկաթիոկերտ նոր մայրաքաղաքը: Ք. ա. 165-ին Սելեւկեան արքայ Անտիոքոս Գ. Եպիփանէսը Մեծ Դայքի դէմ անյաջող արշաւանքէն ետք ներխուժեց Ծովք եւ զրաւեց Արկաթիոկերտը: Արկաթիոսն սպաննուեցաւ: Անտիոքոս Գ.ը Ծովքի մէջ գահ բարձրացուց Քսերքսես անունով իր դրածոն: Սակայն Ք. ա. 164-ին Անտիոքոս Գ.ի մահէն ետք Արկաթիոսի եղբայր Միթրաբուզանէսը (Մերուժան) վերականգնեց Ծովքի թագաւորութեան անկախութիւնը:

Մերուժանէն ետք Ծովքի մէջ իշխած թագաւորներու մասին ստոյգ տեղեկութիւններ չունինք: Ք. ա. 94-ին, երբ Մեծն Տիգրանը Ծովքի թագաւորութիւնը միաւորեց Մեծ Դայքին, հոն կ'իշխէր Արտանէս արքան:

Փոքր Դայքի մասին Միհրդատէն ետք մեր ունեցած միակ տեղեկութիւնը կը վերաբերի Ք. ա. մօտ 112 թուականին, երբ հոն իշխող Անտիպատրոս Երուանդունին որդեգրեց իր հայրենի Պոնտոսի թագաւորութենէն փախստական Միհրդատ Եւպատորը՝ անոր ժառանգ ծգելով իր թագաւորութիւնը: Այդ է պատճառը, որ Միհրդատ Գ. Պոնտացին աղբիւրներուն մէջ կը կոչուի «թագաւոր Պոնտոսի եւ Դայք» (իմա՝ «թագաւոր Պոնտոսի եւ Փոքր Դայքի»): Ասկէ մեկնելով՝ յայտնուած է նաեւ այն կարծիքը, թէ Միհրդատ Պոնտացին ալ կրնար Երուանդական ծագում ունենալ:

Կոմմագենի թագաւորութեան մասին յայտնի է միայն, որ Պտղոմէոս Երուանդունին (Ք. ա. 163 – մօտ 130) ետք հոն իշխած է Սամոս Բ. Դիկելոս Թետսեփոսը (Ք. ա. մօտ 130-109), որուն յաջորդած է Միհրդատ Ա. Կալլիսիկոսը (Ք. ա. մօտ 109-70): Վերջինս Ք. ա. 80-ական թուականներուն կամովին ընդունեց Մեծն Տիգրան Բ.ի գերիշխանութիւնը՝ լիովին պահպանելով իր դիրքը:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ տեղի ունեցած է Սագնեսիայի ճակատամարտը եւ ի՞նչ անդրադարձ ունեցած է Հայաստանի ճակատագիրին վրայ:
2. Ե՞րբ գահակալած է Արտաշես Ա.ը:
3. Ներկայացուցէք Արտաշես Ա.ի բարեփոխումները:
4. Ի՞նչ տեղեկութիւններ ունինք Ք. ա. 2-րդ դարու հայկական կրտսեր թագաւորութեանց մասին:

Մեծն Տիգրանը ծնած է Ք. ա. 140 թուականին: Ք. ա. 120–110 թուականներուն միջեւ պարթեւներու դէմ անյաջող պատերազմն ետք Մեծ Հայքի արքայազն Տիգրանը պատանդ կը տարուի Պարթեւաստան:

Ք. ա. 95 թուականին հայոց արքայի մահէն ետք արքայազն Տիգրանը կը վերադառնայ Հայաստան՝ վերադարձի արտօնութեան դիմաց պարթեւներուն որոշ տարածքներ զիջելով:

Անհրաժեշտ էր նախ միաւորել Մեծ Հայքի թագաւորութիւնը, ինչը Արտաշէս Ա.ը չէր յաջողած իրականացնել: Ք. ա. 94 թուականին Տիգրան Բ.ը պարտութեան մատնեց Ծոփքի մէջ իշխող Արտաշէս Երուանդունին եւ Ծոփքը վերամիաւորեց Մեծ Հայքին:

Պոնտոսի եւ Փոքր Հայքի արքայ Միհրդատ Եւպատորը նպատակ ունէր Հռոմը Փոքր Ասիայէն եւ Յունաստանէն դուրս մղել: Իսկ Տիգրան Մեծի աշխարհակալական ծրագիրները կը կապուէին Հայաստանէն արեւելք, հարաւ եւ հարաւ–արեւմուտք ինկած տարածքներու հետ: Երկու երկիրներն ալ պէտք է ապահովագրէին իրենց թիկունքը, մանաւանդ որ անոնք պիտի բախուէին Հռոմի ու Պարթեւաստանի հետ: Այս պայմաններուն մէջ, Մեծն Տիգրանն ու Միհրդատ Պոնտացին Ք. ա. 94 թուականին կը կնքեն դաշինք մը, զոր կ'ամրապնդուի Մեծն Տիգրանի եւ Միհրդատ Եւպատորի դուստր Կոնոպատրայի ամուսնութեամբ:

Կնքուած դաշինքին առաջին զործնական դրսեւորումներն եղան Ք. ա. 93 եւ 91 թուականներուն հայ–պոնտական զօրքերու կողմէ Կապադովկիոյ նուաճումը: Երկու անգամ ալ Կապադովկիոյ տարածքը կ'անցնէր Պոնտոսին, իսկ ողջ շարժական զոյքը (իսկայական ռազմաւար եւ զերիներ)՝ Մեծ Հայքին: Յետագայ դէպքերը մեզի թոյլ կու տան հասկնալու Մեծն Տիգրանի հեռահար հաշուարկները: Կապադովկիան իր իշխանութեան տակ վերցնելը կը բերէր Հռոմի հետ բախման, ինչը Մեծն Տիգրանին ամենեւին պէտք չէր այդ ժամանակ: Փոխարէնը ան կը նախապատրաստուէր Պարթեւաստանի դէմ մեծ պատերազմի, որմէ առաջ պէտք էր պետութիւնն ապահովել տնտեսական եւ մարդկային միջոցներով:

Մեծն Տիգրանի տրուութիւնը: Ք. ա. 87 թուականին մահացաւ Պարթեւաստանի արքայ Միհրդատ Բ.ը, որուն Տիգրան Բ.ը ժամանակին կնութեան տուած էր իր դուստր Արիագատա–Սուտոման: Միհրդատ Բ.ի կեանքի վերջին տարիներուն Պարթեւաստանի մէջ ներքաղաքական պայքար սկսած էր: Պահը հասունցեր էր. նոյն Ք. ա. 87 թուականին Մեծն Տիգրանն արշաւեց Պարթեւաստանի դէմ:

Ջախջախելով պարթեւական զօրքերը՝ Մեծն Տիգրանը հասաւ Պարթեւաստանի ամառային մայրաքաղաք Էքբատան եւ պաշարեց գայն: Պարթեւական խուճապահար արքունիքը Մեծն Տիգրանին կը զիջի ոչ միայն նուաճուած տարածքները, այլեւ՝ «արքայից արքայ» տիտղոսը ընդունելով անոր գերիշխանութիւնը: Պարթեւաստանի՝ Տիգրան Մեծի գերիշխանութիւնն ընդունին ու անոր աշխարհակալութեան մէջ մտնելը պարզորոշ կերպով կ'երեւին Պոնապէոս Տրոկոսի տեղեկութենէն, ուր Պարթեւաստանի արքաներու ցանկին մէջ Միհրդատ Բ.էն ետք կը յիշատակուի Տիգրանը, «զոր Աստուած կը կոչէին»...

Պարթեւական պատերազմէն ետք Մեծն Տիգրանի գերիշխանութիւնն ընդունեցին կամ դաշնակից դարձան Միջին Ասիոյ որոշ ցեղեր, որոնք պատերազմի առեւն զօրք կը տրամադրէին հայոց տիրակալին: Ք. ա. 85–84 թուականներուն հայոց տրուութեան միացան նաեւ Կոմմագենէն, Հայոց Արջագետքը, Կորդուքը, Օսրոյնէն եւ Արկտոնիան:

Սելեւկեան տրուութիւնը երկար ժամանակ կը բզկտուէր երկպառակտչական պատերազմներով: Սելեւկեան աւագանին ի վերջոյ որոշեց երկիրը փրկել՝ որեւէ օտար տիրակալ իրաւորելով: Քննարկուեցան բազմաթիւ թեկնածուներ եւ ընտրութիւնը կանգ առաւ



«Մեծն Տիգրանը՝ շրջապատուած իրեն ուղեկցող չորս բազաւորներով»
(Խտալացի նկարիչ Ե. Ֆուզարո, 1885)

Մեծն Տիգրանի վրայ, որ Ք. ա. 83–ին Անտիոքի մէջ բազմեցաւ Սելեւկեանների զաւին եւ 17 տարի տիրեց Սելեւկեան պետութեան:

Ք. ա. 83–81 թուականներուն Տիգրանի տերութեան կը միանան Կիլիկիան եւ Փիւնիկէն: Փիւնիկեան քաղաքներու գրաւումէն ետք հայոց տիրակալը Ք. ա. 81–ին անոնց «ազատութիւններ» (լայն ինքնավարութեան իրաւունք) շնորհեց: Ի նշան երախտագիտութեան՝ քաղաքները (որոնց մէջ էին Պերիքը՝ ներկայիս Լիբանանի մայրաքաղաք Պէյրութը, Լատոփիկէն եւ այլն) իրենց քաղաքային տոմարն սկսան հաշուել այդ թուականէն եւ նոր հատած քաղաքային դրամները թուագրել այդ տոմարով: *Հայոց տիրակալը նոյնիսկ իր նուաճումներուն մէջ ազատարար էր ...*

Մեծն Տիգրանի օգնութեան շնորհիւ Պտղոմէոս ԺԲ.ը (ապագայ Կղտայատրա է.ի հայրը) Ք. ա. 80–ին եգիպտոսէն դուրս մղեց հռոմեացիները եւ հաստատուեցաւ հայրական զաւին:

Նապաթեական բազաւորութիւնը Ք. ա. 72–ին պարտուելով՝ ընդունեց Մեծն Տիգրանի գերիշխանութիւնը: Անոր գերիշխանութիւնը ճանչցաւ նաեւ Հրեաստանը:

Հիմքեր կան ենթադրելու, որ Ք. ա. 72–71 թուականներու սահմանագիծին Մեծն Տիգրանը Սպարտակի ապստամբութեանն աջակցելու համար Իտալիա դրկած է հեծելագօր, որ կարելոր դրուագի մը մէջ վճռական դեր կատարել է յետոյ, ի վերջոյ ոչնչացած է Ապարտակի ապստամբութեան ճնշման ատեն:

Իր կարգին, Հռոմը Ք. ա. 71–ին Մեծն Տիգրանի դէմ դուրս քերած էր Սելեւկեան արքայատոհմի ներկայացուցիչ Սելենէ–Կղտայատրան, որուն ելոյթը Պտղոմայիսի մէջ ճնշուեցաւ. ան գերի ինկաւ եւ մահապատիժի ենթարկուեցաւ:

Այսպիսով, քառորդ դարու ընթացքին (Ք. ա. 95–70), Մեծն Տիգրանն ստեղծեց աշխարհակալութիւն մը, որուն սահմանները եւ քաղաքական ազդեցութեան ոլորտները կը ձգուէին եգիպտոսէն ու Միջերկրական Ծովէն մինչեւ Կովկասեան լեռներ, Կասպից Ծով, Ինդոսի եւ Ամուտարիայի հովիտներ, Սեւ Ծովէն մինչեւ Պարսից Ծոց: Հայոց տերութեան տարածքը՝ իր քաղաքական ազդեցութեան ոլորտներով, շուրջ 3 մլն. քառ. քմ. կը կազմէր:

Մեծն Տիգրանի հիմնած բնակավայրերը: Ք. ա. 80–ական թուականներուն, Մեծն Տիգրանը նոր մայրաքաղաք Տիգրանակերտը հիմնեց



Ոսկեայ մետաղին Միսիանեն
(Ք. ա. 1-ին դար)



Մեծն Տիգրանի դրամներն

վայրի մը մէջ, որ թէ՛ հայոց հողին մէջ էր եւ թէ՛ համեմատաբար կեդրոնական դիրք կը զբաւէր տիրութեան մէջ: Սա այն վայրն էր, ուր Ք. ա. 95-ին թագադրուէր էր արքայազն Տիգրանը: Փաստօրէն, տակաւին պատանդութեան մէջ գտնուած ատեն՝ ան աշխարհակալութեան հասնելու ծրագիր մշակել էր եւ մտապատկերին մէջ ունէր ապագայ տիրութեան ուրուագիծը, որու յետագայ մայրաքաղաքի տեղն ալ կատարեց իր թագադրութիւնը:

Քաղաքը շրջապատուած էր 50 կանգուն, այսինքն՝ 25 մետր բարձրութեամբ պարիսպով, ունեցած է անասիկ միջնաբերդ, պալատ, թատրոն, պարտեզներ, այգիներ եւ որսատեղիներ: Կարճ ժամանակամիջոցի մէջ մեծ ու շքեղ քաղաք մը կառուցուեցաւ: Ուշագրաւ է, որ հռոմէացի պատմիչի մը վկայութեամբ՝ հայերը նախանձախնդրութեամբ արագօրէն ծաղկեցուցած են իրենց նոր մայրաքաղաքը, եւ այդ ըրած են «յանուն արքայի նկատմամբ տածած սիրոյ եւ յարգանքի»:

Կառուցուեցաւ երկրին համար կենսական նշանակութիւն ունեցող Արքունի Պողոտան, զոր հին մայրաքաղաք Արտաշատը Տիգրանակերտին կը կապէր:

Բացի Տիգրանակերտ մայրաքաղաքէն, Մեծն Տիգրանն իր անունով հիմնադրեց ուրիշ քանի մը բնակավայրեր: Տիգրանակերտ անուամբ քաղաքներ հիմնադրուեցան Հիւսիսային Միջագետքի մէջ, Ասորիքի հիւսիսը (Ձեզմայի մօտ), Ռատիք եւ Արցախ նահանգներուն մէջ, Տիգրանաւան անուամբ երկու բնակավայր ալ՝ Գողթնի ու Մարաստանի մէջ:

Հոռմէա-հայկական պատերազմը: Արտաշատի պայմանագիրը: Ք. ա. 71-ին Միհրդատ 2. Եւպատորը պարտուեցաւ Հոռմի դէմ պատերազմին մէջ եւ Հայաստան ապաստանեցաւ: Չայն հետապնդող Լուկուլլոսը պատուիրակներ դրկեց՝ ստանալու Հոռմի ռիսերիմ թշնամին: Մեծն Տիգրանը մերժեց հոռմէացիներուն պահանջը եւ իր դաշնակիցն ու բարեկամը չյանձնեց:

Ք. ա. 69 թուականի գարնան Լուկուլլոսն արշաւեց Հայաստան: Չնայած պատերազմի սկիզբին հոռմէացիներու ունեցած յաջողութեան, ան աւարտեցաւ հոռմէական բանակի ջախջախմամբ եւ Հայաստանէն դուրս մղմամբ: Հայոց զօրքերու օգնութեամբ, Միհրդատ Եւպատորն ազատագրեց Պոնտոսը՝ հոնկէ դուրս մղելով հոռմէացիները:

Մեծն Տիգրանն ու Միհրդատ Եւպատորը կը նախատեսէին Ք. ա. 67-ին մեծ արշաւանք սկսիլ Հոռմի դէմ, ինչը, սակայն, չիրականացաւ:

Ք. ա. 67 թուականի վերջին եւ 66 թուականի սկզբին կնքուեցաւ հոռմէա-պարթեական ռազմական դաշինք՝ հայ-պոնտական դաշինքին դէմ: Տեղի ունեցան քախտ:մներ երկու խմբաւորումներուն միջեւ: Հոռմէացիները յաղթեցին եւ գրաւեցին Պոնտոսը, մինչդէռ պարթեւները պարտուեցան Հայաստանի մէջ եւ փախուստի դիմեցին: Ամէն կողմէ մէկ նրկիր յաղթեց, մէկը՝ պարտուեցաւ:



Էքրատանի անբակներն այսօր

Երկու յաղթող երկիրներուն՝ Հայաստանի եւ Հռոմի անունով Մեծն Տիգրանն ու Պոմպեոսը Ք. ա. 66–ին Արտաշատի մէջ ստորագրեցին հաշտութեան պայմանագիրը, որով Հայաստանը յօգուտ Հռոմի հրաժարեցաւ Եփրատէն արեւմուտք ինկած իր նուաճումներէն. Մեծ Հայքը յայտարարուեցաւ Հռոմի «դաշնակից եւ բարեկամ», ինչը ռազմական փոխօգնութիւն կ'ենթադրէր. Տիգրան Կրտսերը պետք է Ծովքի եւ Կորդուքի, իսկ հօր մահէն ետք՝ անրողջ Մեծ Հայքի թագաւոր ճանչցուեր, ինչը չիրականացաւ, քանի որ ան ձերբակալուեցաւ եւ Հռոմ աքսորուեցաւ:

Ինչո՞ւ Մեծն Տիգրանը նման զիջումներու դիմեց: Չէ՞ որ ան հռոմեացիներուն յաղթեր էր Ք. ա. 69–68 թուականներու լուկուլլոսեան պատերազմին, Պոմպեոսի հետ լուրջ բախում չէր ունեցած, իսկ պարթեւներուն հերթական ու վերջին քարոզ տուեր էր նոյն՝ Ք. ա. 66 թուականին: Առաջին հայեացքէն անհասկնալի այս քայլը կը բացատրուի Մեծն Տիգրանի հայրենապաշտութեամբ: Ան իսկապէս յաղթած էր, սակայն պարտուած եւ, փաստօրէն, ասպարէզէն դուրս մղուած էր Հայաստանի դաշնակից Պոնտոսը, իսկ Հայաստանը մնացեր էր միայնակ՝ Հռոմի եւ Պարթեաստանի դէմ, ուրիշ կերպ ըսած՝ «միայնակ՝ անրողջ աշխարհի դէմ»: Տիգրանը կրնար պատերազմը շարունակել յանուն տիրակալի իր փառքին, քայքայուած իր հայրենիքին ապագան կը փտանգէր: Երբ կշիռքի նժարներուն դրուած էին տիրակալի իր փառքն ու հայրենիքի ապագան, Մեծն Տիգրանն ընտրութիւն կատարեց յանուն հայրենիքի...

Մեծն Տիգրանը մահացաւ Ք. ա. 55 թուականին՝ 85 տարեկանին:

Հռոմի ամենաականաւոր դէմքերէն մէկը՝ Կիկերոնը Ծերակոյտին մէջ արտասանած իր ճառերուն մէջ Մեծն Տիգրանը կը բնորոշէր “vehemens” բառով, զոր քաղաքական գործիչին տրուող բարձրագոյն գնահատականն էր Հռոմի մէջ: Անկէ քիչ մը ուշ ապրած նոյնպէս հռոմեացի մատենագիր Վելլէոս Պատերկուլոսը Մեծն Տիգրանը կը կոչէ «իր ժամանակի հզօրագոյն թագաւոր» եւ «թագաւորներէն մեծագոյնը», իսկ Պոմպեոս Տրոկոսը կը տեղեկացնէ, որ զայն կը մեծարէին՝ «Աստուած» կոչելով...

Չարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ եւ ո՞ւր թագադրուած է Մեծն Տիգրանը:
2. Ի՞նչ արդիւնքներով աւարտեցաւ Մեծն Տիգրանի պատերազմը Պարթեաստանի դէմ:
3. Ե՞րբ եւ ինչպէ՞ս Անելիկեան պետութիւնը մտաւ Մեծն Տիգրանի աշխարհակալութեան մէջ:
4. Ներկայացուցէք Տիգրանի տիրութեան սահմանները:
5. Պատմեցէք Մեծն Տիգրանի հիմնած բնակավայրերուն մասին:

Մեծն Տիգրանի իշխանության յաջորդած տարիներուն Հայաստանը յայտնուեցաւ աշխարհա-քաղաքական նոր իրադրութեան մը մէջ՝ գտնուելով երկու գերտէրութեանց՝ Գոռնի եւ Պարթեւաստանի բախման կիզակէտին:

Մեծն Տիգրանին յաջորդեց անոր որդին՝ Արտաւազդ Բ.ը (Ք. ա. 55–34), որ ստացեր էր հիանալի կրթութիւն եւ զբաղուէր էր մտաւոր զործունեութեամբ: 1–2–րդ դարերու պատմիչ Պլուտարքոսի վկայութեամբ՝ Արտաւազդ Բ.ը «ողբերգութիւններ, ճպտեր ու պատմական երկեր» գրած է:

Ք. ա. 54 թուականին Պարթեւաստանի դէմ հռոմէական արշաւանք կազմակերպելու նպատակով Մարկոս Կրասոսն եկաւ Ասորիք եւ տեսակցեցաւ Արտաւազդ Բ.ի հետ՝ վերջինն օգնութիւն ակնկալելով ըստ Արտաշատի պայմանագիրին: Արտաւազդ Բ.ը խորհուրդ տուաւ արշաւանքը կազմակերպել Հայաստանի հարաւային լեռնային շրջաններով, որու պարագային 30 հազար հետեւակ եւ 16 հազար հեծեալ բանակ տրամադրելու պատրաստակամութիւն յայտնեց:

Կրասոսը, սակայն, որոշեց արշաւել Հիւսիսային Միջագետքով եւ Ք. ա. 53 թուականին 42.000–անոց (7 լեգիոն) բանակն սկսաւ արշաւանքը: Պարթեւները պատասխան արշաւի դուրս եկան երկու ուղղութեամբ՝ Սուրեն զօրավարը՝ Կրասոսի դէմ եւ Օրոդէս Բ. արքան դէպի Հայաստան: Արտաւազդն այդ մասին տեղեկացուց Կրասոսը եւ օգնութիւն տրամադրել հրաժարեցաւ:

Ք. ա. 53 թուականի Մաշիսի 6–ին տեղի ունեցած էստանի ճակատամարտին հռոմէացիները ծանր պարտութիւն կրեցին՝ տալով շուրջ 20.000 սպաննուած (այդ թիւին Կրասոսը) եւ 10.000 գերի: Կրասոսի գլուխը ղրկուեցաւ Արտաշատ, ուր Արտաւազդ Բ.ն ու Օրոդէս Բ.ը դաշինք կը կնքէին եւ, յամրապնդումն անոր, տեղի կ'ունենար պարթեւներու արքայորդի Բակուրի եւ Արտաւազդ Բ.ի քրոջ ամուսնութիւնը: Կրասոսի գլուխն Արտաշատ հասաւ այն պահին, երբ երկու արքաները թատրոնին մէջ եւրիփիտէսի «Բաքոսուհիներ» ողբերգութիւնը կը դիտէին: Գլուխը նետուեցաւ հայոց եւ պարթեւաց արքաներուն առջեւ՝ ի նշան յաղթանակի:

Հայոց եւ պարթեւներու դաշինքի կնքումն ծնր միացեալ զօրքերն արքայազն Բակուրի առաջնորդութեամբ Ք. ա. 51–50 եւ 40–38 թուականներուն պարտութեան մատնելով հռոմէացիները՝ գրաւեցին Պաղեստինը, Փիւնիկէն, Ասորիքը եւ մտան Կիլիկիա:

Միջերկրականի արեւելքը պարթեւա–հայկական միացեալ ոյժերուն յաղթարշաւները տագնապ յառաջ բերին Գոռնի մէջ: Արեւելք ղրկուեցաւ Բասսս զօրավարը, որու դէմ ճակատամարտին Ք. ա. 38–ին սպաննուեցաւ թագաժառանգ Բակուրը: Ք. ա. 37–ին, Բակուրի կրտսեր եղբայր Հրահատը, սպաննելով հայրը՝ Օրոդէս Բ.ը, տիրեց Պարթեւաստանի գահին եւ ոչնչացուց գահին հաւանական յաւակնորդները, այդ թիւին՝ Բակուրէն եւ Արտաւազդ Բ.ի քրոջժէ ծնած այրու երախաները: Հայ–պարթեւական դաշինքը խզուեցաւ:

Ք. ա. 37–ին Արեւելք եկաւ Մարկոս Անտոնիոսը՝ կրկին ծրագրելով պարթեւական արշաւանք, զոր, մեկնելով Կրասոսի տխուր փորձէն, կը նախատեսէր իրականացնել Հայաստանի տարածքով: Հռոմէական զօրքերն անակնկալ կերպով ներխուժեցին Հայաստան: Մինակ մնալով ու պարթեւներէն օգնութիւն չստանալով՝ Արտաւազդ Բ.ը վերստանձնեց Ք. ա. 66–ի Արտաշատի պայմանագիրին պարտաւորութիւնները: Արտաւազդ Բ.ն Անտոնիոսին խոստացաւ տրամադրել 6.000 հեծեալ ու 7.000 հետեւակ օգնական զօրք եւ քոյլատրել պարթեւներու դէմ արշաւանքը Հայաստանի տարածքով:

Ք. ա. 36–ին Անտոնիոսը 100.000 զօրքով, շուրջ 300 սայլերու վրայ տեղաւորուած պարսպակործան, քարանետ եւ ուրիշ մեքենաներով Կաթոնոյ դաշտէն արշաւանքն ուղղեց դէպի Ատրպատական: Առաջ անցնելով ռազմական մեքենաներէն՝ Անտոնիոսը պաշարեց

Ատրպատականի Գանձակ քաղաքը: Ընդատաջ եկող պարթևական զորքը շրջանցեց պաշարումը եւ ոչնչացուց ճամբուն վրայ գտնուող ռազմական մեքենաները: Ակնյայտ էր, որ Անտոնիոսը պիտի կորսնցնէ պատերազմը, ուստի Արտաւազը ետ քաշեց իր զորամասերը եւ չմասնակցեցաւ պատերազմին:

Անտոնիոսը ծանր պարտութիւն կրեց եւ աշնան նահանջեց Չայաստան: Արտաւազ Բ.ը դեղորայք եւ պարէն տրամադրեց հռոմէացիներուն:

Չռոմէական զօրքերն ընդհանուր առմամբ տուին 35 հազար զոհ՝ նոյնիսկ մէկ թիզ հող չնուաճելով: Անտոնիոսը շտապեց Եգիպտոս՝ իր կնոջ՝ Կղեոպատրա ե.ի մօտ: Չռոմէական Ծերակոյտին գրած նամակներուն մէջ ան ամբողջ մեղքն սկսաւ բարդել Արտաւազի «դաւաճանութեան» վրայ: Պէտք էր «պատժել» Արտաւազը, ուստի Անտոնիոսը քանիցս փորձեց խաբէութեամբ ձերբակալել զայն, սակայն ապարդիւն:

Ք. ա. 34-ին Անտոնիոսի զօրքերն անակնկալ կերպով ներխուժեցին Չայաստան: Արինահեղութենէն խուսափելու նպատակով, հայոց արքան բանակցութեանց դիմեց: Անտոնիոսը խաբէութեամբ ձերբակալեց Արտաւազը, անոր կինն ու երկու որդիները: Չայոց բանակն արքայի ձերբակալումէն անմիջապէս ետք թագաւոր հռչակեց անոր որդի Արտաշէս Բ.ը, ինչը, դատելով փաստերէն, հրահանգած էր նոյնինքն Արտաւազ Բ.ը:

Սակայն Արտաշէս Բ.ն անյաջողութիւն կրեց եւ իր զօրքով ապաստան գտաւ Պարթևաստանի մէջ: Անտոնիոսը Չայաստանի մէջ հռոմէական կայազօրներ ձգելով՝ Եգիպտոս վերադարձաւ: Ան Աղեքսանդրիոյ մէջ կազմակերպեց յաղթահանդէս, որու ընթացքին պահանջեց գերի տարուած Արտաւազ Բ.էն ու անոր ընտանիքէն՝ խոնարհիլ եւ երկրպագել Կղեոպատրային՝ ատոր դիմաց ազատութիւն խոստանալով: Սակայն հայոց վեհանձն արքան եւ անոր ընտանիքը կտրականօրէն մերժեցին՝ մինչեւ իսկ արժանանալով թշնամի հռոմէական միջավայրի հիացմունքին. «...Ոչ աղերսեցին անոր (Կղեոպատրային), ոչ իսկ երկրպագեցին, թէպէտեւ զանոնք շատ կը ստիպէին եւ շատ կը յուսադրէին ազատութիւն խոստանալով, ու որովհետեւ զայն պարզապէս իր անունով կոչեցին, անոնք վեհամիտ մարդկանց համբաւ չահեցան» (Պիոն Կասսիոս, «Չռոմէական Պատմութիւն»):

ՉԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱԿԱԶԴ Բ.Ի ՕՐՈՔ





Արտաւազդ Բ.ի, Օրոդէս Բ.ի եւ Անտոնինոսի դրամներէն

Հռոմի մէջ գերագոյն իշխանութեան համար Անտոնինոսի եւ Օկտաւիանոսի պայքարը վերջնակէտին հասաւ Բ. ա. 31 թուականին: Պարտուելով՝ Անտոնինոսն ինքնասպան եղաւ: Անոր ճակատագիրը կիսեց նաեւ Կղեուպատրան, սակայն մինչ այդ մահապատժի ենթարկուած էր Արտաւազդ Բ.ը, որուն գլուխը դրկուեց էր Անտոնինոսի ու Կղեուպատրայի դաշնակից Ատրպատականի արքայ Արտաւազդ Մետաքիին (Մար Արտաւազդին):

Բ. ա. 31 թուականի վերջին Արտաշես Բ.ը սեփական զօրքերով վերադարձաւ Պարթևաստանէն, ազատագրեց Հայաստանը, յաղթեց Ատրպատականի արքայ Արտաւազդին եւ Ատրպատականը միացուց իր պետութեան: Արտաշես Բ.ն իշխեց մինչեւ Բ. ա. 20 թուականը: Ան շնցուց երկիրը եւ հատեց դրամներ՝ «արքայից արքայ» տիտղոսի նշմամբ:

Բ. ա. 27-ին Օկտաւիանոսը Հռոմի մէջ հռչակեց միապետութիւն՝ ստանալով «Օգոստոս» («սրբազան», «աստուածներու կողմէ բարձրացուած») պատուանունը: Բ. ա. 20 թուականին գալով Ատրիք՝ ան ծրագրեր էր հայոց թագաւոր դարձնել Տիգրանը, որ Արտաւազդ Բ.ի գերուած որդիներէն էր: Երբ հռոմէական զօրքը նոր միայն կը հասնէր Հայաստանի սահմանը, Արտաշես Բ.ն անյայտ հանգամանքներու մէջ սպաննուեցաւ. իշխանափոխութիւնը տեղի ունեցաւ պռանց պատերազմի:

Տիգրան Գ.ը Մեծ Հայքի մէջ իշխեց Բ. ա. 20-9 թուականներուն: Օկտաւիանոսը զայն գահ բարձրացուցեր էր պայմանով, որ հայոց գահին վրայ անոր յաջորդը պետք է նոյնպէս Հռոմը որոշէ: Սակայն Հռոմէական Կայսրութեան հիմնադիրը սխալեցաւ իր հաշուարկներուն մէջ: Հայաստանի մէջ որոշ ժամանակ իշխելէ յետոյ Տիգրան Գ.ը հոգեբանօրէն «վերահայացաւ» եւ, զիտակցելով ժառանգականութեան կարելութիւնը արքայական իշխանութեան համար, գահաժառանգ հռչակեց Տիգրան անունով որդին, զոր իրմէ ետք գահ բարձրացաւ քրոջ՝ Էրատոռիի հետ համատեղ:

Հռոմը չէր հաշտուեր Հայաստանի մէջ իր ազդեցութեան կորուստին հետ եւ Բ. ա. 5 թուականին ոյժով գահ կը բարձրացուի Տիգրան Դ.ի հօրեղբայր Արտաւազդ Գ.ը: Արտաւազդ Բ.ի գերի տարուած միւս որդին, որ 29 տարի ապրեր էր հռոմէական միջավայրին մէջ: Բ. ա. 2 թուականին հայերը գահընկէց կ'ընեն Արտաւազդ Գ.ը եւ կրկին գահ կը բարձրացնեն Տիգրան Դ.ը եւ անոր քոյր Էրատոն:

Օկտաւիանոսը ստիպուած էր հաշուի նստիլ հայոց հետ: Նախատեսուեցան բանակցութիւններ Տիգրան Դ.ի հետ, սակայն 1 թուականին հիւսիսային լեռնականներու դէմ մղուած պատերազմին ան զոհուեցաւ, իսկ Էրատոն հրաժարեցաւ գահէն: Այսպիսով, անկում ապրեցաւ Արտաշիսեան արքայատոհմը (բայց ոչ Հայոց թագաւորութիւնը): Էրատոն 6-11 թուականներուն կրկին գահակալեց, սակայն միանձնեալ, ինչը չփրկեց վիճակը:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ գահակալած է Արտաւազդ Բ.ը: Բնութագրեցէ՞ք զայն:
2. Եր՞բ տեղի ունեցած է Կրասոսի արշաւանքը եւ ինչպէ՞ս աւարտած է: Ինչպէ՞ս ամրապնդուեցաւ հայ-պարթեւական դաշինքը Բ. ա. 53 թուականին:
3. Ե՞րբ տեղի ունեցած է Անտոնինոսի արշաւանքը: Ե՞րբ եւ ինչպէ՞ս գերուեցաւ Արտաւազդ Բ. արքան: Ի՞նչ վեհանձն արարքով աչքի ինկաւ Արտաւազդ Բ.ի ընտանիքը զերութեան մէջ:
4. Ներկայացուցէ՞ք Արտաւազդ Բ.էն նոց իշխած Արտաշիսեան արքաները:

Արտաշեսեան հարստութեան անկումն ետք Մեծ Հայքի մէջ պահպանուեցաւ թագաւորութիւնը: Հայոց գահը կը գտնուէր հռոմէա-պարթեական պայքարի թատերաբեմին վրայ, գահ կը բարձրանային Հռոմի եւ Պարթեաստանի դրածոները: Ստեղծուել էր յոյժ բացասական դրութիւն երկրին համար. 1-էն մինչեւ 52 թուականը տեղի ունեցաւ մէկ տասնեակ իշխանափոխութիւն...

Հայոց աւագանիին համաձայնութեամբ, պարթեւ Վաղարշ Ա. արքայի եղբայր Տրդատը կը մտնէ Հայաստան եւ հայոց իշխաններուն հետ կը վտարէ հռոմէացիներու՝ դրածոյ վրացի արքայազն Հռադամիզը: 53-ին Հռադամիզը հռոմէական զօրքերու օգնութեամբ կը վերագրաւ իշխանութիւնը Հայաստանի մէջ, սակայն 54 թուականին Տրդատը պարթեական զօրքով վերստին կը տիրէ Մեծ Հայքի գահին, ինչի պատճառով կը սկսի հռոմէա-պարթեական տասնամեայ պատերազմը:


Հռոմի Ներոն կայսրն Արեւելք կը դրկէ Կորբուղոն զօրավարը, որ 58 թուականին կը գրաւէ Արտաշատը: Պարթեւներու հիմնական ոյժերը կը կռուին արեւելքի՝ Վրկանաց աշխարհին մէջ, եւ Տրդատն առանց լուրջ դիմադրութիւն ցոյց տալու կը նահանջէ Ատրպատական: 59-ին Կորբուղոն կ'աւերէ Արտաշատի պարիսպները, ապա կը գրաւէ Տիգրանակերտը, ինչի առթիւ Հռոմի մէջ կը հատուի դրամ՝ «Հայաստանը՝ նուաճուած» մակագրութեամբ:

60-ին Ներոնը հայոց թագաւոր կը նշանակէ Տիգրան Զ.ը (Կապադովկիոյ արքայատունէն): 61-ին, Հռոմի դրոմամբ, Տիգրան Զ.ը կը գրաւէ Ադիաբենէ պետութիւնը, եւ կը սկսի պարթեա-հռոմէական հերթական պատերազմը: 61-ին պարթեւները հաշտութիւն կը կնքեն արեւելքի մէջ եւ իրենց րոլոր ոյժերը կ'ուղղեն Հռոմի դէմ: Նոյն թուականին զինադադար կը հաստատուի հռոմէացիներուն եւ պարթեւներուն միջեւ, որով Տիգրան Զ.ը, հռոմէական եւ պարթեական զօրքերը պէտք է դուրս գային Հայաստանէն մինչեւ հաշտութեան պայմանագիրին կնքումը:

62-ին նոր արշաւանք ձեռնարկելու համար Արեւելք կը դրկուի Պետոս զօրավարը: 62-ի ամրան Պետոսը կ'անցնի Եփրատը: Անոր ընդառաջ կը շարժին հայ-պարթեական միացեալ զօրքերը: Հռանդէա կոչուած վայրին մէջ հայ-պարթեական զօրքը կը յաջողի շրջափակման ենթարկել Պետոսի բանակը, որ կը զինաթափուի ու կ'անցնի երեք նիզակէ կազմուած անարգանքի լուծին տակով, ապա անգէն կը նահանջէ Կապադովկիա: 63-ին, Ներոնը պատերազմելու եւ հաշտութիւն կնքելու արտակարգ լիազօրութիւններով կ'օժտէ Կորբուղոնը, որ 64-ին հաշտութիւն կը կնքէ հակահռոմէական զօրքերուն հետ: Տրդատի պահանջով՝ հաշտութիւնը կը կայանայ նոյն Հռանդէա վայրին մէջ: Ըստ հաշտութեան դաշնագիրին՝ Տրդատը Մեծ Հայքի թագաւոր կը ճանչցուի, սակայն թագն ստանալու համար պէտք է մեկնէր Հռոմ եւ թագադրուել Ներոնէն: 65-ին Տրդատը 3.000-անոց թիկնազօրով կը մեկնի Հռոմ, թագ կը ստանայ Ներոնէն եւ 66-ին կը վերադառնայ Հայաստան: Այդ թուականէն պաշտօնապէս կը հաշուուի Տրդատ Ա.ի եւ **Արշակունեաց հարստութեան հաստատումը Մեծ Հայքի գահին:**

Պատերազմի ընթացքին հիմնովին աւերուած Արտաշատի պարիսպները վերականգնուեցան Ներոն կայսեր տրամադրած գումարով եւ վարպետներու օգնութեամբ: 76-ին կառուցուեցան Գառնիի ամրոցն ու տաճարը: Հռանդէայի դաշնագիրին շնորհիւ՝ 50 տարի խաղաղութիւն տիրեց.

Հռանդէայի դաշնագիրը մեր միջավայրին մէջ յոյժ դրական գնահատականի արժանացած է, թելտ, եթէ սթափ հայեացքով գնահատենք, կը տեսնենք, որ անիկա նոյնիսկ կը



Ներոն կայսեր արձանին գլուխը



Վաղարշ Ա-ի դրամներն

վնասեր մեր ազգային-քաղաքական շահերուն: Ըստ այդ պայմանագիրին՝ այրուհետ պարթեական արքունիքը պետք է առաջարկեր Մեծ Հայքի գաղի թեկնածուն, իսկ Հռոմը հաստատեր զայն: Հայոց աւագանիին կամքը յիովին կ'անտեսուէր: Ասկէ բացի, մնան պայմանը երկու դրացի գերտիրութեանց հնարաւորութիւն կու տար ո՛չ միայն միջամտելու Հայաստանի ներքին գործերուն, այլևս Հայաստանի գահի խնդիրը շահարկելու ըստ իրենց պետական շահերուն, ինչը որ տեղի ունեցաւ պայմանագիրի կնքումէն դեռ կէս դար չանցած:

Տրդատ Ա-ին յաջորդած Սանատրուկ արքան իշխեց մինչեւ 110 թուականը: Անոր մահէն ետք պարթեւներու արքունիքը պարթեւ արքայազն Աշխադարը հայոց թագաւոր նշանակեց Հռոմի համաձայնութեամբ: 113-ին Պարթեւաստանի նոր արքայ խոսրովը, առանց հռոմէացիներու համաձայնութեան, գահընկէց ըրաւ Աշխադարը եւ հայոց թագաւոր նշանակեց անոր եղբայրը՝ Պարթամասիքը: Սա հռոմէացիները դիտեցին իբրեւ Հռանդէաշի դաշնագիրի խախտում, եւ Տրայանոս կայսրը, առիթն օգտագործելով, 114-ին պատերազմ սկսաւ ու նուաճեց Հայաստանը եւ զայն հռոմէական նահանգ (փրովինցիա) հռչակեց:

117-ին Տրայանոսի մահէն ետք, նոր կայսր Ադրիանոսը, հասկնալով իր նախորդին թոյլ տուած օազմավարական սխալը, դաշնագիր կնքեց պարթեւներուն

հետ եւ հայոց թագաւոր ճանչցաւ Սանատրուկի որդի Վաղարշ Ա-ը (117-140):

2-3-րդ դարերուն Հայաստանը կը մնար հռոմէա-պարթեական պատերազմներու թաւերաբեմին վրայ որպէս կռուախնձոր այդ երկու երկիրներուն միջեւ: Վիճակը քիչ մը փոխուեցաւ 2-րդ դարու վերջին, երբ Վաղարշ Բ-ը կրցաւ Մեծ Հայքի մէջ Արշակունիներու իշխանութիւնը ժառանգական դարձնել: 211-ին կովկասցի լեռնակաճներու դէմ պատերազմի ընթացքին Վաղարշ Բ-ի զոհուելէն յետոյ զայն փոխարինեց որդին՝ խոսրով Ա-ը:

Հայաստանի պատմութեան համար վճռական նշանակութիւն ունեցաւ 224-226 թուականներուն Պարսկաստանի մէջ տեղի ունեցած պետական յեղաշրջումը, որով Սասանեանները փոխարինեցին Արշակունիները: Պարթեւ Արշակունիները ապաստանեցան Հայաստան, ուր կ'իշխէին իրենց ազգակից հայ Արշակունիները: Սկսաւ պատերազմներու նոր շրջան մը, որու հիմնական խնդիրը Պարսկաստանի գահին համար Արշակունիներու եւ Սասանեաններու պայքարն էր: Փաստօրէն, երբ խնդիրները կը դիտարկենք հայկական ազգային-պետական շահերու տեսանկիւնէն, Հռանդէայի պայմանագիրին հետեւանքով սկսուած յետընթացը խորացաւ. երկու ոչ-հայկական ծագումով արքայատուներ կը պայքարին յանուն պարսից գերագոյն գահին, բայց կ'աւերուի Հայաստանը եւ տասնեակ հազարաւոր կողուստներ կը կրէ հայ ժողովուրդը...

Հռոմը կը սկսի ամէն ինչ ընել, որպէսզի Մեծ Հայքի գահին մնան Արշակունիները, հաշ-

ուարկը պարզ էր՝ քանի դեռ Արշակունիները գահին են, Հայաստանն ինքնըստինքեան թշնամի է Սասանեան Պարսկաստանին: Այս պարզ իրողութիւնն անտեսելով՝ մեր միջավայրին մէջ այդ շրջանին համար միամտաբար (եթէ չըսենք՝ տգիտութեամբ) ստեղծուել են «բարեկամ հռոմէացիի» եւ «թշնամի պարսիկի» կերպարներ...

Իրենց կարգին, պարսիկներն ամեն բան կ'ընէին հայերն իրենց կողմը գրաւելու համար: Բաւական է միայն նշել, որ 252–298 թուականներուն ընթացքին Սասանեան արքունիքը Մեծ Հայքի գահին բարձրացուցած է չորս գահակալ, այդ թիւին՝ պարսից թագաժառանգ Ռոմիզդ-Ար-



Արեգ-Միհրի տաճարը Գառնիի մէջ



Դիոկղետիանոս կայսեր արձանին գլուխը

ցաւ Սօրինի հաշտութեան 40–ամեայ պայմանագիրը, որով շարք մը տարածքներ Հռոմին անցան եւ գերիները վերադարձուեցան: Հռոմի Դիոկղետիանոս կայսեր աջակցութիւնը վայելող Տրդատ Գ.ը ճանչցուեցաւ Մեծ Հայքի արքայ (298–330): Անոր օրով Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեցաւ:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Հայ–պարթեական զօրքերը Հայաստանէն ե՞րբ վտարեցին Հռոմամիզդը եւ գահ բարձրացուցին Տրդատը:
2. Ներկայացուցէ՛ք 54–64 թուականներուն Հռոմի ու հայ–պարթեական ոյժերու պատերազմը: Գնահատեցէ՛ք Հռոմի տարածքային պայմանագիրը:
3. Ո՞ւր եւ ե՞րբ տեղի ունեցաւ Տրդատ Ա.ի թագադրութիւնը: Ե՞րբ կառուցուած է Գառնիի տաճարը:
4. Ե՞րբ տեղի ունեցաւ Սասանեաններու յեղաշրջումը Պարսկաստանի մէջ եւ ի՞նչ անդրադարձ ունեցաւ մեր պատմութեան վրայ:

Վաղագոյն հաւատալիքները: Վաղնջական ժամանակներուն տարածուած եղած են պաշտամունքի վաղագոյն ծեսերը՝ բնապաշտութիւնը, ոգեպաշտութիւնը, քոթեմիզմը, հմայական մոգութիւնը եւ այլն: Անոնք ծագած են դեռ Հին Քարի Դարուն:

Բնապաշտութիւնը տեսանելի աշխարհի եւ բնութեան երեւոյթներու պաշտամունքն է, որու դրսեւորումները կը գտնենք Քարի Դարի ժայռապատկերներէն մինչեւ այսօր պահպանուած բազմաթիւ երեւոյթներու մէջ (կրօնական հաւատալիքներու, արուեստի գործերու, տոմարի, անձնանուններու մէջ եւ այլն):

Ոգեպաշտութիւնը հաւատք է ոգիներու եւ հոգիի նկատմամբ, որոնք գոյութիւն ունին անտեսանելիօրէն եւ կը կառավարեն մարդիկն ու զանոնք շրջապատող աշխարհը: Ըստ հայոց հաւատալիքներուն՝ ոգիները եղած են բարի եւ չար:

Թոթեմիզմը հաւատք է, թէ մարդոց տուեալ խումբը որեւէ կենդանիէ, բոյսէ կամ առարկայէ՝ քոթեմէ կը ծագի կամ արիւնակցական կապի մէջ կը գտնուի անոր հետ: «Թոթեմ» բառը յառաջացած է կարմիր հնդկ ածիպուէ ցեղի «օթոթեման» («անոր տոհմը») բառէն: Հայոց մէջ քոթեմիզմի առկայութեան լաւագոյն վկայութիւններէն են անձնանունները:

Հմայական մոգութիւնը հաւատք է գերբնական ոյժերու միջոցով նիւթական առարկաներու, երեւոյթներու եւ անձանց վրայ ազդելու մարդու հնարաւորութեանց նկատմամբ: Սոգութեան վկայութիւններ կը հանդիպին ժայռապատկերներու, միջնադարեան հմայիկներու, ժողովրդային հաւատալիքներու մէջ, որոնք վերապրուկներն առկայ են մեր օրերուն:



Տիզարանի մոտիվ
(Ք. ա. 2-րդ հազարամեակ)

Հայկական պետութեանց դիցարանները: Հայոց առաջին պետական կազմաւորումը՝ Արատտան կրօնապետական կարգերով երկիր էր: Երկրին հովանաւորը կը նկատուէր արարչագործ Հայա աստուծոյ որդի Հայկը (չումբրական աղբիւրներուն մէջ՝ Դումուզի, յունականներուն մէջ՝ Օրիոն): Կը յիշատակուին նաեւ Հայկ աստուծոյ մայրն ու քոյրը:

Հայասա երկրին աստուածները կը յիշատակուին խեթա-հայասական պայմանագիրին մէջ, որու վնասուած բնագիրէն հնարաւոր կը դառնայ 13 աստուծոյ անուն ընթերցել: Հայասայի դիցարանին գլուխը կանգնած էր ռազմի ամպրոպային գերագոյն աստուածը, երկրորդ տեղը մայր աստուածուհին էր:

Վանի թագաւորութեան դիցարանը կը յիշատակուի Միհրի Դրան արձանագրութեան մէջ, որու վերլուծութենէն կը պարզուի, որ ան 70 աստուածներէ (35 արական եւ 35 իգական) ու շուրջ 30 սրբութիւններէ կազմուած եղած է: Աստուածներու եւ դիցուհիներու թիւին համապատասխանութիւնը ցոյց կու տայ մեծամասնական ընտանիքի զաղա-

վարին գերակայութիւնը ժամանակի հայ իրականութեան մէջ: Բոլոր աստուածներուն կը զոհաբերէին արու կենդանիներ (ցուլ եւ խոյ), իսկ դիցուհիներուն՝ շագ (կով եւ ոչխար). որեւէ բացառութիւն չկայ: Այսինքն՝ իւրաքանչիւր աստուծոյ պէտք է զոհաբերութիւն կատարուէր՝ ըստ իր սեռատեսակին: Այստեղէն հասկնալի կը դառնայ, թէ ինչո՞ւ մենք այսօր մատաղի ծնի առեն միայն արու կենդանի կը զոհաբերենք: Կը պահպանուի հնագոյն աւանդոյթը, քրիստոնեայ Հայաստանի մէջ Սուրբ Երրորդութիւնը՝ Հայր Աստուծոյ գլխաւորութեամբ, կ'ընկալուի իբրեւ արական, ուստի եւ մատաղցու կենդանին պէտք է միայն արու ըլլայ...



Ոսկեայ մետալիոն՝ Խալդի աստուծոյ երկրաբազութեան տեսարանով

Վանի տէրութեան դիցարանը կը գլխաւորէր գերագոյն եռեակը՝ Խալդին (աստուածներու հայր, երկինքի ու երկրի արարիչ), Թէյշեբան (ռազմի, քաջութեան, ամպրոպի աստուած) եւ Շիվինին (արեւի աստուած, որու պաշտամունքի գլխաւոր կեդրոնը Տուշպա-Վան մայրաքաղաքն էր): Կ'երկրաբազէին նաեւ դաշտեր, լեռներ, ծովեր եւ ուրիշ աստուածութիւններ:

Վանի թագաւորութենէն ետք տեղի կ'ունենայ նոր պանթոնի ձեւաւորում, եւ քրիստոնէութեան ընդունման նախօրեակին հայոց դիցարանը կը ներկայանայ նոր տեսքով:

Դիցարանը կրկին կը ղեկավարէր գերագոյն աստուածներու եռեակը՝ Արամազդ, Անահիտ եւ Վահագն կազմով: Աստուածներու հայր Արամազդը կը պաշտուէր իրեւ արարիչ երկրի եւ երկինքի, քարօրութիւն, լիութիւն, արիութիւն շնորհող: Անոր պաշտամունքի գլխաւոր կեդրոնն էր Դարանաղեաց գաւառի Անի

ամրոցը: Մայր դիցուհի Անահիտը, զոր կը մեծարէին «Ոսկեմայր» տիտղոսով, նկատուած է երկրի փառքն ու սնուցողը, բոլոր բարիքներու շնորհատուն, երկրի ու մայրաքաղաքի պահապան-հովանաւորը: Անոր պաշտամունքի գլխաւոր կեդրոններն էին Եկեղեցաց գաւառի Երիզա (Երզնկա) աւանն ու Արտաշատ մայրաքաղաքը: Վահագնը (Նեմրոսի սրբավայրին մէջ՝ Արտազն/տս/) պաշտուած է որպէս ռազմի, քաջութեան եւ ամպրոպի աստուած, ըստ տեղեկութեան մը՝ ան նախապէս պաշտուած է որպէս արեգակի աստուած: Վահագնի գլխաւոր մեծեանը գտնուած է Աշտիշատի մէջ եւ կոչուած է Վահէ-Վանեան:


Գլխաւոր եւ սիրուած աստուածութիւններէն էր Աստղիկը՝ երկնային լոյսի, սիրոյ եւ գեղեցկութեան աստուածուհին, որուն ալ նուիրուած է Վարդավառի տօնը (ըստ քրիստոնէացուած աւանդազրոյցներու՝ այս տօնը կապուած է մեծ ջրհեղեղին հետ, իսկ Աստղիկը Նոյի դուստրն էր): Ան նկատուած է Վահագնի կինը կամ սիրուհին, եւ Աշտիշատի մէջ գտնուող անոր մեծեանը կոչուած է «Սեմեակ Վահագնի»: Նանէն նկատուած է մայրութեան եւ ընտանեկան օճախի պահապան դիցուհին, որ նախապէս եղած է նաեւ ռազմի դիցուհի: Նանէի պաշտամունքի գլխաւոր կեդրոնը գտնուած է Դարանաղեաց գաւառի Թիլ աւանին մէջ: Արեգ-Միհրը արեգակի, լոյսի եւ արդարութեան աստուածն էր: Ըստ հայոց հաւատքին՝ արեգակի սիրտին մէջ կ'ապրէին 365 սուրբեր, որոնցմէ իւրաքանչիւրը տարուայ մէկ օրը արդարութիւնը կը պահպանէր երկրի վրայ: Ըստ աւանդութեան՝ մշտամանուկ Արեգակն ամէն իրիկուն կը սուզուի Վանայ լիճին մէջ եւ ամէն առտու դուրս կու գայ լիճէն, որու կապոյտ ջուրերուն խորքը կը գտնուէր անոր ոսկեայ ննջարանը: Արեւի պաշտամունքի գլխաւոր կեդրոններն եղած են Բարձր Դայքի Բազառիճ աւանը եւ Տուշպա-Վան մայրաքաղաքը: Տիրը դարութեան աստուածն էր, որ համարուած է Արամազդի քարտուղարը, զիրի եւ գրականութեան, արուեստի ու գիտութեան հովանաւոր աստուածը, որու պաշտամունքի գլխաւոր կեդրոնը կը գտնուէր Վաղարշապատէն Արտաշատ ճամբուն վրայ, Երազամոյն կոչուող վայրին մէջ: Անդրաշխարհի աստուածը հնագոյն ժամանակներուն եղած է Տորք Անգեղը, որ կը համապատասխանէ խեթական Թարքու աստուծոյ: Նոր դիցարանին մէջ զայն փոխարինեց Ա(պ)անդարամէտը:

Դայոց մէջ սիրուած եղած է Վանատուրը՝ հիւրընկալութեան աստուածը, պատահական չէ, որ հիւրասիրութեան սրբացուած կանոններն այսօր ալ առկայ են մեր կենցաղին մէջ: Նոր տարուայ տօնակատարութեանց մէջ կարեւորուած է Ամանորի պաշտամունքը...

Դեյլէնիզմի դարաշրջանին հայոց աստուածութիւնները համապատասխանեցուէր են յունականներուն հետ (Արամազդ-Չեւս, Անահիտ-Արտեմիս, Վահագն-Յերակլես, Աստղիկ-Ափրոսիթէ, Արեգ-Միհր-Դելիոս, Տիր-Ափոլոն եւ այլն): Սակայն մեր ժողովուրդը չընդունեց օտար աստուածութեանց անուններն ու պաշտամունքը: Դայոց մէջ լայն տարածում չէ ունեցած նաեւ զրադաշտականութիւնը, զոր երկրնութեանկան (տուա-



Արամազդի, Մայր Դիցուհիի եւ Վահագն-Արտագնէտի արձաններուն գլուխները
Նեմրուքի սրբավայրին մէջ (Ք. ա. 1-ին դար)



Արեգ-Միհր-Ափողոնի արձանին գլուխը Նեմրուքի վրայ

լիստական) կրօն էր՝ չար եւ բարի համագոր գերագոյն աստուածութիւններով (բարին՝ Արամազդ-Որմիզդ, չարը՝ Աիրիման-Չարաման):

Հայոց նախաքրիստոնէական հաւատքի մասին կարելի տեղեկատու է հայոց տոմարը: Օրացոյցին մէջ կը յիշատակուին աստուածներու ու սրբազան վայրերու անունները:

Հայոց հին հաւատքին բնորոշ գիծերը: Ամփոփելով վերը նշուածը՝ կը տեսնենք, որ հայոց նախաքրիստոնէական հաւատքին բնորոշ եղած են հետեւեալ գիծերը.

- ա) միակեդրոն բարեպաշտութիւն (ի տարբերութիւն երկկեդրոն զրադաշտականութեան),
- բ) դիցարանը բաղկացած էր ազգակից աստուածներէ (յունական Օլիմպոսի նման),
- գ) դիցարանը կը ղեկավարէր գերագոյն եռեակը, ինչը հնդեւրոպական երեւոյթ էր եւ հայ իրականութեան մէջ նպաստեց քրիստոնէութեան ընկալման. գերագոյն եռեակի երեք անձերը փոխարինուեցան քրիստոնէութեան Սուրբ Երրորդութեամբ.

- դ) չարի ու բարիի հոգեւոր ընկալումը. հայերը չար կամ չարագործ աստուածներ չունին. չար ոյժերը ոգիներու մակարդակէն վեր չեն բարձրացուած,
- ե) մեծարուած են լոյսը, ընտանեկան օճախը, գիտութիւնները եւ ամենայն բարին,
- զ) առկայ եղած են գաղափարախօսական շարք մը հիմնադրոյթներ, որոնցմէ յատկանշական են Սրբազան Հայրենիքի պաշտամունքը, հայոց ընտրեալ ժողովուրդ ըլլալու եւ ազգային առաքելութիւն ունենալու պատկերացումները, Աստուած-պետութիւն, Աստուած-ժողովուրդ-անհատ կապերու ընկալումը...

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտէք պաշտամունքի վաղագոյն ծեւերուն մասին:
2. Ներկայացուցէ՛ք Վանի բազալտիւթեան դիցարանը:
3. Ինչպիսի՞ն էր հայոց դիցարանը քրիստոնէութեան ընդունման նախօրեակին:
4. Բնութագրեցէ՛ք հայոց հին հաւատքին բնորոշ գիծերը:

Նախամաշտոցեան գրաւոր մշակոյթը: Հայաստանի մէջ 301 թուականէն առաջ սեփական դպրութեան գոյութեան մասին բազմաթիւ գրաւոր վկայութիւններ կան: Այդ կը վկայեն Փիլոստրատոսի տեղեկութիւնը Արշակ արքայի (34–35) նուիրաբերած հայագիր ոսկեայ ժաննակի մասին, Հիպպոլիտիսի «Ժամանակագրութիւն»-ին մէջ (գրուած 235–ին) հայոց նշուիլը սեփական դպրութիւն ունեցող ժողովուրդներու շարքին, Ագաթանգեղոսի հաղորդումները հայկական նշանագիրներու եւ նախաքրիստոնէական Հայաստանի մէջ դպրութեան Տիր աստուծոյ պաշտամունքի վերաբերեալ, Մովսէս Խորենացիի հաղորդումը 2–3–րդ դարերուն Դարանաղեաց Անի ամրոցին մէջ մեհենական պատմագրութեան դիւանի մասին եւ այլն:

Նախաքրիստոնէական Հայաստանէն յայտնաբերուած են գրաւոր մշակոյթի յուշարձաններ, որոնք ըստ ծագման եւ պատկանելիութեան կարելի է բաժնել չորս խումբի.

ա) Հայաստանի մէջ ստեղծուած եւ մեր նախնիներուն կիրառած մեհենագրային համակարգեր: Այս խումբէն մասամբ վերծանուած է միայն Վանի թագաւորութեան մեհենագրութիւնը, զոր բաղկացած է շուրջ 300 նշաններ, որոնք գրուած են աջէն ծախ եւ վերէն վար ուղղութիւններով: Գրահամակարգի լեզուն եղած է հնագոյն հայերէնը:

բ) Երկրորդ խումբը կը կազմեն օտար ծագում ունեցող, բայց մեր նախնիներուն կիրառած գրային համակարգերը: Անոնք են խեթա–լուվիական *հիերոկլիֆները*, ասուրա–բաբելական եւ տեղական («բիայնական» կամ «ուրարտական» կոչուող) սեպագիր համակարգերը, յունական, արամեական, ասորական եւ պահլաւական կամ միջին պարսկական այբուբենները:

գ) Երրորդ խումբը կը կազմեն Հայաստանի տարբեր հնավայրերէն գտնուած բազմաթիւ գրակիր առարկաները, որոնք հեղինակներն օտարներ են:

դ) Չորրորդ խումբը կը կազմեն առեղծուածային նշանագիր յուշարձանները, որոնք Հայաստանէն դուրս յայտնի չեն:

Հազարամեակներու ընթացքին Հայաստանի մէջ ստեղծուած գրաւոր մշակոյթը անհետեւանք չկորսուեցաւ, եւ մաշտոցեան դպրութեան կատարելութիւնը պայմանաւորուած էր նաեւ նախորդ շրջանին արմատաւորուած գրային մտածողութեամբ: Ըստ լեզուաբանների, երբ լեզուն գրական մշակման չ'ենթակուիր, սահմանափակ բառապաշար (առաւելագոյնը՝ 7–8 հազար բառ) կ'ունենայ, մինչդեռ գրաբարին մէջ աւանդուած բառապաշարը, այն ալ ոչ–ամբողջովին յայտնի, 60 հազար բառէն աւելի է:

Պատմագրութիւնը: Օտար աղբիւրներու տեղեկութիւններէն կ'իմանանք, որ Հայաստանի առաջին պետական կազմաւորումներն (Արատտա, Միտաննի, Հայասա) ունեցած են արքունի գրագրութիւն, հետեւաբար, նաեւ արքայական դիւաններ: Անոնք, սակայն, առայժմ չեն յայտնաբերուած: Մեզի հասած պատմագիտական արժէք ունեցող առաջին արձանագրութիւնները Վանի թագաւորութեան սեպագիրներն են:

Մովսէս Խորենացին կը տեղեկացնէ, որ գերագոյն աստուած Արամագի պաշտամունքի կեդրոն Դարանաղեաց Անիի մէջ մեհենական դիւան գոյութիւն ունեցած է: Մեհենական պատմութիւններն ի մի բերուած



Պրունզէ բիթեղ՝ մեհենագիրներով եւ երկրպագութեան տեսարանով (Վանի շրջան)

եղած են Մար Աբաս Կատինայի, Օղիւնայ քուրծի եւ այլոց երկերուն մէջ: Իսկ Պատմահայրը Արտաշէսի որդի Վրոյրը կը յիշատակէ իբրեւ «այր իմաստուն եւ բանաստնդ»:

Մեծն Տիգրանի մասին Մետրոդորոս Ալեքսանդրացին եւ Ամֆիկատրոս Աթենացին գրած են նրկեր, որոնք, դժբախտաբար, մեզի չեն հասած: Արտաւազդ Բ.ը կը յիշատակուի որպէս ողբերգութեանց, ճամբրու եւ պատմական երկերու հեղինակ, որոնք նաեւ Դոմի մէջ ճանչցուած եղած են: Յայտնի է, որ Արտաշատ հրաւիրուած է 2-րդ դարու մատենագիր եամբլիքոս Բաբելացին, որ հոս գրած է իր 35 հատորնոց «Բաբելոնիկա» երկը: Մովսէս Խորենացին կը հաղորդէ 4 մասէ բաղկացած «Չիսունն Պիտոյից» չափածոյ յանգերգութեան մասին, զոր նուիրուած եղած է Չայկազուններուն, յատկապէս Տիգրան Ա. երուանդեանին:

Պատմագիտական կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդեն հայոց արքաներուն թողած յուճարէն եւ արածատառ արձանագրութիւնները, որոնք կանգնեցուած են Ք. ա. 3-րդ դարէն մինչեւ 301 թուականն ինկած ժամանակաշրջանին: Պատմական կարեւոր սկզբնաղբիւրներ են նաեւ հայոց արքաներուն դրամները, որոնք մեզի հասած են հազարաւոր օրինակներով:

Ճարտարապետութիւնը: Մարդկութեան նստակեցութեան անցումով յառաջ եկաւ բնակարաններու եւ ուրիշ շինութեանց կառուցման անհրաժեշտութիւնը, սկսաւ սաղմնաւորուիլ ճարտարապետութիւնը: Երկիր մոլորակի վրայ անցումը նստակեցութեան եւ արտադրող տնտեսութեան (ի տարբերութիւն կենդանիներու, որոնք միայն կը սպառեն) առաջին անգամ կատարուած է Ք. ա. 10-րդ հազարամեակին Չայկական Լեռնաշխարհի հարաւը Կորդուաց աշխարհի տարածքին (Շանիդար հնավայրին մէջ): Ք. ա. 10-րդ հազարամեակին Չայկական Լեռնաշխարհի Խարա-արեւմուտքը (Կէօպէլի ու Նեւալի Զորի հնավայրերը) Չայոց (Չիւսիսային) Միջագետքի տարածքին կը կառուցուին մինչեւ այսօր մոլորակի վրայ յայտնաբերուած հնագոյն տաճարները:

Ք. ա. 3-2-րդ հազարամեակներուն, կապուած պետականութեան զարգացման հետ, ողջ Չայկական Լեռնաշխարհին մէջ կը կառուցուին կիլիւպեան (հսկայակերտ) ամրոցներ: Տարածում կը գտնեն յարակից քառակուսի շէնքերով կլոր բնակարանները, որոնք կեդրոնը կը դրուէր օճախը, իսկ տան առաստաղը կ'աւարտէր երդիքով: Դամբարանները քարէ կլոր պարիսպով կը պատուէին, իսկ հանգուցեալին աճիւնը ծածկող սալաքարին վրայ անմահութիւն կամ վերածնունդ խորհրդանշող որեւէ կոթող կը կանգնեցուէր:

Վանի քաղաքութեան շրջանէն մեզի յայտնի են մեծ բիւով քաղաքներ, ամրոցներ, պալատներ, տաճարներ, դամբարաններ եւ ուրիշ շինութիւններ:



Մայր Դիցուիի եւ մանուկի արձանիկ Արմաւիրէն (1-2-րդ դարեր)



Սեպագիր արձանագրութիւն Ալանիս հնավայրէն (Վանի մօտ, Ք. ա. 7-րդ դար)



Արղինի-Մուսասիրի տաճարը (վերակազմութիւն)



Աստղային երկինքի քարտէս-ժայռապատկեր Սև Սարէն

Առանձնակի ուշադրութեան արժանի է Արղինի-Մուսասիրի մէջ գտնուող գլխաւոր տաճարին ոճը (երկթէք տանիքով, եռանկիւն ճակտոնով, սիւնազարդ), զոր յետագային Փոքր Ասիոյ միջոցով անցաւ յունա-հռոմէական աշխարհ, ապա տարածուեցաւ ամբողջ Երկրագունդին մէջ (այդ ոճով է կառուցուած նաեւ Գառնիի տաճարը):

Ք. ա. 3-րդ դարէն Հայաստանի մէջ կը սկսի հելլենիստական ժամանակաշրջանը, զոր կը տեսնենք քրիստոնէութեան պետականացումը: Այս ժամանակաշրջանին կառուցուեցան մեծ թիւով նոր քաղաքներ (Սամոսատ, Արշամաշատ, Երկու Արսամէա, Երուանդաշատ, Երուանդակերտ, Բագարան, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ եւ այլն), ամրոցներ, պալատներ, տաճարներ, դամբարաններ, հասարակական եւ ուրիշ շինութիւններ: Պահպանուած պաշտամունքային կառոյցներէն յատկապէս աչքի կ'իյնան Կոնձագենէի Նեմրոս լերան սրբավայրը, Գառնիի տաճարը, Հին Արտաշատի շինութիւնները եւ այլն:

Տիգրազիտութիւնը: Աստղային երկինքի մասին վաղագոյն գիտելիքները Հայաստանի մէջ յայտնի են դեռ Քարի Դարի վերջին փուլի ժայռապատկերներէն: Ժայռապատկերներուն մէջ, Ք. ա. 3-2-րդ հազարամեակներու պրոնզէ գօտիներու եւ խեցեղէնի վրայ կը հանդիպին աստղագիտական նշումներ, որոնք ցոյց կու տան, որ հնագոյն ժամանակներէն Հայաստանի մէջ կիրառուած են լուսնային, լուսնա-արեգակնային եւ արեգակնային օրացոյցներ:

Եւրոպացի աստղագետ-պատմաբանները դեռ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարուն ցոյց տուեր էին, որ կենդանակերպի (զոտիաքի) համաստեղութեանց անուանակոչումը կատարուած է Հայկական Լեռնաշխարհին մէջ Ք. ա. մօտ 2800 թուականին: Ասիկա հաստատելու եկաւ Մեծամօրի աստղադիտարանը, ուրկէ աստղային երկինքը դիտարկած են Ք. ա. 2800-2600 թուականներուն ընթացքին:

Կեօպէլի-թեփէի (Պորտաբլուր) Ք. ա. 10-7-րդ հազարամեակներով թուագրուող կոթողներուն վրայ առկայ են սրբազան կենդանիներու (ցուլ, վարազ, առիւծ, անգղ, օձ, աղուես, կարիճ եւ այլն) պատկերներ, որոնք, ըստ որոշ ուսումնասիրողներու, համաստեղութեանց պատկերներ կրնան ըլլալ: Եթէ ասիկա հաստատուի, աստղագիտութեան ծնունդի մասին մեր գիտելիքները ամբողջովին կը փոխուին:

Տոմարական գիտելիքներու մեծ զարգացում կը նկատուի Վանի թագաւորութեան մէջ:

Հայկական արեգակնային օրացոյցը բաղկացած եղած է 365 օր՝ տասներկու 30-օրեայ եւ մէկ տօնական 5-օրեայ (Աւելեաց) ամիսներէ: Առանձին անուններ կրած են թ' ամիսները, թ' օրերը եւ թ' օրուան 24 ժամերը: Ըստ անուանի հայագետ Հայր Դեռնդ Ալիշանի հաշուարկին՝ Հայոց Բուն Տոմարին սկզբնաւորումը (1 թուականի առաջին օրը Նաւասարդի 1-ը) տեղի ունեցած է Ք. ա. 2492 թուականի Օգոստոսի 11-ին: Ըստ աւանդութեան, սա այն օրն է, երբ Հայկ Նահապետը կործանեց բռնակալ Բելը:

Ժողովրդային բանահիւտութիւնը: Մեր ժողովուրդը նախաքրիստոնէական շրջանին ստեղծած է դիցավեպեր եւ ասքեր՝ ծօնուած իր աստուածներուն, նախնի-նահապետնե-



Մեծամորի աստղադիտարանի հարթակներն մեկը (Ք. ա. 28–26–րդ դարեր)



Հայոց Բակուր արքայի (2–րդ դար) անունը կրող արծաթե բաժաճերական տեսարաններով

րուն, «իրելի արքաներուն ու իերոսներուն: Անոնց մեծ մասը գրառուած եւ մեզի հասած են Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն»-ի էջերուն մէջ: Ժողովրդային բանահիւտութեան՝ մեզի հասած զոհարներն են Վահագն աստուծոյ ծննդեան հիմնը, «Հայկ եւ Բել», «Արամ եւ Բարշամ», «Արամ եւ Նիւբար Մաղէս», «Արամ եւ Պայապիս Քաաղէս», «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ», «Տիգրան եւ Աժդահակ», «Երուանդ եւ Արտաշէս», «Արտաշէս եւ Սաթենիկ», «Արտաշէս եւ Արտաւազդ» եւ ուրիշ ասքեր:

Թատրոնը: Դժուար է ըսել, թէ թատրոնը Հայաստանի մէջ ե՞րբ սկզբնաւորուած է: Յստակ է, որ ժողովրդային հայալեզու թատրոնը սկիզբ առած է դեռ վաղնջական ժամանակներուն: Մովսէս Խորենացին կը տեղեկացնէ, որ հայկական հնագոյն ասքերը («Գողթան երգերը») կը մատուցուէին բեմականացումներու (*ցուցքերու*) ու պարներու միջոցով՝ փանդիոներու (հնագոյն լարային գործիք) նուագակցութեամբ:

Յելլենիզմի դարաշրջանին Հայաստանի մէջ յունալեզու թատրոններ գործած են վերնախաւին համար: Յայտնի է, որ նման թատրոններ կային Արտաշատի եւ Տիգրանակերտի մէջ: Անոնց մէջ կը բեմականացուէին ինչպէս յոյն, այնպէս ալ հայ հեղինակներու գործերը: Պլուտարքոսի (1–2–րդ դարեր) վկայութեամբ՝ Արտաւազդ Բ.ի գրած ողբերգութիւնները անոր մահէն մէկ ու կէս դար ետք ալ յայտնի էին հռոմէացի ընթերցատէրներուն:

Ուշ հելլենիստական շրջանի թատերական կեանքի բացառիկ վկայութիւն է Բակուր արքայի (160–ական թուականներ) յունարէն արձանագրութեամբ արծաթե բաժաճ, որ հարուստ կերպով ծեւաւորուած է թատերական տեսարաններով:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Հայոց դիցարանին մէջ ո՞վ էր գիրի ու գրականութեան հովանաւոր աստուածը:
2. Որո՞նք գրած են Մեծն Տիգրանի պատմութիւնը: Ի՞նչ գիտէք անոնց գործերուն ճակատագիրին մասին:
3. Ի՞նչ գիտէք Արդինի–Սուսասիրի տաճարին մասին:
4. Քանի՞ տեսակի թատրոն կար հին Հայաստանի մէջ: Ներկայացուցէք զանոնք:

14. ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿԶԲՆԱԴՈՐՈՒՄԸ

Հայոց պատմության ամենաշրջադարձային իրադարձութիւնը, քերես, քրիստոնէութեան պետական կրօն հռչակումն էր, որով ալ մեր պատմութիւնը կը բաժնուի երկու մեծ դարաշրջաններու՝ նախաքրիստոնէական եւ քրիստոնէական:

Հայաստանի մէջ նախասկզբնական միաստուածութեան գաղափարն արձանագրուած է դեռ 5-րդ դարուն: Եզնիկ Կողբացին հեթանոսներու՝ միաստուածութեան գաղափարի ընդունման մասին կը գրէ. «Մենք,– կ'ըսեն,– քանի որ անկարող ենք մօտենալու բոլորի պատճառին՝ է–ին, Գոյին, Սշտնքենականին ու Անմատչելիին, այդ պատճառով՝ Անոր պաշտամունք կը մատուցենք ուրիշ աւելի ցածրերու միջոցով. ուստի անհրաժեշտ է զոհերով ու նուէրներով սիրաշահիլ զանոնք, որոնց միջոցով կը պաշտենք Ձայն»: Յատկանշական է, որ Կողբացիի խօսքին մէջ Արարիչի մակդիրներն առաջինը «է»–ն է՝ «էութիւն»–ը, որ արտայայտուած է մաշտոցեան այբուբենի 7-րդ տառով...

Միակ եւ գերագոյն Աստուծոյ՝ Արարչի պաշտամունքը վկայուած է տակաւին հայոց ազգածագման «Հայկ եւ Բել» վիպասքին մէջ, զոր մեզի հասած է հայկական եւ վրացական տարբերակներով: Հոն որոշակիօրէն կը դատապարտուի կեապաշտութիւնը, իսկ հայոց նախնի Հայկը կը պատուիրէ իւրայիններուն՝ «ոեւ մէկու չծառայել՝ բացի Արարիչ աստուծմէ»...



Թաղտու առաքեալ



Բարդուղիմէոս առաքեալ

Այսինքն՝ միաստուածութեան գաղափարը հայոց ձեռնարկայ էր քրիստոնէութենէն շատ առաջ, սակայն ան պաշտօնական կրօնի աստիճանի բարձրացուեցաւ միայն Տրդատ Գ.ի օրով:

Քրիստոնէութեան մուտքը Հայաստան 1-3-րդ դարերուն: Քրիստոնէութեան եւ հայ իրականութեան առաջին առնչութիւնները կը վերաբերին Յիսուս Քրիստոսի երկրային կեանքի ժամանակներուն: Ըստ հայկական ավանդութեան՝ եղեսիոյ մէջ իշխող հայոց Արգար քագաւորը կը տառապէր անբուժելի հիւանդութեամբ եւ, հիմնալով Քրիստոսի հրաշագործութեանց մասին, գայն իրեն ըով կը հրաւիրէ: Սակայն Քրիստոսը շնորհակալութեամբ կը հրաժարի՝ տեղեկացնելով, որ իր առաքելութիւնը պէտք է իրականանայ Պաղեստինի մէջ: Քրիստոսը կը խոստանայ իր աշակերտներէն զրկել Արգարին:

Ըստ նոյն ավանդութեան՝ Արգար արքայի դպիր Անանը եղեսիա բերաւ Քրիստոսի կենդանագիր պատկերը, զոր քանի մը դար հոն պահուելէ յետոյ տեղափոխուեցաւ Կ. Պոլիս, իսկ 13-րդ դարուն հոնկէ՝ ճենովա, որու Ար. Բարդուղիմէոս հայկական եկեղեցւոյ մէջ ալ ան կը պահուի ցայսօր:

Ըստ հայկական ավանդութեան Արգարը Աննի Տիգրանի եղբայր Արշամ Մանուկի (Մանուի) որդին էր, որ եղեսիոյ կառուցումէն ետք Սծբինէն հոն տեղափոխեց իր արքունիքը:

Ըստ Յիսուս Քրիստոսի խոստումին՝ 43-ին Հայաստան եկաւ եւ մինչեւ 66 թուականը քարոզեց Թաղէոս առաքեալը, իսկ 60-68 թուականներուն Հայաստան եկաւ եւ քարոզեց Բարդուղիմէոս առաքեալը: Այդ հիմնաւորմամբ՝ Հայոց եկեղեցին պաշտօնապէս կը կրէ «Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցի» անուանումը:

Ըստ հայ մատենագիրներու՝ երկու առաքեալներն սպանուեցան Սանատրուկ արքային հրամանով: Առաքեալներու զործունեութեան թուականները վերցուած են Հայ եկեղեցւոյ պաշտօնական ժամանակագրութենէն, ինչը չի համապատասխաներ արդի պատմագիտութեան տուեալներուն: Ըստ եկեղեցւոյ՝ առաքեալներն սպաննուած են 66 եւ 68 թուականներուն, մինչդեռ պատմագիտութեան տուեալներէն յայտնի է, որ այդ թուականներուն Հայաստանի մէջ կ'իշխէր Տրդատ Ա.ը, իսկ Սանատրուկը զահ կրնար բարձրանալ 77 թուականէն ոչ առաջ...

Թաղէոս առաքեալը Վասպուրականի Արտազ գաւառին մէջ հիմնեց եպիսկոպոսական Աթոռ, զոր գոյութիւն ունեցաւ մինչեւ 180-ական թուականները: Անկէ ետք քրիստոնէական համայնքներ կը յիշատակուին Փոքր Հայքի տարածքին: 240-270-ական թուականներուն կը յիշատակուի Մեծ Հայքի Մերուժան եպիսկոպոսը:

Քրիստոնէութեան հռչակումը պետական կրօն եւ Հայ եկեղեցւոյ ինքնութեան կայացումը: 1-3-րդ դարերու ընթացքին քրիստոնէութիւնը հալածուած կրօն էր Առաջաւոր Ասիոյ երկիրներուն եւ Յոռմէական Կայսրութեան մէջ: Քրիստոնեաները հալածուած էին նաեւ Հայաստանի մէջ: 3-րդ դարու վերջին յայտնի են Հռիփսիմեան կոյսերուն նահատակութիւնը եւ Գրիգոր Պարթեւի 13 տարուայ քանտարկութիւնը խոր Վիրապի մէջ:

Գրիգոր Պարթեւն ալ դարձաւ քրիստոնէութեան գլխաւոր քարոզիչը Հայաստանի մէջ եւ կրցաւ համոզել Տրդատ Գ.ը՝ քրիստոնէութիւնը հռչակելու պետական կրօն:

Ըստ ավանդական պատմութեան՝ ատիկա տեղի ունեցած է 301 թուականին (գիտութեան մէջ կան տարածայնութիւններ՝ կապուած այս թուականին հետ):

Քրիստոնէութեան տարածումը Հայաստանի մէջ ուղեկցուեցաւ նախորդ կրօնի եւ անոր մշակոյթի կեդրոններուն ոչնչացմամբ: Երկրին մէջ քաղաքացիական պատերազմ սկսաւ քրիստոնէութիւն ընդունած պետական զօրքերու եւ քրմութեան ու անոր հաւա



Մեծ Տրդատ Գ.

տարիմ ժողովուրդին միջե: Այդ կռիւներուն զոհուեցաւ նաեւ հայոց վերջին քրմապետ Արծանը:

Քրիստոնէութեան պետական կրօն հռչակումը միայն բարար պայման չէր որպէս ազգային-եկեղեցական ինքնուրոյն կառոյց Հայ եկեղեցւոյ կայացման համար: Ատոր համար անհրաժեշտ էին քանի մը նախապայմաններ, որոնք ապահովուեցան յառաջիկայ երեք դարերու ընթացքին:

Ժողովուրդին մէջ դիրութեամբ ընկալուելու համար եկեղեցին որդեգրեց նախաքրիստոնէական շարք մը ծեսեր ու սովորոյթներ (օրինակ՝ մատաղը, Վարդավառի տօնը եւ այլն): Նոր կրօնին սրբավայրերը կը համապատասխանեցուէին հին կրօնական պատկերացումներու հետ (օրինակ՝ Անահիտ աստուածամօր սրբատեղիներն ու տօները դարձան Մարիամ Աստուածածնի, Վահագնի սրբավայրերն ու տօները՝ Յիսուս Քրիստոսի, եւ այլն): Մեկնելով այս փաստերէն, կարելի է ենթադրութիւն մը ընել. քրիստոնէութեան սուրբ գիրք «Պիպլիա»-ն բոլոր լեզուներուն մէջ թարգմանուեցաւ «Գիրք» կամ «Սուրբ Գիրք», միայն հայերէնի մէջ է, որ ան կը կրէ «Աստուածաշունչ Մատեան» անուանումը, ինչէն կարելի է ենթադրել, որ այդպէս կը կոչուէր հայոց նախաքրիստոնէական կրօնին գլխաւոր սուրբ գիրքը...

Քրիստոնէութեան պետական կրօն հռչակուելէն յետոյ հայոց կաթողիկոսները, Գրիգոր Լուսաւորիչէն սկսած մինչեւ Մեծն Ներսէսը ներառեալ, Կեսարիոյ մէջ կ'օծուէին: Սա պետութեան անվտանգութեան տեսակէտէն խոցելի էր: Այդ կարգին վերջ տուաւ Պապ թագաւորը 373 թուականին, երբ Մեծն Ներսէսի վախճանումէն ետք կարգադրեց նոր կաթողիկոսն ընտրել եւ օծել Հայաստանի մէջ: Այդ թուականէն՝ մեր կաթողիկոսները կ'ընտրուին եւ կ'օծուին հայութեան կողմէ:

Հայ եկեղեցւոյ կայացման գործին մէջ չափազանց մեծ էր հայալեզու քրիստոնէական դպրութեան դերը, որն ստեղծողները 405 թուականին եղան Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը: Կարելոր է դաւանաբանական կողմնորոշման խնդիրը: 451 թուականին քրիստոնէական եկեղեցին առաջին անգամ պառակտուեցաւ Քաղկեդոնի ժողովին մէջ, որու պատճառը Քրիստոսի միայն աստուածայի՞ն, թէ միաժամանակ աստուածային ու մարդկային բնոյթ ունենալու շուրջ բանավէճն էր (եկեղեցին բաժնուեցաւ միաբնակներու եւ երկաբնակներու): Հայերը չմասնակցեցան այդ ժողովին, սակայն իրենց դիրքորոշումը յայտնեցին Դուինի 506 եւ 554 թուականներու ժողովներուն մէջ: Վերջինիս մէջ ընդունուեցաւ «Ուխտ միաբանութեան Աշխարհիս Հայոց» կոչուած փաստաթուղթը, որուն մէջ յստակօրէն հաւատարմութիւն յայտնուեցաւ միաբնակութեան նախասկզբնական դրոյթներուն:

Այդպիսով՝ քրիստոնէութիւնը Հայաստան մուտք գործեց 1-3-րդ դարերուն, 4-րդ դարասկիզբին հռչակուեցաւ պետական կրօն, իսկ Հայ եկեղեցին, որպէս ազգային-եկեղեցական ինքնուրոյն կառոյց, լիովին ծեւաւորուեցաւ 4-6-րդ դարերուն ընթացքին:



Գրիգոր Լուսաւորիչի արծանը Վատիկանի մէջ

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտք նախասկզբնական միաստուածութեան մասին:
2. Ըստ հայկական աւանդութեան՝ ե՞րբ տեղի ունեցած են քրիստոնէութեան եւ հայ իրականութեան առաջին առնչութիւնները:
3. Ներկայացուցէ՛ք առաքեալներուն գործունէութիւնը Հայաստանի մէջ:
4. Ե՞րբ իշխած է Տրդատ Գ. արքան: Ո՞վ է հայոց առաջին կաթողիկոսը:

3-րդ դարավերջին Հոռմի եւ Պարսկաստանի պայքարն աւարտեցաւ 298 թուականին կնքուած Մծքինի 40-ամեայ հաշտութեան պայմանագիրով, ինչի շնորհիւ Տրդատ Գ.ի օրօք (298-330) խաղաղութիւն տիրեց: Այդ ժամանակ ալ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեցաւ:

Տրդատին յաջորդեց որդին՝ Խոսրով Բ. Կոտակը (330-338), որու իշխանութեան սկիզբը շարունակուող խաղաղութիւնն օգտագործուեցաւ երկրի շէնացման նպատակով: Կառուցուեցաւ Դուինը, տնկուեցան «Խոսրովակերտ» եւ «Տաճար մայրի» անտառները, որոնցմէ առաջինը արքային անունը կրող արգելոց է այսօր: Անոր օրով, պարսից արքայ Շապուհ Բ. Երկարակեացին (309-379) դրդմամբ, մասքութներու Սանեսան թագաւորը Հայաստանի դէմ արշաւանք ձեռնարկեց, ինչն աւարտեցաւ անոր պարտութեամբ եւ սպանութեամբ:

337-ին մահացաւ Հոռմի կայսր Մեծն Կոնստանդիանոսը: Օգտուելով առիթէն՝ Շապուհ Բ.ը պատերազմ սկսաւ Հոռմի դէմ, որուն ներքաշուեցաւ նաեւ Հայաստանը: 338-ին Հոռմը լուրջ միջոցներ ձեռնարկեց Արեւելքի մէջ, եւ հայոց գահ բարձրացաւ մահացած Խոսրով Կոտակի որդի Տիրանը (338-350):

Տիրանի օրով կը սրուին թագաւորին եւ եկեղեցւոյ յարաբերութիւնները, արքային հրամանով մահապատիժի ենթարկուեցան Յուսիկ կաթողիկոսը (Գրիգոր Լուսաւորիչի թոռ) եւ անոր փոխարէն կաթողիկոսական թեկնածու առաջարկուած ասորի Դանիէլ եպիսկոպոսը: Տիրանը փորձեց քարելամանալ Շապուհ Բ.ի հետ, սակայն յաջողութիւն չունեցաւ:

350-ին անկայուն վիճակ ստեղծուեցաւ Հոռմի մէջ, որմէ օգտուելով՝ Շապուհը կրկին արշաւեց դէպի Հայաստան, որ մինակ մնաց: Տիրան արքան ձերբակալուեցաւ, տարուեցաւ Տիգրոն եւ կուրացուեցաւ: Շապուհը Մեծ Հայքի թագաւոր հռչակեց իր որդի Ներսեհը: Սակայն Մեծ Հայքի Աշխարհածողովն ընդդիմացաւ այս կարգադրութեան, ու ստանձնելով երկրին պաշտպանութեան գործը՝ Հոռմէն օգնութիւն խնդրեց: Նոյն տարին, հռոմէական զօրքերու զլուխն անցած անձամբ Արեւելք եկաւ Կոնստանդինոս կայսրը, որ Բասենի ճակատամարտին մէջ ծանր պարտութեան մատնեց Շապուհ Բ.ը՝ գերելով անոր կանանցը: 350-ին հաշտութիւն կնքուեցաւ: Տիրանն ազատ արձակուեցաւ, սակայն կուրցած ըլլալով՝ չէր կրնար երկիրը կառավարել, ուստի թագաւոր հռչակուեցաւ անոր որդին՝ Արշակ Բ.ը (350-368):

Արշակ Բ.ի գահակալութեան առաջին տարիներուն ջերմ յարաբերութիւններ հաստատուեցան Հոռմի հետ, որոնք ամրապնդուեցան Արշակի եւ Հոռմի կայսեր մահացած եղբոր նշանածին՝ Օլիմպիայի ամուսնութեամբ: Սպարապետ նշանակուեցաւ Վասակ Սամիկոնեանը, իսկ կաթողիկոս ընտրուեցաւ արքայի սենեկապետ, Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն Ներսէս Պարթեւը (Մեծն Ներսէս):

Մեծն Ներսէսի նախաձեռնութեամբ 354-ին զումարուեցաւ Աշտիշատի ժողովը, զոր առաջինն էր Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ: Ժողովը որոշեց վերացնել նախաքրիստոնէական որոշ սովորոյթներ, կառուցել հիւանդատուներ, դպրոցներ, որբանոցներ եւ ուրիշ հաստատութիւններ:

Կեդրոնական իշխանութիւնը հզօրացնելու նպատակ ունէր Արշակաւան քաղաքին կառուցումը: Թագաւորը կոչ ըրաւ բոլորին, նաեւ կախեալ եւ փախստական բնակիչներուն՝ գալ ու բնակիլ Արշակաւանի մէջ, որով անոնք նախկին մեղքերէն եւ պարտականութիւններէն կ'ազատուէին: Ասիկա մեծ դժգոհութիւն յառաջացուց հայ նախարարներու շրջանին մէջ, որոնք որոշ առեւն ետք արձակեցան Արշակաւանի վրայ եւ աւերեցին զայն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 298–387 ԹՈՒԿԱՆՆԵՐՈՒՆ



Երկրին մեջ Արշակի հեղինակությունն աւելի սասանեցու, երբ ան սպաննել տուաւ իր երկու եղբորդիները՝ Գնէլը եւ Տիրիթը, ապա ամուսնացաւ Գնէլի այրի Փառանծեմի հետ:

359–ին Շապուհ Բ.ը նոր պատերազմ սկսաւ Դոմի եւ Հայաստանի դէմ: Պատերազմը կը շարունակուէր 363 թուականին, երբ զոհուեցաւ Յուլիանոս կայսրը, եւ նոր կայսր Յովիանոսը պարսիկներուն հետ կնքեց «Ամօթալի դաշնագիր»ը, որով ան պարսիկներուն զիջեցաւ գրաւած տարածքները եւ դաշնակից Հայաստանին օգնելէ հրաժարեցաւ:

364–ին Շապուհ Բ.ը, իր կողմն ունենալով Արշակ Բ.էն դժգոհ նախարարները (որոնց զլուխը կանգնած էին Մերուժան Արծրունին եւ Վահան Մամիկոնեանը), Հայաստան ներխուժեց: Պարսկա–հայկական այս պատերազմը տեւեց չորս տարի, որու վերջաւորութեան՝ Արշակ Բ.ն ստիպուած գնաց Տիգրան՝ բանակցելու Շապուհ Բ.ի հետ: Վերջինս խարտութեամբ բանտարկեց Արշակ Բ.ը Անյուշ բերդին մէջ, ուր ալ ան ինքնասպան եղաւ:

Շապուհ Բ.ը նոր արշաւանք ձեռնարկեց: Երկրին ղեկավարութիւնն ստանձնեց Փառանծեմ թագուհին: Ան 11.000 զօրքով ամրացաւ Արտագերս ամրոցին մէջ եւ 13 ամիս դիմադրեց: Թագուհին դիմեց Դոմի կայսեր՝ ռազմական օգնութեան եւ արքայորդի Պապը թագաւոր ճանչնալու խնդրանքով:

Շապուհը 369–ին նոր արշաւանք կատարեց Հայաստան, գրաւեց Արտագերս ամրոցը, մահապատիժի ենթարկեց Փառանծեմ թագուհին, ապա Հայաստանի քաղաքներէն մեծ թիով քնակչութիւն տեղահանեց եւ գերեվարեց:

369–ին առանց զօրքերու Հայաստան ղրկուեցաւ Պապը, որ Մուշեղ Մամիկոնեանի (սպարապետ Վասակ Մամիկոնեանի որդին) հետ սկսաւ զօրահաւաք կատարել: Դոմի Վաղես կայսրը 370–ին ինքը եկաւ Արեւելք, Պապը հռչակեց թագաւոր եւ ռազմական զործողութիւններ սկսաւ: 371–ին տեղի ունեցաւ Չիրաւի վճռորոշ ճակատամարտը, ուր հայ–հռոմէական զօրքերը պարտութեան մատնեցին պարսիկները: Չինադադար կնքուեցաւ եւ Պապը հայոց թագաւոր յայտարարուեցաւ:

Պապ թագաւորին (370–374) առաջին զործն եղաւ Մեծ Հայքէն անշատուած տարածքներուն վերամիաւորումը, որմէ ետք ան սկսաւ մեծ բարեփոխումներ իրականաց-



Շապուհ Բ-ի դրամներն

նել: Ան վերացուց ժողովուրդին գանձուող տասանորդ հարկը (եկամուտի 1/10-ը, զոր եկեղեցւոյ կը տրուէր), կրճատեց եկեղեցական տիրոյթներուն եւ անձնակազմին 5/7-ը՝ պետութեան եւ, յատկապէս, բանակին կարիքները հոգալու նպատակով: Այս կարգադրութեանց շնորհիւ, հայոց զօրքերուն քիչ կարճ ատենէն 90 հա-

զար հոգիի հասա: Պապը նաեւ հրամայեց կուսանոցներուն մեծ մասը զոցել: Այս քոլորին պատճառով, եկեղեցւոյ եւ պետութեան յարաբերութիւնները սրուեցան: Յոգեւորականներն սկսան երիտասարդ արքան ներկայացնել դիւային կերպարով եւ նոյնիսկ անոր վերագրեցին Մեծն Ներսէսի մահը՝ զայն քունաւորման հետեւանք յայտարարելով:

Պապը կատարեց եկեղեցւոյ հետ կապուած շատ կարեւոր բարեփոխում մը. Մեծն Ներսէսի վախճանումէն ետք նոր կաթողիկոսին ընտրութիւնն ու օծումը կատարուեցան Հայաստանի մէջ (մինչ այդ՝ Կեսարիոյ մէջ կ'օծուէին), որով Հայ եկեղեցին անկախացաւ:

Պապը արտաքին քաղաքականութեան մէջ ալ անկախանալու փորձ ըրաւ՝ զաղտնի բանակցութիւններ սկսելով Շապուհ Բ-ի հետ, ինչն ալ անոր վախճանին պատճառը դարձաւ: Հռոմի կայսեր յանձնարարութեամբ՝ երկու մահափորձեր կատարուեցան Պապին դէմ՝ առաջինը Տարսուսի մէջ՝ անյաջող, երկրորդը՝ Հայաստանի մէջ զտնուող հռոմէական զօրակայանին մէջ, որով ալ աւարտեցաւ երիտասարդ ու տաղանդաւոր արքային կեանքը:

374-ին Հայաստանի թագաւոր դարձաւ Կարազդատ Արշակունին, որ Պապի սպանութեան մասնակցելու մեղադրանքով մահապատիժի ենթարկեց Մուշեղ Մամիկոնեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 387–428 ԹՈՒՎԿԱՆՆԵՐՈՒՆ





Գրիգոր Խանճեան, «Հայոց այրութեանը»

Այս փորձին համար, պարսից արքունիքը զայն գահընկեց ըրա: փոխարէնը նշանակելով անոր եղբայր Վռամշապուհը (389–415):

Վռամշապուհի իշխանութեան տարիները խաղաղ անցան, այդ ժամանակ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց այրութեան՝ Սահակ Պարթեւի հետ հիմք դնելով հայկական նոր՝ քրիստոնէական դպրութեան:

Վռամշապուհին ետք կարճատեւ կրկին իշխեց Խոսրով Գ.ը, որ քանի մը ամիսէն մահացաւ: Անկէ ետք հայոց թագաւոր նշանակուեցաւ պարսից արքայ Յազկերտ Ա.ի որդի Շապուհը (416–420), որմէ ետք որոշ ժամանակ անիշխանութիւն տիրեց:

422–ին հայոց արքայ յայտարարուեցաւ Վռամշապուհի որդի Արտաշիւրը կամ Արտաշէս Գ.ը (423–428): Անոր թագաւորութիւնը շարունակուեցաւ մինչեւ 428 թուականը, երբ թագաւորէն հայ նախարարներու մէկ մասին դժգոհութիւնն իբրեւ առիթ գործածելով՝ պարսից արքունիքը գահընկեց ըրաւ Արտաշէս Գ.ը, ինչով ալ վերջ գտաւ Արշակունեաց թագաւորութիւնը Հայաստանի մէջ:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ներկայացուցէ՛ք Խոսրով Կոտակի աշխարհաշէն գործունէութիւնը:
2. Պատմեցէ՛ք Տիրան արքայի եւ Արշակ Բ.ի իշխանութեան տարիներուն մասին: Ի՞նչ բնորոշ ընդհանուր գիծեր կային:
3. Ինչպէ՞ս կը գնահատեք Պապ թագաւորը որպէս պետական գործիչ:
4. Ե՞րբ եւ ինչպէ՞ս Հայաստանը բաժնուեցաւ դրացի գերտէրութեանց միջեւ: Ե՞րբ վերջ գտաւ Արշակունեաց թագաւորութիւնը Հայաստանի մէջ:

450–451 թուականներու ազատագրական պատերազմը: 428

թուականին Արշակունեաց բազաւորութեան վերացումէն ետք ստեղծուեցաւ Մարզպանական Հայաստանը, զոր ունէր ներքին ինքնաշարժութիւն՝ հայ նախարարներու եւ հոգեւորականութեան իրաւունքներու պաշտպանութեամբ, եւ որուն կարելոր տրաշխաւորը հայկական բանակն էր: Այդ իրավիճակին պահպանումը ձեռնարկու չէր պարսից տիրութեան, զոր պէտք է փորձեր այդ կարգավիճակը վերացնել առաջին իսկ հնարաւորութեան պարագային:

Պարսից արքայ Յազկերտ Բ.ը (439–457) արտաքին խնդիրները լուծելէ յետոյ անցաւ ներքին հարցերուն՝ Հայաստանի մէջ առաջնահերթ նկատելով քրիստոնէութեան վերացումը: 447-ին Հայաստան դրկուեցաւ Դենշապուհ անունով պաշտօնեան, որ աշխարհագիր (մարդահամար եւ գոյքահամար) իրականացուց ու ծանրացուց հարկերը, որոնցմէ կ'ազատուէին միայն զրադաշտականութիւն քնդունողները: Դենշապուհն իրարու դէմ հանեց հայ նախարարները՝ աջակցելով զրադաշտական դարձածներուն:

449-ին կրօնափոխութեան պահանջով հրովարտակ եկաւ Յազկերտ Բ.էն: Հայ մեծամեծները ժողով հրաւիրեցին Արտաշատի մէջ եւ պարսից արքային պահանջը մերժեցին: Վերջինս, զայրացած, Տիգրան կանչեց հայոց, վրաց եւ աղուանից նախարարները՝ մահուան սպառնալիքով պարտադրելով անոնց կրօնափոխ ըլլալ: Ստեղծուած պայմաններուն ստիպողութեան տակ, նախարարներն առերես համաձայնեցան պահանջին: Յազկերտ Բ.ը պատանդ պահեց Գուգարաց Աշուշա քղեշխն ու մարզպան Վասակ Սիւնիի երկու որդիները: Հայրենիք վերադարձող նախարարներուն հետ դրկուեցան 700 մոզեր, որոնք պէտք է Հայաստանի մէջ զրադաշտականութիւնը տարածէին:



Գրիգոր Խանճեան,
«Վարդանանք» (հատուած)

Հայաստանի մէջ հոգեւորականները դիմադրական շարժում սկսեցին: Ջարեւանդի Անգղ աւանին մէջ ժողովուրդը, Դեւոնդ Երեցի առաջնորդութեամբ յարձակեցաւ մոզերուն վրայ՝ փախուստի մատնելով զանոնք: Հայ ազնուականները ժողովուրդին ներկայացուցին իրականութիւնը, ապա սկսան կազմակերպուած ապստամբութիւն մը, որուն նպատակը անկախ պետութեան վերականգնումն էր: Ապստամբութեան գլուխ կանգնեցաւ Վասակ Սիւնիին:

Որոշուեցաւ հազարապետ Վահան Ամատունիին զլխաւորութեամբ պատուիրակութիւն մը դրկել Բիւզանդիա՝ օգնութեան խնդրակցով: Չօրքը բաժնուեցաւ երեք մասի. մէկ մասով Եերշապուհ Աթորունին շարժեցաւ դէպի հարաւ՝ հսկելու Պարսկաստանի հետ սահմանը, երկրորդով սպարապետ Վարդան Մամիկոնեանը շարժեցաւ Աղուանք՝ օգնելու դաշնակիցներուն, հոնկէ ալ երթալու Եօրայ Պահակ՝ հոներէն օգնութիւն բերելու, իսկ երրորդ մասը Վասակ Սիւնիի զլխաւորութեամբ մնաց Այրարատի մէջ:



ՎԱՐՂԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ (450–451)



Սակայն, Վահան Ամատունին ձեռնունայն վերադարձաւ, քիւզանդացիք ոչ միայն դրժեցին նախապէս տուած օգնութեան խոստումը, այլեւ թոյլ չտուին քիւզանդական մասի հայ նախարարներուն՝ օգնել իրենց եղբայրներուն սեփական զօրաջոկատներով, դեռ աւելին՝ ապստամբութեան ծրագիրին մասին տեղեակ պահեցին պարսիկները:

Մինչ այդ, Աղուանքին օգնելու գացած Վարդան Մամիկոնեանը 450 թուականի ամրան ջախջախեր էր պարսից զօրքը Խաղխաղի (այժմ՝ Ղազախ) ճակատամարտին, եւ հասնելով ճորայ Պահակ՝ դաշինք կնքեք էր հոներուն հետ:

Քիւզանդիոյ մերժման լուրն ստանալէն յետոյ Վասակ Սիւնին անխտեմութիւն կը նկատէր Պարսկաստանի դէմ միայնակ դուրս գալը, ուստի ապստամբութեան իր յետագայ մասնակցութենէն հրաժարեցաւ: Հակառակ ասոր, Վարդան Մամիկոնեանը որոշեց շարունակել ապստամբութիւնը: Դժբախտաբար, հայոց աւագանին ընդհանուր յայտարարի գալու ոյժ չգտաւ իր մէջ, իսկ ապստամբութիւնը պառակտուեցաւ Վասակեաններու եւ Վարդանանց...

Թովմա Արծրունին կը հաղորդէ, որ պառակտումէն ետք ապստամբները կը քննարկէին հայոց արքայի թեկնածութիւնը՝ նկատի ունենալով Վահան Ամատունին եւ Վարդան Մամիկոնեանը: Ընտրութիւնը կանգ առաւ վերջինիս վրայ:

Կանխելու համար ապստամբութեան յետագայ զարգացումը, պարսից արքունիքը 451-ի գարնան մեծ զօրաքանակ մը դրկեց Հայաստան՝ Մուշկան Նիւսալաուրտի գլխաւորութեամբ: Նոյն տարուան 26 Մայիսին Վասպուրականի Արտազ գաւառի Աւարայրի դաշտին մէջ տեղի ունեցաւ վճռական ճակատամարտը: Հայոց բանակը առաւօտէն մինչեւ մայրամուտ «Գիտակցուած մահն անմահութիւն է» կարգախօսով մարտնչեցաւ գերակշիռ ոյժերով, Մատեան Գունդով ու մարտական փիղերով հակառակորդին դէմ:

Աւարայրի ճակատամարտը վերջացաւ հայոց ռազմական պարտութեամբ, զոհուեցան Վարդան Մամիկոնեանն ու շարք մը հայ նախարարներ: Հայոց բանակը նահանջեց երկրին խորքերը՝ շարունակելով պայքարը Տայքի, Խաղտիքի, Արցախի, Մուսի, Տնորիքի, Պարխարի եւ այլ լեռնային շրջաններու մէջ: Սակայն պարսից արքունիքն ստիպուած

եր գիջումներու դիմել՝ դադրեցնելով կրօնափոխութեան հարկադրանքը: Ասկէ մեկնելով՝ հայ պատմագրութեան մէջ Աւարայրի ճակատամարտին արդիւնքը զնահատուած է որպէս բարոյական յաղթանակ:

481–484 թուականներու ազատագրական պատերազմը: 470–ական թուականներուն պարսից արքունիքը նոր ճնշումներ սկսաւ՝ հարկերու եւ կրօնափոխութեան պահանջով: Բիւզանդիոյ հետ կապի մեղադրանքով 478–ին աթոռագրկուեցաւ հայոց կաթողիկոս Գիւտ Արաիեզացին:

Պարսից ճնշումներուն պատճառով 481–ին Հայաստանի մէջ բռնկեցաւ նոր ապստամբութիւն մը, որուն ազդակը դարձաւ վրաց թագաւոր Վախթանգի ըմբոստութիւնը: Հայերը վտարեցին պարսից Ատրվշնասպ մարզպանը եւ սեփական կառավարութիւն կազմեցին. Սահակ Բագրատունին (Մովսէս Խորենացիի մեկենասը) ընտրուեցաւ մարզպան, Վահան Մամիկոնեանը՝ սպարապետ:

Հակառակ տուած նախնական խոստումին՝ Բիւզանդիան առաջուայ նման չօգնեց:

Հայոց առաջին յաջողութիւնն եղաւ Ալուոսի ճակատամարտը 481–ին, որու ընթացքին սպաննուեցաւ նաեւ պարսիկ մարզպանը: Երկրորդ ռազմական յաջողութիւնը յաջորդ տարի տեղի ունեցած Ներսեհապատի (Արտազ գաւառին մէջ) ճակատամարտն էր: 483–ին վրաց թագաւորը օգնութիւն խնդրեց հայերէն: Նոյն տարուայ ամբան Կուր գետի ափին մղուեցաւ ճարմանայի ճակատամարտը, ուր հայ–վրացական բանակը ծանր պարտութիւն կրեց. զոհուեցաւ նաեւ մարզպան Սահակ Բագրատունին:

Վահան Մամիկոնեանը, վերադառնալով Հայաստան, շարունակեց մանր փարթիզանական կռիւները: 484–ին պարսիկները պարտութիւն կրեցին միջինասիական հեփթաղ ցեղերէն, սպաննուեցաւ նաեւ պարսից Պերոզ թագաւորը: Գահ բարձրացած Բալաշ (Վաղարշ) նոր արքան որոշեց հաշտութիւն կնքել հայոց հետ եւ Հայաստան դրկեց Նիխոր Վշնասպադատը:

Բանակցութիւններն ընթացան Հեր գաւառի Նուարսակ գիւղին մէջ: Պարսիկներն ընդունեցին հայոց պահանջները: Կնքուեցաւ պայմանագիր մը, որով պարսիկները կը հրաժարէին կրօնափոխութեան հարկադրանքէն, պետական պաշտօններէն պէտք է ազատուին անարժանները եւ յետագային նշանակուին միայն արժանաւորները, պարսից արքունիքը պէտք չէ միջամտեր հայ նախարարներու ներքին գործերուն: Վահան Մամիկոնեանը ճանչցուեցաւ հայոց սպարապետ, իսկ մէկ տարի ետք մարզպան նշանակուեցաւ:

Ստոյգ յայտնի չէ, թէ Վահան Մամիկոնեանը ե՞րբ մահացած է: Դուինի 506–ի ժողովի մասնակիցներու ցանկին մէջ անոր անունը չկայ, ինչի հիման վրայ եզրակացուցած են, որ ան այդ ատեն արդէն մահացած էր, իսկ մարզպանի պաշտօնին զայն փոխարիներ էր եղբայրը՝ Վարդ Մամիկոնեանը: Սակայն յետագայ դարերուն ապրած մեր պատմիչները կը տեղեկացնեն, որ Վահան Մամիկոնեանը որպէս մարզպան իշխած է երեսուն կամ երեսունմէկ տարի, այսինքն՝ Վահան Մամիկոնեանը մարզպան եղած է մինչեւ 516 կամ 517 թուականը, ինչը կը համապատասխանէ նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցիի այն տեղեկութեան, որ Վահան Մամիկոնեանին յաջորդած անոր եղբայր Վարդը հայոց մարզպան դարձած է Սամուէլ Ա. Արծկեցիի կաթողիկոսութեան ատեն (516–526): Այստեղ բաց կը մնայ այն հարցը, թէ ինչո՞ւ Վահան Մամիկոնեանը 506–ին չի յիշատակուիր Դուինի ժողովին մէջ...

Հարցումներ եւ ստորադրանքներ


1. Ե՞րբ ստացուեցաւ Յազկերտ Բ.ի հրովարտակը եւ անով ի՞նչ պահանջ կը ներկայացուէր հայութեան: Հայերն ի՞նչ պատասխան տուին:
2. Ապստամբութեան սկիզբը որո՞նք էին հայոց մարզպանն ու սպարապետը: Ապստամբութիւնն ինչո՞ւ պառակտուեցաւ:
3. Ե՞րբ տեղի ունեցաւ Աւարայրի ճակատամարտը եւ ի՞նչ արդիւնքով աւարտեցաւ:
4. Ներկայացուցէ՛ք Հայաստանի 481–484 թուականներու ապստամբութիւնը:

17. ՀԱՅԱՍՏԱՆԸ 6–9-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՆ

Արեւելեան Հայաստանը 6-րդ դարում: Վահան Մամիկոնեանցն եւոք որպէս մարզպան կառավարեցին Վարդ Մամիկոնեանն ու Մծեժ Պնունին, որոնց իշխանութեան տարիներուն մարզպանական Հայաստանը ներքին լիակատար ինքնավարութիւն կը վայելէր: Սակայն երբ ամրապնդուեցաւ պարսից արքայ Խոսրով Ա. Անուշիրվանի (531–578) իշխանութիւնը, նորէն ծանրացուեցան հարկերն ու սկսան ոտնահարուիլ հայոց իրաւունքները:

564–ին Հայաստան եկած պարսիկ մարզպան Սուրենի բռնարարքները նոր ապստամբութեան պատճառ դարձան. 571–ին հայերը ուղքի կանգնեցան Վահան Մամիկոնեանի եղբայր Վարդի թռուան՝ Կրտսեր Վարդան Մամիկոնեանի եւ Յովհաննէս Բ. Գաբրիէնացի կաթողիկոսին զլիաւորութեամբ: Ապստամբութեան միացան նաեւ վրացիներն ու աղուանները: Յաջորդ տարի հայերը Դուինի մէջ պարտութեան մատնեցին պարսիկները, սպաննուեցաւ նաեւ մարզպանը: Ապստամբութեան յաջող սկիզբը տեսնելով՝ Բիւզանդիան միջամտեց եւ սկսաւ պարսկա–բիւզանդական 20–ամեայ պատերազմը, զոր վերջ գտաւ 591–ին կնքուած պայմանագիրով. տեղի ունեցաւ Հայաստանի երկրորդ բաժանումը. երկրի մեծ մասն անցաւ Բիւզանդիոյ, փոքր մասը՝ Պարսկաստանին: Բաժանման նոր սահմանագիծը կ'անցնէր Ազատ գետով, Կոզովիտ գաւառով, Մակու քաղաքով եւ Վանայ լիճով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 527–591 ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐՈՒՆ



Արեւմտեան Հայաստանը 6-րդ դարուն: Ինչպէս նախորդ էջերում մէջ նշած ենք, 451 թուականին Փոքր Ասիոյ Քաղկեդոն քաղաքին մէջ գումարուեցաւ քրիստոնէական տիեզերական ժողով մը, ուր Եկեղեցին բաժնուեցաւ երկու մասի՝ միաբնակներու եւ երկաբնակներու (վեճի հիմքին ինկած էր Քրիստոսի միաբնոյթ (միայն աստուածային) կամ երկաբնոյթ (միաժամանակ աստուածային ու մարդկային) ըլլալու հարցը): Ի հակադրութիւն Բիզանդական Եկեղեցոյ, հայերը հաւատարիմ մնացին սկզբնապէս ընդունուած միաբնակութեան, ինչը յստակօրէն ձեւակերպուեցաւ Դուինի 506 եւ 554 թուականներու ժողովներու որոշումներուն մէջ: Ասոր հետեւանքն եղաւ հայոց նկատմամբ սկսած դաւանական խտրականութիւնը:

Հայաստանի բիզանդական մասին մէջ հայոց ներքին ինքնավարութիւնը վերացնելուն ուղղուած էին Յուստինիանոս Ա. կայսեր (527–565) յատուկ հրովարտականքերը: Անոնցմով՝ հայ իշխանները զրկուեցան սեփական զօրք ունենալու ժառանգական իրաւունքէն, հայկական հողերը միաւորուեցան ռազմական մէկ շրջանի (ստրատեգիայի) մէջ, զոր պէտք է ղեկավարեր բիզանդացի ստրատեգոսը: 536-ին հայկական հողերը բաժնուեցան չորս նահանգներու՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք եւ Չորրորդ Հայք: Նոյն թուականին հրապարակուեցաւ օրէնք մը, որ միտուած էր տրոհելու հայ իշխաններուն տիրոյթները, ոչնչացնելու անոնց հզօրութիւնը. եթէ իշխանի մը տիրոյթը մինչ այդ առանց տրոհման հօրմէ կը ժառանգէր աւագ որդին, Յուստինիանոսը սահմանեց նոր կարգ՝ հօր ժառանգութենէն հաւասար իրաւունքով պէտք է կալուածներ ստանային ոչ միայն իշխանին կրտսեր որդիները, այլեւ՝ դուստրերը:

Այս փոփոխութիւնները յառաջ բերին հայոց ընդվզումներ, որոնցմէ նշանաւոր եղան Առաջին Հայքի 539-ի ապստամբութիւնը Յովհաննէս Արշակունիի գլխաւորութեամբ եւ Յովհաննէս Արշակունիի որդի Արտավանի եւ Արշակ Արշակունիի ծախողած մահափորձը Յուստինիանոսի դէմ 548-ին:

Դրութիւնն աւելի վատացաւ Մօրիկ (Մաւրիկիոս) կայսեր օրօք (582–602), որ սկսաւ հայկական զինոյժը Հայաստանէն դուրս հանելու եւ ուրիշ երկիրներու մէջ ոչնչացնելու քաղաքականութիւն վարել: Սերբոսի (7-րդ դար) վկայութեամբ՝ Մօրիկը պարսից խոսրով Բ. արքային նամակով կը յորդորէր նոյնը ընել Հայաստանի՝ պարսից տիրապետութեան տակ գտնուող մասի հայկական զինոյժին հետ:

Բիզանդիոյ այդ քաղաքականութեան դէմ ընդվզեցան որոշ հայ նախարարներ, որոնցմէ յայտնի է Սմբատ Բագրատունին: Հայոց նոր ապստամբութիւն մը բռնկեցաւ 595-ին, երբ խումբ մը հայ իշխաններ նախատեսեր էին հիւսիսաբնակ հոններու դաշնակցութեամբ վերականգնել Հայաստանի պետականութիւնը՝ անկախանալով քէ Պարսկաստանէն եւ քէ Բիզանդիայէն: Դժբախտաբար, ապստամբութիւնը ճնշուեցաւ:

Արարական արշաւանքները եւ Հայաստանի նուաճումը: 630-ական թուականներուն նոր կրօնի՝ իսլամի դրօշին տակ միաւորուած արաբներն սկսան արշաւանքները Պարսկաստանի եւ Բիզանդիոյ դէմ: Այս արշաւանքներուն հետեւանքով՝ Սասանեան Պարսկաստանը գոյութիւն ունենալէ դադրեցաւ, իսկ Բիզանդիան շարք մը արեւելեան տարածքներ կորսնցուց:

640-ին տեղի ունեցաւ արաբներու առաջին ներխուժումը Հայաստան, որու ժամանակ անոնք մուտք գործեցին Հայկական Տաւրոսի շրջանով եւ, Վանայ լիճին հիւսիսով հասնելով Արարատեան դաշտ, մէկօրեայ պաշարումէ ետք գրաւեցին Դուինը՝ սպաննելով 12.000 եւ գերի տանելով 35.000 հայեր: 640-ական թուականներուն կարգ մը ուրիշ ասպատակութիւններ ալ տեղի ունեցան:

652-ին հայոց իշխան Թեոդորոս Ոչտունին եւ Ասորիքի արաբ կառավարիչ Մուավիան կնքեցին պայմանագիր մը, որով հայերը ճանչցան արաբներուն գերիշխանութիւնը՝ 3 տարի հարկ չտալու պայմանով, իսկ անկէ ետք հարկերուն չափերը հայերն իրենք պէտք է որոշէին: Հայերը պէտք է պահէին 15.000 հեծելազօր, որուն ծախսը արաբները պիտի հոգային, ընդ որուն, արաբական զօրքերը պէտք չէ տեղակայուէին Հայաստանի մէջ, իսկ օտար ոյժի յարձակման պարագային՝ կողմերը պարտաւոր էին իրարու օգնել:

7-րդ դարու երկրորդ կէսին Հայաստանը ներքին ինքնավարութիւն ունէր: Աւելին.

ՀԱՅԱՍՏԱՆԸ 7-9-ՐԴ դարերին



եղան տարիներ, երբ թթափելով արարական գերիշխանությունը՝ հայերը ունեւ մեկուն հարկ չէին վճարեր: Ջարմանալիօրէն, հայոց աւագանին չօգտագործեց պատեհ հնարաւորութիւնը՝ վերականգնելու անկախ թագաւորութիւնը:

701-ին արաբները վերջնականապէս նուաճեցին Հայաստանը: Հայաստանը, Վրաստանը եւ Աղուանքը միաւորուեցան «Արմինիա» կոչուող փոխարքայութեան (ոստիկանութեան) մէջ, զոր կը կառավարէր արաբ ոստիկանը: Բուն Հայաստանը կը ղեկավարէր Հայոց Իշխանը:

Ապստամբութիւնները արարական տիրապետութեան դէմ 8-9-րդ դարերուն: Խալիֆայութիւնն առաջնահերթ նկատեց հայ նախարարները ժառանգական իրաւունքներէն զրկելը, ինչի պատճառով ալ 703-ին Հայաստանի մէջ ծագեցաւ ապստամբութիւն մը՝ սպարապետ Սմբատ Բագրատունիի գլխաւորութեամբ: Հայերը յաղթեցին քանի մը ճակատամարտներ, սակայն, ստիպուած տեղի տուին թշնամիին գերակշիռ ոյժերուն դիմաց՝ հեռանալով Բիւզանդիոյ սահմանները:

Հայ ազնուականութիւնը գլխատելու նպատակով արաբ ոստիկանը 705-ին կը դիմէ խարտութեան՝ զանոնք հրաւիրելով Նախճաւան՝ իր խալիֆային կողմէ թոշակներ վճարելու նպատակով: Նախճաւանի եւ Խրամ աւանի եկեղեցիներուն մէջ շուրջ 1200 հայ ազնուականներ խարտութեամբ կ'արգելափակուին ու կը հրկիզուին:

Այս ծանր հարուածէն ետք նոր ճնշումներ սկսան: 725-ին նոր աշխարհագիր կատարուեցաւ ու հարկերն աւելցան:

748-750 թուականներուն նոր ապստամբութիւն մը բռնկեցաւ Հայաստանի մէջ: Դժբախտաբար, ապստամբութիւնը ղեկավարող Մամիկոնեան եւ Բագրատունի իշխաններուն միջեւ անհամաձայնութիւն ծագեցաւ, ինչը յաղթանակի հասնելու հնարաւորութիւն չտուաւ: Արաբները յաջողեցան 750-ին դաժանօրէն ճնշել ապստամբութիւնը:

762-ին Արծրունիներու գլխաւորութեամբ Վասպուրականի մէջ ծագեցաւ հզօր ապստամբութիւն մը, որու ընթացքին հերոսական քացառիկ դրուագներ արձանագրուեցան:

Արարական տիրապետութեան դէմ ամենամեծ ու ամենահուժկու ապստամբութիւնը





Վասպուրականի 762-ի ապստամբության հերոսներ Սահակ և Համազասպ Արծրունիներու քանդակը Աղթամարի Աբ. Խաչ եկեղեցույ պատին

տեղի ունեցաւ 774–775 թուականներուն՝ Սուշեղ Սամիկոնեանի եւ Սմբատ Բագրատունիի առաջնորդութեամբ: Գրուած էր անկախ պետութեան վերականգնման հարցը: Արաբները 775-ին լրացուցիչ մեծաքանակ ռազմական ոյժեր դրկեցին Հայաստան եւ կրցան ապստամբութիւնը ճնշել: Ատկէ ետք, Սամիկոնեանները եւ քանի մը նախարարական տուներ կոտորածներու ենթարկուեցան, որոնց հետեւանքով անոնք, որպէս վճարոշ ոյժեր, ասպարեզէն դուրս մղուեցան:

9-րդ դարուն Հայաստանի մէջ հզորացեր էին յատկապէս Բագրատունիները, Արծրունիները եւ Սիւնիները: Հայաստանի հզորացումն ու Բագրատունիներու վերելքը կանխելու փորձ ըրաւ ալ–Սուլթաուաքքիլ Խալիֆան 849-ին: Ի պատասխան՝ 850–855 թուականներուն Հայաստանի մէջ պայթեցաւ հզոր ապստամբութիւն մը արարական տիրապետութեան դէմ: Այդ տարիներուն, արարական զօրքերուն ասպատակութիւնները, ձերբակալութիւնները, գերեվարումներն ու զանազան վայրագութիւններն ի զօրու չեղան կոտորելու հայութեան ազատատենչ ուզին: Խալիֆան ի վերջոյ ստիպուած էր ետ կանչել պատժիչ զօրքերը Հայաստանէն եւ ճանչնալ Հայոց Աշխարհի լիակատար ինքնավարութիւնը:

Խալիֆայութիւնը 855-ին Հայոց Իշխան հաւատատեց 35-ամեայ Աշոտ Բագրատունին՝ տաղանդաշատ անձնաւորութիւն մը, որուն ալ վիճակուած էր վերականգնել շուրջ 450 տարի ընդհատուած հայկական թագաւորութիւնը:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ տեղի ունեցաւ Հայաստանի երկրորդ քաժանուճը Պարսկաստանի եւ Բիզանդիոյ միջեւ: Նոր սահմանագիծն ուրկէ՞ կ'անցներ:
2. Ներկայացուցէ՞ք Յուստինիանոս Ա.ի քարեփոխումները եւ անոնց նպատակը:
3. Ո՞ւր եւ որո՞նց միջեւ կնքուած է 652-ի հայ–արաբական սայմանագիրը: Ներկայացուցէ՞ք պայմանագիրին կէտերը:
4. Ինչո՞ւ ձախողեցաւ Հայաստանի 748–750 թուականներու ասպտամբութիւնը:

18. ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ 4–8–ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

301 թուականին, նախորդ կրօնին հետ արգիլուեցաւ նաեւ հայկական մեհենագրութիւնը: Եկեղեցին իր քարոզութեան համար կը կիրառէր յունարէնն ու ասորերէնը, ինչը ո՛չ միայն չէր բաւարարէր ժողովուրդին հոգեւոր պահանջները, այլեւ Հայաստանի 387 թուականի բաժանումէն ետք լուրջ սպառնալիք դարձեր էր հայ ազգի ինքնութեան համար:

Այդ իրադրութեան մէջ լաւագոյն լուծումը գտաւ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը (361–440), որու հիմնած ազգային լեզուով նոր դպրութիւնը միաւորեց քաղաքականապէս պառակտուած հայ ժողովուրդը: Ան այդ դարակազմիկ իրադարձութիւնն իրականացուց Վառձապուհ արքայի եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի գործուն աջակցութեամբ: Հայ եկեղեցին յետագային սուրբերու կարգը դասեց Մաշտոցը:

Մաշտոցեան այրութենի հիասքանչ գիտով 405 թուականին սկզբնաւորուեցաւ հայկական նոր, քրիստոնէական դպրութիւնը: Հայալեզու դպրոցներ բացուեցան ամբողջ երկրին մէջ: Հայաստանի քիւզանդական մասին մէջ հայալեզու դպրոցներ բանալու թոյլտուութեան համար Մեսրոպ Մաշտոցն անձամբ գնաց Կոստանդնուպոլիս եւ կայսրէն ստացաւ զայն:

Սահակ Պարթեւն ու Մեսրոպ Մաշտոցը հիմք դրին հայ թարգմանական շարժման՝ իրենց աւագ աշակերտներուն հետ թարգմանելով Աստուածաշունչ Մատեանը եւ յունարէնով ու ասորերէնով առկայ մեծ թուով կարեւորագոյն երկեր: Այդ շարժման շնորհիւ այսօր փրկուած եւ պահպանուած են քանի մը տասնեակ բացառիկ գործեր, որոնց յունարէն ու ասորերէն սկզբնագիրները կորսուած են եւ այսօր մարդկութեան հասու են միայն հայերէն թարգմանութեան շնորհիւ:

Թարգմանութեան 4–րդ դարուն յունարէն գրուած եւ պատմագիտական արժէք ունեցող երկերը, որոնցմէ կարելոր էին Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բիւզանդի աշխատութիւնները: Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութիւն»ի էջերուն մէջ ներկայացուած են Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման պատմութիւնը, Մեծն Տրդատ Գ.ի եւ Գրիգոր Լուսաւորիչի կեանքն ու գործունէութիւնը, հանրամատչելի ծելով մատուցուած է քրիստոնէական վարդապետութիւնը:

Փաւստոս Բիւզանդի «Հայոց Պատմութիւն»ը կը շարունակէ Ագաթանգեղոսինը՝ շարադրելով Տրդատ Գ.ի որդի Խոսրով Կոտակէն մինչեւ Պարսկաստանի եւ Հռոմի միջեւ Հայաստանի առաջին բաժանման շրջանի (330–387) պատմութիւնը:

4–րդ դարուն սկզբնաւորուած հայ պատմագրութեան աւանդոյթը՝ պատմիչներուն՝ իրենց նախորդներուն շարունակելը, 5–րդ դարուն կը պահպանէ Ղազար Փարպեցին, որ Վահան Մամիկոնեանի պատուիրով եւ մեկեմասութեամբ գրած է «Հայոց Պատմութիւն»ը: Վերջինս կ'ընդգրկէ Հայաստանի 387–ի բաժանումէն մինչեւ Վահանանց պատերազմի յաջրական աւարտն ինկած հարիւրամեայ ժամանակաշրջանը:

Ղազար Փարպեցիին շարունակած է 7–րդ դարու պատմիչ Սեբեոսը՝ ներկայացնելով Հայաստանի պատմութիւնը մինչեւ իր ապրած ժամանակը: Իսկ Սեբեոսին շարունակած է Ղեւոնդը (8–րդ դար), որու երկը անգնահատելի սկզբնաղբիւր է արաբական տիրապետութեան դէմ Հայաստանի մէջ 8–րդ դարուն մղուած ազատագրական պայքարի մասին:

Ստեղծուեցան առանձին իրադարձութեանց եւ տարածքներու պատմութեան նուիրուած գործեր: Մասնաւորապէս, Եղիշէի «Վարդանի եւ Հայոց Պատերազմի Մասին» երկը, որպէս ականատեսի վկայութիւն, կը ներկայացնէ Վարդանանց պատերազմը: 7–րդ դարու պատմիչ Յովհան Մամիկոնեանը կը շարադրէ «Տարօնի Պատմութիւն»ը՝ հաւաքելով



Մր. Մեսրոպ Մաշտոց



Ֆայոց այբուբենը



Մովսես Խորենացի

ուշագրաւ նիւթեր, այդ քիւին՝ 4-րդ դարու *ատորի* գործիչ Չենոր Գլակի յոյժ արժէքաւոր նամակները Ֆայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման դէպքերուն ծախին: Նոյն 7-րդ դարու պատմիչ Մովսէս Կաղանկատուացին շարադրած է Աղուանից Աշխարհի պատմութիւնը, զոր 10-րդ դարուն շարունակած է Մովսէս Ղասխուրանցին:

Ֆայ պատմագրութեան չգերազանցուած գագաթը Պատմահայր Մովսէս Խորենացին է, որ զրի առաւ մեր երկրին ու ժողովուրդին ամբողջական պատմութիւնը՝ Ֆայկ Նահապետուն ձեռնչելու Մեսրոպ Մաշտոցի մահը (440): Ֆայոց պետականութեան անկման յաջորդած տարիներուն գրուած «Ֆայոց Պատմութիւն»ը կ'աւարտի «Ողբ»ով, զոր հայ իրականութեան մէջ տեղ գտած արատներու վերացման իւրօրինակ բանաձեւ մըն է:

Ֆինգերորդ դարուն ստեղծուեցան վարքագրական գործեր. այդ ժանրի գլուխ-գործօցը Մեսրոպ Մաշտոցի աւագ աշակերտ Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկն է:

4-5-րդ դարերուն եկեղեցական ժողովներու ընդունած որոշումներն ու առանձին գործիչներու (Գրիգոր Լուսաւորիչ, Մեծն Ներսէս, Սահակ Պարթեւ, Յովհան Մանդակունի եւ ուրիշներ) կանոններն ի մի բերելով՝ Յովհան Օծնեցին 8-րդ դարուն ստեղծեց «Կանոնագիրը Ֆայոց» մեծարժէք ժողովածուն, որ հայ իրաւաբանական միտքի յետագայ զարգացման հիմք դարձաւ:

Ստեղծուեցան հոգեւոր երգեր, որոնց հեղինակներ դարձան ժամանակի անենայայտնի դէմքերը (Գրիգոր Լուսաւորիչ, Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Մովսէս Խորենացի եւ ուրիշներ): Անոնց համար, հաւանաբար, նախաքրիստոնէական հոգեւոր մեղեդիները կ'օգտագործէին:

Ժողովուրդը սիրով կ'երգէր իր հերոսներուն, նաեւ հին աստուածներուն նուիրուած երգերը: Փաւստոս Բիւզանդը կը հաղորդէ, որ Տիրան Արշակունիի օրով (338-350) ժողովուրդին մէջ դեռ շատ կենսունակ էին նախաքրիստոնէական հաւատքն ու բարքերը. «Անոնք կը սիրէին իրենց երգերը, առասպելները, վիպասանութիւնները, անոնց հանդէպ փութեռանդ էին, անոնց կը հաւատային, անոնց մէջ կը յարատեւէին»: Պատմահայրը կը վկայակոչէ 5-րդ դարուն Գողթնի մէջ երգուող բազմաթիւ գործեր (Վահագն աստուծոյ ծննդեան հիմնը, «Ֆայկ եւ Բել», «Արամ եւ Բարշամ», «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ», «Տիգրան եւ Ածղահակ», «Արտաշէս եւ Սաթենիկ», «Արտաշէս եւ Արտաւազդ» եւ այլն):

Ֆայերն աչքի ինկած են նաեւ օտար երկիրներու մէջ: Բ. ա. 1-ին դարուն Տիգրանակերտէն ռազմագերի տարուած Տիրան Ֆայկազը (Տիրանիոնը) ղեկավարած է Ղոնի մէջ Կիլկերոնի հիմնած ճարտասանութեան եւ քերականութեան ակադեմիան: 4-րդ դարուն մեծ հռչակ կը վայելէր փիլիսոփայ եւ հռետոր Պարոյր Ֆայկազը (Պրոքրեսիոսը), որուն աշակերտած է Յովհաննոս Ուրացող կայսրը: Ֆայրդիին պատուին Ղոնի մէջ արձան



Արեւի ժամացոյց Չուարքնոցն

կանգնեցուած էր՝ «Աշխարհի քաղաւի Յոռնն» հռետորներու քաղաւորին» մակագրութեամբ:

5-րդ դարուն, հայոց դպրութեան Ոսկեդարի յայտնի փիլիսոփան Մեսրոպ Մաշտոցի աւագագոյն աշակերտներն եզնիկ Կողբացին էր, որու «Եղծ Աղանդոց» երկին մէջ քրիստոնէութեան դիրքերն կը քննադատուին տարածաշրջանին մէջ յայտնի միւս կրօնները:

Միջնադարու հայ փիլիսոփայական մտքի ամենականաւոր ներկայացուցիչը Դաւիթ Անյաղթն է (5-6-րդ դարեր), որ յայտնի է հին յունական փիլիսոփայութեան (Պլատոն, Արիստոտէլ, Պորփիր եւ ուրիշներ) վերլուծութիւններով: Անոր գլուխգործոցը «Սահմանք Իմաստասիրութեան» երկն է:

8-րդ դարու սկիզբին իր թարգմանութիւններով հայ փիլիսոփայական

գրականութիւնը հարստացուց Ստեփանոս Սիւնեցին:

Բնական գիտութեանց բնագաւառին մէջ մեծ ներդրում ունեցաւ ուսողագէտ (մաթեմատիկոս), տիեզերագէտ եւ բնագէտ Անանիա Շիրակացին (7-րդ դար): Անոր յայտնած տիեզերագիտական շատ միտքեր համաշխարհային ճանաչում գտան անոր ապրած ժամանակէն դարեր ետք միայն:

Վաղ միջնադարի հայ քարտէսագրութեան գլուխգործոցը «Աշխարհացոյց»-ն է, զոր 5-րդ դարուն կազմած է Մովսէս Խորենացին, ապա լրացուած է յետագայ դարերուն (այդ թիւին, հաւանաբար, Անանիա Շիրակացիի կողմէ):

4-5-րդ դարերուն կը կառուցուին ինչպէս աշխարհիկ, այնպէս ալ հոգեւոր նոր շինութիւններ: Եկեղեցաշինութիւնը կը ժառանգէ նախաքրիստոնէական ճարտարապետութեան աւանդոյթները. հիմնականին մէջ միանաւ կամ եռանաւ պազիլիքներ կը կառուցուին: 5-րդ դարավերջէն զանոնք փոխարինելու պիտի գան գմբէաւոր եկեղեցիները: 6-7-րդ դարերու հայկական ճարտարապետութեան կարեւոր նուաճումները կը դառնան խաչածեւ եկեղծնագմբէթ եկեղեցիները (օրինակ՝ Կոնիտաս կաթողիկոսի 618 թուականին կառուցած Զոնիսիմնի տաճարը): Նոյն ոճի նոր յօրինուածք է Չուարքնոցի եռայարկ տաճարը (կառուցած է Ներսէ Գ. Տայեցի կաթողիկոսը, 641-661):

Կը շարունակէ զարգանալ խճանկարման արուեստը. այս շրջանի ամենանշանաւոր խճանկարները՝ հայերէն արձանագրութիւններով, գտնուած են Երուսաղէմի հայկական եկեղեցիներուն մէջ:

Վաղ միջնադարուն կը սկզբնաւորուի գիրքերու զարդարման արուեստը՝ մանրանկարչութիւնը, որու միայն սակաւաթիւ նմուշներ պահպանուած են այս ժամանակաշրջանէն:

Զին դարաշրջանին Գայաստանի մէջ կը գործէին յունալեզու (վերնախաւին համար) եւ հայալեզու (ժողովրդային խաւերուն համար) թատրոններ: Վաղ միջնադարուն իր գոյութիւնը շարունակեց միայն հայալեզու ժողովրդային թատրոնը:

Դարցումներ եւ առաջադրանքներ

1. Ո՞ր իրադարձութեանց մասին կը պատմէ Ազաթանգեղոսը:
2. Ո՞վ է հայոց Պատմահայրը: Ի՞նչ գիտէք անոր մասին:
3. Ի՞նչ գիտէք Դաւիթ Անյաղթի մասին: Ո՞րն է անոր գլուխ-գործոցը:
4. Որո՞նք եւ ն՞րք կառուցած են Զոնիսիմնի եւ Չուարքնոցի տաճարները:

850–855 թուականներու ապստամբութենն ետք ստեղծուեցան քոյոր նախադրեալները Հայաստանի անկախ պետականութեան վերականգնման համար: 855–ին Աշոտ Բագրատունին Հայոց Իշխան ճանչնալէ յետոյ խալիֆայութիւնն, ստիպուած, նոր զիջումներու դիմեց: Աշոտ Բագրատունին 862–ին ճանչցուեցաւ Հայոց, Վրաց եւ Աղուանից Իշխանաց Իշխան:

Հայոց բանակի մարտիկներուն թիւը հասեր էր 40 հազարի, ինչը թագաւորութեան վերականգնման համար բաւական լուրջ յայտ էր: Աշոտ Բագրատունին հայոց սպարապետի պաշտօնը յանձնեց իր եղբայր Աբասին:

867–ին Բիւզանդիոյ մէջ գահ բարձրացաւ հայազգի Բարսեղ (Վասիլ) Ա.ը՝ հիմնելով Հայկական կամ Սակեղոնական հարստութիւնը: Անոր հայանպաստ դիրքորոշումը կարելի էր արտաքին նախապայման դարձաւ Հայաստանի անկախութեան վերականգնման համար:

Ձաքարիա Չազեցի կաթողիկոսին նախագահութեամբ 869–ին հրաւիրուեցաւ հայոց աւագանիի խորհրդածողով, որ որոշեց Աշոտ Բագրատունին հայոց թագաւոր հռչակել: Ժողովը դիմեց խալիֆային, որպէսզի վերջինս ճանչնայ որոշման իրաւականութիւնը:

Չգուշանալով Հայաստանի՝ Բիւզանդիոյ կողմն անցնելու հեռանկարէն, Սիմէոն Ապուլ–Ապպաս խալիֆան ի վերջոյ Աշոտ Բագրատունիին թագ դրկեց 885–ին: Թագ ստացուեցաւ նաեւ Բարսեղ Ա.էն: 885 թուականի Օգոստոսի 26–ին Աշոտ Բագրատունին թագաւոր օծուեցաւ Բագարան քաղաքին մէջ, որ թագաւորութեան առաջին մայրաքաղաքը դարձաւ:

Աշոտ Ա.ին (885–890) յաջորդեց Սմբատ Ա.ը (890–914), որ մայրաքաղաք դարձուց Երազգաւորսը (Շիրակաւան): Ան 897–ին վրաց գահերէջ իշխան Ատրնեբսեի Բագրատունին թագաւոր ճանչցաւ եւ այդպիսով վրաց Բագրատունիներու թագաւորութեան հիմքը դրաւ: Սմբատ Ա.ը 904–ին յաղթարշաւ կատարեց դէպի Կովկասեան լեռները՝ Եզեբաց Կոնստանդին թագաւորին պարտադրելով իր գերիշխանութիւնը: Ան «տիեզերակալ» պատիւանունը վաստակեցաւ:

Հասկնալով, որ հայերն անպարտելի են, երբ միասնական են, արաբները կը սկսին հայերը պատակտելու առիթներ փնտրել: Նման առիթ դարձաւ Արծրունիներու եւ Միւնիներու միջեւ ծագած վեճը Նախճաւանի համար: Սմբատ Ա.ը վեճը լուծեց յօգուտ Սիւնիներուն, ինչէն դժգոհ մնացած Գագիկ Արծրունիին արաբները խոստացան թագադրել՝ Սմբատ Ա.ը գահընկէց ընելու յետին նպատակով:

Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին 908–ին թագ կը ստանայ արաբներէն եւ անկախ թագաւորութիւն կը հռչակէ (անիկա գոյատեւեց մինչեւ 1021): 909–ին Ատրպատականի Եռեսուֆ ամիրան եւ Գագիկ Արծրունին կ'արշաւեն Սմբատ Ա.ի դէմ, որ պարտութիւն կը կրէ ու Կապոյտ բերդին մէջ կը փակուի: Սմբատ Ա.ը բանակցութեանց կը դիմէ, սակայն կը ձերբակալուի ու 914–ին կը գլխատուի:

Պայքարը շարունակեց արքայազն Աշոտը, որ շտապային արքայ հռչակուեցաւ Աշոտ Բ. Երկաթ պատուանունով (914–928): Աննկուն պայքարի արդիւնքն եղաւ այն, որ խալիֆան ստիպուած էր 922–ին Աշոտ Երկաթը ճանչնալ «շահնշահ (արքայից արքայ) հայոց եւ վրաց»:

Աշոտ Բ. Երկաթէն ետք գահ բարձրացաւ անոր եղբայրը՝ Աբասը (928–953), որ մայրաքաղաք դարձուց Կարսը: Ան 947–ին Աղթամարէն Կարս տեղափոխեց կաթողիկոսական





Բարսեղ (Վասիլ) Ա. կայսեր դրամներէն

օրօք (977–990): Ան 989–ին աւարտեց ընդարձակուած Անիի նոր պարսպաշարին («Ամբատաշէն պարիսպներ») կառուցումը:

Սակայն Աշոտ Գ.ի եւ Սմբատ Բ.ի օրօք տեղի կ'ունենային երեւոյթներ, որոնք ի վերջոյ պետութեան մասնատման պիտի տանէին: Խօսքը նոր թագաւորութեանց յառաջացման մասին է: Աշոտ Գ.ի եղբայր Մուշեղը, որ երկրին սպարապետն էր, 963–ին Կարսի կամ Վանանդի թագաւոր կը հռչակուի՝ ճանչնալով Անիի մէջ իշխող եղբօր գերագահութիւնը (այդ թագաւորութիւնը զոյատեւեց 963–էն 1065): Գուրգէն Բագրատունիի գլխաւորութեամբ Բագրատունիներու նոր, կրտսեր թագաւորութիւն մըն ալ կը հիմնուի Տաշիր–Չորագետի

Աթոռը, ինչը կեդրոնական իշխանութիւնը հզօրացնելու նպատակը կը հետապնդէր:

Արաս արքային յաջորդեց Աշոտ Գ. Ողորմածը (953–977), որու օրօք հայոց զօրքին թիւը հասաւ 80 հազար հոգիի: 961–ին մայրաքաղաք հռչակուեցաւ Անի, որու առաջին պարսպաշարին կառուցումը վերջացաւ 963–964 թուականներուն: Հաստատուած խաղաղութեան շրջանը լաւագոյնս օգտագործուեցաւ երկրին շէնացման ու բարգաւաճման համար: Գիտութեան եւ մշակոյթի նոր կեդրոններ հիմնուեցան: Անոնցմէ էին Հաղպատի ու Սանահինի եկեղեցական համալիրները, որոնք կառուցուեցան խոսրովանոյշ թագուիիին մեկենասութեամբ:

Երկրին բարգաւաճումը շարունակուեցաւ նաեւ Աշոտ Գ. Ողորմածի յաջորդ Սմբատ Բ.ի

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՏԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՇՈՏ Ա.Ի ԵՒ ՍՄԲԱՏ Ա.Ի ՕՐՕՔ





Անիի Սարյի Տաճարը

մեջ՝ 978-ին (յայտնի է նաև Լոռիի եւ Կիւրիկեան անուանումներով, անիկա գոյատեւեց մինչեւ 1113 թուականը):

Քաղաքատունիքներն եւ Արծրունիներն որոշեցին «ետ չմնալ» նաեւ Սիւնիները, 987-ին թագ ստանալով խորասանի էմիրն՝ Սիւնիքի իշխան Սմբատ Ա-ը Սիւնիքը անկախ թագաւորութիւն կը հռչակէ: Անիկա գոյատեւեց մինչեւ 1170 թուականը:

Հայաստանի տարածքին պահպանուած էին արաբական էմիրութիւններ, որոնք անջատողական ձգտումներ ունէին:

Կեդրոնածիւց իզօր թագաւորութիւն ստեղծելու փորձ կատարուեցաւ Գագիկ Ա-ի օրով (990–1020), որ յաջողից իր եղբայր Սմբատ Բ-ին: Իրեն ենթարկելով կիսանկախ իշխանութիւններն ու թագաւորութիւնները՝ Գագիկ Ա-ը դաշնային իւրօրինակ պետութիւն մը ստեղծեց: Հայ մատենագրութեան մէջ ան յայտնի է որպէս «Ամենայն Տունն Հայոց», որու գլուխ էր կանգնած Անիի մէջ իշխող «արքայից արքան» («չահնշահը»), անոր բանակի զինուորներուն թիւը 100 հազար հոգիի կը հասներ: Կառավարման այդպիսի համակարգը կրնար արդիւնաւետ ըլլալ, եթէ մշտապէս ապահովուէր Անիի կեդրոնական իշխանութեան գերիզօրութիւնը, ինչը, սակայն, հնարաւոր չեղաւ:

Գագիկ Ա-ի օրով երկիրը տնտեսական մեծ բարգաւաճման հասաւ: Ջարկ տրուեցաւ կրթութեան, գիտութեան ու մշակոյթին: Կառուցուեցան նոր տաճարներ, որոնցմէ ամենանշանաւորը Անիի Կաթողիկէ Սարյի Տաճարն էր, զոր Կատրանիդէ թագուհիին մեկենասութեամբ կառուցեց հանճարեղ ճարտարապետ Տրդատը:

Գագիկ Ա-էն ետք գահ բարձրացաւ անոր աւագ որդի Յովհաննէս-Սմբատը (1020–1041), սակայն վերջինիս դէմ զահակալական պայքար սկսաւ անոր կրտսեր եղբայր Աշոտը, որուն կը սատարէր Բիւզանդիան: Զինուած հակամարտութիւնը վերջացաւ համաձայնութեամբ. Յովհաննէս-Սմբատը պէտք է իշխէր Անիին եւ արքունի ոստանին, իսկ Աշոտ Դ-ը՝ մնացած գաւառներուն: Յովհաննէս-Սմբատի մահէն ետք Անին պէտք է Աշոտ Դ-ին անցներ:

Անիի կեդրոնական իշխանութեան պառակտումն անմիջապէս տուաւ իր բացասական արդիւնքը. Կասպուրականի արքայ Սենեքերիմ Արծրունին, նեղուելով արեւելքէն կատարուած ասպատակութիւններէն, 1021-ին իր թագաւորութիւնը յանձնեց Բիւզանդիոյ, փոխարէն ստացաւ Սեբաստիոյ շրջանը ու իրն տեղափոխուեցաւ:



«Չայերը փախուստի կը մատնեն Անին պաշարող քիզանդական զորքը» (Խոսալացի նկարիչ Ե. Չասսո, 1885)

Տայքի մեջ ծագած ապստամբութիւնը ճնշելէ յետոյ Բիզանդիոյ կայսր Վասիլ (Բարսեղ) Բ.ը Տրապիզոնի բանակցութիւններուն (1022) պահանջեց, որ Յովհաննէս-Սմբատը Բիզանդիոյ կտակէ Անիի թագաւորութիւնը: Ենթարկուելով կայսեր սպառնալիցներուն եւ քիզանդամու կաթողիկոս Պետրոս Գետադարծի յորդորներուն, Յովհաննէս-Սմբատը թագաւորութիւնը Բիզանդիոյ կտակեց: Ասիկա կը հակասէր եղբոր հետ կնքած համաձայնութեան, սակայն Աշոտ Դ.ը որեւէ քայլ չձեռնարկեց, քանի որ ժամանակին ինքը եղած էր Բիզանդիոյ հովանաւորեալը:

1041-ին մահացան նախ Աշոտ Դ.ը, ապա Յովհաննէս-Սմբատը: Կայսրը պահանջեց իրականացնել կտակը: Երկրի ճակատագիրին հարցը հայոց աւագանին բաժնեց երկու խմբաւորման: Երկիրը Բիզանդիոյ միացնելու կողմնակիցները, Պետրոս Գետադարծ կաթողիկոսի եւ Վեստ Սարգիս Սիւնիի գլխաւորութեամբ, կը պնդէին յօգուտ կտակի կատարման: Ի հակադրութիւն ասոնց, ազգային-հայրենասիրական ոյժերը, սպարապետ Վահրամ Պահլաւունիի գլխաւորութեամբ, կ'որոշեն զինուած պայքարի դիմել: Յաղթող դուրս կու գայ երկրորդ հոսանքը. Չայաստանի մէջ թագաւոր կը հռչակուի Աշոտ Դ.ի որդին՝ տասնութամեայ Գագիկ Բ.ը (1042-1045):

Չայերը մեծ յաջողութեամբ ետ կը մղէին քիզանդական յարձակումները: Վասիլ Բ.ին յաջորդած կայսր Կոնստանդին Սոնոմախը Գագիկ Բ.ը Կոստանդնուպոլիս կը հրաւիրէ՝ բանակցութեանց եւ նոր պայմանագիր կնքելու առաջարկով: Երիտասարդ արքան կ'ընդունի հրաւերը՝ յուսալով, որ ելք մը կը գտնէ ստեղծուած իրադրութենէն: Սակայն կայսրը դաւադրաբար կը կալանաւորէ Գագիկ Բ.ը, իսկ քիզանդամետ ոյժերը կայսեր կը յանձնեն Անիի բանալիները: 1045-ին Անիի թագաւորութիւնը անկում կ'ապրի:

Թագաւորութեան վերացումէն որոշ ժամանակ ետք, գերուած արքան ազատ արձակուեցաւ եւ ստացաւ Կիլիկիոյ հիւսիսը գտնուող Պիզու քաղաքն իր գաւառով: Ուշագրաւ է, որ ան մինչեւ 1080 թուականը կը պայքարէր Անիի թագաւորութիւնը վերականգնելու համար: Սակայն, անոր ծրագիրները չիրականացան...

Չարցումներ եւ առաջադրանքներ

1. Ո՞ր թուականին եւ որո՞ւ նախաձեռնութեամբ հայոց աւագանին ժողովը որոշեց Աշոտ Բագրատունին հայոց թագաւոր հռչակել:
2. Ո՞ր թուականներուն իշխած է Աշոտ Գ. Ողորմած արքան: Ի՞նչ յայտնի գործեր կատարած է անոր կինը՝ Խոսրովանոյշ թագուհին:
3. Որո՞ւ մեկենասութեամբ կառուցուած է Անիի Մայր Տաճարը: Ո՞վ է անոր ճարտարապետը:
4. Որքա՞ն էր հայոց զօրքի մարտիկներուն թիւը Գագիկ Ա.ի օրօք: Պատմեցէ՛ք այդ զօրքին մասին:

ՍԵԼՃՈՒՔ-ԹԻՒՐԵՐՈՒ ԱՐՇԱՒԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ:

20. ԶԱՔԱՐԵԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Այթայն եւ Միջին Ասիայն դէպի արեւմուտք շարժելով՝ սելճուք-թիւրքերու հորդանքերը 11-րդ դարու սկիզբին գրաւեցին Պարսկաստանը եւ հիմնեցին սելճուքեան մեծ տիրութիւնը: Ամենուր անբաժնութիւններ ու կոտորածներ սփռելով՝ անոնք մօտեցան Հայաստանի սահմաններուն: Անկախութեան կորուստէն ետք՝ Բագրատունեաց Հայաստանին նոր աղէտ կը սպասէր:

Դեռ 1016-1020 թուականներուն սելճուքեան առանձին ջոկատներ ասպատակել էին Վասպուրականի տարածքը: 1047-1048 թուականներուն սելճուքները կը կատարեն իրենց առաջին մեծ արշաւանքները դէպի Հայաստան, իսկ 1054-ին Հայաստանի դէմ նոր արշաւանքն անձամբ կը գլխաւորէ սելճուք սուլթան Տուղրիլ պէկը: Այս արշաւանքները զուտ թալանչիական, անարատական նպատակ ունէին:

Ի տարբերութիւն նախորդներուն, Տուղրիլին յաջորդած Ալի Միսլանի 1064-ի արշաւանքը նուաճումներ կատարելու եւ նուաճած տարածքներուն մէջ հաստատուելու նպատակ ունէր: Ան գրաւեց Աղուանքը, Արեւելեան Վրաստանը եւ Հիւսիսային Հայաստանը: Հայկական երեք թագաւորութիւնները (Կարսի, Լոռիի, Սիւնիքի) յայտնեցին իրենց իպատակութիւնը: 1065-ին, ճնշուելով սելճուքներու բարբարոս տիրապետութենէն, Կարսի վերջին թագաւոր Գագիկ Աբասեան Բագրատունին իր տիրոջները Քիւզանդիոյ կտակեց՝ վերջինիս արեւելեան շրջանները տեղափոխուելով:

Քիւզանդիոյ՝ հայկական թագաւորութիւնները գրաւելու եւ իայոց ռազմական ոյժերը քայքայելու միտուած քաղաքականութիւնը պումերանկի նման իր դէմ շրջուեցաւ: Բան-

ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ





Դաւիթ Դ. Շինարար

Բազրատունեաց թագաւորութեան անկումն եւ սելճուքեան նուաճումներն եւս հայ մախարարներուն զգալի մասը Բիւզանդիա եւ Վրաստան հեռացաւ: Վերջինս հայոց համար կը կարեւորուէր յատկապէս 1071-էն ետք, երբ Բիւզանդիան կորսնցուց դիրքերն Արեւելքի մէջ, իսկ Վրաստանը ոչ միայն դրացի ու հաւատակից էր, այլեւ հոն կ'իշխէին վրաց Բազրատունիները, որոնք հայ Բազրատունիներու կրտսեր ճիւղն էին (յիշեցնենք՝ վրաց Բազրատունիներու թագաւորութիւնը հռչակեց Սմբատ Ա. Բազրատունին 897-ին՝ իր ազգական Ատրոնեսես Բազրատունին թագաւոր ճանչնալով):

Վրաց թագաւորութեան վերելքն սկսաւ Դաւիթ Դ. Շինարարի օրօք (1089-1125): Անեցիներն ապստամբեցան եւ անոր օգնութեամբ փորձեցին 1124-ին թօթափել սելճուքներու տիրապետութիւնը, սակայն երկու տարի ետք սելճուքները կրկին տիրեցին Անիին:

Արծրունիներու ճիւղերէն մէկը 11-րդ դարու կեսերուն Գիւսիսային Գայաստան տեղափոխուել էր եւ հոն հաստատուել: Այդ ճիւղի ներկայացուցիչ Չաքարիայի անունով ճիւղը կը կոչուի նաեւ Չաքարեան: Չաքարիայի որդի Մեծն Սարգիսը վճռորոշ դեր խաղցաւ 1177-1178 թուականներուն վրաց Գեորգի Գ. արքային դէմ բարձրացած ապստամբութեան ճնշման մէջ: Անոր շնորհիւ, Չաքարեան-Արծրունիները վրացական պետութեան ազնուական վեց խոշորագոյն տոհմերէն մէկը դարձան:

Չաքարեան-Արծրունիներն աւելի բարձր դիրքի հասան Թամար թագուհիին օրով (1184-1213): Թամարը 1185-ին Մեծն Սարգիսը հայ-վրացական զօրքերու զերագոյն հրամանատար՝ ամիրսպասալար նշանակեց: 1187-ին Մեծն Սարգիսի մահէն ետք անոր աւագ որդի Չաքարէն նշանակուեցաւ հօր պաշտօնին, իսկ միւս որդի Իվանէն դարձաւ վրաց արքունի մեծ վեզիր եւ աթապէլ:

Չաքարէն եւ Իվանէն հայ-վրացական միացեալ զօրքով կը սկսին Գիւսիս-արեւելեան Գայաստանի ազատագրումը սելճուքներէն: 1196-ին ազատագրուեցաւ Ամբերդ ամրոցը՝ իր շրջակայքով, 1199-ին վերջնականապէս ազատագրուեցաւ Անին (մինչ այդ՝ 12-րդ դարուն երեք անգամ գրաւուած, բայց վերադարձուած էր), 1202-1204 թուականներուն՝ Դուինն ու Արարատեան դաշտը: 1196-1211 թուականներու յաղթարշաւներուն շնորհիւ, Չաքարեաններն-ազատագրեցին-նախկին-Մեծ-Յայքի-Այրարատ, Զուգարք, Արցախ եւ Սիւնիք աշխարհներու տարածքներն ամբողջութեամբ, Տուրուքերանի հիւսիսային, Ուտիքի արեւմտեան եւ Վասպուրականի հիւսիս-արեւելեան շրջանները:

Չաքարեանները, որ սեփական արձանագրութեանց մէջ կը շարունակէին որպէս Արծ-



Հաղպատի տաճարը, առջևը՝ տաճարը կառուցող խոսրովանոյշ քաղուհիին շիրմաքարն է



Ձաքարեան-Արղութեաննեռու գինանշանը

րունի ներկայանալ, Հիւսիս-արեւելեան Հայաստանի, յատկապէս, Անիի ազատագրուծէն ետք իրենց հռչակեցին հայ Բագրատունիներու իրաւայաջորդներ եւ սկսան կրել անոնց «արքայ» եւ «շահնշահ» տիտղոսները, ինչը զուտ խորհրդանշական էր:

Հայաստանի հիւսիսային եւ արեւելեան շրջաններն ազատ շունչ քաշեցին սելճուք-թիւրքական բարբարոս տիրապետութենէն, վերականգնուեցաւ ժողովուրդին ատեղծագործ կեանքը, երեւան եկան գիտութեան ու մշակոյթի կարեւոր արժեքներ:

1220 թուականին, սակայն, կը սկսին մոնկոլական արշաւանքները: Այդ տարի վրաց արքայ Գեորգի Լաշայի եւ Իվանէ Ձաքարեանի միացեալ ոյժերը պարտութիւն կրեցին մոնկոլական զօրքերէն, որոնք կողոպուտ կազմակերպել յետոյ հեռացան: 1236-1244 թուականներուն ընթացքին մոնկոլները վերջնականապէս նուաճեցին նախ Հայաստանի արեւելեան եւ հիւսիսային, ապա՝ արեւմտեան եւ հարաւային շրջանները:

Ձաքարեանները վրաց արքունիքին մէջ կարեւոր դիրք կը գրաւեն մինչեւ 14-րդ դարու վերջը: Վրացական աղբիւրներուն մէջ անոնք յայտնի են «Մխարգոճելի» (վրացերէն՝ «երկայնաթիկունք, չայնաթիկունք») անուամբ, զոր Մեծն Սարգիս Ձաքարեան-Արծրունիի պատուանուն-մակդիրն էր: Մոնկոլներու տիրապետութեան օրով այդ անունը քաղզմանուեցաւ եւ Արղութեանի («արղութ») մոնկոլերէն «երկայնաքազուկ») փոխուեցաւ: 18-րդ դարու վերջին եւ 19-րդ դարու սկիզբին, Վրաստանի ազնուական ժիւստոսներու շարքին, Ռուսական Կայսրութիւնը ճանչցաւ Արղութեան-Ձաքարեանները: Անոնց մէկ ճիւղը, որպէս ռուսական ազնուականութեան ներկայացուցիչներ, յայտնի դարձան «Արկութիսս-քի-Տոլկոուքի» տոհմանուամբ:

Արծրունիներէն սերող Ձաքարեան-Արղութեան-Արկութիսսքի տոհմի ներկայացուցիչներու զգալի մասին դամբարանները կը գտնուին Հաղպատի եւ Սանախիւնի մէջ...

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ եւ ուրկէ՞ յայտնուեցան սելճուք-թիւրքերը:
2. Ձաքարեանները Անին եւ Դուինը Ե՞րբ ազատագրեցին: Պատմեցէ՛ք Ձաքարեաններուն մասին:
3. Ձաքարէ եւ Իվանէ Ձաքարեանները վրացական արքունիքին մէջ ի՞նչ պաշտօններ կը զբաղցնէին:
4. Մոնկոլները Ե՞րբ նուաճեցին Հայաստանը:

21. ԿԻԼԻԿԻՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Հայերը Կիլիկիոյ մէջ հաստատուած են հնագոյն ժամանակներէն: Մեծն Տիգրանի օրօք Կիլիկիան անոր տէրութեան մէջ կը մտնէր: 4-րդ դարու մատենագիր Ամմիանոս Մարկելիանոսը կը վկայէ, որ Իսսոսի ծովածոցն այդ ժամանակ «Հայկական Ծոց» կոչուած է: 10-րդ դարուն հայութեան թիւն այնքան աճեր էր Կիլիկիոյ մէջ, որ նոր եպիսկոպոսութիւններ հիմնուեցան:

11-րդ դարուն հայոց թիւը Կիլիկիոյ եւ մերձակայքին մէջ շատ աճեցաւ: Բազմաթիւ հայ իշխաններ ու մեծաթիւ բնակչութիւն հոն հաստատուեցան:

Մանազկերտի 1071-ի ճակատամարտէն ետք Առաջաւոր Ասիոյ մէջ նոր իրավիճակ ստեղծուեցաւ. Բիւզանդիան կորսնցուց իր արեւելեան տիրոջները, ուր սելճուքներու տիրապետութիւնը դեռ չէր հաստատուած: Այդ շրջանին, Կիլիկիոյ եւ մերձակայքին մէջ ստեղծուած հայկական իշխանութիւնները (Ապլղարիպ Արծրունիի, Փիլարտոս Վարաժնունիի, Գող Վասիլի եւ այլոց) կենսունակ պետականութիւններ չդարձան: Միայն Ռուբէն իշխանը կրցաւ կայուն պետութիւն հիմնել. ունենալով միայն երեք բերդ՝ 1080-ին ան Լեւոնային Կիլիկիոյ մէջ հիմքը դրաւ անկախ իշխանութեան մը, զոր անոր անուամբ ալ կոչուեցաւ Ռուբինեան:

Կիլիկիոյ հայկական իշխանութիւնը: Ռուբէն Ա. իշխանին (1080–1095) յաջորդեց որդին՝ Կոնստանդին Ա.ը (1095–1100), որ իր իշխանութեան միացուց շարք մը շրջաններ, այդ թիւին՝ Վահկա բերդը, եւ զայն իշխանութեան կեդրոն դարձուց: Ան քարեկամական յարաբերութիւններ հաստատեց խաչակիրներուն հետ: Անոր յաջորդեցին Թորոս Ա.ը եւ Լեւոն Ա.ը (1129–1137), որոնք Կիլիկիոյ մեծագոյն մասը միաւորեցին իրենց իշխանութեան տակ: Լեւոն Ա.ը գրաւեց նաեւ ծովափը՝ Կիլիկիան դարձնելով միջերկրածովեան իշխանութիւն, ինչը կանխելու նպատակով Բիւզանդիոյ Յովհաննէս Կոմնենոս կայսրն անձամբ արշաւեց Կիլիկիա եւ 1137-ին զերեք Լեւոն Ա.ն ու անոր որդիները: Գերութենէն փրկուեցաւ միայն իշխանորդի Թորոսը, որ Կ. Պոլիսէն փախչելով՝ Կիլիկիա վերադարձաւ: Անոր միացան գերութենէն զերծ մնացած երկու եղբայրները՝ Սլեւին ու Ստեփաննէ: Միաւորելով հայկական ոյժերը՝ եղբայրները ոչ միայն վերականգնեցին Լեւոն Ա.ի իշխանութեան սահմանները, այլեւ՝ ողջ Կիլիկիոյ տիրեցին: Կիլիկիոյ Մեծ Իշխան Թորոս Բ.ն (1145–1169) ստեղծեց 30 հազարոց մշտական բանակ եւ մարտունակ նաւատորմ:

Թորոս Բ.ին յաջորդեց Սլեւիը (1169–1175), որու քաղաքականութեան մէջ նորութիւն էր դրացի իսլամական իշխանութեանց հետ դաշնակցութիւնը քրիստոնեայ պետութեանց դէմ: Ան ի վերջոյ դաւադրութեան զոհ դարձաւ: Ան Սիսը իշխանութեան մայրաքաղաք դարձուց: Սլեւին յաջորդեց Ստեփաննի որդին՝ Ռուբէն Գ.ը (1175–1187), որ իր 40-ամեայ եղբայրը՝ Լեւոնը (1187–1219) Կիլիկիոյ Մեծ Իշխան հռչակեց, իսկ ինքը հոգեւոր կեանքին նուիրուեցաւ:

Թագաւորութեան հռչակումը. Լեւոն Բ.: Եգիպտոսի սուլթան Սալահէտտինը 1187-ին գրաւեց Երուսաղէմը, ինչը Խաչակրաց Երրորդ Արշաւանքի (1189–1192) կազմակերպման պատճառ դարձաւ: Լեւոն Բ.ը դաշինք կնքեց խաչակիրներուն հետ, ըստ որուն՝ ան պիտի օգնէր խաչակիրներուն, փոխարէնը պիտի թագադրուէր Գոմեական Արքազան Կայսրութեան (Գերմանիոյ) կայսր Ֆրիդրիխ Ա.: Ընկածօրուսի կողմէ:

1190-ին Ֆրիդրիխ Ա. Ընկածօրուսի մահուան պատճառով Լեւոն Բ.ի թագադրութիւնը որոշ ժամանակով յետաձգուեցաւ: Ֆրիդրիխ Ա.ի որդի եւ յաջորդ Հայնրիխ Զ.ն ստանձ-





Կոթիկոսի ծովային ամրոցը

Թագադրուելով՝ Լեւոն Բ.ն ստացաւ «Թագաւոր Ամենայն Չայոց, եւ նահանգին Կիլիկեացոց, եւ Իսափոխոյ» տիտղոսը, որով կ'ընդգծուէր թագադրութեան համահայկական նշանակութիւնը. ան նախ թագաւորն էր «Ամենայն Չայոց», յետոյ նոր միայն՝ «նահանգին Կիլիկեացոց»: Ժամանակակիցները Լեւոն Բ.ի (իբրեւ արքայ՝ Լեւոն Ա.ի) թագադրութիւնը իրաւացիօրէն կը գնահատեն որպէս Ամիի համահայկական թագաւորութեան վերականգնում:

Լեւոն Բ.ն աննախադէպ ծաղկման հասցուց Կիլիկեան Չայաստանը: Տնտեսական բացառիկ վերելքի արտայայտութիւններէն մէկն է անոր ատեն սկսուած՝ հայոց դրամաշրջանառութեան պատմութեան ոսկեդարը: Կիլիկիոյ հայկական դրամը՝ «Թագաւորական» բառի կրճատմամբ) միջազգային կարեւոր արտարժոյթ դարձաւ: Դրամներուն վրայ Կիլիկիոյ արքաները «Թագաւոր Չայոց» տիտղոսով կը ներկայանային:

Լեւոն Բ.ն առետրական արտօնեալ պայմանագիրներ կնքեց Վենետիկի, ճենովայի, Փիզայի եւ ուրիշ քաղաքներու ու երկիրներու հետ: Ան ջերմ (նաեւ՝ խնամիական) յարաբերութիւններ հաստատեց քրիստոնէական պետութեանց արքայատուներու հետ:

Լեւոն Բ. իշխանը, որ դարձաւ Լեւոն Ա. արքայ, մեր պատմութեան մէջ մնաց «Մեծագործ», «Մեծայաղթ», «Բազմայաղթ», «Բարեպաշտ» պատուանուն-տիտղոսներով:

Կիլիկիոյ հայոց թագաւորութիւնը 1219–1375 թրականներուն: Լեւոն Բ.ի մահէն ետք սկսան նոր գահակալի փնտռութիւնները, քանի որ ան որդի չէր ունեցած: Ի վերջոյ, 1226–ին անուսնանալով Լեւոն Բ.ի դուստր Զապէիի հետ, գահ կը բարձրանայ Դեթում Ա.ը (1226–1269), որով ալ հիմք կը դրուի Դեթումեան արքայատան:

Դեթում Ա.ի կառավարման տարիներուն Արեւելքէն յայտնուեցան մոնկոլները, որոնց Մանգու մեծ խանին հետ ան բարեկամութեան դաշինք կնքեց 1254–ին՝ այդ նպատակով այց կատարելով Կիլիկիայէն քազմահազար քիլոմետր հեռու գտնուող Կարակորում մայրաքաղաքը: Ըստ դաշինքին՝ հայերը պէտք է աջակցէին մոնկոլներուն՝ կիլիկիամերձ տարածքներու նուաճումներու ընթացքին, իսկ մոնկոլները՝ հայոց: Ասկէ բացի, մոնկոլներու տիրապետութեան ողջ տարածքին մէջ հայ առետրականներն ազատ առետուրի իրաւունք ստացան, իսկ Չայոց եկեղեցւոյ արտօնեալ կարգավիճակ տրուեցաւ:

1260–ական թրականներուն Կիլիկեան Չայաստանի համար միջազգային նոր իրադրութիւն կը ստեղծուի: Խաչակրաց արշաւանքներն արդէն կորսնցուցեր էին իրենց ոյժը, իսկ հարաւը հզօրացեր եւ Արեւելեան Միջերկրականի աւազանի քրիստոնէայ պետութեանց դէմ պատերազմներու ամբողջ շարք մը սկսեր էր եզիպտոսի մեմլուքեան սուլթանութիւնը: Կիլիկեան Չայաստանն ալ անյաջողութիւններ կրեց եզիպտացիներու արշաւանքներուն ընթացքին:



Կիլիկեան դրամներ եւ դրամահատիչ սարք



Լեւոն Զ.ի (որպէս արքայ՝ Լեւոն Ե.) տապանաքարը Փարիզի Սեն Տընիի արքայական դամբարանին մէջ

Լեւոն Գ.ի (1269–1289) օրով եւ յետագայ տարիներուն յաճախակի կը դառնան Կիլիկեան Չայաստանը շրջափակման մէջ վերցուցած իսլամական դրացի պետութեանց յարձակումները: Եւրոպական քրիստոնեայ պետութեանց, մասնաւորապէս, Չոօմի պապին ուղղուած հայոց դիմումները կը ստանային մէկ պայծառ–պատասխան. օգնութիւն կու գայ, եթէ Չայ եկեղեցին «ունիա» (լատիներէն՝ «միութիւն») կնքէ Չոօմի Պապին հետ, այսինքն՝ կաթողիկոսութիւնն ընդունի: Այդ գերիսնդրի քննարկումներն երկրին մէջ յառաջ բերին երկու հակադիր քաղաքական հոսանք՝ ունիթորներու («ունիայի») կողմնակիցներու եւ հակաունիթորներու, ինչն աւելի սրեց վիճակը:

1307–ին եւ 1316–ին տեղի ունեցած եկեղեցական ժողովներուն՝ հայերը որոշեցին միանալ Չոօմի եկեղեցոյ, որմէ ետք իսլամական դրացի պետութիւններն աւելի մեծ քննադատութեամբ սկսան վերաբերիլ Կիլիկիոյ հայկական պետութեան: Սակայն, քրիստոնեայ Արեւմուտքէն ոչ մէկ օգնութիւն եկաւ: Հիասքափուած Արեւմուտքէն՝ 1361–ին հայերը եկեղեցական նոր ժողով մը գումարեցին եւ ունիայի որոշումը չեղեալ յայտարարեցին:

1373–ին գահ բարձրացաւ Կիլիկիոյ վերջին արքան՝ Լեւոն Զ. (իրրեւ արքայ՝ Լեւոն Ե.) Լուսինեանը: 1374–ի վերջին եգիպտական զօրքերը կրկին արշաւեցին Կիլիկիա եւ 5 Յունուար 1375–ին պաշարեցին Սիս մայրաքաղաքը: Փետրուարին անոնց միացան նաեւ Չալէպի սուլթանին զօրքերը: Հերոսական պայքարի ընթացքին զոհուեցաւ Լիպարիտ սպարապետը, իսկ 22 Ապրիլին Լեւոն Զ.ն անձնատուր եղաւ: Ան ձերբակալուեցաւ եւ Եգիպտոս գերի տարուեցաւ: 1375 թուականը Կիլիկիոյ հայոց թագաւորութեան անկման տարին կը համարուի:

Անկէ ետք, շուրջ 50 տարի հայ իշխանները կը փորձէին վերականգնել հայոց թագաւորութիւնը, սակայն, ապարդիւն: Եւրոպայի գահակալներու միջնորդութեամբ Լեւոն Զ. Լուսինեանը 1382–ին ազատ կ'արձակուի եւ կը տեղափոխուի Եւրոպա, ուր մինչեւ կեանքին վերջը (1396) նոր արշաւանք կազմակերպելու աշխատանք կը տանէր՝ Կիլիկեան Չայաստանը փրկելու նպատակով: Անոր գերեզմանը կը գտնուի Փարիզի Սեն Տընի տաճարի արքայական դամբարանին մէջ:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ո՞վ, ո՞ր եւ ո՞ր թուականին հիմնադրած է Ռուբինեան իշխանութիւնը:
2. Ե՞րբ եւ ո՞ր տեղի ունեցած է թագաւորութեան հռչակումը: Ի՞նչ տիտղոս կը կրէր Լեւոն Բ.ը (որպէս արքայ՝ Լեւոն Ա.ը):
3. Ե՞րբ, ո՞ր եւ որո՞նց միջեւ կնքուած է հայ–մոնկոլական դաշնագիրը:
4. Որո՞նց են ունիթորները եւ հակաունիթորները:
5. Ի՞նչպէ՞ս անկում ապրեցաւ Կիլիկիոյ թագաւորութիւնը:

Բագրատունեաց դարաշրջանի հայկական թագաւորութիւնները, Ձաքարեան իշխանապետութիւնը եւ Կիլիկիոյ հայոց երեքհարիւրամեայ պետականութիւնը լաւագոյն պայմաններն ապահովեցին կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի զարգացման համար:

9-14-րդ դարերուն Հայաստանի մէջ կը գործէր կրթական երկաստիճան համակարգ՝ տարրական դպրոցներ (ուսուցումը կը տեւէր 3-4 տարի) եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ (վարդապետարաններ՝ 7-8 տարի): Նշանաւոր էին Անիի, Արգինայի, Կարսի, Հաղպատի, Սանահինի, Գօշաւանքի կամ Գետիկի, Կեչառիսի, Այրիվանքի, Նարեկայ վանքի, Ախի, Տարսուհի, Գլաճորի, Տաթևի եւ ուրիշ վարդապետարանները:

Մեծ զարգացում ապրեցաւ պատմագրութիւնը: Հետեւելով Մովսէս Խորենացիին, Յովհաննէս Դրասխանակերտցիին իր «Հայոց Պատմութիւն»ի շարադրանքը կը սկսի Հայկ Նահապետէն եւ զայն կը հասցնէ մինչեւ իր եապրած ժամանակը (924-925): Իսկ Կիրակոս Գանձակեցիին (13-րդ դար) կը շարադրէ քրիստոնեայ Հայաստանի պատմութիւնը՝ զայն հասցնելով մինչեւ 1260-ական թուականները:

Այս շրջանին հայ պատմագրութեան մէջ ի յայտ կու գան նոր ուղղութիւններ՝ տոհմական պատմագրութիւնը, ժամանակագրութեան եւ «տինգերական» (այսինքն՝ ընդհանրական, ամբողջ աշխարհի) պատմութեան ժանրերը: «Տինգերական» պատմագրութեան ներկայացուցիչներ էին Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը (11-րդ դար) եւ Վարդան Արեւելցի (13-րդ դար):

Տոհմական պատմագրութեան ականաւոր ներկայացուցիչներն էին Թովմա Արծրունի («Արծրունեաց Տան Պատմութիւն») եւ Ստեփանոս Օրբելեանը («Արսական Նահանգի Պատմութիւն»):

Ժամանակագրութեան եւ տարեգրութեան ժանրերով կը տեղեկագործէին Արիստակէս Լաստիվերցի, Մատթոս Ուռհայեցի, Մամուլ Անեցի, Միսիթար Անեցի, Կիլիկեան Հայաստանի մէջ՝ Սմբատ Սպարապետը (Գունդատաբլը):

Հայ իմաստասիրական միտքի մարզին մէջ կը շարունակէր գերակայ մնալ նորպղատունականութիւնը (որու խոշորագոյն ներկայացուցիչներն էր Դաւիթ Անյաղոր), որու առանցքային գաղափարներն մէկը Աստուծոյ նմանելու, մերժեցնելու եւ Անոր հետ ծուլուելու մարդու հնարաւորութիւնն էր, որուն մարդս կրնար հասնիլ մտաւոր ու հոգեւոր կատարելագործման միջոցով: Այս գաղափարը կարմիր թելի նման կ'անցնի Գրիգոր Նարեկացիի (951-1003) «Մատեան Ողբերգութեան» համճարեղ երկին էջերով:

Նորպղատունական գաղափարներու կրող էր Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի (10-11-րդ դարեր), որ յայտնի դարձաւ նաեւ շարք մը փիլիսոփայական գործերու թարգմանութեամբ եւ «Թուղթ»երով:

Հայ իրականութեան մէջ քնափիլիսոփայական ուղղութեան հիմնադիրը դարձաւ ականաւոր փիլիսոփայ, քնազետ, տոմարագետ եւ բանաստեղծ Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէրը (11-12-րդ դարեր):

13-15-րդ դարերուն փիլիսոփայական հայեացքներով յայտնի էին՝ Կիլիկեան Հայաստանի մէջ՝ Վահրամ Ռաբունի (13-րդ դար), բուն Հայաստանի մէջ՝ Յովհաննէս Երզնկացի (13-րդ դար), Յովհան Որոտնեցի (14-րդ դար) եւ Գրիգոր Տաթևացի (14-15-րդ դարեր): Իրենց քննադիտական աշխատանքներուն մէջ փիլիսոփայական ուշագրաւ դիտարկումներ ունին ականաւոր բժշկապետներ Միսիթար Հերացի (12-րդ դար), Գրիգորիսը (13-14-րդ դարեր) եւ ուրիշներ:



Սր. Գրիգոր Նարեկացի



Աղթամարի Սր. Խաչ եկեղեցին

ստեղծագործութիւններով, որոնք հայ քնարերգութիւնը նոր մակարդակի բարձրացուցին:

Ժողովուրդն աւանդոյթի ոյժով կը շարունակէր երգերուն մէջ փառաբանել անցեալի մեծ հերոսները: 11-րդ դարուն Գրիգոր Մագիստրոս Պաղատունին գրաւած է Արտաշէս Աշխարհակալի մասին երգուող հետաքրքրական պատատիկներ: Կը զարգանայ եւ նոր դրուագներով կը հարստանայ ժողովրդային դիւցազնավէպը («Սասնայ Շոեր» կամ «Զոջանց Տուն»):

Դեռ 8-րդ դարուն Յովհան Օծնեցիի քանքերով ստեղծուած էր Հայ եկեղեցւոյ կանոնական իրաւունքի ժողովածուն՝ «Կանոնագիրք Հայոց»ը: Կանոնական իրաւունքի աւանդոյթներուն շարունակեց հետեւիլ Դաւիթ Ալաւկատորին (11-րդ դար – 12-րդ դարու սկիզբ):

Հայ իրաւագիտական միտքի յաջորդ աստիճանը դարձաւ Մխիթար Գօշի «Դատաստանագիրք»ը, որ կոչուած էր կարգաւորելու կեանքի բոլոր բնագաւառները: Դեռ միջնադարուն Մխիթար Գօշի «Դատաստանագիրք»ը շարք մը լեզուներով թարգմանուած է:

Կիլիկեան Հայաստանի մէջ, ուր բացի հայերէն, յոյներ, ասորիներ եւ ուրիշ ազգեր կ'ապրէին, դարեր շարունակ ոչ-հայկական օրէնքներ գործեր էին, ուստի անհրաժեշտ էր օրէնսդրական նոր դաշտ ստեղծել: Այդ բացը լրացնելու նպատակով Ներսէս Լամբրոնացին 12-րդ դարուն կը թարգմանէ բիզանդական, ասորական եւ իսաչակրաց շարք մը օրէնքներ: Այս բնագաւառը վերջնականապէս կարգաւորեց Սմբատ Սպարապետը, որ նախ թարգմանեց «Անտիոքի Ասիզներ»ը, ապա գրեց իր «Դատաստանագիրք»ը, որ հիմնուած էր Մխիթար Գօշի «Դատաստանագիրք»ին վրայ՝ զայն համապատասխանեցնելով Կիլիկեան Հայաստանի առանձնայատկութիւններուն:

Քննարկուող ժամանակաշրջանին բացառիկ մակարդակի հասաւ հայ գեղարուեստական գրականութիւնը: Կը յօրինուին հոգեւոր նոր երգեր, կը կազմուին շարականներու նոր ժողովածուներ, կը ստեղծուին հոգեւոր եւ աշխարհիկ երգերու ժողովածուներ, որոնք յայտնի կը դառնան «Գանձարան» եւ «Տաղարան» անուանումներով:

Բացի Գրիգոր Նարեկացիի անհասանելի մեծութենէն, հայ մշակոյթը այս ժամանակաշրջանին կը հարստանայ Ներսէս Շնորհալիի, Գրիգոր Տղայի, Ֆրիկի, Յովհաննէս Երզնկացիի, Կոստանդին Երզնկացիի, Յովհաննէս Թլկուրանցիի եւ այլոց



Լեւոն Ե. (որպես արքայ Լեւոն Գ.) արքան՝
իրբն արդար դատաւոր (Սարգիս Պիծակ, 1331)

ռոմոսի, Գնդեվանքի եւ այլն): Մեծ ուշադրութիւն կը դարձուի ամրոցաշինութեան:

Ճարտարապետութեան եւ շինարարական արուեստի վերընթաց զարգացումը նաեւ քանդակագործութիւնը մղեց քացառիկ նուաճումներու արձանագրման: Ստեղծուեցան կրօնական ու աշխարհիկ թեմաներով քացառիկ պատկերաքանդակներ (Աղթամարի, Անիի մէջ եւ այլուր): Հայ մշակոյթի բնութագրիչ ճիւղերէն մէկը դարձաւ քանդակագործութեան ուրոյն մէկ ճիւղը՝ խայքարային արուեստը, զոր հասաւ քացառիկ ծաղկման՝ համաշխարհային մակարդակի գլուխ-գործոցներ տալով:

Քանդակագործութեան կողքին իր պատշաճ բարձրութեան վրայ գտնուեցաւ որմնանկարչութիւնը: Քացառիկ են Աղթամարի, Անիի, Տաթեւի եւ ուրիշ յուշարձաններու որմնանկարները:

Հայկական մշակոյթը բնորոշող մէկ ուրիշ ճիւղ՝ մանրանկարչութիւնը, ունեցաւ իր ոսկեդարը: Հիմնուեցան մանրանկարչական քանի մը դպրոցներ թուն Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ: Կիլիկեան մանրանկարչութեան գլուխ-գործոցներ դարձան Թորոս Ռոսլինի եւ Սարգիս Պիծակի ստեղծագործութիւնները:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ներկայացուցէ՛ք Հայաստանի 9–14–րդ դարերու կրթական համակարգը:
2. Ի՞նչ նոր ուղղութիւններ ի յայտ կու գան 9–14–րդ դարերու հայ պատմագրութեան մէջ:
3. Ո՞վ է «Մատեան Ողբերգութեան» պոեմին հեղինակը: Ի՞նչ գիտէք այս ստեղծագործութեան մասին:
4. Որո՞նք էին 9–14–րդ դարերուն ապրած երկու նշանաւոր առակագիրները:
5. Ճարտարապետական ի՞նչ գլուխ-գործոցներ ստեղծուած են 9–14–րդ դարերուն:

1375-ին անկում ապրեցաւ հայկական վերջին թագաւորութիւնը Կիլիկիոյ մէջ: Չաքարեան իշխանապետութեան անկումէն ետք Հայկական Լեռնաշխարհի տարածքին հաստատուեցան նախ մոնկոլական, ապա թուրքական ու պարսկական տիրապետութիւններ:

Հայաստանը 1555-ին առաջին, իսկ 1639-ին երկրորդ անգամ բաժնուեցաւ Օսմանեան Կայսրութեան եւ Սեֆեան Պարսկաստանի միջեւ: Ստեղծուեցաւ իրավիճակ մը, երբ ոչ միայն արգելակուեցաւ հայկական մշակոյթին զարգացումը, այլեւ իսլամական իշխանութեանց կողմէ յաճախ ոտնահարուեցան քրիստոնեաներու մարդկային տարրական իրաւունքները:

Հայաստանը վերածուեւր էր թուրք-պարսկական պատերազմներու թատերաբեմի, ինչն աստիճանաբար կ'ամայացնէր երկիրը: Այդ պատերազմները կ'ուղեկցուէին բռնի տեղահանութիւններով, որոնցմէ ամենամեծը տեղի ունեցաւ 1604-ին՝ Շահ Աբրահիմ կողմէ, որու ընթացքին Արեւելեան Հայաստանէն (Կարսէն Ջուղա ձգուող տարածքներն) շուրջ 300 հազար հայ բռնագաղթի ենթարկուեցաւ եւ Պարսկաստան տեղափոխուեցաւ՝ տարագրութեան ճամբուն վրայ ու յատկապէս Արաքսի ջուրերուն մէջ հազարաւոր հոգիներ կորուստ տալով:

Թշնամի տէրութիւնները դարեր շարունակ կը թուլցնէին եւ կ'ոչնչացնէին հայ ազնուական դասը, որ, փաստօրէն, երկրի տէրերուն խաւը կը կազմէր: Հայկական նախարարական տուներու աստիճանական ոչնչացումը տուաւ իր բացասական արդիւնքը. Հայաստանի մէջ որպէս կղզեակներ մնացեր էին քանի մը կիսանկախ իշխանութիւններ միայն:

Ազատագրական պայքարի դրսեւորումները: Ինչպէս նշեցինք, հայոց թագաւորութեան անկումէն ետք հայ իշխանները շուրջ 50 տարի կը փորձէին զայն վերականգնել Կիլիկիոյ մէջ, սակայն յաջողութիւն չունեցան:

1465-ին Աղթամարի Ար. Խաչ եկեղեցւոյ մէջ Սմբատ Արծրունի-Սեֆեւտիւնեանը «Հայոց թագաւոր» օծուեցաւ: Սակայն այդ թագաւորութիւնը, որ կը տարածուէր Աղթամար կղզիին եւ առափնեայ քանի մը գիւղերու տարածքին վրայ, որպէս պետութիւն չկայացաւ եւ 1471-էն ետք այլեւ չի յիշատակուիր: Փաստօրէն, ատիկա հայոց թագաւորութիւնը վերականգնելու վերջին փորձն էր, զոր նոյնպէս ձախողեցաւ:

Պետականութեան բացակայութեան պայմաններուն մէջ, ազատագրական շարժման գլխաւոր որոշակակիրը դարձաւ եկեղեցին: Մեզի հասած են շարք մը տեղեկութիւններ



*Տաթւի
վանական
համալիրը*

Եկեղեցւոյ առաջնորդներու հրաւիրած ժողովներու ու անոնց ծաւալած գործունեութեան մասին, որոնք նպատակ ունին հասնիլ Հայաստանի ազատագրութեան՝ քրիստոնեայ մեծ տէրութեանց քակցութեամբ:

1547-ին, Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսը կը հրաւիրէ գաղտնի ժողով մը Էջմիածնի մէջ՝ նուիրուած Հայաստանի ազատագրութեան խնդրին: Անոր գլխաւորած պատուիրակութիւնը 1548-ին կ'ուղեւորուի Եւրոպա, եւ երկարատեւ ու ապարդիւն բանակցութիւններ ետք 1551-ին կը վերադառնայ Հայրենիք:

1562-ին Միքայէ Ա. Սեբաստացի կաթողիկոսը գաղտնի խորհրդածողով մը կը հրաւիրէ Սեբաստիոյ մէջ: Կ'որոշուի Եւրոպա դրկել նոր պատուիրակութիւն մը: Արգար Եւդոկիացիին (Թոխաբեցիին) գլխաւորութեամբ, որու բանակցութիւնները Վենետիկի Հանրապետութեան եւ Հռոմի պապին հետ՝ ի վերջոյ դրական արդիւնք չտուին:

1575-ին Եւրոպա կը մեկնի եւ Հռոմի պապին, Վենետիկի դուքսին ու Լեհաստանի քաղաքին հետ կը բանակցի հայոց Թադէոս արքեպիսկոպոսի կաթողիկոսը: Նոյն թուականին Միսի կաթողիկոս Խաչատուր Բ. Չէյրունցիին օգնութեան խնդրանքով կը դիմէ Հռոմի պապին եւ անկէ օգնութիւն կը հայցէ: 1584-ին կրկին Հռոմի պապին կը դիմէ Միսի յաջորդ կաթողիկոս Ազարիա Ա. Ջուղայեցիին: Ուշագրաւ է, որ այս բանակցութեանց ժամանակ հայոց հայրապետները երբեմն համաձայնած են նաեւ կաթողիկոսին ընդունելու Հռոմի պահանջին, ինչը եւս ոչինչ տուաւ Հայաստանի ազատագրութեան գործին:

Արեւմուտքի մէջ ապարդիւն դեգերումները ժամանակաւորապէս թուլցուցին հայկական ազատագրական շարժումը: Ան կրկին աշխուժացաւ միայն 17-րդ դարու կեսերուն՝ կապուած Վենետիկի Հանրապետութեան եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ մղուած կրետի պատերազմին (1645-1669) հետ, զոր կ'ակնկալուէր թուրքերու դէմ համաեւրոպական պատերազմի վերածել:

Մշակութային վիճակը: Դարեր տեւած օտար, քիրտ տիրապետութիւնը անտանելի վիճակ ստեղծեց Հայաստանի մէջ: Տեղի ունեցաւ մշակութային կեանքի համընդհանուր անկում: 15-րդ դարուն գործել էր դարեցաւ Միջնադարու հայկական վերջին՝ Տաքսի

ՀԱՅԱՍՏԱՆԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ



համալսարանը: Հայկական մշակույթի սակաւաթիւ օճախները Հայաստանէն դուրս կը գտնուէին: Ատով հանդերձ, քննարկուող ժամանակաշրջանին տեղծուեցան մշակութային մնայուն արժէքներ:

1512-ին Յակոբ Մեղապարտի ջանքերով սկզբնաւորուեցաւ հայկական տպագրութիւնը Վենետիկի մէջ: Հայերէն տպագիր առաջին գիրքը «Ուրբաքագիրք» կը կոչուէր: Յակոբ Մեղապարտի մահէն ետք 1567-ին հայ տպագրութեան գործը շարունակեց Արզար Եւոլկիացին (Թոխաթեցին)՝ տպարանը Կոստանդնուպոլիս փոխադրելով: 17-րդ դարուն հայկական տպարաններ բացուեցան Լվովի, Լիվոռնոյի եւ Երզնկայի մէջ, մինչդեռ, հայոց հողին վրայ (Ար. Էջմիածին) առաջին տպարանը հիմնուեցաւ միայն 1771-ին՝ Սիմէոն Ա. Երեսնցի Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջանքերով:

Պատմագիտութեան ասպարէզին մէջ կարելոր էր Թովմա Մեծօփեցիի (15-րդ դար) աշխատութիւնը, ուր կը նկարագրուին Լեւկեփմուրի արշաւանքներուն արիւիւրքները: Առաքել Ղաւրիժեցի (16-17-րդ դարեր) իր «Պատմութիւն»-ի էջերուն մէջ կը ներկայացնէ Հայաստանի 1602-1662 թուականներու պատմութիւնը: 17-րդ դարու առաջին կէսի պատմութիւնը ներկայացուած է Գրիգոր Ղարանաղցի (Կամախեցիի) «Ժամանակագրութիւն» եւ Չաքարիա Քանաքեցիի «Պատմագրութիւն» աշխատութեանց մէջ:

Իր ժամանակի հանրագիտակ մտածողներէն էր պոլսահայ երեմիա Չելեպի Քեմիւրճեանը (17-րդ դար), զոր պատմագիտական, քերականական, գրական, հրապարակախօսական եւ ուրիշ աշխատանքներ ձգած է: Երբ Չուղայի մէջ յայտնի էր Սիմէոն Չուղայեցի (16-17-րդ դարեր)՝ իր «Տրամաբանութիւն» եւ «Քերականութիւն» երկերով:

Գրականութեան բնագաւառին մէջ կը շարունակուէին կազմուիլ «Տաղարան» եւ «Աղուէսագիրք» կոչուող ժողովածուները, որոնք աշխարհիկ գրականութեան նմոյշներ կ'ամփոփէին:

Բնութեան, սիրոյ ու գեղեցկութեան, արդարութեան եւ պանդխտութեան թեմաներով բանաստեղծութիւններով յայտնի էին Մկրտիչ Լաղաշ (15-րդ դար) ու Գրիգորիս Աղքամարցի (16-րդ դար): Բոլոր ժամանակներու մեծագոյն սիրերգակներէն է բանաստեղծ Նահապետ Քուչակը (16-րդ դար):

15-17-րդ դարերուն կը գրուին շարք մը ուղեգրութիւններ, որոնց շնորհիւ ուղեգրութիւնը հայ գրականութեան ինքնուրոյն ժանրի կը վերածուի:

Բժշկագիտութեան մէջ հռչակաւոր էր Ամիրտովլաք Ամասիացի (15-րդ դար), որ եղած է բուրք սուլթանի անձնական բժիշկը: Անոր բժշկագիտական աշխատութիւնները գրուած են պարզ, ժողովրդային-խօսակցական լեզուով: Կենդանիներու բժշկութեան բնագաւառին մէջ կարելոր աշխատանք կատարած է Աբրահամ Կոստանդնուպոլսեցի (17-րդ դար):

Որոշակի նուաճումներ արձանագրուեցան մանրանկարչութեան եւ գորգագործութեան մարզերուն մէջ: Անշեղօրէն կը զարգանար խաչքարագործութիւնը:

Կը կառուցուին ճարտարապետական նոր յուշարձաններ, որոնց մէջ մեծ թիւ կը կազմեն եկեղեցիներն ու կամուրջները: Բազմաթիւ եկեղեցիներ կը պարսպապատուին: Հայ ճարտարապետները գլուխ-գործոցներ կը ստեղծեն նաեւ օտար երկիրներու մէջ:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Օսմանեան Կայսրութեան եւ Սեֆեան Պարսկաստանի միջեւ Հայաստանի բաժանումները ե՞րբ տեղի ունեցած են:
2. Պատմեցէք հայոց թագաւորութեան վերականգնման վերջին փորձին մասին:
3. Հայաստանի ազատագրութեան հարցով 16-րդ դարուն ի՞նչ գաղտնի ժողովներ հրաւիրուած են:
4. Ե՞րբ, ո՞ւր եւ որո՞ւ ջանքերով սկզբնաւորուած է հայկական տպագրութիւնը: Ո՞վ շարունակած է անոր գործը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
17-ՐԴ ԴԱՐԱԿԵՄԵՆ ՄԻՆՉԵՒ
18-ՐԴ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԸ:

24. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ
ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԵ

Հայկական ազատագրական շարժումը 17-րդ դարու երկրորդ կեսին: Վենետիկի Հանրապետության եւ Օսմանեան Կայսրության միջև 1645–1669 թուականներու պատերազմը նորէն ազատագրութեան յոյսեր արթնցուց հայոց, յոյներուն եւ ասորիներուն մէջ: Կազմուեցան ծրագիրներ, տեղի ունեցան քաղաքապիւ պաշտօնական հանդիպումներ հայ գործիչներու (Խաչատուր Գաղատիացի, Մահտեսի Մուրատ Բաղիշեցի, Խոճա Առաքել, Յովհաննէս Թիւթունճի եւ ուրիշներ) եւ քրիստոնեայ աշխարհի շարք մը նշանաւոր առաջնորդներու միջև: Սակայն Վենետիկը պարտուեցաւ եւ այդ ծրագիրներն իրականութիւն չդարձան:

Հայերը նոր յոյսեր սկսան կապել 1670–ական թուականներուն ստեղծուած հակաթրքական դաշինքին հետ, որուն մաս կը կազմէին Աւստրիան, Լեհաստանը, Վենետիկը եւ Ռուսաստանը: Օգնութեան խնդրանքով Հոռմի պապին, Աւստրիոյ կայսեր եւ Ռուսաստանի Ալեքսէյ ցարին դիմեցին Յակոբ Դ. Ջուղայեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գանձասարի Պետրոս Խանձքեցի (որդեգրուած իբր Հասան–Ջալալեան) կաթողիկոսը եւ Նոր Ջուղայի հայ առեւտրականները:

Յակոբ Դ. Ջուղայեցին 1677–ին ելմիածնի մէջ հրաւիրեց զաղտնի ժողով մը, որուն որոշումով՝ կաթողիկոսին գլխաւորած պատուիրակութիւնը 1679–ին Նախ մեկնեցաւ Վրաստան, ապա անցաւ Կոստանդնուպոլիս, ուրկէ կապ հաստատեց Հոռմի պապին եւ Լեհաստանի արքայ Եան Սուպլյսքիին հետ: Սակայն 1680–ի Օգոստոսին Յակոբ Դ. Ջուղայեցին վախճանեցաւ, իսկ պատուիրակութեան անդամները վերադարձան Հայաստան:

Իսրայէլ Օրիի գործունէութիւնը: 17–րդ դարու վերջին եւ 18–րդ դարու սկիզբին հայկական ազատագրական պայքարի ամենաակնառու գործիչը դարձաւ Իսրայէլ Օրին, որ Հայաստանի ազատագրութեան իր ծրագիրները կը փորձեր իրականացնել Պֆալցի քուրֆեյորսթ (կայսրընտիր իշխան) Եռիան Վիլհելմի միջոցով:

Նախ որոշուեցաւ Պֆալցի իշխանութեան, Աւստրիական Կայսրութեան եւ Թուրքմանի դքսութեան ոյժերով կազմակերպել արշաւանք դէպի Հայաստան: Սակայն այդ ծրագիրին ծախսողութենէն ետք Օրին մեկնեցաւ Ռուսաստան եւ 1701–ին հանդիպում ունեցաւ Մեծն Պետրոս Ա.ի հետ: Ատորմով մեր ազատագրական պայքարին մէջ սկսաւ ռուսական կողմնորոշումը, զոր յետագային աւելի խորացաւ:

Իսրայէլ Օրիին խոստացան, որ Շուտի դէմ մղուող Հիւսիսային Պատերազմը վերջանալէն յետոյ Պետրոս Ա.ը պիտի զբաղի Հայաստանի ազատագրութեան հարցով: Ռուսի որոշուեցաւ մինչ այդ Օրիին գլխաւորութեամբ դեսպանութիւն մը դրկել Իրան՝ տիրող իրավիճակին ծանօթանալու նպատակով: 1708–1711 թուականներուն Օրին որոշակի գործունէութիւն ծաւալեց Իրանի տարածքին, կապեր հաստատեց ժամանակի նշանաւոր հայ գործիչներու հետ: Սակայն, 1711–ին ան Աստրախանի մէջ յանկարծամահ եղաւ: Իսրայէլ Օրիին գործը շարունակեց անոր օգնական եւ ուղեկից Մինաս Վարդապետ Տիգրանեանը:

Ազատագրական պայքարը Արցախի եւ Սիւնիքի մէջ 1722–1730 թուականներուն: Պարսկական տիրապետութեան դէմ ապստամբած աֆղանները 1722–ին գրաւեցին Իրանի մայրաքաղաք Սպահանը եւ գլխատեցին Հիւսիս շահը: Օգտուելով առիթէն՝



Իսրայել Օրբի



Յովսէփ Արղուբեան



Շահամիր Շահամիրեան

Պետրոս Ա.ն նոյն տարին արշաւանք սկսաւ Իրանի դէմ: Ռուսական բանակին միանալու հետեակարով՝ վրաց Վախթանգ Չ. թագաւորը 30 հազարոց եւ Գանձասարի Եսայի Դասան-Ջալալեան կաթողիկոսը 12 հազարոց բանակներով հանդիպեցան Գանձակի մօտ գտնուող Չոլակ վայրին մէջ: Սակայն Նոյեմբերին (երկու ամիս ետք) լուր եկաւ, որ Պետրոս Ա.ը դադրեցուցած է Կասպիական արշաւանքը եւ վերադարձած Աստրախան: Վրացական բանակը վերադարձաւ Վրաստան, իսկ հայկականը՝ Արցախ:

Վերադառնալով Արցախ՝ հայկական զօրքը հոն անկախ իշխանութիւն հռչակեց: Ազատագրական պայքարի գլխաւոր կազմակերպիչն ու ոգին Եսայի Դասան-Ջալալեան կաթողիկոսն էր, իսկ զօրքերու ընդհանուր հրամանատարը՝ Աւան Դարիւրապետը (Եփրզայիցի):

1722-ին ապստամբեցան նաեւ Սիւնիքի հայերը, որոնց պայքարը կազմակերպեց ու առաջնորդեց վրացական բանակի հայ զօրավար Դաւիթ Բէկը: Դաւիթ Բէկի գլխաւորութեամբ Սիւնիքի մէջ ստեղծուեցաւ հայկական անկախ իշխանութիւն, որուն կեդրոնը Զալիժորի բերդն էր: 1728-ին Դաւիթ Բէկի մահէն ետք իշխանութեան ղեկավար դարձաւ Սիւնիքար Սպարապետը: Սակայն 1730-ին անոր սաանութենէն ետք իշխանութիւնն անկում ապրեցաւ:

Թէ՛ Արցախի եւ թէ՛ Սիւնիքի մէջ մեծ յոյսեր կը կապէին Ռուսաստանի հետ՝ ողջ պայքարի ընթացքին սպասելով ռուսական զօրքերն ու հաւատալով անոնց օգնութեան խոստումներուն: Սինչդեռ Իրականութեան մէջ, ռուսական պետութիւնը 1724-ին թուրքերուն հետ կնքեւր էր գաղտնի պայմանագիր մը, որով մերձկասպեան շրջանները պիտի անցնէին Ռուսաստանին, իսկ անոնցմէ արեւմուտք ինկած շրջանները, ներառեալ Արցախն ու Սիւնիքը, Օսմանեան Կայսրութեան:

Զարմանալիօրէն, յոյսը դնելով Ռուսաստանի օգնութեան վրայ եւ 9 տարի ի զուր սպասելով գայն, չիովին անկախացած Արցախն ու Սիւնիքը հայկական անկախ թագաւորութիւն չեն հռչակեր...

Հայկական ազատագրական պայքարը 18-րդ դարու երկրորդ կեսին: 18-րդ դարու երկրորդ կեսին հայկական ազատագրական միտքի կեդրոններէն էր հնդկահայ գաղութը, որու ականաւոր ներկայացուցիչներէն էր Յովսէփ Էմինը: Ան 1751-ին հաստատուելով Մեծն Բրիտանիոյ մէջ՝ կրցաւ կապեր ստեղծել բրիտանական կառավարող շրջանակներուն հետ: Հայաստանի ազատագրութեան հարցը ան բարձրացուց նախ Մեծն Բրիտանիոյ վարչապետ Փիթթիի, ապա Ռուսաստանի վարչապետ Վորոնցովի հետ հանդիպումներուն ընթացքին:

Յովսէփ Էմինը յառաջ մղեց Ռուսաստանի հովանաւորութեամբ հայ-վրացական միացեալ պետութիւն ստեղծելու գաղափարը, զոր պէտք է գլխաւորեր վրաց թագաւոր Դերակլ Բ.ը: Էմինը կապեր հաստատեց շարք մը հայ գործիչներու հետ, որոնցմէ ամենապատրաստակաւնը գտնուեցաւ Մշոյ Ար. Կարապետ վանքի վանահայր Յովնան եպիսկոպոսը:

Սակայն էմինի գործունեության իր հաւանութիւնը չտուաւ Սիմոն Ա. Երեւանցի Ամենայն Չայոց Կաթողիկոսը՝ զայն արկածախնդրութիւն նկատելով:

Իր ծրագիրներուն ծախողութեն ետք Յովսէփ էմինը կը վերադառնայ Չնդկաստան, ուր կը համագործակցի 1770–ական թուականներու սկիզբին Մատրասի մէջ Շահամիր Շահամիրեանի ստեղծած ազատագրական խմբակին հետ:

1771–ին Մատրասի մէջ ստեղծուած քաղաքական խմբակին կորիզը կը կազմէին մեծահարուստ Շահամիր Շահամիրեանը, անոր որդիներ Յակոբն ու Եղիազարը, հայազետ Մովսէս Բաղրամեանը, մեծահարուստ Գրիգոր Խոճաճանեանը եւ ուրիշներ: Շահամիր Շահամիրեանը կապեր հաստատած էր Արցախի մելիքներուն, Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսներուն, վրաց Չերակ Բ. եւ Գեորգի ԺԲ. արքաներուն հետ:

1772–ին Մատրասի մէջ հիմնուեցաւ հայկական տպարան, ուր ազատագրական գաղափարներ քարոզող շարք մը աշխատութիւններ տպագրուեցան: Մովսէս Բաղրամեանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը նախ համառօտ կերպով կը ներկայացնէր Չայաստանի պատմութիւնը, ապա յառաջ կը մղէր Չայաստանի ազատագրութեան ծրագիրը: Խմբակին միւս կարեւոր հրատարակութիւնը «Որոգայթ փառաց» գիրքն էր, որ ապագայ Չայաստանի սահմանադրութեան նախագիծն էր: Ան կը նախատեսէր, որ ազատագրուած հայկական պետութիւնը պէտք է խորհրդարանական հանրապետութիւն ըլլայ:

Նոյն ժամանակաշրջանին Չայաստանի ազատագրութեան ծրագիրներ կ'առաջադրէին ռուսահայ գործիչները (Մովսէս Սարաֆեան, Յովսէփ Արքեպիսկոպոս Արղուբեան, Յովհաննէս Լազարեան եւ ուրիշներ), որոնք ոգեւորուած էին յատկապէս կայսրուհի Եկատերինա Բ.ի՝ Չայաստանն ազատագրելու եւ հայոց քաղաւորութիւնը ռուսական հովանիին տակ վերականգնելու ծրագիրով, զոր, սակայն, չիրականացաւ:

Արեւելեան Չայաստանի նուաճումը Ռուսաստանի կողմէ: Արեւելեան Չայաստանի նուաճումը Ռուսաստանի կողմէ տեղի ունեցաւ 19–րդ դարու առաջին երեսնամեակին:

1801–ին Արեւելեան Վրաստանի կազմին հետ Ռուսաստանին անցան Ղազախը, Լոռի–Փամբակը եւ Շամշաղինը: Իսկ 1804–1813 եւ 1826–1828 թուականներու ռուս–պարսկական պատերազմներուն հետեւանքով՝ Արաքսէն հիւսիս ինկած հայկական բոլոր շրջանները Պարսկաստանէն անցան Ռուսաստանին: 1828–ին Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութեանց ու Օրտուպատի գաւառի տարածքներէն ձեւաւորուեցաւ Ռուսական Կայսրութեան Չայկական Մարզը, զոր գոյատեւեց ընդամենը 12 տարի (1828–1840):

1828–1829 թուականներու ռուս–թրքական պատերազմին հետեւանքով Ռուսաստանին անցան հայկական տարածքներէն միայն Ախալցխայի ու Ախալքալաքի շրջանները (թւպտ ռուսերը զրաւեր էին Արեւմտեան Չայաստանի զգալի մասը):

1826–1828 եւ 1828–1829 թուականներու պատերազմներէն ետք Պարսկահայքէն եւ Արեւմտեան Չայաստանէն Ռուսաստանի տիրապետութեան հայկական շրջաններ տեղափոխուեցան 120–125 հազար հայեր, ինչն զգալիօրէն փոխեց երկրամասին ժողովրդագրական պատկերը: Արեւելեան Չայաստանի մէջ ստեղծուեցաւ հայկական խիտ բնակչութեամբ շրջան մը, ուր յետագային վերականգնեցաւ հայոց պետականութիւնը:

1877–1878 թուականներու ռուս–թրքական պատերազմէն եւ Պեռլինի Վեհաժողովէն ետք Ռուսաստանին անցան Կարսը, Արտահանը եւ Պաթումը: Առաջին երկու քաղաքներէն ու յարակից շրջաններէն ձեւաւորուեցաւ Կարսի մարզը, որուն յետագային վերատիրեցին թուրքերը:

Չարդումներ եւ առաջադրանքներ

1. Պատմեցէ՛ք Իսրայէլ Օրիի գործունեութեան մասին:
2. Որո՞նք էին ազատագրական պայքարի առաջնորդներն Արցախի եւ Սիւնիքի մէջ 1722–1730 թուականներուն:
3. Յովսէփ էմինը Անգլիոյ եւ Ռուսաստանի մէջ ի՞նչ կարեւոր պաշտօնեաներու հետ քննարկած է Չայաստանի ազատագրութեան հարցը:
4. Ներկայացուցէ՛ք Ռուսաստանի կողմէ Արեւելեան Չայաստանի նուաճման ընթացքը:

1877–1878 թուականներու ռուս–թրքական պատերազմը:

Հայկական Հարցին միջազգայնացումը: 1875–1876 թուականներուն Պալքանեան թերակղզիին մէջ ծաւալուած ազատագրական շարժումներն առիթ դարձնելով՝ Ռուսաստանը Օսմանեան Կայսրութեան պատերազմ յայտարարեց 12 Ապրիլ 1877–ին:

Պատերազմը մէկ տարիէ ապակաս տեւեց, թուրքերը սլարտուեցան: 19 Փետրուար 1878–ին Սան Սթեֆանօ պաւլին մէջ (Կ. Պոլսոյ մօտ) ստորագրուեցաւ հաշտութեան պայմանագիրը, որով Կովկասեան ճակատին վրայ Ռուսաստանին պէտք է միանային Կարսի, Արտասիանի, Պաթուսի, Ալաշկերտի եւ Պայազետի շրջանները: Թրքական տիրապետութեան տակ մնացող հայոց կը վերաբերէին Սան Սթեֆանոյի դաշնագիրին 16–րդ, 21–րդ, 25–րդ եւ 27–րդ յօդուածները, որոնցմով կը նախատեսուէր Արեւմտեան Հայաստանի մէջ իրականացնել «բարենորոգութիւններ եւ ապահովել հայոց անվտանգութիւնը քիւրտերէն եւ յերթզներէն»:

Կը նախատեսուէր ռուսական զօրքերը Արեւմտեան Հայաստանէն դուրս բերել վեց ամսուայ մէջ, ի պայմանագիր որու ընթացքին թուրքերը պէտք է բարենորոգումներն իրականացնէին:

Սան Սթեֆանոյով ուժեղացան Ռուսաստանի դիրքերը Մերձաւոր Արեւելքի մէջ, ինչը արեւմտեան մեծ տիրութեանց շահերէն չէր բխեր, ուստի վերջիններս (յատկապէս Մեծն Բրիտանիան եւ Աւստրո–Յունգարիան) պատերազմի սպառնալիքով պահանջեցին միջազգային վեհաժողով մը հրահրել եւ վերանայիլ կնքուած պայմանագիրը: Վեհաժողովը գումարուեցաւ 1 Յունիսէն 1 Յուլիս 1878–ին՝ Պեռլինի մէջ:

Տեղեկանալով սպասուող վեհաժողովին մասին, արեւմտահայերն ստեղծեցին պատուիրակութիւն մը Խրիճեան Հայրիկի (Մկրտիչ Արքեպս. Խրիճեան) գլխաւորութեամբ, որ եղաւ Հոսմի, Փարիզի, Լոնսոնի եւ Փեթերպուրկի մէջ, սակայն վեհաժողովին մասնակցելու իրաւունք չստացաւ:

Պեռլինի մէջ, Սան Սթեֆանոյի դաշնագիրին՝ Հայկական Հարցին վերաբերող 16–րդ յօդուածին փոխարէն ընդունուեցաւ 81–րդ յօդուածը, ուր «Հայաստան» երկրանունը փոխարինուած էր «հայաբնակ մարզեր» արտայայտութեամբ: Ռուսաստանը թուրքերուն պիտի վերադարձնէր Ալաշկերտի եւ Պայազետի գաւառները (60–րդ յօդուած): Վեհաժողովը նաեւ որոշեց բարենորոգումներու իրականացումը պայմանաւորել ոչ թէ ռուսական զօրքերու ներկայութեամբ, այլ՝ մեծ տիրութեանց երաշխաւորութեամբ: Փաստօրէն, Հայկական Հարցին լուծումը յանձնուեցաւ իրաւասութեանը մեծ տիրութեանց, որոնց միջեւ շահերու մեծ հակասութիւններ առկայ էին: Ասկէ սօսուելով՝ տուրքանական կառավարութիւնը յետագային կրցաւ ոչ միայն խուսափիլ խնդրին լուծումէն, այլեւ՝ հայութեան պարբերական ջարդեր իրականացնել:

Պեռլինի Վեհաժողովին յուսախաբ Խրիճեան Հայրիկը Կ. Պոլիս վերադարձնելու տուած քարոզին մէջ հայութեան խորհուրդ տուաւ ունենալու «Երկաթ Շերմի», այսինքն՝ հայութեան կոչ ըրաւ դիմել զինուած պայքարի՝ ասպաւինելով միայն սեփական ոյժերուն (քաջ զէյթունցիի եւ քաջ սասունցիի օրինակով):

Հայկական ազատագրական խմբակներու եւ քաղաքական կուսակցութեանց յառաջացումը: Ազատագրական այսպարզ կազմակերպուած հունի մէջ ոնելու համար՝ 19–րդ դարու վերջին տասնամեակներուն զաղտնի խմբակներ, կազմակերպութիւններ ու կուսակցութիւններ կը ստեղծուին հայկական իրականութեան մէջ:

Յայտնի են «Բարենպաստակ ընկերութիւնը» (1869, Ալեքսանդրապոլ, այսօր՝ Կիւմրի), «Միութիւն Ի Փրկութիւն» (1872, Կան), «Հայրենիքի Սիրոյ Գրասենեակ» (1874, Ղարաքիլիսա, այսօր՝ Վանաձոր), «Սեւ Խաչ» (1878, Կան), «Պաշտպան Հայրենեաց» (1878, Կարին), «Հայրենասէրներու Միութիւն» (1881, Մոսկուա) եւ այլ ազատագրական խմբակներն ու կազմակերպութիւնները:



Խորհման Չայրիկ

Դաշնակցութիւն կուսակցութիւնը: Դաշնակցութեան պաշտօնաթերթը «Դրօշակ»ն էր:

Երեք կուսակցութիւններն ալ ստեղծման ասօջին իսկ օրերէն ներգրաւուեցան Արեւմտեան Չայստանի ազատագրութեան պայքարին՝ քարոզչական, կազմակերպչական, արեւմտահայութիւնը զինելուն նպատակաւորուած գործունէութիւն ծաւալելով:

Ֆետայական (հայդուկային) շարժումը: Օսմանեան բռնատիրութեան դէմ ֆետայական շարժումն սկզբնաւորուած է 1880-ական թուականներուն եւ գործած է մինչև 1908-ի երիտթրքական յեղաշրջումը: Շարժման պատմութիւնը կարելի է բաժնել երկու փուլի: Առաջինը տարեալին փուլն էր, երբ ինքնաբերաբար յառաջացած եւ անքատաբար գործող խումբերուն պայքարը կազմակերպուած բնոյթ չուներ: Սա պարզ ինքնապաշտպանական շարժում էր՝ ասանց քաղաքական ծրագիրի: Այդ փուլի նշանաւոր խմբաւեւներն են Արաբօն, Տերսիմի Քեռին, Մխօ Շախէնը (Սասուն-Մուշ), Յակոբ Սարկաւազը (Խնուս-Կարին), Սինաս Օղլին (Երզնկա-Մերաստիա):

Երկրորդ փուլը կը կապուի հայ քաղաքական կուսակցութեանց յառաջացման հետ, որոնք (հնչակեանները եւ, յատկապէս, դաշնակցականները) ստանձնեցին պայքարի քաղաքական ղեկավարութիւնը: Այս փուլի նշանաւոր ֆետայապետներն էին Սերոբ Աղբիւրը, Չրայր Դոխսքը, Գեորգ Զաւուշը, Սերաստացի Մուրատը, Անդրանիկ Օզանեանը եւ ուրիշներ:

Ֆետայական ջոկատները մեծ դերակատարում ունեցան արեւմտահայութեան ինքնապաշտպանութեան մէջ, յատկապէս 1894-1896 թուականներու ջարդերուն ժամանակ:

1908-ի երիտթրքական յեղաշրջումէն ետք ֆետայական ջոկատներու գործունէութեան դադար տրուեցաւ, քանի որ նոր իշխանութիւնները խոստացան ժողովրդավարական վերափոխումներ իրականացնել եւ բարեփոխութիւններ կատարել: Վստահելով երիտթրքերուն՝ ֆետայիները խաղաղ, ստեղծագործ աշխատանքի անցան, սակայն խաբուած ըլլալով՝ կրկին զենք վերցուցին 1914 թուականին, ներգրաւուելով հայկական կամաւորական ջոկատներում մէջ:

Ֆետայական շարժման մեծագոյն ձեռքբերումներն եղան բազմահազար հայոց փրկութիւնը թրքական եսթաղանէն եւ հայութեան ազատաբաղձ ոգին զարթօնքը:

Ազատագրական շարժումները եւ Չայկական Չարցը 1894-1896 թուականներուն: 1878-էն ետք Չայկական Չարցը տարիներ շարունակ անուշադրութեան մատնուած էր: Չայկական քաղաքական կուսակցութիւնները որոշեցին կատարել ձեռնարկումներ, որոնցմով կրկին սեւեռէին մեծ տէրութեանց ուշադրութիւնը Չայկական Չարցին վրայ, որոնք ալ հարկադրէին սուլթանը՝ իրականացնելու խոստացուած բարենորոգումները:

Այդպիսի ձեռնարկներէն էին Չնչակեան Կուսակցութեան կազմակերպած խաղաղ զոյգերը Կոստանդնուպոլսոյ մէջ (1890 եւ 1895 թուականներուն), Սասունի 1894-ի եւ Չէլքունի 1895-1896 թուականներու ապստամբութիւնները, Սարգիս Կուկունեանի խումբին արշաւանքը դեպի Արեւմտեան Չայստան (1890): Դաշնակցութեան իրագործած Գանք Օրոմանի գրաւումը Կ. Պոլսոյ մէջ (1896) եւ այլն:

Մեծ տէրութիւններն ի վերջոյ միջամտեցին եւ Կ. Պոլսոյ իրենց դեսպաններուն միջոցով 11 Մայիս 1895-ին սուլթան Ապտուլ Չամիտ Բ.ին ներկայացուցին բարենորոգումներու



Դաշնակցության եւ Դնչակեան Կուսակցության զինանշանները

ծրագիր, ըստ որում՝ բարենորոգումներ պետք է իրականացուէին Օսմանեան Կայսրութեան 6 վիլայեթներու մէջ, որոնք Արեւմտեան Հայաստանի մեծագոյն մասը կ'ընդգրկէին:

Մայիսեան բարենորոգումներու ծրագիրը սուլթանն ստորագրեց 1895-ի Հոկտեմբերին: Սակայն խոստացուած բարենորոգումներուն փոխարէն 1895-1896 թուականներուն զործադրուեցաւ շուրջ 300 հազար հայոց կոտորածը, գրեթէ

նոյնքան հայեր ալ բռնազաղթի ենթարկուեցան: Հետեւանքն եղաւ Օսմանեան Կայսրութեան մէջ բնակող հայութեան թիւին նուազումը 3 միլիոն հոգիէն 2,5 միլիոն հոգիի:

Հայութեան առանձին փոքր հաստուածներ կրցան կոտորածներէն փրկուիլ կազմակերպուած ինքնապաշտպանական մարտերու (Վանի, Մալաթիոյ, Ուրֆայի մէջ եւ այլուր) եւ ֆեռայական ջոկատներու շնորհիւ:

Արեւելեան Հայաստանը 20-րդ դարու սկիզբին: Հայութեան՝ Ռուսաստանի հետ կապուած մեծ յոյսերն այդպէս ալ չարդարացան, քանի որ ռուսական իշխանութիւնները հայոց նկատմամբ կը վարէին զաղութային նոյն քաղաքականութիւնը, ինչ նուաճուած միւս ժողովուրդներուն հանդէպ:

Հայերը ծուլելու, զանոնք սեփական ազգային ակունքներէն հեռացնելուն էին միտուած հայկական դպրոցները փակելու ցարական իշխանութեանց փորձերը: Անոնցմտ աւելի յարտնի է Նիքոլայ Բ. ցարի 12 Յունիս 1903-ի հրամանագիրը Հայ եկեղեցւոյ կայուածներն ու գոյքը բռնագրաւելու մասին: Սա կը նշանակէր հայկական դպրոցներու փակում, քանի որ դպրոցները եկեղեցւոյ միջոցներով կը պահուէին:

Նման ապօրինի որոշման դէմ ընդվզեցաւ ողջ հայ ժողովուրդը՝ Սկրսիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին գլխաւորութեամբ: Տեղի ունեցան խոշոր ցոյցեր ու բողոքի զորօդութիւններ, որոնք յաճախ ոստիկանութեան ու զինուորներու հետ զինուած ընդհարումներու կը վերածուէին: Հայ կուսակցական մարտականներ շուտ պետական պաշտօնեաներ ահաբեկեցին:

Հայութեան բուռն դիմադրութիւնն ստիպեց ցարական իշխանութիւնները 1905-ի Օգոստոսին յատուկ հրովարտակով չեղեալ յայտարարելու 12 Յունիս 1903-ի հրամանագիրը: Հայ եկեղեցւոյ վերադարձուեցաւ անոր գոյքը, հայկական դպրոցներուն փակումը կանխուեցաւ:

Յարական կառավարութեան հակահայկական միւս ձեռնարկումն եղաւ 1905-ի Փետ-



Սեռոբ Արագիւր



Հրայր Աճախ



Քեոռ Չախուշ

րուարեն մինչև 1906-ի Անպտեմբերը տեւած հայ-թաթարական ընդհարումներուն հրահրումը: Հայերը մարդկային ու նիւթական զգալի կորուստներ կրեցին: Հայութեան ինքնապաշտպանութիւնն ստանձնեց Պաշնակցութիւնը, որու անդամները նաեւ մահապատիժի ենթարկեցին այդ ընդհարումներու գլխաւոր կազմակերպիչ ցարական պաշտօնեաները:

Արեւմտեան Հայաստանը 20-րդ դարու սկիզբին: 1894-1896 թուականներու ջարդերը չկրցան արեւմտահայութեան ոգին կոտրել: 1899-ին թրքական կառավարութիւնը կազմակերպեց ֆետայական շարժման անաջնորդ Սերոր Աղբիւրի դաւադրական սպանութիւնը, սակայն անոր մահուան վրէժը լուծեցին Քեորզ Չաւուշն ու Անդրանիկ Օզանեանը՝ գլխատելով ֆետայապետն սպաննած քիւրտ հրոսակապետ Պշարէ խալիլը եւ իրենց մարտիկներով յաջողութեամբ աւարտելով Առաքելոց վանքի կռիւը 1901-ի Նոյեմբերին:

Հայկական ազատագրական շարժման գլխաւոր օճախներէն Սասունը ոչնչացնելու նպատակով թրքական կառավարութիւնը 1902-1903 թուականներուն մեծ ոյժեր կեդրոնացուց Սասունի շուրջ: Հայերն ապստամբեցան: Հակառակ հայոց հերոսական պայքարին, թրքական կառավարութիւնը յաջողեցաւ Սասունի 1904-ի ապստամբութիւնը արեւան մէջ ճնշել:

Երիտթրքական «Միութիւն եւ Յասադդիմութիւն» կուսակցութիւնը զինուած յեղաշրջման միջոցով 1908-ի Յուլիսին եկաւ իշխանութեան՝ յայտարարելով, թէ ժողովրդավարական կարգերով պետութիւն մը պիտի ստեղծէ: Հայերը ոգնորութեամբ ընդունեցին յեղաշրջման լուրը՝ մեծ յոյսեր կապելով անոր հետ: Սակայն այս պարագային ալ մեծ յուսահատութիւն կը սպասէր զանոնք:

1909-ի Ապրիլին Կիլիկիոյ եւ Հալեպի վիլայեթի իսլամադէմաթ վայրերուն մէջ տեղի ունեցան աւելի քան 30 հազար հայոց կոտորածներ, որոնց մեղքը երիտթուրքերը բարդեցին յեղաշրջմամբ իշխանութեան վերստիւրանալ փորձած սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի վրայ:

Անկէ ետք ալ արեւմտահայոց վրձակը չլաւցաւ: Հայկական Հարցի նոր քննարկումներ տեղի ունեցան 1912-1914-ին՝ կապուած 1912-1913 թուականներու պայքանեան պատերազմներուն թուրքերու կրած պարտութեան հետ: Հարցի քննարկումն ընթացաւ գլխաւորապէս Օսմանեան Կայսրութեան աւագ դաշնակից Քերմանիոյ եւ Ռուսաստանի միջեւ, որու հետեւեամբով ստեղծուեցաւ եւ Թուրքիոյ առաջարկուեցաւ բարենորոգումներու նոր ծրագիր մը: 26 Յունուար 1914-ին Ռուսաստանի եւ Օսմանեան Կայսրութեանց միջեւ ստորագրուեցաւ համաձայնագիր մը, որով Արեւմտեան Հայաստանի 7 վիլայեթները կը բաժնուէին երկու մեծ նահանգներու. մէկուն կազմին մէջ էին Վանի, Բաղէշի (Պիթլիսի), Խարբերդի (Մամուրեթ-իւ-Ազիզի) եւ Տիգրանակերտի (Տիարպէթի) միւսի կազմին մէջ Կարիսի (Էրզրումի), Սեւաստիոյ (Սվազի) եւ Տրապիզոնի վիլայեթները: Այս մասերը պիտի ղեկավարէին եւրոպացի երկու ընդհանուր նահանգապետները, որոնց թեկնածութիւնը պիտի առաջարկէին մեծ տիրութիւնները, իսկ սուլթանը զանոնք պիտի հաստատէր: Հայերը միւս բոլոր քաղաքացիներուն մման բանակ պիտի զօրակոչուէին, իսկ քրտական Համիտի գունդերը պահեստագօրի պիտի վերածուէին: Ազգային կրթութիւնը տուեալ ազգի վճարած հարկերուն հաշուին պիտի ֆինանսաւորուէր եւ այլն:

1914-ի գարնան ընդհանուր նահանգապետներ նշանակուեցան հոլանտացի Լ. Վեստենկը (նստավայրը՝ Կարիս) եւ նորվեյկացի Ն. Յոֆը (նստավայրը՝ Վան): Նահանգապետները պիտի անցնէին իրենց պարտականութեանց կատարման, երբ սկսաւ Առաջին Համաշխարհային Պատերազմը: Երիտթուրքերը, ժգտուելով պատերազմի ընձեռնած հնարաւորութենէն, որոշեցին իրականացնել դեռ 1911-ին պետականօրէն նախատեսուած հայոց բնաջնջման ծրագիրը:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ներկայացուցէք Վան Սթեֆանոյի պայմանագիրին եւ Պեռլինի Վեհաժողովին՝ հայոց վերաբերող կէտերը: Համեմատեցէք զանոնք:
2. Ի՞նչ ազատագրական խմբակներ ու կուսակցութիւններ ստեղծուեցան 1860-1890-ական թուականներուն:
3. Ի՞նչ է ֆետայական շարժումը: Ի՞նչ զիտք յայտնի ֆետայիներու մասին:
4. Պատմեցէք, թէ ինչպիսի ընթացք ունեցաւ Հայկական Հարցին քննարկումը 1912-1914 թուականներուն:

Օսմանեան Կայսրութիւնը 19-րդ դարու սկիզբէն բռնած էր թուլացման եւ անկման ուղին: Գիտակցելով այդ, որոշ թուրք գործիչներ իրենց տէրութիւնը փլուզումէն փրկելու համար նոր գաղափարախօսութիւններ յառաջ քաշեցին: Անոնցմէ նախ Կարենորութիւն տրուեցաւ համաօսմանականութեան (փանօսմանիզմին), ըստ որուն՝ կայսրութեան բոլոր քաղաքացիներուն պէտք է իրաւահաւասարութիւն տրուէր, բոլորը պէտք է նկատուէին մէկ՝ օսմանցի ժողովուրդ: Փաստօրէն, ասիկա կայսրութեան բոլոր ժողովուրդները խաղաղ միջոցով ծուլելու, քրքացնելու ծրագիր էր, զոր անիրակաճանալի ըլլալու պատճառով՝ աստիճանաբար դուրս մղուեցաւ ատպարեզէն:

Սուլթան Ապտուլ Գամիտ Բ-ի 33-ամեայ իշխանութեան ատեն (1876–1909) պաշտօնական գաղափարախօսութիւն դարձաւ համախաւսականութիւնը (փանիսլամիզմը), որ կը քարոզէր իսլամադաւան աշխարհի միաւորումը մէկ պետութեան մէջ, որուն կորիզը Օսմանեան Կայսրութիւնը պէտք է ըլլար: Իրականութեան մէջ, ասիկա նպատակ ունէր իսլամական աշխարհի ներդոյժն օգտագործել ի շահ Օսմանեան Պետութեան:

Գալով իշխանութեան՝ երիտօրրքերը պաշտօնական գաղափարախօսութիւն դարձուցին համաթրքականութիւնը (փանթուրքիզմը)՝ բոլոր թիւրքախօս ժողովուրդները մէկ պետութեան մէջ միաւորելու ծրագիրը, զոր յառաջ մղուած էր տակաւին 19-րդ դարուն: Ազգայնամոլական եւ ջեղամոլական ուսմունք ըլլալով, համաթրքականութիւնն իր իրականացման ճամբուն վրայ ուրիշ ժողովուրդներու ոչնչացումը կը նախատեսէր: Անոր գաղափարախօսները կը ծրագրուէին զայն իրականացնել երեք փուլով: Առաջինը պէտք է դառնար Օսմանեան Կայսրութեան թրքացումը, այսինքն՝ կայսրութեան սահմաններուն մէջ ապրող բոլոր ժողովուրդներուն բռնի թրքացումը կամ ոչնչացումը: Երկրորդ փուլին պէտք է միաւորուէին Օսմանեան Կայսրութեան, Կովկասի, Պարսկաստանի եւ Միջին Ասիոյ թիւրքական ծագմամբ ժողովուրդները մէկ պետութեան (Օղուզիստանի) մէջ: Իսկ երրորդին մէջ պէտք է ստեղծուէր Մեծ Թուրանը՝ բոլոր թիւրքալեզու ժողովուրդներու միասնական պետութիւնը:

Համաթրքականութեան իրականացման առաջին՝ կայսրութեան ժողովուրդներու թրքացման կամ ոչնչացման փուլին զոհը դարձաւ արեւմտահայութիւնը:

Յայոց ցեղասպանութեան ծրագրումը: Դարեր շարունակ Օսմանեան Թուրքիոյ վարած հայահալած քաղաքականութիւնը 19-րդ դարու վերջին եւ 20-րդ դարու սկիզբին բացայայտ կոտորածներու եւ հայրենի տարածքներէն բռնի տեղահանութեանց վերածուեցաւ: Այդ ամէնը կ'ըլլային պետութեան նախապէս ծրագրմամբ եւ կազմակերպմամբ, ինչը միջազգային իրաւունքի տեսանկիւնէն կ'որակուի **ցեղասպանութիւն**:

9 Դեկտեմբեր 1948-ին Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը կողմ քուտարկեց իր քննութեան ներկայացուած «Ցեղասպանութեան յանցագործութեան եւ անոր համար պատիժի մասին» պայմանագիրին, որուն մէջ ցեղասպանութիւնը կը յայտարարուէր մարդկութեան դէմ յանցագործութիւն, զոր վաղեմութեան ժամկէտ չունի:



Մեծ Եղեռնի նահատակ իւր գրողներ Գրիգոր Զօհրապ, Դանիէլ Վարուժան, Միխայէլ Աւարուժան, Ռուբէն Սեւակ

ՀԱՅՈՑ ՄԵՏ ԵՂԵՌՆԸ



1878-ին Հայկական Հարցի միջազգայնացումն էսք թուրքերը որոշեցին արագացնել հայաթափման քաղաքականութիւնը: Մշակուեցաւ հայերը ֆիզիքապէս վերացնելու միջոցով Հայկական Հարցի «լուծման» թրքական քաղաքականութիւնը, որու իրագործմանն էին միտուած 1897-ին ստեղծուող քիւրտ հրոսակները կազմուած, թրքական պետութեան ֆինանսատրամ քեծելագունդերուն, որոնք զիրենք ստեղծողին՝ սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի անուամբ «Համիտիէ» կոչուեցան:

Ինչպէս նշած ենք, 1894-1896 թուականներուն Արեւմտեան Հայաստանի մէջ կոտորածներու ենթարկուեցաւ մօտ 300 հազար հայ, գրեթէ նոյնքան ալ բռնազաղթի ենթարկուեցաւ: 1909-ի Վայրիկին Կիլիկիոյ եւ Հալէպի ճահանգին մէջ տնդի ունեցան մօտ 30 հազար հայոց քարղէր երկու փուկոյ:

Երրորթութեը թուր ազգերու իրաւահասարութիւնը հռչակեցին, սակայն հայոց բնաջնջման կը մտապատրաստուէին գաղտնօրէն: Այդպիսի ծրագիր ձշակուեցաւ 1911-ին Նալոնիկի մէջ գումարուած երիտթրքական գաղտնի ժողովին: Առաջին Համաշխարհային Պատերազմը թուրքերուն ենարատրութիւն տուաւ իրականացնելու հայութեան բնաջնջման ծրագիրը:

Հայոց ցեղասպանութեան իրականացումը: 1914-ի աշնան, համընդհանուր զօրակոչով բանակ տարուեցան շուրջ 300.000 հայ նրիտասարդներ՝ քաղաքացիական հնազանդութիւն ցուցաբերելով: 1915-ի տարեմուտին սկսան հայ զինուորներու զինաթափումն ու ֆիզիքապէս վերացումը:

Արեւմտահայ մտատրականներու, հոգեւոր եւ հասարակական-քաղաքական գործիչներու ձերբակալութիւնը, ապա աքսորն ու ոչնչացումն սկսան 24 Ապրիլ 1915-ին՝ Կոստանդնուպոլսոյ մէջ: Ընդհանուր առմամբ ձերբակալուեցան 800-է աւելի հայ մտատրականներ ու երեւելի դէմքեր, որոնք խոշտանգուեցան ու սպանուեցան աքսորի ճամբաներուն վրայ: Անոնցմէ հատուկենտ մարդիկ փրկուեցան:

Այնուհետեւ սկսաւ պատմութեան մէջ անմախաղէպ դաժանութիւններով ուղեկցուած զանգուածային տեղահանութեանց եւ կոտորածներու փուլը: Բանի մը անսուայ ընթացքին գրեթէ ամբողջութեամբ տեղահանուեցաւ եւ ոչնչացուեցաւ Արեւմտեան Հայաստանի ու Փոքր Ասիոյ հայ բնակչութիւնը: Մօտ 800 հազար հայ մահացաւ գաղթի ճամբաներուն վրայ, շատերը բնաջնջուեցան Միջազգեթի անապատներուն մէջ: Ատոյց մահէն փրկուեցու համար, շատեր ստիպուած էին իրենց կրօնական եւ ազգային պատկանելութենէն իրաժարիլ, որոշ տուեալներով՝ բռնութեամբ իսլամացուեցան աւելի քան 200 հազար հայեր (իմմանականին մէջ՝ կանայք եւ մանուկներ):

Արարական անապատներուն մէջ հայութեան առանձին բեկորներ փրկուեցան՝ շնորհիւ արաբներու բարեացակամութեան:

Միայն 1915–1916–ին ոչնչացուեցաւ աւելի քան մէկուկէս միլիոն հայ, ինչը դարձաւ հայոց ցեղասպանութեան գագաթնակէտը եւ պատմութեան մէջ յայտնի է որպէս «Լե՛ծ եղե՛ծ»:

Բացի մարդկային անդառնալի կորուստներէն, հայութիւնը նիւթական հսկայական վնասներ կրեց: Կողոպտուեցան ու աւերուեցան հազարաւոր պատմա-մշակութային արժէքներ՝ հայկական եկեղեցիներ ու վանքեր, դպրոցներ եւ ուրիշ շինութիւններ: Բռնագրաւուեցաւ արեւմտահայոց անշարժ եւ շարժական գոյքը, զոր ըստ 1919–ին Փարիզի Վեհաժողովին ներկայացուած փաստաթուղթերուն՝ 15 միլիարտ ֆրանք կը կազմէր: Իրացուեցան հայոց դրամատնային աւանդները:

Հայաբախուած շատ շրջաններ անմիջապէս բնակեցուեցան իսլամներով:

Թուրքիոյ ցեղասպանական քաղաքականութիւնը շարունակուեցաւ նաեւ յետագայ տարիներուն: 1918–ի առաջին ամիսներու արշաւանքի ժամանակ Արեւելեան Հայաստանի մէջ թուրքի եաթաղանին զոհ դարձաւ շուրջ 500 հազար հայ: Եւրոյն քաղաքականութիւնը քեմալականները շարունակեցին 1920–1923 թուականներուն, նախ Հայաստանի Հանրապետութեան դէմ 1920–ի աշնանային արշաւանքի ընթացքին, ապա Կիլիկիոյ, Իզմիրի եւ Պոնտոսի մէջ, ուր կոտորածներու ենթարկուեցան յոյներն ու հայերը:

Ընդհանուր առմամբ, 1894–1923 թուականներուն Թուրքիոյ իրագործած ցեղասպանութեան զոհ զննաց 2,5–3 միլիոն հայ: Հարիւր հազարաւոր հայեր բռնազաղթի ենթարկուեցան եւ աշխարհով մէկ սփռուեցան: Հայութիւնը զրկուեցաւ իր հայրենիքի մեծագոյն մասէն, ուր հազարամեակներ շարունակ քաղաքակրթական քարձր արժէքներ կերտած էր:

Հայոց Ցեղասպանութիւնը համաշխարհային պատմութեան մէջ զորո՞ւած առաջին ցեղասպանութիւնն է, մարդկութեան դէմ երբեւէ իրականացուած մեծագոյն յանցագործութիւններէն մէկը, զոր պէտք է ճանչցուի եւ իր արժանի հատուցումն ստանայ՝ վաղեմութեան ժամկետէն անկախ:

Ցեղասպանութեան կազմակերպիչներու դատաստանը: 1919–ին բրբական ռազմական դատարանները մահուան դատապարտեցին երիտթրքական կուսակցութեան եւ կառավարութեան կարգ մը ղեկավարներ՝ զանոնք մեղաւոր ճանչնալով երկու ծանրագոյն յանցանքի համար՝ **Թուրքիան պատերազմի ներքաշելու եւ Օսմանեան կայսրութեան հայազգի քաղաքացիները բնաջնջելու** համար: Թրքական պետութիւնը, սակայն, չգործադրեց իր դատարաններուն վճիռները՝ բացի երկրորդական երկու պատասխանատուներու պարագաներէն:

Թուրք դահճապետներու մահապատիժներն ի կատար անցին հայ վրիժառուները (Սուդուն Թեհլիբեան, Միսաք Թոռլաբեան, Արշալիք Շիրակեան, Արամ Երկանեան, Ստեփան Ծաղիկեան եւ ուրիշներ), որոնք 1920–1922 թուականներուն մահապատիժի ենթարկեցին ցեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչներէն քանի մը ճիւղեր (Թալէաթ, Էմվեր, Յեմալ, եւ Սաիտ Հալիմ փաշաներ, Պեհաւտտին Շաքիր, Յեմալ Ազմի եւ այլք): Շահան Նարալիի գլխաւորած ու «Նեմեսիս» անունն ստացած այս գործողութեան ծիրին մէջ, մահուամբ պատժուեցան նաեւ Ատրպէյճանի ու Արցախի հայութեան գլխաւոր մարդակերներէն Ֆաթալի Խան-Խոյսեփն եւ Պեհպուք Խան ճիւղանշիրը: Սակայն ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատու՝ թրքական պետութիւնը, մինչեւ այսօր անպատիժ կը մնայ ու կը շարունակէ ցեղասպան քաղաքականութիւնը՝ հայկական մշակութային արժէքներու հետադական ոչնչացումով:

Հարցումներ եւ աւարտողականներ

1. Ի՞նչ գիտեք համաօսմանականութեան, համախոսմանականութեան եւ համաթրքականութեան գաղափարախօսութեանց մասին: Բացատրեցէ՛ք անոնց տարբերութիւնները:
2. Ներկայացուցէ՛ք 9 Պեկտեմբեր 1948–ին Ս. Ա. Ա. Կ.ի ընդունած «Ցեղասպանութեան յանցագործութեան եւ անոր համար պատիժի մասին» պայմանագիրը:
3. Թուրքերն ի՞նչ փուլերով իրականացուցին Հայոց Ցեղասպանութիւնը:
4. Որքա՞ն կը կազմէն ցեղասպանութեան հետեւանքով հայութեան կրած մարդկային եւ նիւթական վնասները:
5. Պատմեցէ՛ք ցեղասպանութեան կազմակերպիչներու դատաստանին մասին:

Առաջին Աշխարհամարտի Կովկասեան ճակատը: 1 Օգոստոս

1914-ին սկսաւ Առաջին Համաշխարհային Պատերազմը: Երկու ռազմա-քաղաքական խոշոր խմբաւորումներ՝ Դաշինքը (Անթանք՝ Ռուսաստան, Սեօն Բրիտանիա եւ Ֆրանսա, 1917-էն նաեւ Ա. Մ. Ն.) ու Եռեակ (1915-էն՝ Բաղեակ) Միութիւնը (Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Թուրքիա եւ Պուլկարիա) խնդիր դրած էին աշխարհի վերաբաժանումը: Հայաստանի հետ անմիջապէս կ'առնչուէին Ռուսաստանի եւ Օսմանեան Կայսրութեանց շահերը:

Կովկասեան ճակատին գիծը՝ Սեւ Օսլէն մինչեւ Ռւրմիոյ լիճը, 720 քմ. նրկարութեամբ, կը կիսէր Հայաստանը: Այս ռազմաճակատին վրայ Թուրքիան կեդրոնացուցեր էր 300.000, իսկ Ռուսաստանը՝ 200.000 իրզինոց զօրք: Հոս ռազմական գործողութիւններն սկսան 1914-ի Հոկտեմբերին:

Հայերը կրկին մեծ յոյսեր կը կապէին Ռուսաստանի եւ անոր դաշնակիցներուն հետ: Ռուսական բանակ զօրակոչուեր էին շուրջ 200.000, իսկ Դաշինքի միւս երկիրներուն բանակները՝ շուրջ 50.000 հայեր:

Պատերազմի մեկնարկէն քանի մը ամիս ետք տեղի ունեցաւ Կովկասեան ճակատի առաջին մեծ գործողութիւնը, 1914-ի Դեկտեմբերին եւ 1915-ի Յունուարին Սարիղամիշի շրջանին մէջ մղուեցան թե՛ մարտեր, որոնք վերջացան թուրքերու խայտառակ պարտութեամբ: Օսմանեան 90 հազարոնոց բանակը տուաւ 78 հազար, իսկ ռուսական 60 հազարոնոց բանակը՝ 20 հազար սպանեալ:

Ռուսական բանակը զարգացուց յաջողութիւնը յառաջիկայ ամիսներուն՝ թուրքերը դուրս մղելով նախ Պաղկաստանի տարածքէն, ապա 1915-ի գարնան՝ Վանէն, Շատախէն, Արճէշէն, Պաշքայէն, Սանազկերտէն եւ ուրիշ վայրեր: Ամառը թուրքերը յաջողեցան կասեցնել յարձակումը եւ հակայարձակման անցնիլ: Սակայն, համալրուած ռուսական բանակը 1916-ի առաջին օրերուն անցաւ մեծ յարձակման եւ Յունուարին գրաւեց Արեւմտեան Հայաստանի գլխաւոր կեդրոն Էրզրումը (Կարինը), իսկ Ապրիլին Տրապիզոնը:

Սակայն, Արեւմտեան ճակատին վրայ ռուսական բանակը պարտութիւններ կը կրէր, ուստի զգալի քանակութեամբ զօրքեր հոն տեղափոխուեցան: Թուրքերը քաւական ուժասպառ դարձած էին, ուստի 1917-ի Մայիսէն Կովկասեան ռազմաճակատին վրայ յարաբերական դադար հաստատուեցաւ: 1917-ի Հոկտեմբերին կատարուած պոլշեփկեան յեղափոխութիւնը նոր իրադրութիւն ստեղծեց: 5 Դեկտեմբեր 1917-ին Երզնկայի մէջ գինադադար ստորագրուեցաւ ռուսական եւ թրքական հրամանատարութեանց միջեւ:

Հայկական կամաւորական շարժումը: Պատերազմի անմիջապէս սկիզբին ստեղծուեցան հայոց կամաւորական ջոկատներ, որոնց կազմակերպման աշխատանքներն ստանձնեց Թիֆլիսի Հայկական Ազգային Բիւրօն: Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան համար կամաւորներ ժամանեցին արտասահմանէն, նոյնիսկ հեռաւոր Ա. Մ. Ն.էն:

Նախ կազմակերպուեցաւ կամաւորական չորս ջոկատ, որոնցմէ առաջինին հրամանատարն էր Անդրանիկ Օզանեանը, երկրորդինը՝ Դրաստամատ Կանայեանը (Դրօ), երրորդինը՝ Համազասպ Արուանձտեանը, չորրորդինը՝ Քեռին (Արշակ Գաւաթեան): Յետագային կազմակերպուեցաւ եւս երեք ջոկատ. հինգերորդ ջոկատին հրամանատարն էր Վարդանը (Սարգիս Մեհրապեան), վեցերորդինը՝ Արշակ Ջանփոլատեանը, ապա Գրիգոր Աւշարեանը, անոր գոհեւելէն յետոյ՝ Հայկ Բժշկեանը (յետագային՝ խորհրդային յայտնի զօրահրամանատար Քայը): Եօթերորդ ջոկատի հրամանատարն էր Յովսէփ Արղուբեանը:

Հայ կամաւորներու ջոկատներէն անենամեծը Անդրանիկ Օզանեանինն էր: Ընդհանուր առմամբ՝ այս ջոկատներուն մէջ շուրջ 10.000 իրզին կը կռուէր:





Անդրանիկ Օզանեանն իր զինակիցներով

Համազասպ Սրուանձտեանցը (կանգնած), Բեռին (Արշակ Գալաֆեան) եւ Վարդանը (Սարգիս Մեհրապեան)

1915-ի Ապրիլին, Ազգային Բիւրոյին որոշմամբ, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ ջրկատները կը միացուին 5-րդին, զոր ստացաւ «Արարատեան» անուանումը (իինգերորդ ջրկատի հրամանատար Վարդանի գլխաւորութեամբ):

Ռուսական բանակի կազմին մէջ հայ կամաւորները մասնակցեցան Արեւմտեան Հայաստանի մեծ մասի ազատագրման: Սակայն ցարական իշխանութիւնները, կանխելու համար հայկական ջրկատներու՝ ազգային բանակի վերածելու հեռանկարը, 1916-ի ամբար որոշեցին զանոնք կազմալուծել: Այդ ջրկատներու մարտիկներն կազմուեցաւ հինգ հրաձգային գումարտակ, որոնք ռուսական զօրքի կազմին մէջ մտցուեցան:

Հայոց ինքնապաշտպանական մարտերը 1915 թուականին: Արեւմտահայութիւնը պատերազմի սկիզբէն քաղաքացիական հնազանդութիւն ցուցաբերեց. օսմանեան բանակ զօրակոչուեցան 18-45 տարեկան հայ տղամարդիկը: Թուրքերը ձեռնամուխ եղան տարիներ առաջ ծրագրած ցեղասպանութեան իրականացման՝ այդ նպատակով առաջնահերթ ոչնչացնելով բանակ զօրակոչուած հայ տղամարդիկը: Այս նկնզ մօտեցման հետեւանքով, թուրքերը հիմնականին մէջ դիմադրութեան չհանդիպեցան, եւ միայն բանի մը վայրերու մէջ է, որ հայերը կրցան ինքնապաշտպանական մարտեր կազմակերպել:

Վանի նահանգի շարք մը բնակավայրերու մէջ հայոց նկատմամբ բռնարարքները 1915-ի գարնան վերածուեցան բացայայտ ջարդերու, որոնք կ'իրականացուէին Վանի նահանգապետ Եւետէք պէյի անմիջական ղեկավարութեամբ եւ ուղղորդմամբ: Վան քաղաքի հայկական քաղամասերուն դէմ ան կեդրոնացուցեր էր 12.000 զինուոր, որոնց միացան քրքական ու քրտական աւազակախումբերը: Վանի հայերը կեդրոնացեր էին Այգեստան եւ Քաղաքամէջ քաղամասերուն մէջ, ընդ որուն, անոնք ընդամենը 1.500 հրացան եւ ատրճանակ ունէին: Այգեստանի Զինուորական Մարմինն ղեկավարը Արմենակ Եկարեանն էր, իսկ Քաղաքամէջինը՝ Հայկակ Կոսոյեանը: Կարեւոր դերակատարում ունէր Արամ Մանուկեանը: Ինքնապաշտպանութիւնը տեւեց 7 Ապրիլ 1915-էն մինչեւ 6 Մայիս 1915-ը, երբ օգնութեան հասան հայ կամաւորներն ու ռուսական բանակը: 7 Մայիսին ստեղծուեցաւ Վասպուրականի Ժամանակաւոր վարչութիւն. նահանգապետ նշանակուեցաւ Արամ Մանուկեանը:

Յաղթանակով վերջացան Վանի նահանգի ուրիշ վայրերու մէջ (Հատախի մէջ՝ 1 Ապրիլէն 14 Մայիս, Քաւաշի մէջ՝ 3 Ապրիլէն 17 Մայիս, Փեսանդաշտի մէջ՝ 14 Ապրիլէն 10 Մայիս եւ այլ ուր) տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը: Վասպուրականի մէջ շուրջ 200.000 հայ փրկուեցաւ թուրքերու կոտորածներէն:

Թուրքերուն հերոսական դիմադրութիւն ցոյց տուաւ Սասունը 1915-ի Մարտէն մինչեւ Օգոստոսի վերջը: Երբ զինամթերքն ու պարէնը սպառեցան, ստիպուած, հայերը անտառներու մէջ ու լեռներու վրայ անցան փարթիզանական պայքարի, ինչի շնորհիւ շուրջ 15.000 սասունցիներ փրկուեցան ոչնչացումէն:



Մուսա Լեւրան հերոսամարտի յուշարձանը Երևանի մօտ

ներն սպառնեցան, զարաիսապրցիներուն մէկ մասը ճեղքեց թուրքերու պաշարման օղակը եւ լեռներուն վրայ երկար ժամանակ շարունակեց պայքարը: Թուրքերը բերդին մէջ մնացած ուժասպառնները սուրի բաշեցին:

1915 թուականի ինքնապաշտպանական ամենայայտնի դրուագներէն է Մուսա Լեւրան հերոսամարտը: Միջերկրական Օսլի հիւսիս-արեւելեան մերձափնեայ Սոււտիա գաւառի հայոց մեծ մասը՝ աւելի քան 4 հազար հոգի, որոշեց չենթարկուիլ թունազաղի հրամանին, բարձրանալ մօտակայ Մուսա Լեռը եւ դիմել ինքնապաշտպանութեան: 1 Օգոստոսին թուրքերը բազմաթիւ գրոհներ կատարեցին հայկական դիրքերուն վրայ, բայց պարտուելով ետ քաշուեցան: Հայերը Մուսա Լեւրան զագաթին բարձրացուցին երկու դրօշակ՝ սպիտակի վրայ սանդղազօրծած կարմիր խաչով եւ «Քրիստոնեաները վտանգի մէջ են» մակագրութեամբ: 5 Սեպտեմբերին Մուսա Լեւրան մօտեցաւ ֆրանսական «Կիչէն» ռազմանաւը, որ Ղաշինքի հրամանատարութիւնը տեղեկացուց այս պաշարուած հայոց մասին: 12 Սեպտեմբերին ֆրանսական եւ թիտանական ռազմանաւեր մօտեցան Սոււտիոյ ծովափին եւ աւելի քան 4 հազար մուսալեզցիներ վերցնելով՝ զանոնք Եգիպտոսի Փոր Սախտ քաղաքը տեղափոխեցին: Անոնց մէկ մասը յետագային հայրենի երկրամաս վերադարձաւ: Այսօր ալ Մուսա Լեւրան զիւղերէն մէկը՝ Վազըֆը լիովին հայաբնակ է՝ Թուրքիոյ իշխանութեան տակ:

1915-ի Սեպտեմբեր-Յոկտեմբերին հերոսական դիմադրութիւն ցոյց տուին Եղեւսիոյ (Ռոֆայի) հայերը: Անոնք, Սկրտիչ Եօթնեղբայրեանի գլխաւորութեամբ, բազմիցս ետ մղեցին թշնամիին գրոհները: Թուրքերը թնդանօթներով գրեթէ ամբողջութեամբ աւերեցին հայկական թաղամասը: Ողջ մնացած շուրջ 15 հազար հայերը Տեր Զօր արտորուեցան:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաեւ ուրիշ վայրերու մէջ, որոնց շնորհիւ բազմաազար հայեր փրկուեցան կոտորածներէն:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ե՞րբ եւ ուր՞մա-քաղաքական ո՞ր խմբաւորումներուն միջեւ սկսաւ Առաջին Աշխարհամարտը:
2. Ի՞նչ գիտէք հայկական կամաւորական ջոկատներուն մասին:
3. Ե՞րբ տեղի ունեցաւ Վանի ինքնապաշտպանութիւնը:
4. Ներկայացուցէ՛ք Մուսա Լեւրան հերոսամարտը:

1917-ի Փետրուարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանի մէջ

Եւ Հայաստանը: Առաջին Աշխարհամարտի բժժ շրջանին՝ 1917-ի Փետրուարին Ռուսաստանի մէջ տեղի ունեցաւ յեղափոխութիւն մը, որ տապալեց ժապետական կարգը եւ քաղցքենիական-դեմոկրատական հանրապետութիւն հռչակեց: Ստեղծուեցաւ ժամանակաւոր Կառավարութիւն իշխան Կերէկի Լվովի գլխաւորութեամբ, որ պէտք է իրականացնէր երկրին կառավարումը մինչեւ Սահմանադիր ժողովին գումարումը:

Ժամանակաւոր Կառավարութիւնը 1917-ի Մարտին լուծարեց Կովկասի փոխարքայութիւնը՝ փոխարէնը ստեղծելով Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէն (Օզակոմ): Յեղափոխութեան եռլակած դեմոկրատական սկզբունքները մեծ խանցավառութիւն յառաջացուցին Կովկասի հայութեան մէջ: 1917-ի Մայիսին Երեւանի մէջ կայացած Արեւմտահայոց Առաջին Համագումարն ընտրեց Արեւմտահայ Ազգային Խորհուրդ (Նախագահ՝ Կահան Փափազեան, գինուրական բաժնի ղեկավար՝ Անդրանիկ Օզանեան): Սեպտեմբերին թիֆլիսի մէջ կայացաւ Արեւելահայոց Համագումարը, որ ընտրեց Արեւելահայ Ազգային Խորհուրդ՝ Աւետիս Ախարոնեանի նախագահութեամբ: Պաքոյի մէջ ալ ստեղծուեցաւ Հայոց Ազգային Խորհուրդ (ղեկավար՝ Աբրահամ Գիւլխանդանեան): Այս Խորհուրդները հայութեան ներքին կեանքը կը կարգաւորէին եւ կարելոր դերակատարում ունեցան:

Ժամանակաւոր Կառավարութիւնը յատուկ ուշադրութիւն դարձուց Արեւմտեան Հայաստանի ազատագրուած շրջաններուն, որոնց կառավարումն անմիջապէս վերցուց իր ենթակայութեան տակ: Արեւմտեան Հայաստանի գերագոյն կոմիսար Նշունակուեցաւ զօրավար Փեթր Ավերեանովը, տեղակալ՝ Յակոբ Զավրիեանը:

Ազատագրուած տարածքները բաժնուեցան 3 շրջաններու՝ Կարինի, Վանի եւ Խնուսի: Կազմակերպուեցաւ հայ զարթոյններու վերադարձը հայրենի օճախներ (մինչեւ 1917-ի Դեկտեմբերի վերջը վերադարձան շուրջ 387 հազար հայեր):

1917-ի հոկտեմբերեան յեղաշրջումը Ռուսաստանի մէջ եւ Հայաստանը: Միանգամայն անսպասելի էր 25 հոկտեմբեր 1917-ին Վլատիմիր Լենինի գլխաւորութեամբ տեղի ունեցած պետական յեղաշրջումը, բանի որ անոր ղեկավարած Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական (խեղազային՝ առլշեիկեան, կոմունիստական) Կուսակցութիւնը երկրին մէջ բարձր վարկանիշ չուներ: Ժամանակաւոր Կառավարութիւնը տապալեցաւ եւ սկսաւ քաղաքացիական պատերազմ, զոր քանի մը տարի տեւեց:

Պռլշեիկեան կառավարութիւնը չընդունուեցաւ ինչպէս Ռուսաստանի մեծ մասին, այնպէս ալ Անդրկովկասի մէջ: Մինչեւ օրինակային իշխանութեանց վերականգնումը, Անդրկովկասի քաղաքական ոյժերը 15 Նոյեմբերին ստեղծեցին կառավարական նոր մարմին մը՝ Անդրկովկասի Կոմիսարիատը, որու ղեկավար տասներկու կոմիսարներէն երեքը ազգութեամբ հայ էր:

Ստեղծուած իրադրութեան մէջ, երբ Թուրքիան պարտութիւններ կրած էր, իսկ Ռուսաստանի մէջ խառնակ իրավիճակ էր, 5 Դեկտեմբեր 1917-ին Երզն-



Գեորգ Ե. Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց



Մարդարապատի հերոսամարտի յուշահամալիրը

հայկական ժողովրդային միլիցիա (ոստիկանություն) ստեղծուել: Իսկ առիկա կը նշանակէր ազատագրուած տարածքներու յանձնում թուրքերուն, քանի որ ակնյայտ էր, թէ ցեղասպանութիւն վերապրած հայութիւնը ի վիճակի պիտի չըլլար մղուող պատերազմի պայմաններուն մէջ մեծ բանակ ստեղծել:

Պուշեիկեան կառավարութեան կոչով՝ բոլոր ռազմաճակատներէն սկսաւ ռուս զինուորներու դասալքութիւնն ու հեռացումը, ինչը լուրջ վտանգի առջեւ կանգնեցուց ոչ միայն Արեւմտեան, այլեւ Արեւելեան Չայաստանի հայութիւնը:

1918-ի թրքական արշաւանքը եւ մայիսեան հերոսամարտերը: Օգտուելով ռուսական բանակի հեռացումէն ու խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքերը Կովկասեան ճակատին վրայ 30 Յունուար 1918-ին յարձակման անցան:

Սէլամսեայ մարտերու ընթացքին թուրքերը գրաւեցին Երզնկան, Բաքերը, Մամախաթունը եւ Արեւմտեան Չայաստանի գլխաւոր կեդրոն Կարինը: 22 Մարտին ինկաւ նաեւ Վանը: Թուրքերը ներխուժեցին Արեւելեան Չայաստան:

Ռուսաստանի պուշեիկեան կառավարութիւնը 3 Մարտ 1918-ին Պրես-Լիթովսքի մէջ ստորագրած պայմանագիրով՝ Թուրքիոյ զիջեցաւ ոչ միայն Արեւմտեան Չայաստանը, այլեւ՝ Կարսի մարզը (ճանչցաւ մինչեւ 1877-1878 թուականներու պատերազմը գոյութիւն ունեցած սահմանագիծը):

Անդրկովկասի Սէյմը (խորհրդարանը) հրաժարեցաւ ճանչնալ Պրես-Լիթովսքի պայմանները եւ բանակցութիւններ սկսաւ Թուրքիոյ հետ՝ Տրապիզոնի մէջ: Սակայն թուրքերը ընդհատեցին բանակցութիւնները՝ շարունակելով ռազմական գործողութիւնները:

Թուրքերու պնդումով, Անդրկովկասը 22 Ապրիլ 1918-ին հռչակուեցաւ անկախ հանրապետութիւն, որու վարչապետը դարձաւ Աբաքի Չիսենքեյին (13 նախարարական պաշտօններէն չորսը հայերը կը գրաւէին): Կառավարութեան մէջ առանցքային պաշտօններ ունեցող վրացիները գերմանական կառավարութեան միջնորդութեամբ գաղտնի համաձայնութեան եկան թուրքերուն հետ՝ Կարսի յանձնման դիմաց Պաթումը իրենց ձգելու պայմանով: Վրացիներու խարդաւանքներուն պատճառով, 25 Ապրիլ 1918-ին Կարսն առանց կռիւի թուրքերուն տրուեցաւ:

Տրապիզոնի մէջ ընդհատուած բանակցութիւնները 11 Մայիս 1918-ին վերսկսան Պաթումի մէջ, ուր թուրքերն աւելի ծանր պայմաններ մէջտեղ դրին: Անոնք պահանջեցին իրենց յանձնել Ախալքալաքի ու Ախալցխայի գաւառներն ու Երեւանի նահանգին զգալի մասը: Մինչ բանակցութիւնները կ'ընթանային, թուրքերը, խախտելով զինադադարը, 15 Մայիսին վերսկսան պատերազմը, գրաւեցին Ալեքսանդրապոլը (Կիւմրի) եւ ուղղութիւն վերցուցին դէպի Երեւան: 21 Մայիսին անոնք գրաւեցին Մարդարապատի երկաթուղային կայարանը, մինչեւ Երեւան ընդամենը 30 քմ. մնացեր էր...

Ճակատագրական այս իրադրութեան մէջ որջ պատասխանատուութիւնն ստանձնեցին խումբ մը հանճարեղ նուիրեալներ՝ Երեւանի Ազգային Խորհուրդի նախագահ Արամ



Բաշ Ապարանի հերոսամարտի յուշահամալիրը

Մանուկեանը, Երեւանեան զօրախումբի հրամանատար զօրավար Մովսէս Միլիկեանը, Ղարաքիլիսայի ճակատամարտի հրամանատար զօրավար Թովմաս Լազարբէկեանը, Սարդարապատի ճակատամարտի հրամանատար Ղանիէ Բէկ-Փիրումեանը, Բաշ Ապարանի ճակատամարտի հրամանատար Դրաստամատ Կանայանը եւ ուրիշներ:

Չափազանց կարեւոր ու զօտեանդող էր Չեղոզ Ե. Սուրենեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսին (1912–1930) կեցուածքը, ան մերժեց էջմիածինէն հեռանալու

առաջարկը եւ զինուորներուն կողքին մնաց: Սարդարապատի մէջ քաջասիրտ ոգեղէնութեամբ աչքի ինկաւ ակաճաւոր հայազէտ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանը, որ յետագային Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս պիտի դառնար (1945–1952):

22–26 Մայիս 1918–ին հայկական զօրքերը փառահեղ յաղթանակ տօնեցին Սարդարապատի ճակատամարտին, ինչը ոգեւորեց նաեւ Բաշ Ապարանի հայ մարտիկները, որոնք 24–29 Մայիսին մղուած մարտերուն մէջ քախջախեցին թուրքերը: Երեւանն ու էջմիածինը փրկուած էին, կը նախատեսուէր Ղարաքիլիսայի (Կանաձոր) ճակատամարտին մէջ յաղթանակի պարագային ամբողջ ճակատով հակայարծակեան անցնիլ: Սակայն, դժբախտաբար, հայոց զինամթերքն սպառեցաւ եւ հայկական զօրքը, ստիպուած, ետ քաշուեցաւ Ղարաքիլիսայէն դէպի Դիլիջան, իսկ թուրքերը, մտնելով Ղարաքիլիսա, շարժեցան դէպի Թիֆլիս: Հակայարծակեան ծրագիրը ծախողեցաւ:

Մայիսեան հերոսամարտերը ոչ միայն ցեղասպանութեան ենթարկուելէ փրկեցին արեւելահայութիւնը, այլեւ դարձան հայկական պետականութեան վերականգնման հիմքերը:

Հայաստանի անկախութեան վերականգնումը: Անդրկովկասի մէջ հակասութիւններն աստիճանաբար աւելի կը սրուէին ազգային հողի վրայ, ինչն անխուսափելիօրէն յանգեցուց Անդրկովկասի հանրապետութեան չլուծարման: 26 Մայիսին, Կրաստանն անկախ հռչակուեցաւ: 27 Մայիսին կովկասեան թաթարները հռչակեցին իրենց պետութիւնը՝ կոչելով զայն «Ատրպէյճան», թալտ առիկա ուել կապ չունէր պատմական Ատրպատական–Ատրպէյճանի հետ:

28 Մայիս 1918–ին հռչակուեցաւ Հայաստանի անկախութիւնը: Ընդ որուն, անկախութեան հռչակագիրին մէջ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն իրեն յայտարարեց «հայկական գաւառների Գերագոյն եւ միակ իշխանութիւն»:

4 Յունիս 1918–ին Հայաստանի Հանրապետութեան եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ Պարսի մէջ կնքուեցաւ հաշտութեան պայմանագիր, որով Հայաստանի սահմանները շատ կը սեղմուէին (կը մնար ընդամենը 10–12 հազար քառակուսի քմ. տարածք): Խաղաղութիւնն անհրաժեշտ էր՝ ոտքի կանգնեցնելու ցեղասպանութենէն եւ պատերազմէն ետք աւերուած, զաղբականներով ու որբերով լեցուն երկիրը:

Այդպիսով, 28 Մայիս 1918–ին վերականգնուեցաւ 14–րդ դարուն վերացած հայկական պետականութիւնը, որով ալ սկզբնաւորուեցաւ Հայաստանի պատմութեան նոր՝ հանրապետական դարաշրջանը:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ի՞նչ փոփոխութիւններ յառաջ բերաւ 1917–ի Փետրուարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանի մէջ: Անիկա ինչպէ՞ս անդրադարձաւ Արեւմտեան Հայաստանի խնդրին վրայ:
2. Պատմեցէ՞ք Հոկտեմբերեան Յեղափոխութեան մասին: «Թրքահայաստանի մասին» հռչակագիրն ի՞նչ բովանդակութիւն ունէր:
3. Ներկայացուցէ՞ք 1918–ի մայիսեան հերոսամարտերը:
4. Ե՞րբ եւ ո՞ր մարմինը հռչակեց Հայաստանի անկախութիւնը:

29. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ 18-ՐԴ ԴԱՐԻՆ ՄԻՆՉԵՒ 20-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ

18–19–րդ դարերուն հայկական մշակոյթը կը շարունակէր զարգանալ զերազանցապէս գաղութներուն մէջ: Արեւելեան Հայաստանի միացումը Ռուսաստանին որոշակի բարեկապատ պայմաններ ստեղծեց հայոց տնտեսական ու մշակութային յառաջընթացի համար:

Կրթական մարզին մէջ զգալի յառաջխաղացում կը նկատուի: Բացուեցան մեծ քիւլով կրթական հաստատութիւններ, որոնցմէ աւելի նշանաւոր էին Վեներիկի, Կոստանդնուպոլսոյ, Էջմիածնի եւ Ջնիուզիոյ վանական դպրոցները, Աստրախանի Աղաբաբեան դպրոցը (1810), Մոսկուայի Լազարեան ճեմարանը (1815), Թիֆլիսի Լեռնիսեան դպրոցը (1824), երեւանի եւ Շուշիի քննական դպրոցները (1837 եւ 1838), Կոստանդնուպոլսոյ Սկիւտարի ճեմարանը (1838), Էջմիածնի Գեորգեան ճեմարանը (1874), Վանի վարժապետանոցը (1878), Կարիքի Սանասարեան վարժարանը (1881) եւ այլն: 19–րդ դարու երկրորդ կէսին բացուեցան նաեւ շարք մը դպրոցներ հայ իգական սեռին համար (Շուշիի, Երեւանի, Թիֆլիսի, Ախալցխայի եւ Ալեքսանդրապոլի մէջ):

Նշանակալի երեւոյթ էր հայ պարբերական մամուլին երեւան գալը. 1794–ին Մատրոսի մէջ Յարութին քահանայ Շմաւոնեանն սկսաւ հայերէն առաջին պարբերականին՝ «Ազրարար»ի հրատարակութիւնը: Հայ պարբերականներուն թիւը 19–րդ եւ 20–րդ դարերուն չափազանց աճեցաւ:

Հայագիտութիւնը: Հայագիտութեան բնագաւառին մէջ կարեւորագոյն երեւոյթ էր Մխիթար Անբաստացիի կողմէ 1701–ին Կոստանդնուպոլսոյ մէջ հիմնուած եւ 1717–ին Վեներիկի Սուրբ Ղազար կղզիին մէջ հաստատուած միաբանութիւնը, զոր Վատիկանը ճանչցաւ որպէս «Հայկական ակադեմիա»: Գոյնի պապի հովանիին տակ գործող միաբանութիւնը հիմնադիրին անուամբ կոչուեցաւ «Մխիթարեան» եւ մինչեւ այսօր կը շարունակէ իր ազգապահպան ու գիտա–մշակութային (յատկապէս՝ հայագիտական) գործունէութիւնը:

Հայաստանի 18–րդ դարու առաջին տասնամեակներու պատմութիւնը ներկայացուցած են Ստեփանոս Շահումեանը (Ղալիթ Բէկի պատմութիւնը), Եսայի Հասան–Ջալալեան կաթողիկոսը (Աղուանից երկրի համառօտ պատմութիւնը) եւ Արրուսիան Կրետացին (թուրք–պարսկական պատերազմներու պատմութիւնը):

Մխիթարեան Միքայէլ Վրդ. Չամչեանցը 1780–ական թուականներուն հրատարակեց «Հայոց Պատմութիւն» եռախաւոր կոթողային աշխատութիւնը՝ շարադրելով մեր ազգին պատմութիւնը արարչագործութենէն մինչեւ իր ապրած օրերը: Ան իրաւամբ կը նկատուի հայ նոր պատմագրութեան հայրը:

1836–1837 թուականներուն լոյս տեսաւ «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» երկխաւոր բառարանը, զոր Մխիթարեան հայրերու շուրջ 50 տարուայ համատեղ աշխատանքի անփոփոմն էր նւ զոր մինչեւ այսօր կը պահպանէ իր գիտական արժէքը:

Մեծ գործ կատարեց Գ. Ղուկաս Վրդ. Ինժիճեանը Հայաստանի պատմական աշխարհագրութեան ուսումնասիրութեան ասպարէզին մէջ: Նշանակալի էր Գ. Յովսէփ Վրդ. Գաթրճեանի «Տիեզերական Պատմութիւն» երկխաւոր աշխատութիւնը:

Մխիթարեան հայրերէն Ղեւոնդ Վրդ. Ալիշանն ամենաքեղուն հայագետն է. ան հեղինակած է Հայաստանի պատմութեան, աշխարհագրութեան եւ յուշարձաններուն նուիրուած 45 հատորէ աւելի աշխատութիւն, որոնք այսօր ալ գիտական մեծ արժէք ունին:

Մաղաքիա Արք. Օրմանեանի ուսումնասիրութեանց գլուխ–գործոցը «Ազգապատում» եռախաւոր աշխատութիւնն է, (1912 եւ 1914 Վ. Պոլիս, 1927 Երուսաղէմ) զոր միահիւստուած կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ եւ հայ ազգին պատմութիւնը:



Լազարեան հեմարանի շենքը (այսօր Բուսաստանի մեջ Գ. Գ. Ի դեպանատան շենքն է)



Միփիար Սեբաստացի

Մտկուայի Լազարեան հեմարանին մեջ մեծ վաստակ ունեցաւ Սկրտիչ Էմիլը. ան ոչ միայն հրատարակեց հայագիտական մեծարժէք ուսումնասիրութիւններ, այլեւ՝ շարք մը հայ մատենագիրներու երկեր տպագրեց զուսերէն ու ֆրանսերէն թարգմանութիւններով: Գարեգին Եպս. Սրուանձտեանցը դարձաւ հայ բանահիւստութեան դպրոցի հիմնադիրը. ան էր, որ առաջին անգամ գրառեց «Սպանայ Ծոօր» («Ձոջանց Տուն») դիւցազնավէպը:

Հայագիտութեան զարգացման մեծ նպաստ բերին Քերովլը Պատկանեանը, Գրիգոր Խալաթեանը, Անտոն Գարազաշեանը, Ալեքսանդր Երիցեանը եւ ուրիշներ: Քննարկուող ժամանակաշրջանին մեծ վաստակ ունեցան Լեօն, Նիկողայոս Ադոնցը, Գրաչեայ Աճառեանը, Սանուկ Աբեղեանը եւ ուրիշներ, որոնց գործունէութիւնն արգասաբեր եղաւ նաեւ 1918-էն ետք:

Գրականութիւնը: Քննարկուող ժամանակահատուածը հայ գրականութեան ամենաբեղմնաւոր շրջաններէն է: 18-րդ դարուն կ'ապրէին եւ կը ստեղծագործէին Պաղտասար Դպիրը, Պետրոս Դալիանցին եւ հայ աշուղական գրականութեան գագաթը՝ Սայեաթ Նովան (Յարութիւն Սայեաթեան): 19-րդ դարուն կը ստեղծագործէին Յարութիւն Ալամդարեանն ու Մեսրոպ Թաղիադեանը:

19-րդ դարու առաջին կէսին խաչատուր Աբովեանը դարձաւ հայ նոր գրականութեան եւ աշխարհաբար գրական լեզուի հիմնադիրը: Անոր երկերուն գլուխ-գործոցը «Վերջ Գայաստանի, Ողբ Գայրեմասերի» պատմավէպն է:

19-րդ դարու երկրորդ կէսը եւ 20-րդ դարու առաջին երկու տասնամեակները նշանաւորուեցան գրական ամբողջ համաստեղութեան մը՝ Միքայէլ Նալպանտեանի, Ռափայէլ Պատկանեանի, Ռաֆֆիի, Մուրացեանի, Մկրտիչ Պէշկապաշեանի, Յակոբ Պարոնեանի, Գաբրիէլ Սունդուկեանի, Արփիար Արփիարեանի, Յովհաննէս Թումանեանի, Պետրոս Դուրեանի, Միսաք Մեծաբենցի, Յովհաննէս Յովհաննիսեանի, Դանիէլ Վարուժանի, Սիւսան-



Սայեաթ Նովա



Յովհաննէս Թումանեան



Կոմիտաս

թոյի, Գրիգոր Զօհրապի, Երուանդ Օտեանի, Արշակ Զօպանեանի, Աւետիս Ահարոնեանի, Ղազարոս Աղայեանի, Պերժ Պռօշեանի, Ալեքսանդր Շիրվանզատի, Վահան Տէրեանի, Եղիշ Զարեանի, Աւետիք Իսահակեանի եւ ուրիշներու բազմաճանր ստեղծագործութիւններով: Անոնց ստեղծած գլուխ-գործոցները ոչ միայն հարստացուցին հայ գրականութեան զանօրանը, այլեւ արժանի տեղ կը գրաւեն համաշխարհային գրականութեան մէջ:

Արուեստը: Հայկական երաժշտութեան մարզին մէջ կարեւոր ներդրում ունեցաւ Համբարձում Լիմոնճեանը, որ 1813–1815 թուականներուն ստեղծեց հայկական նօթանոց՝ օգտագործելով ձողացութեան մատնուած խազերուն անուանումները: Անոնցմով գրի առնուեցան ու մոռացութենէ փրկուեցան կարեւոր արժէքներ:

Հայ երաժշտագիտութեան, երաժշտական արուեստի անփոխարինելի հանճարն է Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնեան), որ նախքան 1915–ը հաւաքեց եւ, օտար տարրերէն մաքրելով, մշակեց շուրջ 3000 երգ: Ան կրցաւ վերծանել նաեւ ուշ Միջնադարուն մոռացութեան մատնուած հայկական խազերը:

Մեծ ներդրում ունեցան Քրիստափոր Կարա–Մուրզան եւ Մակար Եկմալեանը:

Հայկական առաջին օփերայի («Արշակ Բ.») հեղինակը դարձաւ Տիգրան Չուխանեանը: Ալեքսանդր Սպենդիարեանը հիմնադրեց հայկական սիմֆոնիկ երաժշտութիւնը («Ալմաստ» օփերա), իսկ Արմէն Տիգրանեանը գրեց «Անոյշ» օփերան (Յովի. Թումանեանի համանուն պոէմին էիման վրայ), որու առաջին բեմադրումը տեղի ունեցաւ 1912–ին՝ Ալեքսանդրապոլի մէջ:

Մեծ ժողովրդականութիւն կը շարունակէր վայելել աշուղական (գուսանական) երգարունստը, որու ակնառու դէմքերէն էին Ջիւանին եւ Շերանը:

Օտարերկրացի ճանապարհորդները 17–18–րդ դարերուն Հայաստանի մէջ ականատես եղած են ժողովրդային թատրոններու, որոնք հնագոյն ժամանակներէն կու գան: 19–րդ դարուն հայկական մասնագիտացուած թատրոններ գործած են Կոստանդնուպոլսոյ եւ Թիֆլիսի մէջ: Թատերական արուեստին մէջ մեծ վաստակ ունեցան դերասաններ Պետրոս Աղամեանը, Գէորգ Զմշկեանը, Աիրանոյշը, Յովհաննէս Աբելեանը եւ ուրիշներ:

19–րդ դարուն հայկական գեղանկարչութեան ասպարէզին մէջ նշանաւոր եղան Յակոբ եւ Աղաթօն Յովնաթանեանները: Նոյն դարուն կ'ապրէր ու կը ստեղծագործէր համաշխարհային կերպարուեստի հայազգի հաճճար Յովհաննէս Այվազովսքին (Այվազեան, 1817–1900), որ յայտնի ծովանկարներու կողքին կերտած է բազմաթիւ գործեր հայկական թեմաներով: 19–րդ դարավերջի եւ 20–րդ դարասկիզբի հայ կերպարուեստի նշանաւոր դէմքերէն են Փանոս Թերլւմէզեանը, Վարդէս Սուրենեանը, Գեորգ Բաշինջաղեանը եւ ուրիշներ:

Հայկական ճարտարապետութեան եւ քանդակագործութեան աւանդոյթները կը շարունակուին հիմնականին մէջ փոքրածաւալ ստեղծագործութիւններով (ոչ–մեծածաւալ նկերեցիւններ, խաչքարեր, մատուռներ, տապանաքարեր եւ այլն):

20–րդ դարասկիզբի հայ ճարտարապետութեան յայտնի դէմքերէն են Գաբրիէ Տէր Մելիքովը, Քրիստափոր Տէր Սարգիսովը, Յովհաննէս Քաջազունին, Ալեքսանդր Թամանեանը եւ ուրիշներ: Հայկական ճարտարապետութեան վաստակաշատ ուսումնասիրող էր Թորոս Թորամանեանը:

Հայ բնագիտութեան մարզի խոշորագոյն ներկայացուցիչներէն է Յովհաննէս Աղամեանը, որ գունաւոր հեռատեսիլի եւ ուրիշ գիտելիքի հեղինակ դարձաւ:

Հայոց Ցեղասպանութիւնը անդառնալի կորուստներ հասցուց հայկական մշակոյթին: Սպաննուիւեցան մեծ թիւով ականաւոր գործիչներ, ոչնչացուեցան հազարաւոր պատմա–ճարտարապետական յուշարձաններ ու հնագոյն ձեռագիրներ եւ ուրիշ արժէքներ:

Հարցումներ եւ առաջադրանքներ

1. Ի՞նչ նորաստեղծ կրթական հաստատութիւններ գիտէք 18–19–րդ դարերուն:
2. Ո՞վ կը նկատուի հայ նոր պատմագրութեան հայրը: Ո՞վ է ամենաբեղուն հայագետը, Պատմեցէ՞ք անոնց մասին:
3. Ներկայացուցէ՞ք 19–րդ դարուն եւ 20–րդ դարասկիզբին ստեղծագործած հայ գրողներու աստղաքոյլը:
4. Ի՞նչ գիտէք Կոմիտասի մասին:

**30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
(1918–1920)**

Հայկական պետականության վերականգնումը: Գ. Գ. Ներսիսի դրուբինը:

1918 թուականին վերականգնուեցաւ հայկական պետականութիւնը: Միջնադարեան միապետական համակարգերէն բան չէր պահպանուած, ուստի ամէն բան պէտք էր գերոյական կտուն սկսիլ: Պէտք էր կերտել նոր որակի պետականութիւն՝ հանրապետութիւն:

Հայոց Ազգային խորհուրդը եւ Գ. Գ. Նորաստեղծ կառավարութեան անդամները կը գտնուէին Թիֆլիս, որ Վրաստանի Հանրապետութեան մայրաքաղաքն էր այլեւ: Մինչեւ անոնց երեւան տեղափոխուիլը՝ երկրին կառավարումն տաճննեց երեւանի Հայոց Ազգային խորհուրդը՝ Արամ Մանուկեանի գլխաւորութեամբ: Պատահական չէ, որ նոյն ինքն Արամ Մանուկեանը կը նկատուի Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրը:

Գ. Գ. Ն. առաջին վարչապետը դարձաւ Յովհաննէս Քաջազնունին, իսկ Արամ Մանուկեանը Ներսիս գործոց նախարար նշանակուեցաւ:

1 Օգոստոս 1918-ին իր աշխատանքներն սկսաւ պետութեան բարձրագոյն օրէնսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարան, փառլամենթ), որ կազմաւորուած էր Թիֆլիսի եւ երեւանի Հայոց Ազգային խորհուրդներու հիմքի վրայ: 1919-ի Յունիսին Հայաստանի մէջ տեղի ունեցան խորհրդարանական առաջին ընտրութիւնները: 80 անդամներով բաղկացած նորընտիր խորհրդարանը գործեց 1 Օգոստոս 1919-էն մինչեւ Գ. Գ. Ն. անկումը:

Ընդունուեցան պետականութեան խորհրդանիշները. 1918-ի Յունիսին Գ. Գ. Ն. պետական դրոշ յայտարարուեցաւ եռագոյնը (կարմիր, կապոյտ, նարնջագոյն), 1920-ի Յունիսին հաստատուեցաւ Գ. Գ. Ն. զինանշանը (հեղինակներ՝ Ալեքսանդր Թամանեան եւ Յակոբ Կոջոյեան), իսկ օրինելով դարձաւ Միքայէլ Նալպանտեանի բանաստեղծութեան հիմամբ ստեղծուած «Մեր Հայրենիք» երգը:

Հայաստանի պատմութեան համար նշանակալի իրադարձութիւն էր Միացեալ եւ Անկախ Հայաստանի հռչակումն անկախութեան առաջին տարեդարձին օրը՝ 28 Մայիս 1919-ին: Յայտարարութեան մէջ կ'ըսուէր. «**Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովուրդին լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումը ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովուրդի միահամուռ կամքի ու ցանկութեան, կը յայտարարէ, որ այս օրէն՝ Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբրեւ անկախ պետական միութիւն**»:



Հայաստանի Հանրապետութեան զինանշանն ու դրոշը

Նորաստեղծ իշխանութեանց գերխնդիրներէն էին կանոնաւոր զինուած ոյժերու ստեղծումը, երկրին մէջ օրինականութեան հաստատումը, սովի ու համաճարակներու վերացումը, աւելի քան 200 հազար գաղթականներու ու շուրջ 50 հազար որբերու խնամքը, կրթա-մշակութային մարզերուն բարելաւումը եւ այլն: Խաղաղութեան հաստա-



Արամ Մանուկեան

տումն ետք լուծարուեցան նախկին ջոկատները, պետութիւնը ձեռնամուխ եղաւ ընդհանուր զինապարտութեան սկզբունքով կանոնաւոր բանակի ստեղծման: 1920-ի աշնան հայկական բանակը շուրջ 25 հազար զինուոր ունէր:

Դրուեցան հայերէն լեզուով դատական համակարգի հիմքերը, սակայն ազգային օրէնսդրութիւն Գ. Գ. Ն. իշխանութիւնները չհասցուցին ստեղծել: Հիմնուեցան երդուեալ ատենակալներու դատարաններ:

Սովը կանխելու նպատակով պետական մենաշնորհի հաստատուեցաւ առաջին անհրաժեշտութեան ապրանքներու նկատմամբ, Ա. Ս. Ն. գործուղուեցաւ եւ հունկէ օգնութիւն բերաւ վարչապետ Յովհաննէս Քաջազնունին, ինչն օժանդակեց յաղթահարելու պարենային ճգնաժամը:

Յ. Յ.ի հիմնադիրները լաւապէս կը գիտակցէին, որ հայ ժողովուրդի ապագան անոր աստուածաշնորհ մտաւոր ներոյժի զարգացման մէջ է: Ուստի նոյնիսկ սովի ու համաճարակներու պայմաններուն մէջ ատաջնահերթ նկատուեցաւ համալսարանի հիմնումը: Այդ մասին որոշում կայացուեցաւ 16 Մայիս 1919-ին, իսկ համալսարանին բացումը կատարուեցաւ 31 Յունուար 1920-ին՝ Ալեքսանդրապոլի մէջ: Յաջորդ ուսումնական տարին ան փոխադրուեցաւ Երեւան:

Ղարաքիլիսայի (ներկայիս՝ Վանաձոր) մէջ 1919-ի Նոյեմբերին բացուեցաւ ժողովրդային համալսարանը: Կը նախատեսուէր 1920-ի աշնան Երեւանի մէջ բանալ երաժշտանոց (քոնսերվատորիա), Կարսի մէջ՝ ռազմական կիմնագիւղ: Այս նպատակներով՝ բազմաթիւ անուանի մտաւորականներ արտասահմանէն Հայաստան հրաւիրուեցան:

Յատուկ ուշադրութիւն դարձուեցաւ գրադարաններու ու քանգարաններու ստեղծման գործին, հիմնուեցաւ Հնութիւններու Պաշտպանութեան Կոմիտէն:

Ներքին խողովութիւնները: Յ. Յ.ի ողջ պատմութեան ընթացքին ապակայունացնող գործօնի դեր կատարեցին թաթարներու (ատրապէյճանցիներու) եւ քիւրտերու հակապետական խողովութիւնները: Մուտրոսի զինադադարէն ետք (30 Հոկտեմբեր 1918), պարտուած Թուրքիան զօրքերը հեռացուց Կովկասէն, սակայն կը շարունակէր զադտնօրէն խրախուսել Յ. Յ.ի տարածքի թուրք-թաթարական ազգայնական ոյժերը: Թուրքիոյ եւ Ատրապէյճանի աջակցութեամբ, 1919-ի Յուլիսին Հայաստանի մէջ բռնկուեցաւ թուրք-թաթարական ընդհանուր խողովութիւն մը, զոր ճնշուեցաւ: Նման խողովութիւններ եղան մինչեւ 1920-ի աշունը:

Երկրորդ ապակայունացնող գործօնը դարձան պոլշեիկները, որոնց կը ղեկավարէր Խորհրդային Ռուսաստանը: Վերջինս քաղաքացիական պատերազմներուն յաղթանակներ տանել յետոյ կը ձգտէր վերականգնել նախկին Ռուսաստանի Կայսրութեան սահմանները: 28 Ապրիլ 1920-ին Ատրապէյճանը խորհրդայնացաւ, որմէ ետք, Մոսկուայի հրահանգով, հայ պոլշեիկները որոշեցին զենքի ոյժով գրաւել Յ. Յ.ի իշխանութիւնը:

1920-ի Մայիսին, պոլշեիկներուն ղեկավար մարմինը՝ Հայաստանի Ռազմա-յեղափոխական Կոմիտէն Ալեքսանդրապոլի (այժմ՝ Կիւմրի) մէջ խորհրդային իշխանութիւն հռչակեց, սակայն ատիկա ընդամենը քանի մը օր տեւեց: 14 Մայիսին, օրինական իշխանութիւնը վերականգնուեւ էր քաղաքին մէջ:

Յ. Յ.ի արտաքին դրութիւնը: Առաջին միջազգային պայմանագիրը Յ.Յ.-ն կնքեց Թուրքիոյ հետ (4 Յունիս 1918-ին՝ Բաթումի մէջ), որ ոյժի մէջ մնաց մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմի ւաւարտը: (Այս պայմանագիրը ոչ մէկ պարագայի կրնայ վերաբերիլ Արեւմտեան Հայաստանին, ոչ ալ Պողոս Նուբար փաշայի նախագահութեամբ գործող Հայ Ազգային Պատուիրակութեան):

Առաջին Աշխարհամարտէն ետք Յ.Յ.-ն եւ Յ.Ա.Պ.-ը յարաբերութիւններ հաստատեցին բազմաթիւ երկիրներու հետ: Մեծն Բրիտանիան, Ֆրանսան, Իտալիան, Հարաւային Ռուստանի կառավարութիւնը, Պարսկաստանը, Վրաստանն ու Ատրապէյճանը Յ.Յ.-ի մէջ ունէին իրենց մշտական ներկայացուցիչները: Յ.Յ.-ն ալ իր ներկայացուցչութիւններն ունէր Նշուած երկիրներուն, նաեւ Ա.Մ.Ն.-ի, Պերսիոյ, Չեխոսլուակիոյ, Ծափոնի, Եգիպտոսի ու Եթովպիոյ մէջ:

Նաև, 1919 թ.-ի Մայիս 15-ին, իր նիստերն ունեցաւ Հայ Ազգային Վեհաժողովը, որ բաղկացած էր թիւրքահայութիւնը ներկայացնող պատուիրակներէն, ինչպէս նաեւ Կովկաս, Պարսկաստան, Միջագետք, Սուրիայ, Եգիպտոս, Եւրոպայ եւ Միացեալ Նահանգներ ապաստանած Արեւմտեան Հայաստանի հայ փախստականներէն, որոնք քանի մը շաբաթ կը հաւաքուէին Փարիզի Յ-րոյ, ՄոնթէԵն պողոտայի հասցէին մէջ:

Հայ Ազգային Պատուիրակութեան կողմէ հրաւիրուած այս խորհրդաժողովը երկարածելով իր աշխատանքները՝ զայն փակեց կազմելէ ետք ընդհանուր համաձայնութիւն մը, որ է հայերու պահանջներուն ծրագիրը՝ գնահատելով հայերու կրած վնասները, եւ յանձնաժողով մը՝ ստեղծելով ապագայ հայկական Պետութեան քաղաքական կարգավիճակը մշակելու հասար:

Վեհաժողովին կողմէ ընտրուած նոր ազգային պատուիրակութիւնը բաղկացած էր մեծարգոյ Պողոս Նուբար Փաշայէն, պրոֆեսոր Ա.Տեր-Յակոբեանէն, բժիշկներ Յ. Ներուզէն եւ Կ. Բաստըրմաջեանէն, Մ. Ա. Չոբանեանէն եւ Վ. Թէքէյեանէն: Այն պիտի համակարգուած պիտի աշխատէր ՀՀ-ի պատուիրակութեան հետ, որ կազմուած էր Պարոն Ահարոնեանէ, Յ. Օհանջանեանէն եւ Մ. Բահաճանեանէն, եւ վերջինիս հետ պիտի կազմէր «Միասնական Հայաստանի» պատուիրակութիւնը, որոն նշանաբանը պիտի ըլլար «Միացեալ Հայաստան՝ ազատ եւ անկախ՝ իր պատմական սահմաններուն մէջ»:

Հայ Ազգային Վեհաժողովն աւարտուեցաւ հետեւեալ յայտարարութեամբ. «Յանուն արդարութեան, յանուն մեր աշխարհիկ օրէնքին», Ռուսաստանի եւ Թուրքիոյ մէջ գտնուող երկու հայկական համայնքներուն անկիմադրելի ձգտումներուն անուսով, յանուն պատմական անխուսափելի անհրաժեշտութեան, որ վաղ թէ ուշ պիտի յաղթանակէ՝ կը յայտարարենք նոյն ազգի այս երկու հատուածներուն բացարձակ եւ վերջնական վերամիաւորումը: Այսպիսով, միացեալ կառավարութիւն ձևաւորելու հիման վրայ՝ փակուեցաւ Հայ Ազգային Պատուիրակութեան աշխատանքը, զոր վարեց Հայ Ազգային Վեհաժողովին կողմէ ընտրուած առաջին նախագահ մեծարգոյ Պօպղոս Նուբարը:

Հայաստանի համար կարեւորագոյն խնդիրներ քննարկուեցան 1919 թուականին Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովին, եւ 1920-ին՝ Սան Ռեմոյի եւ Սեփի խորհրդաժողովներուն մէջ (տե՛ս յաջորդ ենթաբաժինին մէջ):

Առանձին երկիրները գատ, Դաշինքին Գերագոյն Խորհուրդը 1920-ի Յունուարին փաստացի (de facto) ճանչցաւ Գայաստանի Գանրապետութեան կառավարութեան իրաւագորութիւնը:

Դրացի երկիրներէն միայն Պարսկաստանի հետ հաստատուեցան բարիդրացիական յարաբերութիւններ: Միւս դրացիներուն հետ հակասութեանց հիմքին ինկած էին սահմանային-տարածքային խնդիրներն ու քաղաքական հակադիր կողմնորոշումները:

Վրաստանը տարածքային յաւակնութիւններ ունէր պատմականօրէն հայկական եւ հայաբնակ Լոռիի եւ Ճաւախքի նկատմամբ: 1918-ի Դեկտեմբերին, երբ բրքական զօրքերը Անդրկովկասէն հեռացան, վրացական զօրքերը գրաւեցին Ճաւախքն ու Լոռին, ինչն ալ հայ-վրացական պատերազմի պատճառ դարձաւ: Գայկական բանակը քանի մը օրուան մէջ Լոռին մաքրեց վրացիներէն: Անգլիոյ եւ Ֆրանսայի միջամտութեամբ կնքուեցաւ զինադադար, որով Լոռիի մէջ ստեղծուեցաւ «Չէզոք գօտի»՝ անգլիացիներուն հսկողութեամբ, իսկ Ճաւախքը, հակառակ Գ. Գ.ի բողոքներուն, ժամանակաորապէս տրուեցաւ Վրաստանին:

Ատրպէյճանի հետ յարաբերութիւնները շատ լարուած էին՝ կապուած հայկական տարածքներու (Արցախի, Չանգեզուրի, Նախիջեւանի) նկատմամբ ատրպէյճանական յաւակնութեանց հետ, որոնց կ'աջակցէր Թուրքիան: Պաքուի նաւթին տիրելու հեռանկարով Ատրպէյճանին սկսաւ աջակցիլ նաեւ քրիտանական կառավարութիւնը, որ նախ քոյլ չտուաւ Անդրանիկի զօրամասի մուտքն Արցախ, իսկ 1919-ի Յունուարին հաւանութիւն տուաւ համաբրքական վառ գործիչ Խոսրով քէկ Սուլթանովի Արցախի եւ Չանգեզուրի նահանգապետ նշանակման, մէկը, որ շատ շուտով այքի ինկաւ Արցախի ու յատկապէս Շուշիի մէջ իրականացուցած հայկական կոտորածներով:

1920-ի Մայիսէն Գ. Գ.ը փորձեց բարիդրացիական յարաբերութիւններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ, սակայն ապարդիւն: 28 Ապրիլ 1920-ին Ատրպէյճանի Խորհրդայնացումէն ետք Ռուսաստանն սկսաւ սատարել Ատրպէյճանին: Միւս կողմէ, Խորհրդային Ռուսաստանը քեմալական Թուրքիոյ մերձեցաւ:

Այդ իրադրութեան մէջ Գ. Գ.ի իշխանութիւնները կը շարունակէին ապաւինիլ Արեւմուտքին՝ յուսալով, որ Սեւրի պայմանագիրին որոշումները կ'իրականանան:

Գ. Գ.ի անկումը: Առաջին Աշխարհամարտին պարտուած Թուրքիան կրցաւ արագօրէն կողմնորոշուիլ եւ բարեկամական յարաբերութիւններ հաստատեց յաղթանակած մեծ տերութիւններէն դժգոհ կարեւոր ոյժի մը՝ Խորհրդային Ռուսաստանի հետ: Նոյն այս վերջինիս հաւանութեամբ ալ քեմալական Թուրքիան 1920-ի աշնան սկզբին պատերազմ սկսաւ Գայաստանի դէմ, զոր վերջացաւ Գայաստանի պարտութեամբ:

18 Նոյեմբերին զինադադար հաստատուեցաւ եւ բանակցութիւններ սկսան մէկ կողմէ Թուրքիոյ, միւս կողմէ՝ պոլշեիկեան Ռուսաստանի հետ: 2 Դեկտեմբեր 1920-ին ստորագրուեցաւ Երեւանի համաձայնագիրը, որով Գ. Գ.ի կառավարութիւնն իր լիազօրութիւնները յանձնեց պոլշեիկներուն, իսկ Դեկտեմբերի 2-լոյս 3-ի զիշերը Ալեքսանդրապոլի մէջ պայմանագիր ստորագրուեցաւ քեմալական թուրքերուն հետ: Վերջինս չվաւերացուեցաւ, հետեւաբար՝ իրաւական ոյժ չստացաւ:

Քեմալա-պոլշեիկեան համաձայնութեան հետեւանքով Գ. Գ.ն նուաճուեցաւ եւ մասնատուեցաւ: Կարսի մարզը եւ Սուրմալուի գաւառն անցան Թուրքիոյ, իսկ Ախուրեան եւ Արաքս գետերէն արեւելք ինկած հայկական տարածքները՝ Խորհրդային Ռուսաստանին: Խորհրդային իշխանութեան տակ Արցախն ու Նախիջեւանն անջատուեցան Խորհրդային Գայաստանէն եւ տրուեցան Ատրպէյճանին, իսկ Ճաւախքը նուիրուեցաւ Վրաստանին:

Գարգումներ եւ ատաջադրանքներ

1. Ո՞վ էր Գայաստանի Գանրապետութեան ատաջին վարչապետի: Ի՞նչ պաշտօն ստանձնեց Արամ Մանուկեանը:
2. Ե՞րբ տեղի ունեցած է Անկախ եւ Միացեալ Գայաստանի հռչակումը:
3. Ի՞նչ ոյժեր կ'ապակայունացնէին երկրին ներքին դրութիւնը: Ի՞նչպէ՞ս վերջացան անոնց խռովութիւնները:
4. Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու մէջ անկում ապրեցաւ Գայաստանի Գանրապետութիւնը:

Հայկական Հարցը Փարիզի Վեհաժողովին և Սան Ռեմոյի խորհրդածողովին: Առաջին Աշխարհամարտն սկսաւ մեծ տէրութեանց շահերու բախման պատճառով: Հասկնալիօրէն, պատերազմի աւարտէն ետք յաղթող տէրութիւնները պէտք է նոր աշխարհակարգ կերտէին: Այդ նպատակով հրաւիրուած Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովն իր աշխատանքներն սկսաւ 1919-ի Յունուարին:

25 Փետրուար 1919-ին, վեհաժողովին ներկայացուեցաւ հայկական պահանջներու (Պօղոս Նուպարի կազմած) յուշագիրը, զոր ստորագրեր էին Հ. Հ.ի պատուիրակութեան նախագահ Աւետիս Միարոնեանն ու արեւմտահայոց շահերը ներկայացնող Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարը: Այդ յուշագիրով կը նախատեսուէր հայկական պետութեան մէջ ներառել Հ. Հ.ը, Արեւմտեան Հայաստանի եօթը վիլայեթները եւ Կիլիկիան: Ծրագիրին իրենց հաւանութիւնը տուած էին Մեծն Բրիտանիան եւ Ա. Մ. Ն.ը:

Թուրքիոյ հետ կապուած հարցերը յատուկ քննութեան ենթարկուեցան 1920-ի Ապրիլին զումարուած Սան Ռեմոյի խորհրդածողովին մէջ: Որոշեցին, որ Հայաստանի Հանրապետութեան կրնար միացուիլ Արեւմտեան Հայաստանի մէկ մասը եւ ուրուագծուեցան այն սահմանները, որոնք արտացոլուած են Սեւրի պայմանագիրին մէջ: Քննարկուեցաւ նաեւ Հայաստանի հովանաւորութեան (մասնաթ) ստանձնման հարցը, որու գլխաւոր յակնորդը Ա. Մ. Ն.ն էր:

Սեւրի պայմանագիրը եւ Ուուտրօ Ուիլսոնի իրաւարար վճիռը: Սակայն, ժամանակը չէր աշխատեր հայոց օգտին. Ա. Մ. Ն.ի Ծերակոյտը 1920-ի Յունիսին մերժեց Հայաստանի հովանաւորութեան ստանձնումը, իսկ Թուրքիոյ մէջ աստիճանաբար աւելի մեծ թափ կը ստանար քեմալական շարժումը:

10 Օգոստոս 1920-ին Փարիզի Սեւր արուարձանին մէջ, Առաջին Աշխարհամարտի յաղթական տէրութեանց եւ սուլթանական Թուրքիոյ միջեւ կնքուեցաւ հաշտութեան պայմանագիր (բաղկացած 433 յօդուած): Հայաստանին կը վերաբերէին պայմանագիրին 88–93–րդ յօդուածները, ըստ որոնց՝ Թուրքիան Հայաստանը կը ճանչնար իրրեւ ազատ եւ անկախ պետութիւն, Հայաստանին կ'անցնէին Երզրումի, Վանի, Պիքիսի եւ Տրապիզոնի նահանգները, ընդ որուն, Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանագծումը, որպէս իրաւարար միջնորդ, պէտք է իրականացնէր Ա. Մ. Ն.ի նախագահ Ուուտրօ Ուիլսոնը:

Ուուտրօ Ուիլսոնի իրաւարար վճիռն ստորագրուեցաւ 22 Նոյեմբեր 1920-ին: Զորս նահանգներով Հայաստանի Հանրապետութիւնը Արեւմտեան Հայաստանէն պէտք է ստանար 90.000 քառակուսի քմ. տարածք՝ դէպի Սեւ Օով ելքով: Հայաստանի Հանրապետութեան տարածքը պիտի դառնար շուրջ 160.000 քառակուսի քմ.:

Սեւրի պայմանագիրն ու Ուիլսոնի իրաւարար վճիռն իրականութիւն չդարձան, քանի որ քեմալական Թուրքիան արագօրէն կողմնորոշուելով միջազգային իրադրութեան մէջ՝ նախ մերժեցաւ Խորհրդային Ռուսաստանի, ապա Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի հետ, կատարեց որոշակի զիջումներ եւ փոխարէն ստացաւ Հայկական Հարցին «թաղում»ը: Մինչդեռ հայութեան մեծ մասն իր յոյսը կը շարունակէր կապել մեծ տէրութեանց բարեհաճութեան հետ...

Այդուհանդերձ, Սեւրի պայմանագիրն ու Ուուտրօ Ուիլսոնի իրաւարար վճիռն ունին պատմական եւ իրաւական կարելոր նշանակութիւն: Անոնցմով՝ 20-րդ դարուն աշխարհը ճանչցաւ հայ ժողովուրդին իրաւունքները իր պատմական հայրենիքին նկատմամբ: Այդ փաստաթուղթերը չեն կորսնցուցած իրենց իրաւական նշանակութիւնը:

Հայկական Հարցը Լոնտոնի եւ Լոզանի խորհրդածողովներուն: Սեւրի պայմանագիրէն ընդամենը քանի մը ամիս ետք՝ 21 Փետրուարէն մինչեւ 14 Մայիս 1921-ը Լոնտոնի մէջ զումարուեցաւ խորհրդածողով մը, զոր կրկին քննարկեց Հայկական Հարցը:



Աւետիս Ահարոնեան



Պօղոս Լուսաբար փաշա



Ա. Մ. Ն. ի նախագահ
Ուուտրո Ուիլսոն

Հայկական պատուիրակութեանց ղեկավարներ Աւետիս Ահարոնեանն ու Պօղոս Լուսաբարը կ'ականկալէին Սեւրի պայմանագրի եւ Ուուտրո Ուիլսոնի իրաւարար վճիռի իրականացում, Արեւմտեան Հայաստանն ազատագրելու միջոցներու տրամադրում: Ասոր հակառակ, խորհրդածողովը կայացուց թուրքիոյ արեւելքը «Հայկական ազգային օճախ» մը ստեղծելու որոշում, ընդ որուն, նոյնիսկ առանց որոշակիացնելու, թէ անիկա ո՞ր պիտի գտնուի:

Հայկական Հարցի քննարկման տխուր վերջաբանը գրուեցաւ 20 Նոյեմբեր 1922–էն 24 Յուլիս 1923–ը Զուիցերիոյ Լոզան քաղաքին մէջ զուճարուած միջազգային խորհրդա-

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻՆ





Գարեգին Նժդեհ

Մարտ 1921-ին ստորագրուած Մոսկուայի «Եղբայրութեան եւ բարեկամութեան» պայմանագիրով: Այդ փաստաթուղթով հաստատուեցաւ Կարսի մարզի եւ Սուրմալուի գաւառի անցումը Թուրքիոյ, իսկ Նախիջեւանի տարածքը հռչակուեցաւ ինքնավար՝ Ատրպէյճանի խնամակալութեան տակ: Խորհրդային Ռուսաստանի պարտադրանքով՝ այս պայմանագիրին կտեղծուող գրեթէ նոյնութեամբ վերահաստատուեցան 13 Հոկտեմբեր 1921-ին Կարսի մէջ Խորհրդային Հայաստանի եւ քեմալական Թուրքիոյ միջեւ ստորագրուած ապօրինի պայմանագիրով: Յետագային, Նախիջեւանը մտցուեցաւ Ատրպէյճանի կազմին մէջ՝ ինքնավար հանրապետութեան կարգավիճակով:

Խորհրդային Ատրպէյճանը բուռն պայքար ծաւալեց 95% հայ բնակչութիւն ունեցող Ղարաբաղին (Արցախին) տիրելու համար: Դեռ 1918-ի Յունիսին Արցախահայութեան առաջին համագումարն Արցախն ինքնիշխան յայտարարել էր եւ հայկական իշխանութիւն՝ Ազգային Խորհուրդ ստեղծել էր, իսկ 25 Ապրիլ 1920-ին, Արցախահայութեան իններորդ համագումարը Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիաւորումը յայտարարել էր: Այդ փաստը կ'ընդունելու նաեւ Խորհրդային կառավարութիւնը, որուն զլուխը կանգնած Կոմունիստական (պոլշեիկեան) Կուսակցութեան Կենտկոմի Կովկասեան Բիւրօն 3 Յունիս եւ 4 Յուլիս 1921-ի որոշումներով հաստատել էր զայն: Սակայն նոյն Կովկասեան Բիւրօն 5 Յուլիսին (մէկ օր ետք) կայացուց ամբողջովին հակադիր որոշում՝ Ղարաբաղն ընդգրկել Ատրպէյճանի կազմին մէջ: Այս որոշման կայացման մէջ իր բացասական դերը խաղցաւ յետագային մեծ բռնակալ դարձած Եոսիֆ Սթալինը, որ կազմակերպեց Բիւրոյի վրացի եւ ատրպէյճանցի անդամներուն դաշինքը հայոց դէմ: 5 Յուլիսին անոնք միասնաբար կողմ քուէարկեցին Ղարաբաղն Ատրպէյճանին յանձնելու, իսկ երկու օր ետք՝ 7 Յուլիսին՝ ճաւախքը Կրաստանի կազմին մէջ մտցնելու որոշումներուն: Այդպիսով՝ երկու հայկական շրջան ալ անջատուեցաւ Խորհրդային Հայաստանէն: Յետագային՝ 7 Յուլիս 1923-ին Լեռնային Ղարաբաղին (Արցախին) «շնորհուեցաւ» ինքնավար մարզի կարգավիճակ՝ Ատրպէյճանի կազմին մէջ:

1921-ի Նոյեմբերին Հայաստանի եւ Կրաստանի Խորհրդային կառավարութեանց միջեւ ստորագրուեցաւ համաձայնագիր մը, որով Լոռին մնաց Հայաստանին, իսկ Ախալքալաքը, Ծալկան եւ Բոլնիս-Խաչենն անցան Կրաստանին: Յետագային, երբ Խորհրդային Հայաստանը Խ. Ս. Գ. Մ.ի կազմ ընդգրկուեցաւ Անդրկովկասի Խորհրդային Ֆետերաթիւ Սոցիալիստական Հանրապետութեան (1922-1936) իրրել վարչական միաւոր, քանի մը սահմանային տարածքներ ալ ներքին որոշումներով կտրուեցան Խորհրդային Հայաստանէն՝ յօգուտ Ատրպէյճանի (մանրամասն տես քարտէսին մէջ): Հակահայ յաւակնութիւնները չիրականացան միայն Սիւնիք-Չանգեզուրի նկատմամբ, որու ժողովուրդը 1918-1921 թուականներուն հերոսական պայքար մղեց եւ տարածքը հայկական պետութեան կազմին մէջ մնաց: Այդ պայքարն առաջնորդեցին նախ Անդրանիկ Օզանեանը (1918-ի ամառն մինչեւ 1919-ի գարուն), ապա Արսէն Շահմազեանը, իսկ 1919-ի Հոկտեմբերէն մինչեւ 1921-ի Յուլիսը՝ Գարեգին Նժդեհը:

Հարցումներ եւ ատարադրանքներ

1. Որո՞նք հայութիւնը կը ներկայացնէին Փարիզի Վեհաժողովին: Ե՞րբ տեղի ունեցաւ Սան Ռեմոյի Խորհրդաժողովը եւ ի՞նչ հարցեր քննարկեց:
2. Ե՞րբ կնքուած է Սեւրի պայմանագիրը: Ան ի՞նչ լուծում կը նախատեսէր Հայկական Հարցին: Ա. Ս. Ն.ի նախագահ Ուուտրօ Ուիլսընը ե՞րբ ստորագրեց իրաւարար վճիռը:
3. Ի՞նչ ընթացք ստացաւ Հայկական Հարցը Լոնտոնի եւ Լոզանի Խորհրդաժողովներուն:
4. Հայկական ո՞ր տարածքներն անջատուեցան Խորհրդային Հայաստանէն եւ ի՞նչ ճակատագիր ունեցան:

Հայութիւնը երկրորդ Աշխարհամարտի նախօրեակին: Կորուստի ու անկումներու տարիներ հետեւեցան Հայաստանի անկախութեան կարճատեւ վերականգնման: Հայկական Հարցը «թաղուեցաւ» Լոզանի խորհրդաժողովին մէջ, իսկ խորհրդային իշխանութիւնները ո՛չ միայն կտրատեցին հայկական տարածքները՝ Խորհրդային Հայաստանին ձգելով շուրջ 30 հազար քառակուսի քմ., այլեւ հաստատեցին միակուսակցական բռնատիրութիւն՝ շատ հայ մտաւորականներ վտարանդիութեան մատնելով:



Եղիշ Չարենց



Ալլտշ Բալունց

Խորհրդային բռնատիրութիւնն իր զագաթնակետին հասաւ Եոսիֆ Սթալինի իշխանութեան տարիներուն, յատկապէս 1936–1938 թուականներուն, երբ տասնեակ հազարաւոր անմեղ զոհերու հետ հայ ժողովուրդը կորսնցուց իր լուսամիտ մտաւորականներն (Եղիշ Չարենց, Ալլտշ Բալունց եւ ուրիշներ) եւ հասարակական–քաղաքական գործիչներն (Աղասի Խանճեան, Սահակ Տեր Գաբրիէեան, Ներսիկ Ստեփանեան եւ ուրիշներ) շատերը: Հայաստանի մէջ քաղաքական հալածանքներու ենթարկուեցաւ շուրջ 15 հազար հոգի, որոնց զգալի մասը զնդակահարուեցաւ: Յատկապէս ծանրացաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ վիճակը. 1938–ին Էջմիածնի Մայր Աթոռի վեհարանին մէջ խորհրդաւոր պայմաններու մէջ վախճանեցաւ Խորեն Ա. Մուրադբէկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը (1932–1938):

Այդուհանդերձ, 1921–1941 ժամանակաշրջանի խաղաղութեան տարիներուն կատարուեցան նաեւ դրական աշխատանքներ, որոնցմէ յատկապէս պէտք է նշել տնտեսութեան վերականգնումն ու աստիճանական զարգացումը, կրթական լայն ցանցի ստեղծումը, զանգուածային հայրենադարձութեան կազմակերպումը: 1920–1930–ական թուականներուն արտերկրէն Հայաստան ներգաղթեց շուրջ 42.000 հայ:

Հայոց մասնակցութիւնը երկրորդ Աշխարհամարտին՝ Խ. Ա. Հ. Մ.ի կազմին մէջ: 1 Սեպտեմբեր 1939–ին Լեհաստանի վրայ հիթլերեան Գերմանիոյ յարձակումով սկսաւ Երկրորդ Աշխարհամարտը: 1939–1940–ին Գերմանիան տիրեց Եւրոպայի մեծագոյն մասին, իսկ 22 Յունիս 1941–ին յարձակեցաւ Խ. Ա. Հ. Մ.ի վրայ: Սկսուած պատերազմը Խորհրդային Միութիւնը յայտարարեց Հայրենական Մեծ Պատերազմ, զոր վերջ գտաւ 9 Մայիս 1945–ին՝ Գերմանիոյ պարտութեամբ: 2 Սեպտեմբեր 1945–ին Գերմանիոյ դաշնակից ճափոնի անձնատուութեամբ արտեցաւ Երկրորդ Աշխարհամարտը:

Այս աննախադէպ պատերազմին ներքաշուեցաւ 61 երկիր՝ 1,7 միլիարդ բնակչութեամբ, որոնցմէ 110 միլիոնը կը ծառայէր զինուած ոյժերուն մէջ: Զոհուեցաւ աւելի քան 50 միլիոն եւ հաշմանդամ դարձաւ 95 միլիոն հոգի:

Հայութեան մասնակցութիւնը պատերազմին Խ.Ա.Հ.Մ.ի





Ֆ. Խ. Ա. Չ. ի դրոշմ ու զինանշանը

զորքերու կազմին մէջ պայմանաւորուած էր ոչ միայն քաղաքացիական հնազանդութեան զգացումով: Թուրքիան դաշնակցեր էր զերմանիոյ հետ եւ, եթէ վերջինս յաղթեր Աթալինկրատի (յետագային՝ Վելկոկրատ) ճակատամարտին, Խորհրդային Չայաստանի սահմանին մօտակայքը կերտնացուած բրքական 26 զօրաբաժին պի-

տի սկսէր յարձակումը: Գասկնալի է, որ ատիկա կը նշանակէր հայոց ցեղասպանութեան շարունակութիւն Արեւելեան Չայաստանի մէջ՝ 1940-ական թուականներուն: Եւ պատահական չէ, որ հայերը մեծ նուիրումով մասնակցեցան պատերազմին ոչ միայն Խ. Ա. Չ. Ս. ի զօրքերու կազմին մէջ (աւելի քան 450 հազար հոգի), այլ նաեւ՝ հակահիթլերեան դաշինքի երկիրներու բանակներուն մէջ:

Պատերազմին մասնակցեցաւ հայկական ազգային վեց զօրաբաժին (76-րդ չեռնահրաձգային, 89-րդ («Թմամանեան» պատուաւորաւ արժանացած), 261-րդ, 390-րդ, 408-րդ եւ 409-րդ): Բացի նշուածներէն, հայերը մեծ թիւ կը կազմէին շարք մը ուրիշ զօրաբաժիններու մէջ ալ: Գայերը մասնակցեցան գրեթէ բոլոր կարեւորագոյն ճակատամարտերուն:

Խ. Ա. Չ. Ս. ի գրաւեալ տարածքներուն մէջ աչքի ինկան նաեւ հայ փարթիզանները, որոնք ստեղծեր էին առանձին զօրամիւտրումներ («Յաղթանակ», «Կարմիր Աստղ» եւ Միկոյեանի անուան փարթիզանական ջոկատները):

Չայրենական Մեծ Պատերազմին հայ ժողովուրդը տուաւ Խ. Ա. Չ. Ս. ի 107 հերոս, Փառքի 3 աստիճաններու 27 շքանշանակիր, 70 հազար հայ մարտիկներ ու հրամանատարներ պարգեւատրուեցան տարատեսակ շքանշաններով ու մետալներով: Միայն պատերազմի ժամանակ հայերն ունեցան շուրջ 70 զօրավար: Գայ զօրահրամանատարներէն չորսն արժանացան մարաջախտի (մարշալ) կոչման՝ Խորհրդային Միութեան կրկնակի հերոս, մարաջախտ Յովհաննէս Բաղրամեանը, օղային ոյծերու մարաջախտ Սերկէյ Խուտիաքովը (Արմենակ Խանփերեանց), զրահա-հրասայլային զօրքերու գլխաւոր մարաջախտ Գամազասպ Բարաջանեանը եւ Խ. Ա. Չ. Ս. ի նաւատորմի ծովակալ Յովհաննէս Իսակովը (Տէր Իսահակեան):

Սփիւռքահայութեան մասնակցութիւնը երկրորդ Աշխարհամարտին: Արտերկրի հայութիւնն ալ ետանդուն մասնակցութիւն ունեցաւ պատերազմին, ընդ որուն, այդ ջրաւ ինչպէս զինուած պայքարի, այնպէս ալ Խորհրդային Չայաստանի համար նիւթական միջոցներու հանգանակութեան միջոցով: Սփիւռքի մէջ հաւաքուած զոււարներով ստեղծուեցան «Սասունցի Դաւիթ» եւ «Կեներալ Բաղրամեան» հրասայլային շարասիւնները:



«Սասունցի Դաւիթ» հրասայլային շարասիւնը

Ֆրանսայի մէջ հայերն աշխուժօրէն մասնակցեցան ֆաշիզմի դէմ ֆրանսացի ժողովուրդի մղած պայքարին, որ յայտնի է Դիմադրութեան Շարժում անունով: Այդ շարժման պատմութեան ամենէն ակնառու էջերէն է Միսաք Սանուշեանի (յետմահու՝ Ֆրանսայի ազգային հերոս) ջոկատին գործունէութիւնը:

Գայ փարթիզաններն իրենց կարեւոր ներդրումն ունեցան Յունաստանի եւ ուրիշ երկիրներու ազատութեան համար պայքարին մէջ:

Շուրջ 100 հազար սփիւռքահայ պատերազմին մասնակցեցաւ դաշնակից երկիրներու բանակներուն մէջ (միայն Ա. Ս. Ն. ի բանակին մէջ՝ 18,5 հազար մարտիկ ու սպայ):

Գայոց հարկադրուած համագործակցութիւնը հիթլերեան վարչակարգին հետ:



Մարտաբախտ Յոլիաննես Բաղդամեան



Արսար Մանուշեան

Գերմանիոյ հետ մերձեցող թուրքերը 1939–ին կը փորձէին գերմանական կառավարութիւնը հանդել, որ հայերն իբր թէ սեմական ծագում ունին, ուստի պէտք է ոչնչացուին հրեաներուն հետ միասին: Եւրոպայի հայոց կոտորածները կանխուեցան շնորհիւ Պեռլինի Դայ Ազգային Խորհուրդին (ղեկավար՝ Պեռլինի համալսարանի փրոֆեսոր Արտաշէս Արեղեան), որուն հրապարակումները, նաեւ եւրոպացի գիտնականներու ուսումնասիրութիւններն անփոփոզ «Դայերն Արիացիներ են» ժողովածուն համոզեցին նացի վերնախաւը, որ հայերն արիացիներ (հնդեւրոպացիներ) են:

Սկսելով պատերազմը, Գերմանիան երկար ատեն որեւէ լուրջ պարտութիւն չէր կրած եւ գերմանացիները կանգնեցնելու որեւէ երաշխիք չկար: Գերմանիոյ եւ Թուրքիոյ միջեւ նախնական պայմանաւորութիւններ կար, որ վերջինս Աթախկրատի անկումէն ետք պէտք է պատերազմ սկսէր Խ. Ս. Գ. Ս.ի դէմ, ընդ որում, ներխուժելով Դայաստան եւ Վրաստան: Իսկ ատիկա կը նշանակէր, որ կրնար իրականանալ հայոց լիակատար ցեղասպանութիւնը Արեւելեան Դայաստանի մէջ:

Այդ պայմաններուն մէջ, հայկական որոշ ոյժեր (յատկապէս Պաշնակցութիւնը) վճռեցին համագործակցիլ նացիական կառավարութեան հետ: Գերմանացիք տարբեր ազգերու շագնագործներէն կը կազմէին ազգային լեզուներ՝ զանոնք խորհրդային իշխանութեան դէմ զործածելու նպատակով: Գրոյքի եւ ուրիշներու նախածեռնութեամբ 1941–ի Պեկտեմբերին ստեղծուեցաւ «Դայկական Լեզու»-ը, որու մարտիկներուն թիւը յետագային հասաւ 25 հազար հոգի: Աւելի ուշ, այդ նախածեռնութեան միացան Գարեգին Լժոժեղ, Դ. Դ. Դ. երկրորդ վարչապետ Ալեքսանտր Խատիսեանը եւ ուրիշներ:

Բարձրախտաբար, Աթախկրատի ժակատամարտին գերմանացիներն ի վերջոյ պարտուեցան եւ թրջական ներխուժում տնդի չուեցաւ: Այնուամենայնիւ, պէտք է արժանին մատուցել Պեռլինի Դայ Ազգային Խորհուրդի անդամներուն եւ «Դայկական Լեզու»-ը նախածեռնողներուն, որոնք նախ փրկեցին եւրոպայի հայութիւնը, ապա, իրադարձութեանց բացասական գարգացման պարագային, պիտի փորձէին կանխել Թուրքիոյ իրագործելիք հայկական նոր քարոզերը:

Դարցումներ եւ առաջադրանքներ

1. Պատմեցէ՛ք սթալինեան բռնատիրութեան, յատկապէս, 1936–1938 թուականներուն մասին:
2. Խ. Ս. Գ. Ս.ի բանակի կազմին մէջ բանի՞ հայ զինուորական մասնակցած է երկրորդ Աշխարհամարտին: Որո՞նք չին խորհրդային բանակի ռայկական զօրաբաժինները:
3. Սփիւռքադայերն ի՞նչ մասնակցութիւն ունեցան պատերազմին:
4. Պատմեցէ՛ք հիթլերեան կառավարութեան հետ հայկական որոշ շրջանակներու եւ անհատներու հարկադրուած գործակցութեան մասին:

Ազգային զարթոնքը 1960–80–ական թուականներում: Եռսիճ

Սբալինի մահին միայն երեք տարի էր (1956–ին), անոր հաստատած բռնափորձի մը ըննադատեց Խ. Ա. Գ. Ս.ի նոր առաքնորդ Լիբիբա Խրուշչովը, եւ բռնադատուած անմեղներն արդարացուեցան: Սկսաւ յարաբերական ազատութեանց շրջան մը, որու ընթացքին հնարաւոր եղաւ նաեւ բարձրաձայնել ազգային խնդիրներու մասին: Թոյլ տրուեցաւ 1965–ին կիսապաշտօնապէս նշել Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակը, ինչը Խորհրդային Իշխանութիւնն արգիլել էր 1926–ին: 1964–ին ստեղծուեցաւ Ափիւռքահայութեան Գեղ Մշակութային Կասկի Կոմիտէն: 1967–ին աւարտեցաւ Օիծեմնակաբերդի յուշահամալիրին կառուցումը: 1968–ին նշուեցաւ Մարդարապատի հերոսամարտին 50–ամեակը եւ բացուեցաւ յուշահամալիրը ճակատամարտի վայրին մէջ: Այս ազգային յառաջդիմական ծրագիրներու իրականացման մէջ զգալի աւանդ ունեցաւ 1960–1966 թուականներուն Գայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Էաքով Զարուպեանը:

1960–ական թուականներուն հայերը կրկին բարձրացուցին Գարաբաղի խնդիրը: Լեռնային Դարաբաղը եւ Լախիջեւանը Խորհրդային Գայաստանին վերամիաւորելու հարցը Խ. Ա. Գ. Ս.ի բարձրագոյն իշխանութեանց առջեւ: Բարձրացուց Խորհրդային Գայաստանի ղեկավարութիւնը, սակայն նշուած խնդիրները դրական լուծում չստացան:

Ազգային խնդիրներու լուծման նպատակով 1960–80–ական թուականներուն Գայաստանի մէջ ստեղծուեցան զաղտնի կազմակերպութիւններ եւ խմբակներ, որոնցմէ ամենամեծն ու ազդեցիկը «Ազգային Միացեալ Կուսակցութիւն»ն էր, զոր կը իրաւտարակէր «Երկունք» եւ «Փարոս» ընդլատարական թերթերը: Իշխանութիւններն ամենայն խստութեամբ եւ դաժանութեամբ սկսան վերաբերիլ այլախոհներուն: Նշուած տարիներուն, տարբեր չափերու բանտարկութեան եւ աքսորի ենթարկուած են աւելի քան 70 հազար այլախոհներ:

Ազգային զարթոնքին նպաստեց նաեւ սփիւռքահայութեան՝ 1946–ին մեկնարկած Մեծ Գայրենադարձութիւնը: 1940–1980–ական թուականներուն արտախորհրդային Ափիւզքէն Գայրենիք վերադարձան շուրջ 130 հազար սփիւռքահայեր: Գայրենադարձներուն մէջ էին գիտնականներ, հմուտ արհեստաւորներ, բազմաթիւ անուանի մտաւորականներ:

Սփիւռքի զինեալ պայքարը յանուն Գայ Դատի: Գամայն հայութեան ազգային զարթոնքը խթանեց 1970–ական թուականներու կէսին Սփիւռքի մէջ սկսած զինեալ պայքարը յանուն Գայ Դատի: Պայքարի ազդանշանը տուաւ 78–ամեայ Գուրգէն Եանիկեանը՝ 27 Յունուար 1973–ին Գալիֆորնիոյ Սանթա Պարապարա քաղաքին մէջ երկու թուրք դիւանագետներու սպանութեամբ:

Յունուար 1975–էն մինչեւ Դեկտեմբեր 1990–ը թրջական թիրախներու դէմ բռնարարներ իրականացուցին «Գայաստանի Ազատագրութեան Գայ Գաղտնի Բանակ» (Գ. Ա. Գ. Բ., օտարալեզու յապաւմամբ՝ ASALA), «Գայոց Ցեղասպանութեան Արդարութեան Մարտիկներ», «Գայ Յեղափոխական Բանակ» եւ ուրիշ կազմակերպութիւններ: Գայ մարտիկներէն շատեր զոհուեցան (Զօհրապ Սարգիսեան, Լեւոն Էքմէքճեան եւ Մկրտիչ Սատարեան՝ Թուրքիոյ մէջ, Լիզպոնի «Յինգ»ը եւ այլք), ուրիշներ՝ բանտարկուեցան: Պայքարը տուաւ իր արդիւնքը: 1980–ական թուականներէն՝ բազմաթիւ երկիրներ, միջազգային կազմակերպութիւններ եւ պետական կամ տեղական ինքնակառավարման առանձին վարչական միաւորներ ճանչցան Գայոց Ցեղասպանութիւնը: Գայոց Ցեղասպանութիւնը ճանչցած առաջին միջազգային կազմակերպութիւններէն էին «Ժողովուրդներու Մշտական Դատական Ատեան»ն (18 Ապրիլ 1984) ու Եւրոպական Խորհրդարանը (18 Յունիս 1987): Պետութիւններէն առաջինը ճանչցած էր Ռուսկուլէյը՝ դեռ Մեծ Եղեռնի 50–ամեակի օրերուն՝ 1965–ին:

Արցախեան ազատամարտի նոր փուլը: Խորհրդային պետութեան ներսում ստեղծուած ճգնաժամը յաղթահարելու նպատակով, Խ. Ա. Գ. Ս.ի նոր ղեկավար Սիխաչի Կորաթչովը 1985–ին հանդէս եկաւ «վերականգնման» եւ հասարակական կեանքի ժողովրդավարացման քաղաքականութեամբ: Սկսան բարձրաձայնուիլ նախորդ տասնամեակներուն բռնութեամբ լռեցուած բազմաթիւ խնդիրներ: Անոնց առաջիններէն մէկն եղաւ Սիցախի հարցը:





Չայ ազատամարտիկներ



Հ. Հ.ի զինանշանն ու դրոշմ



Լ. Ղ. Հ.ի զինանշանն ու դրոշմ

Չայաստանը՝ փակելով այն թուրի ճամբաները, որոնց միջոցով երկիր կը մտնէր ներսնսնուող ապրանքներուն շուրջ 80%-ը, Ատրաշխանի տարածքի հայկական բազմաթիւ բնակավայրերու հայերը բռնի տեղահանուեցան:

Սակայն հայութեան միասնական ոգին յաղթահարեց թէ խորհրդային իշխանութեանց սազրանքները, թէ ատրաշխանա-թրքական ոյժերու համաբրցական նկրտումները: Չայրեհիքի պաշտպանութեան համար կամաւոր զօրանուցուած հայ ազատամարտիկները, ոգեշնչուած մեր նախնիներու հերոսական ոգիով ու պատգամներով, ոչ միայն կանգնեցուցին թշնամին, այլեւ՝ ազատագրեցին Լեռնային Ղարաբաղի ու յարակից հայկական բնիկ տարածքները:

1 Ղեկտեմբեր 1989-ին, Հ. Խ. Ս. Հ.ի Գերագոյն Խորհուրդը եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհուրդը, իմնուելով ազգերու ինքնորոշման սկզբունքին վրայ եւ նկատի ունենալով հայ ժողովուրդին կամքը, կայացուցին Հ. Խ. Ս. Հ.ի եւ Լ. Ղ. Ի. Ս. Հ.ի վերամիադրման պատճառով որոշումը:

1990-1991 թուականներու իրադարձութիւններն ու, յատկապէս, միջազգային քաղաքական մթնոլորտը հաշուի առնելով, հայ քաղաքական շրջանակները որոշեցին խնդրին լուծումը գտնել հայկական պետական այս երկու միւլուրներու: անջատարար անկախացման ճամբով:

2 Սեպտեմբեր 1991-ին Լ. Ղ. Ի. Ս. Հ.ի եւ Շահումեանի շրջանի ժողովրդային պատգամաւորներու միացեալ նստաշրջանը յայտարարեց Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Չանրապետութեան ստեղծումը: Նոյն տարուան 10 Ղեկտեմբերին միջազգային դիտորդներու մերկայութեամբ Լ. Ղ. Հ.ի մէջ կատարուեցաւ համաժողովրդային հանրաքուէ, որու մասնակիցներուն բացառաւ մեծամասնութիւնը կողմ արտայայտուեցաւ Լ. Ղ. Հ.ի անկախութեան:

Արցախեան ազատամարտի շրջադարձային իրադարձութիւններէն եղան 9 եւ 18 Մայիս 1992-ին Շուշիի եւ Բերձորի (Լաչինի) ազատագրումը, որով հայկական երկու հանրապետութիւնները ցանաքային ապահով ու մշտական կապ ունեցան:

1988-ի Փետրուարին Ստեփանակերտի ու Երեւանի մէջ համաժողովրդային հանրահաւաքներ սկսան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Խորհրդային Չայաստանին վերամիադրելու պահանջով: 20 Փետրուար 1988-ին Լ. Ղ. Ի. Ս. Հ.ի պետական իշխանութեան քարձրագոյն մարմինի՝ Մարզային Խորհուրդի 20-րդ նստաշրջանը, մեկնելով ժողովուրդի կամքէն եւ Խ. Ս. Հ. Ս. Հ.ի սահմանադրութենէն, դիմեց Չայաստանի, Ատրաշխանի եւ Խ. Ս. Հ. Ս. Հ.ի Գերագոյն Խորհուրդներուն՝ Լ. Ղ. Ի. Ս. Հ.ի Խորհրդային Չայաստանին վերամիադրելու խնդրանքով: ժողովուրդին պատասխարանքով՝ Հ. Խ. Ս. Հ.ի Գերագոյն Խորհուրդը 15 Յունիս 1988-ին դրականօրէն արձագանգեց Լ. Ղ. Ի. Ս. Հ.ի Մարզային Խորհուրդի դիմումին, ինչը, սակայն, թշնամաբար ընդունեցին թէ Ատրաշխանն ու թէ Սոսնուան:

Չայութեան ոգին կուորելու համար գործի դրուեցան նոյնիսկ ամենէն աներեւակայելի միջոցները: 27-29 Փետրուար 1988-ին իշխանութեանց հրահանգով ու մասնակցութեամբ իրականացուեցաւ ատրաշխանական Սումկայիթ քաղաքի հայոց ցեղասպանութիւնը: 1989-ին Ատրաշխանը շրջափակման ենթարկեց

Հայկական ոյժերը բազմաթիւ ռազմաճակատներու վրայ լիակատար խղթանակ տարին թշնամիի՝ յաճախ քանի մը անգամ զերազանցող ոյժերուն նկատմամբ: Ռուսաստանի ու Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (Ե. Ա. Հ. Կ.) Սինսքի հիւմքին միջնորդութեամբ 12 Մայիս 1994-ին զինադադար կնքուեցաւ: Արցախեան հարցը դրուեցաւ դիւանագիտական բանակցութեանց սեղանին եւ մինչեւ այսօր կը քննարկուին անոր լուծման զանազան տարբերակները:

Չ. Հ.ի անկախութեան հռչակումը: Չ. Խ. Ս. Հ.ի մէջ անկախութեան շարժման հիմքերը հայ ալլախոհները դրեր էին տակաւին 1960-70-ական թուականներու: Այս պայքարը նոր խթան ստացաւ Արցախեան Ազատամարտին շնորհիւ:

Արցախեան Շարժման ղեկավարումն իրականացնու; «Ղարաբաղեան Շարժման Հայաստանի Կոմիտե»ն («Ղարաբաղ» Կոմիտե), իր նպատակներուն մէջ ներառելով ազգային տարբեր զերխնդիրներ, 1989-ին վերակազմաւորուեցաւ Հայոց Համազգային Շարժման (Հ. Հ. Շ.): Վերջինս որոշեց իշխանութեան հասնիլ խաղաղ, ժողովրդավարական ընտրութեանց միջոցով: Նորընտիր խորհրդարանին մէջ պայքարը ծաւալեցաւ Հ. Հ. Շ.ի եւ Հ. Կ. Կ.ի (Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան) միջեւ, զոր աւարտեցաւ Հ. Հ. Շ.ի յաղթանակով: 4 Օգոստոս 1990-ին Գերագոյն խորհուրդի նախագահ ընտրուեցաւ «Ղարաբաղ» Կոմիտեի անդամ, Հ. Հ. Շ.ի ղեկավարներէն Լեւոն Տեր Պետրոսեանը:

Խորհրդային Հայաստանի Գերագոյն խորհուրդը 23 Օգոստոսի 1990-ին հրապարակեց «Հռչակագիր Հայաստանի անկախութեան մասին» վերնագրուած փաստաթուղթը, զոր Հայաստանի անկախութեան գործընթացի սկիզբն ազգարարեց: Այս հռչակագիրով՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը վերանուանուեցաւ «Հայաստանի Հանրապետութիւն»: Հռչակագիրին մէջ յատուկ կէտ մտցուեցաւ Հայոց Յեղատպանութեան մասին:

Մէկ տարիէ աւելի տեւած անկախութեան գործընթացն իր եզրագիծին հասաւ 21 Սեպտեմբեր 1991-ին, նոր Հայաստանի մէջ կառարուեցաւ հանրաքուէ Խ. Ս. Հ. Ս.ի կազմէն ղուրս գալու եւ անկախանալու հարցով: Քուէարկութեան իրաւունք ունեցողներուն աւելի քան 94%-ը (2 միլիոն 43 հազար հոգի) քուէարկեց յանուն անկախութեան: Հանրաքուէի արդիւնքներուն հիման վրայ Հ. Հ.ի Գերագոյն խորհուրդը 23 Սեպտեմբեր 1991-ին Հայաստանի Հանրապետութիւնը հռչակեց անկախ պետութիւն:

Կարճ ժամանակ ետք Հ. Հ.ի մէջ մտցուեցաւ նաեւ նախագահական կառավարում. 16 Հոկտեմբեր 1991-ին, ժողովրդային քուէարկութեամբ, Հ. Հ.ի առաջին նախագահ ընտրուեցաւ Լեւոն Տեր Պետրոսեանը:

Խ. Ս. Հ. Ս.ի փլուզումն հետզհետէ աւելի ակնյայտ կը դառնար: 8 Դեկտեմբեր 1991-ին, Սինսքի մերձակայ Պելովոժնոցի բաւուտին մէջ Ռուսաստանի, Ռւքրայինայի ու Պելլատուսի ղեկավարները Խ. Ս. Հ. Ս.ի գոյութիւնը դադրեցնելու եւ Անկախ Պետութիւններու Համագործակցութիւն (Ա. Պ. Հ.) ստեղծելու համաձայնագիր ստորագրեցին:

21 Դեկտեմբեր 1991-ին, Ղազախիստանի այն ժամանակուայ մայրաքաղաք Ալմա Աթայի մէջ նախկին խորհրդային 11 հանրապետութիւններ՝ Ռուսաստանը, Ռւքրայինան, Պելլատուսը, Հայաստանը, Ղազախիստանը, Իւզբէկիստանը, Տաճիկիստանը, խրխզիստանը, Թիւրքմենիստանը, Մոլտովան եւ Ատրալյանը ստորագրեցին Ա. Պ. Հ.ի իրենց անդամութեան համաձայնագիրը: Այսպիսով փակուեցաւ խորհրդային Միութեան շուրջ 70-ամեայ պատմութեան վերջին էջը:

1991-ի վերջերէն սկսաւ Հ. Հ.ի միջազգային ճանաչման գործընթացը: Աշխարհի զոնքէ քուր երկիրները ճանչցան Հ. Հ.ը եւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատեցին անոր հետ: 2 Մարտ 1992-ին Հայաստանը Սիւպեալ Ազգերու Կազմակերպութեան լիիրաւ անդամ դարձաւ: Հ. Հ.ն այսօր միջազգային շարք մը կազմակերպութեանց կ'անդամակցի:

Հարցումներ եւ ստորագրանքներ

1. Պատմեցի՞ք 1960-80-ական թուականներու ազգային զարթոնքին մասին:
2. Ներկայացուցէ՞ք Ս19փիլոսփի զինեալ պայքարը յանուն Հայ Դատի:
3. Ո՞ր պատմական որոշումով սկսաւ Արցախեան շարժման նոր փուլը:
4. Ե՞րբ հռչակուեցաւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Ինչպիսի՞ն էր Լ. Պ. Հ.ի անկախութեան հանրաքուէին արդիւնքը:
5. Ե՞րբ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հանրաքուէն եւ ի՞նչ արդիւնք արձանագրուեցաւ: Հ. Հ.ն ե՞րբ Մ. Ա. Կ.ի լիիրաւ անդամ դարձաւ:

34. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ 1918 ԹՈՒՎԱԿԱՆՆԵՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Յ. Խ. Ս. Յ.ի մշակոյթը 1920–1945 թուականներում: Խորհրդային իշխանութիւնն ամենէն սկիզբէն հաստատեց գաղափարախօսական բռնաճնշումներու համակարգ մը, որուն նպատակը կոմունիստական մտայնածին հասարակութեան ստեղծումն էր: Ասոր համար՝ անհրաժեշտ էր ունենալ գրականաչ հանրութիւն, ուստի իշխանութիւնները մեծ ուշադրութիւն դարձուցին կրթութեան ոլորտին: Ծրագրուած եւ նպատակաւորապէս գործունեութեամբ շնորհիւ, 1940–ին անգրագիտութիւնը հիմնականին մէջ վերացած էր Խորհրդային Չայաստանի մէջ:

1922–ին Երևանի մէջ հիմնուեցաւ հանրապետական հանրային գրադարանը (1925–ին կոչուեցաւ Ալեքսանդր Միասնիկեանի անուամբ): 1940–ին Չայաստանի մէջ կար 900–է ւաւելի հանրային գրադարան, կը գործէր 9 քարոզարարական ուսումնական հաստատութիւն՝ 11.000 ուսանողներով:

Անծ ուշադրութիւն դարձուեցաւ գիտութեան զարգացման: 1921–ին ստեղծուեցաւ Չայաստանի Գիտական Գիմնարկը, զոր 1925–ին վերափոխուեցաւ Գիտութեան եւ Արուեստի Գիմնարկի:

1935–ին հիմնուեցաւ Խ. Ս. Յ. Մ.ի Գիտութիւններու Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղը:

1939–ին, Սայր Աթոքին մատենադարանը Էջմիածինէն Երեւան տեղափոխուեցաւ եւ կառավարութեան կից պետական ձեռագրատուն–հիմնարկի կարգավիճակ ստացաւ:

Գրականութեան ապաւորչին մէջ, ստեղծագործող մեծերու կողքին, 1920–ական թուականներուն իրենց նոր խօսքը բերին Եղիշէ Զարննը, Ակսէ Բակունցը, Գուրգէն Մահարին եւ ուրիշներ: 1932–ին հիմնուեցաւ Չայաստանի Գրողներու Միութիւնը, որուն միջոցով պետութիւնը կը ձգտէր իր զաղափարախօսական մեքենային մասը դադարեցնել հայ գրողները:

1932–ին ստեղծուեցաւ Չայաստանի Սոցիետական Կերպարունստագէտներու Միութիւնը, որուն մէջ միաորուեցան ժամանակի մեծատաղանդ արուեստագէտներ Մարտիրոս Ասրեանը, Յակոբ Կոջոյեանը, Եղիշէ Թադևոսեանը, Փանոս Թերլեմեզեանը եւ ուրիշներ:

Ժամանակի ճարտարապետութեան եւ քաղաքաշինութեան զխաւոր ներկայացուցիչն Ալեքսանդր Թամանեանն էր: Ան Երեւանի զլիսաւոր յատակագիծը կազմեց եւ բազմաթիւ հոյակապ կառոյցներ (Չայաստանի կառավարութեան, օփերայի եւ պալէի պետական թատրոնի շէնքերը եւ այլն) նախագծեց:

1923–ին քաջուեցաւ Երեւանի պետական նրամշտանոցը (քոմսերվատորիա, յետագային կոչուեցաւ Կոմիտասի անուամբ), ապա ստեղծուեցաւ պետական ֆիլիատրոնիան, իսկ 1933–ին քաջուեցաւ օփերայի եւ պալէի պետական ակադեմիական թատրոնը:

1922–ին քաջուեցաւ Երեւանի պետական դրամատիկական թատրոնը, զոր 1937–ին ստացաւ Գաբրիէլ Սունդուկեանի անունը:

Ծնունդ առաւ հայկական արունստի նոր տեսակ մը՝ շարժանկարը (սինեմա): Հայկական շարժարունստի առաջնեկն եղաւ 1925–ին նկարահանուած «Նամուս» անձայն ֆիլմը: Առաջին հնչունային ֆիլմը՝ «Պետա»-ն, դիտողի դատին յանձնուեցաւ 1935 թուականին:

Գիտութեան եւ մշակոյթի մարզերուն մէջ մեծ ձեռքբերումներ եղան նոյնիսկ երկրորդ Աշխարհամարտի տարիներուն: Խ. Ս. Յ. Մ.ի Գիտութիւններու Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղի հիմքի վրայ 1943–ին ծնաւ Չայաստանի Գիտութիւններու Ակադեմիան (հիմնադիրներ՝ հայագետ–արեւելագետ Յովսէփ Օրբելի, քննախօս Լեւոն Օրբելի, քննադատներ Արտեմ Ալիբանեան եղբայրներ, աստղաբնագէտ Վիքթոր Գամբարձումեան, շեղաբան Յրաչեայ Աճառեան, զրականագետ Մանուկ Աբեղեան, պատմաբան Յակոբ Մանանդեան, քանաստեղծ Ա.Ետրք Կահանեան): Ակադեմիայի առաջին նախագահը ընտրուեցաւ Յովսէփ Օրբելին: 1947–ին զայն փոխարինեց եւ մինչեւ 1994 թուականը ակադեմիան ղեկավարեց Վիքթոր Գամբարձումեանը (1994–էն մինչեւ մահը 1996–ին՝ պատուոյ նախագահ):



Վիքթոր Համբարձումեանի արձանը Երևանի մէջ (քանդակագործ՝ Տարիչ Յակոբեան)

Հայ գրականութիւնը լուրջ ձեռքբերումներ ունեցաւ պատերազմի տարիներուն: Գրուեցան պատմավեպեր (Դերենիկ Դեմիրճեանի «Վարդանանք»ը, Ստեփան Զօրեանի «Պապ Թագաւոր»ը), որոնք միտումնաւոր ինքնազոհութեամբ հերոսական դրոշմագրութիւններ արձանագործեցին մարտնչող ժողովուրդի հայրենասիրական ոգին:

Հայրենասիրական եւ քնարերգական թեմաներով բարձրարուեստ ստեղծագործութիւններ հրատարակեցին Աւետիք Իսահակեանը, Նայիրի Զարեանը, Յովհաննէս Շիրազը եւ ուրիշներ:

Յ. Խ. Ա. Հ.ի մշակութային կեանքը Երկրորդ Աշխարհամարտէն ետք: Կը շարունակէր ընդլայնուիլ կրթական համակարգը. 1980-ին Հայաստանի մէջ կը գործէին 1500 դպրոց, 14 բարձրագոյն ուսումնական հաստատութիւն՝ շուրջ 50.000 ուսանողներով եւ աւելի քան 1300 գրադարան:

Չնայած առկայ գաղափարախօսական ճնշումներուն ու սահմանափակումներուն, լուրջ ձեռքբերումներ արձանագրուեցան հայագիտութեան մարզին մէջ: Կարեւոր իրադարձութիւն էր «Հայ ժողովրդի Պատմութիւն» ութհատորեակի հրատարակումը, ուր ժամանակի գիտութեան մակարդակով ներկայացուեցաւ հայոց պատմութիւնը՝ սկիզբէն մինչեւ 1980-ական թուականները:

Յետպատերազմեան տարիներուն հիմնուեցաւ Բիւրականի աստղագիտարանը, որ Վիքթոր Համբարձումեանի գլխաւորութեամբ դարձաւ աստղագիտութեան համաշխարհային գլխաւոր կեդրոններէն մէկը: 1967-ին գործարկուեցաւ էլեկտրոնային արագացուցիչը՝ առաջինը Խ. Ա. Հ.ի մէջ:

Խոշորագոյն իրագործում էր «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի հրատարակումը (1974-1988)՝ բաղկացած 12 մեծածաւալ հատորէ (լրացուցիչ հատոր մը նուիրուեցաւ միայն Խորհրդային Հայաստանին): Հայաստանի անկախութեան նախօրեակին ու անկէ ետք հրատարակուեցաւ նոր, քառահատոր հանրագիտարան (1990-2003), ուր փորձ եղաւ սրբագրելու նախորդ, մեծ հանրագիտարանին մէջ տեղ գտած գաղափարախօսական սխալները, թերիներն ու բացթողումները:

Գրականութեան ասպարէզին մէջ նոր, բարձրարժէք երկեր ստեղծեցին Աւետիք Իսահակեանը, Դերենիկ Դեմիրճեանը, Հրաչեայ Զեչարը, Լեւ Կամսարը, Ստեփան Զօրեանը, Գուրգէն Մահարին եւ ուրիշներ: Նոր սերունդի գրողներէն յատկապէս յայտնի դարձան բանաստեղծներ Յովհաննէս Շիրազը, Պարոյր Մեակը, Սիւվա Կապուտիկեանը, Վահագն Դաթեանը, Գեորգ Էմինը, Համո Սահեանը, արձակագիրներ Հրանդ Մաթեոսեանը, Մուշեղ Գալշոյեանը, Մերօ Խանգատեանը, Վարդէն Պետրոսեանը եւ շատ ուրիշներ:

Նոր ժամանակները կը պահանջէին քաղաքաշինական եւ ճարտարապետական նոր լուծումներ, զորս յաջողութեամբ իրականացուցին հայ ճարտարապետները՝ միահիւսելով աւանդական ճարտարապետութեան տարրերն ու ժամանակակից մտնեցումները: Բարձրացան մեծարժէք կառոյցներ՝ Մատենադարանի եւ Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանին շէնքերը, Հայոց Ցեղասպանութեան գոհերու եւ Սարդարապատի հերոսամարտի յուշարձանները: Նորութիւններ էին «Հրազդան» մարզադաշտը, «Ձուարթնոց» օդանւթակայանը, Երևանի գետնուղին (մեթրօ), Մարգար-համերգային Համալիրը եւ այլն: Ժամանակի ականաւոր ճարտարապետներէն էին Ռաֆայէլ Իսրայէլեանը, Սարք Գրիգորեանը, Կարօ Հալապեանը, Ճիմ Թորոսեանը, Սաշուր Զալաշեանը եւ ուրիշներ:

Քանդակագործութեան մարզին մէջ իրենց զգալի աւանդն ունեցան Երուանդ Բոչարը, Նիկողայոս Նիկողոսեանը, Լեւոն Թորմաճեանը եւ ուրիշներ:

Նոր քարձուցններու հասաւ հայ կերպարուեստը՝ ի դէմս Սարտիրոս Սարեանի, Գրիգոր Խանճեանի, Սիմեա Աւետիսեանի, Էտուարտ Իսաբէկեանի, Յակոբ Յակոբեանի եւ ուրիշներու:



Սասունցի Դաւիթի արձանը
(ըսմիակազոր՝ Երուանդ Բուշար)



Սեբեկյ Փարսմանով

Հայ թատրոնի նշանավոր ներկայացուցիչներ Կահրամ Փակագնանի, Հրաչեայ Ներսիսեանի, Անտո Անտեսանի կողքին փայլեցան Սոր սեբուկովի ներկայացուցիչներ Մուշաբսիա Սիմոնեանը, Բարգեճ Ներսիսեանը, Խորեն Աբրահամեանը, Սոս Սարգսեանը, Մետո Սկրտչեանը, Վարդուհի Վարդեղեսեանը, Կարպ Խաչվանքեանը, Արմեն Ճիւարիսանեանը եւ ուրիշներ:

Ստեղծուեցան աթժբաւոր Սոր ֆիլմեր՝ «Նահապետը», «Չորի Սիրուն», «Մենք ենք, մեր սարերը», «Հին օրերի երգը», «Նոան գոյնը» եւ այլն: Աչքի ինկան շարժանկարի բեմադրիչներ Զենոյիկ Սալեանը, Երուանդ Տովկաբեանը, Սեբեկյ Փարսմանովը եւ ուրիշներ:

Երաժշտութեան բնագաւառի ականավոր ներկայացուցիչներն եղան Արամ Խաչատրեանը, Աննո Բարսեղեանը, Անտո Տրտրեանը, Էտուարտ Սիրզոյեանը, Տիգրան Սանտուրեանը, Ռուբէն Ամիրխանեանը եւ ուրիշներ: Նշանավոր երգիչներն էին Լուսինէ Զաքարեանը, Գոհար Գասպարեանը, Հայրիկ Սուրառեանը, Յովհաննէս Պատալեանը, Օֆելիա Համբարժումեանը, Ռուբէն Մաթեոսեանը եւ ուրիշներ:

Հայաստանի անկախացումէն նոց գլխուքեան ու մշակոյթի սգաւտ, առանց նոց զարգացման փարախօսական կաշկանդումներու զարգացման հնարաւորութիւն ստեղծուեցաւ: Մակայն, պատերազմական վիճակը, երկրաշարժի աղետին հետեւանքները եւ թշնամի դրացիներու կողմէ նրկին շրջափակուեց ստեղծեցին ընկերային-տնտեսական ծանր պայմաններ, որոնք արգելակեցին կեանքի բնականոն ընթացքը: Մշակոյթի մարզին մէջ ալ նգնաժամային իրավիճակ ստեղծուեցաւ. երկրէն հեռացան հազարաւոր մտաւորականներ, փակուեցան բազմաթիւ գիտա-հետազոտական հիմնարկներ ու հանդային գրադարաններ: Երկրին մէջ մնացած մտաւորականները փորձեցին պահպանել ստեղծուած աթժբները՝ մեծ զոհողութեանց գնով:

1990-ական բուականներու վերջերուն աստրժանաբար սկսաւ կայունանալ երկրին ընկերային-տնտեսական վիճակը, ինչը դրականօրէն ազդեց գիտա-մշակութային կեանքին վրայ: Աստիճանաբար վերականգնուեցան ու վերելքի ուղին բռնեցին բազմաթիւ ոլորտներ:

Անկախութիւնը հնարաւորութիւն տուաւ ազաւտ ու անկաշկանդ կեաւով անդրադառնալու հայ պատմաւորութեան բազմաթիւ հիմնահարցերու (հայոց ազգածագման, հնագոյն պատմութեան, Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան, Հայաստանի առաջին հանրապետութեան, Հայ Եկեղեցւոյ պատմութեան եւ այլն), որոնց ուսումնասիրութիւնն արգելուած էր կամ չէր խրախուսուեր խորհրդային իշխանութեան տարիներուն:


Ափիւղահայ մշակոյթը: Ցեղասպանութեան պատմաւորով աշխարհի տարբեր երկիրներու մէջ յայտնուած հայութիւնը կանգնեցաւ գոյապահպանման խնդրին առջեւ: Նախ պետք էր ապահովել մարդկային կեցութեան անենատարրական պայմանները, որմէ նոց գերիշնդիր կը դառնար անոց սեբուկովին հայապահպանութիւնը:

Սակայ թոյր դժուարութիւններով հանդերձ, Ափիւղի մէջ 1920-ական բուականներուն արժանագրուեցան մշակութային ծնոքբերումներ: Բացուեցան հարիւրաւոր դպրոցներ, որոնք նոր սեբուկովի հայեցի դաստիարակութեան գլխաւոր եղաշխիքն էին:

Չարագանց մեծ երգաթրքերաւան-մեծուրիշները-Ցեղասպանութեանն-պաշտօն-տեսնող պարբերականներու կողքին յայտնուեցան նորերը: Ափիւղահայ մանուկ մեծ ցաւկ արծա-նագրեց Երկրորդ Աշխարհամարուն նոց. 1980-ական բուականներու կեսերուն Ափիւղի մէջ



Նկոտչայու Աղոնց



Ուիլյեմ Սարոյեան



Շառլ Ագնաուր

կը հրատարակուէր 225 անուն պարբերական, կը գործէին հայկական ռատիօժամեր եւ ռատիօկայաններ: 1990-ական թուականներուն երեւան եկան նաեւ հեռատեսիլի հայկական կայաններ, որոնք մեծ դեր կը կատարեն հայապահպանութեան ասպարէզին մէջ:

Հայագիտութենէն բացի, գիտութեան եւ մշակոյթի տարբեր ճիւղերու ներկայացուցիչները, որպէս օրինաչափութիւն, կը ներգրաւուին իրենց բնակութեան երկիրներու գիտութեան եւ մշակոյթին մէջ: Այդ պատճառով, զանոնք յաճախ չեն յիշատակեր իբր հայ մշակոյթի եւ գիտութեան ներկայացուցիչներ:

Սփիւռքի մէջ հայկական մշակոյթի գոյութիւնը աւելի շատ կը կապուի հայագիտութեան եւ գրականութեան հետ: Հայաստանի խորհրդայնացումէն ետք Սփիւռքի մէջ իր գործունէութիւնը շարունակեց մեծանուն հայագետ Նկոտչայու Աղոնցը՝ հիմնելով Պրիքսէլի համալսարանի հայագիտութեան ամբիոնը: Այսօր տարբեր երկիրներու համալսարաններուն մէջ կը գործեն հայագիտական կեդրոններ, որոնց հայրենի հայագիտական հիմնարկներու հետ համագործակցելով՝ համաշխարհային աննախադէպ բարձունքներու կրճան հասնիլ:

Սփիւռքահայ գրականութիւնը տուաւ տաղանդաշատ ներկայացուցիչներու պայծառ համաստեղութիւն մը՝ Աւետիս Ահարոնեան, Լեւոն Շանթ, Երուանդ Օտեան, Ջապէլ Եսայեան, Վազգէն Շուշանեան, Շահան Շահնուր, Վահան Թեքեան, Արշակ Զօպանեան, Ենովք Արմէն, Ուիլյեմ Սարոյեան, Համաստեղ, Արամ Հայկազ, Վահէ Հայկ, Անդրանիկ Ծառուկեան, Մուշեղ Իշխան, Վահէ-Վահեան եւ շատ ու շատ ուրիշներ:

Արուեստի տարբեր բնագաւառներու մէջ այսքի ինկան բազմաթիւ սփիւռքահայեր: Համաշխարհային կամ տեղական մեծ հռչակ վաստակեցան շարժանկարի բեմադրիչներ Ռուբէն Մամուլեանն ու Աշոտ Մալաքեանը (Հանրի Վեռնէյ), Երգահաններ Ալան Յովհաննէսն ու Ժորժ Կառվարեանը, Երգչուհիներ Ռոզի Արմէնը, Էլիշ Զուգասզեանը, Էիզ Սարեանը եւ ուրիշներ: Այսօր ալ կը շարունակէ ստեղծագործել եւ համաշխարհային հռչակ վայելել Երգիչ ու երգահան Շառլ Ագնաուրը:

Հայաստանի անկախացումէն ետք Սփիւռքի խճանկարը զգալի փոփոխութիւն կրեց Հայաստանէն աւելի քան մէկ միլիոն արտագաղթողներու հաշուին, որոնց մէջ հազարաւոր ստաւրակաւորներ կային: Անոնք ալ այսօր իրենց Ճպաստը կը բերեն հայկական մշակոյթի պահպանման՝ Սփիւռքի պայմաններուն մէջ:

Հարցումներ եւ ասպարէզումներ

1. Ե՞րբ ստեղծուած է Գ. Խ. Մ. Գ. ի Գիտութիւններու Ակադեմիան: Որո՞նք էին Ակադեմիային առաջին նախագահները:
2. Ի՞նչ գիտէք «Հայկական Սովետական Հանրագիտարան»-ին մասին:
3. Ներկայացուցէ՛ք երկրորդ Աշխարհամարտէն ետք ստեղծագործած հայ գրականութեան եւ երաժշտութեան բնագաւառի ականաւոր ներկայացուցիչները:
4. Փորձեցէ՛ք տալ սփիւռքահայ մշակոյթին ընդհանուր բնութագիրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածություն.....	3
Ա. ԲԱԺԻՆ. ՀԱՎԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ	5
1. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԿՔԸ.....	5
2. ՀԱՅ ԺՈՂՈՎԱՌՈՒԴԻՆ ԾԱԳՈՒՄԸ.....	8
3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԸՆԿԱԼՈՒԹՆԵՐՈՒՄԻՆ ՄԵՋ.....	11
4. ՀԱՅԱՍՏԱՆԸ Զ. Ա. Յ-2-ՐԴ ՀԱՅՄԱՐԱՄԵԼԿՆԵՐՈՒՄ.....	14
5. ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ (ՆԱՅԻՐԻ, ԲԻԱՅՆԻԼԻ, ՈՐԱՐՏՈՒ, ԱՐԱՐԱՏ).....	18
6. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅԿԱԶՈՒՆ-ԵՐՈՒԱՆՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՄԻՆՉԵՒ Զ. Ա. 331 ԹՈՒՄԿԱՆԸ.....	22
Բ. ԲԱԺԻՆ. ՀԻՆ ՇՐՋԱՆ	25
7. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ Զ. Ա. 331-201 ԹՈՒՄԿԱՆՆԵՐՈՒՄ.....	25
8. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ Զ. Ա. 2-ՐԴ ՂԱՐՈՒՄ (ՄԵԾ ՀԱՅՔ, ՓՈՔՐ ՀԱՅՔ, ԾՈՓՔ, ԿՈՍՄԱԳԵՆԵ).....	28
9. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ (ՏԻԳՐԱՆ Բ.) ՕՐՕՔ.....	31
10. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԵՐՁԻՆ ԱՐՏԱՇԽԵՍԵԱՆՆԵՐՈՒՄ ՕՐՕՔ.....	36
11. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ 1-3-ՐԴ ՂԱՐԵՐՈՒՄ.....	39
12. ՀԱՅՈՑ ԱՆՆԱԶՐԿՄԱՏՈՒՆԵԱԿԱՆ ՀԱՄԱՑՔԸ.....	42
13. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՆԱԶՐԿՄԱՏՈՒՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ.....	45
Գ. ԲԱԺԻՆ. ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ.....	49
14. ԶՐԻՄԱՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿԶՐԱՒՈՐՈՒՄԸ.....	49
15. ԱՆՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ 4-5-ՐԴ ՂԱՐԵՐՈՒՄ.....	52
16. ՀԱՅՈՑ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋԱՆԵՐԸ 5-ՐԴ ՂԱՐՈՒՄ.....	56
17. ՀԱՅԱՍՏԱՆԸ 6-9-ՐԴ ՂԱՐԵՐՈՒՄ.....	59
18. ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ 4-8-ՐԴ ՂԱՐԵՐՈՒՄ.....	63
19. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱԿԱԿԱՇՋԱՆԻՆ.....	66
20. ՍԵՆՏՈՒՔ-ԹԻՐԻՔԵՐՈՒ ԱՐՇԱԽԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ: ԶԱՔԱԿԵԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ.....	70
21. ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ.....	73
22. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ 9-14-ՐԴ ՂԱՐԵՐՈՒՄ.....	77
23. ՀԱՅԱՍՏԱՆԸ 15-ՐԴ ՂԱՐԻՆ ՄԻՆՉԵՒ 17-ՐԴ ՂԱՐՈՒՄ ԿԱՍԵՐԸ.....	80
Դ. ԲԱԺԻՆ. ՆՈՐ ՇՐՋԱՆ.....	83
24. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՈՒՄԸ 17-ՐԴ ՂԱՐԱԿԵԱՆ ՄԻՆՉԵՒ 18-ՐԴ ՂԱՐՈՒՄ ԿԵՐՁԸ: ԱՐԵՎԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՇՈՒՄԸ ՈՒՄԱՍՏԱՆԻ ԿՈՂԱՆ.....	83
25. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1878-1914 ԹՈՒՄԿԱՆՆԵՐՈՒՄ.....	88
26. ՀԱՅՈՑ ԹԵՂԱՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ (1894-1923).....	90
27. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐԿԱՍԱՐՏԻ ԿՈՂԱՍԵԱՆ ԾԱԿԱՏԸ: ՀԱՅՈՑ ԻՆՔԼԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՍԱՐՏԵՐԸ 1915 ԹՈՒՄԿԱՆԻՆ.....	93
28. 1917 ԹՈՒՄԿԱՆԻ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՇԱՊՈՒՄԸ.....	96
29. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ 18-ՐԴ ՂԱՐԻՆ ՄԻՆՉԵՒ 20-ՐԴ ՂԱՐՈՒՄ ՍԿԶՐԸ.....	99
Ե. ԲԱԺԻՆ. ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ.....	102
30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (1918-1920).....	102
31. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1919-1923-ԻՆ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԳԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԴԻՐԸ.....	105
32. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԴԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ.....	109
33. ԱՐՊԵՆԵԱՆ ԱՋԱՏԱՍԱՐՏԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՁԱՆՈՒՄ.....	112
34. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ 1918 ԹՈՒՄԿԱՆԻ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ.....	115

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ
ՍՓԻՐՔԻ ՄԵԿՕՐԵԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հրատարակչության տնօրեն՝ Պետրոս Ստեփանյան
Խմբագիր՝ Երանուհի Դանիելյան
Արեւմտահայերէնի եւ դասական
ուղղագրութեան փոխադրումը՝
Չեւաւորոզ՝ Գոհար Ստեփանյան

ISBN 978-5-8084-1600-0

Տպագրութիւնը՝ օֆսէթ:
Չափերը՝ 70/100 1/16: Թուրքը՝ օֆսէթ:
Ծաւալը՝ 7.5 տպ. մամուլ

Ե. Պ. Հ. Ի հրատարակչութիւն, Երեւան, Ալեք Մանուկեան փող. 1
Հեռ.՝ (+374 10) 55 55 70, էլ. նամակ՝ eph-hrat@yandex.ru
էլ. կայք՝ www.ysu.am

Տպագրուած է «Ճանգակ-97» հրատարակչութեան տպարանին մէջ:

0051, Երեւան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+374 10) 23 25 28, ֆաքս՝ (+374 10) 23 25 95
էլ. նամակ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am

Հ Ա Յ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ ՍՓԻՐՔԻ ՄԷԿՕՐԵԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԴՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

